ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏ

# Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան



Ստեմել (Ստեփան Ղազարի Մելիք - Փարսադանյան)

**Ծնվել է 1888 թվականի ապրիլի 1-ին Ղափանի Բեխ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է գյուղում, ապա հավանաբար Հանքերում: 1909-1913թթ. սովորել է Կիեւի Սուրբ Վլադիմիրի կայսերական համալսարանի բժշկական ֆակուլտետում եւ ստացել ատամնաբույժի մասնագիտություն: Վերադարձել է Անդրկովկաս, սկզբնական շրջանում աշխատել է Ղարաբաղում, ապա տեղափոխվել Գորիս: Եղել է հայտնի ատամնաբույժ, տարվել է դաշնակցական գաղափարներով, եռանդուն հասարակական գործունեություն է ծավալել: Տպագրվել է Գորիսի «Գավառ», Թիֆլիսի «Ժամանակ» եւ այլ թերթերում:**
**1918-1921 թվականներին մասնակցել է Զանգեզուրի գոյամարտին, ճանաչել է զինվորական եւ քաղաքական առաջնորդներին: 1927թ. Գորիսում ՀՅԴ ընդհատակյա կազմակերպության 33 անդամների հետ միասին ձերբակալվել է եւ աքսորվել Տոբոլսկ: 1930-ին ազատ աքսոր է ուղարկվել Իրբիտ եւ աշխատել որպես ատամնաբույժ: 1936-ին ազատվել, վերադարձել է Մինվոդ: Հայրենական պատերազմի ժամանակ գերեվարվել է ընտանիքը, ապա ազատվել ու վերադարձել Պյատիգորսկ: Ստեփանը տարվել է համակենտրոնացման ճամբար եւ պատերազմի ավարտից հետո մնացել Գերմանիայում: 1949-ին անցել է Ֆրանսիա, ապա ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաք: Զբաղվել է գրական եւ թարգմանական գործունեությամբ, եղել է Ֆրեզնոյի Հայկական միության ղեկավարներից մեկը: Մահացել է 1964 թվականի դեկտեմբերի 15-ին Ֆրեզնոյում:**
**Ստեմելի կենսագրությունը տեղ է գտել Հ.Մինասյանի «111 բռնադատված հայ բժիշկներ» կենսագրական բառարանում (Երեւան, 2006թ.):**

1919թ. Մարտ 10-ին, Զանգեզուր եկաւ Արսէն Շահմազեանը՝ իբրեւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ:

Անդրանիկը, որը դեռ Զանգեզուրում էր, այդ ժամանակ պատրաստւում էր հեռանալու իր զորամասով: Նրանից յետոյ տեղական ռազմական ուժերի ղեկավարութիւնը պիտի անցնէր Հայաստանից ժամանած ներկայացուցիչին:

Անդրանիկի մեկնելու առթիւ Գորիսի հայ հասարակութիւնը տուեց ողջերթի սեղան, եւ Անդրանիկը հեռացաւ Զանգեզուրից Մարտի 25-ին:

Գնդապետ Արսէն Շահմազեանը սկսեց կազմակերպել տեղական ուժերը ըստ իր հայեցողութեան:

Գորիսի Ազգային Խորհուրդը, որ ներկայացնում էր տեղական իշխանութիւնը, չորս գաւառամասերում ունէր նոյնպէս ազգային խորհուրդներ, ընտրուած ժողովրդի կողմից՝ գաղտնի եւ հավասար քուէարկութեամբ: Բոլորն էլ կապ էին պահպանում կենտրոնական ազգային խորհրդի հետ՝ Գորիսում:

Ռազմական ուժերը կարգի դնելու համար՝ զօրահաւաք կատարուեց:

Սիսիանի զինուորական ուժերի հրամանատար նշանակուեց գնդապետ Պօղոս Տէր Դաւիթեանը, իսկ նրա օգնական՝ գնդ. Սմբատ Թորոսեանը:

Այս երկու հերոս զինուորականները Ղափանի շրջանի՝ Վերին Խոտանանի եւ Հագարակ գիւղերի զաւակներն էին եւ իրենց կեանքը տուին իրենց պաշտած հայրենիքի ազատագրման գաղափարին: Առաջինը առաջնապահ դիրքերում ընկաւ հերոսական մահով, իսկ երկրորդը տարիներ յետոյ բոլշեւիկների օրով աքսորուեց Սիբիրի սառնամանիքները եւ այնուհետեւ կնքեց իր մահը:

Բուն Զանգեզուրի ռազմական ուժերը դրուեցին գնդապետ Բուղդան Մելիք Յիւսէինեանի հրամանի տակ: Սա իրեն օժանդակ ունէր մի քանի փորձուած զինուորականներ, որոնց մէջ մեծ դեր կատարեց Գորսեցի Խաչատուր Մալինցեանը:

Ղափանի շրջանը տրուեց Յ.Պետրոսեանին, իսկ Մեղրիի (Արեւիքի) շրջանը՝ Շահսուարեանին եւ Անուշեանին:

Արսէն Շահմազեանը, որ ընդհանուր հրամանատարն էր, իր ուշադրութիւնը դարձրեց ամբողջ գաւառի արտաքին վիճակի վրայ, ուր չափազանց լուրջ ու գաղտնի քաղաքական խնդիրներ էին առաջացել դրացի թաթարների կողմից: Այդ մասին նա պէտք է իրազեկ պահէր Երեւանի կառավարութիւնը: Ուստի դրա համար նա երկու վստահելի անձեր նշանակեց, – մէկը ռուսական աքսորավայրից վերադարձած Սաքօն (Եապոնն) էր, իսկ միւսը՝ Գասպար Գասպարեանը: Սրանք մասնաւորապէս պէտք է հետախուզէին գաւառի ներքին կեանքը եւ յայտնաբերէին գաղտնի երթեւեկութիւնները:

Տեղական թաթարները սերտ յարաբերութեան մէջ էին Ղարաբաղի եւ Նախիջեւանի թրքութեան հետ: Ինչ-որ անհասկանալի շարժումներ էին կատարւում նաեւ Սիսիանի շրջանի Բազարչայ գիւղի մալականների միջոցով:

Այդ առթիւ Ա.Շահմազեանը յանձնարարեց Գասպարին անցնել Բազարչայ եւ մօտիկից իրազեկ դառնալ կացութեան: Բազարչայում նա ծանօթացել էր մի մալականի հետ, որը հայերի բարեկամ էր: Այդ մալականը ցոյց էր տուել այն ճանապարհը, որով շարունակ երթեւեկութիւն էր կատարւում գիշեր ժամանակ: Գասպարը նաեւ իմացեր էր թէ ինչո՞ւ Բազարչայի մալականները լաւ էին տրամադրուած դէպի թուրքերը, չնայած որ ապրում էին հայկական շրջանում:

Մեր բարեկամ մալականի ասելով՝ սարի վրայով կատարուող կապը շատ վաղուց էր սկսուած Նախիջեւանի եւ Ղարաբաղի թուրք բէկերի կողմից, որոնք ձգտում էին տեղական թրքութիւնը ապստամբեցնել հայ կառավարութեան դէմ, որպէսզի տիրէին Զանգեզուրին եւ ենթարկէին այն Ադրբէջանին: Եւ մալականները փոքրամասնութիւն կազմելով, վախենում էին թուրքերի ուժից, որովհետեւ մտածում էին, որ եթէ հայերի կողմը բռնէին, մեծ վտանգի պիտի ենթարկուէին թուրքերի կողմից: Բացի դրանից, թուրքերը մեծ խոստումներ էին արել մալականներին, որ մեծ արտօնութիւններ պիտի ստանային, եթէ իրենց օգնէին ու իրենք յաջող դուրս գային:

Այդ տեղեկութիւնները ստանալուց յետոյ մերոնք տեղական ուժերի միջոցով սկսեցին հետեւել նոյն սարի գիշերուայ անցուդարձին: Եւ երբ թշնամին ընկել էր դարանի մէջ մտած մեր ուժերի մէջտեղը, տեղի էր ունեցել գիշերային կռիւ, որը վերջացել էր հայերի յաջողութեամբ: Թուրքերը թողել էին ռազմամթերք եւ գրաստներ:

Շնորհիւ այդ գիշերային յարձակումին, թուրքերի կապն ու երթեւեկութիւնը ընդհատուեց այդ ճանապարհով:

Թէ՛ շրջանային եւ թէ՛ հետախուզական աշխատակիցների աշխատանքները կատարւում էին լարուած ռազմական պայմաններում:

Ապրիլի 15-ից սկսած տեղի ունեցան մի շարք լուրջ բախումներ հայերի եւ թուրքերի միջեւ Երիցաթումբի, Սիսեանի, Մինքէնդի ու Խոզնավարի ուղղութեամբ, եւ ամեն անգամ կռիւներին մասնակցում էին մեծ քանակութեամբ զինուած ուժեր: Ու ամեն անգամ թուրքերի նախայարձակումը յետ էր մղւում տեղական հայկական ուժերի կողմից:

Մեր ամբողջ գաւառը օղակուած էր տաճկական ասկեարներով ու գործակալներով: Ուստի զարմանալի չէ, որ Ղափանի Հագարակ գիւղի վրայ թուրքերի յարձակումը կատարուեց տաճիկ Քեազիմ փաշայի ասկեարներով:

Գարնան մի օր, լուսաբացին Կարեաղինի կողմից թուրքերը յարձակուեցին Հագարակ գիւղի վրայ եւ այնքան մօտեցան նրան, որ քիչ էր մնում թէ ներխուժէին:

Մի քանի տեղից սկսեց գործել նրանց բազմահարուած հրետանին: Գիւղի ծայրում վառելով նրանք հրդեհեցին մի տուն եւ վիրաւորեցին մի հայ կնոջ: Գիւղը արթնանալով սկսեց դիմադրել անկանոն կերպով:

Յարձակման նախօրեակին պատահմամբ այդ գիւղն էր եկել Սիսիանից գնդ. Սմբատ Թորոսեանը, որ նոյն գիւղից էր, բայց նրա ծառայութեան վայրը Սիսիանն էր: Որպէս փորձուած ու մարզուած զինուորական, սառնարիւն կերպով նա գլխաւորեց տեղական ուժերը եւ այնպէս դասաւորեց նրանց, որ նրանք անցան թուրքերի թիկունքը, երկու կրակի մէջ առան թշնամուն եւ այնպիսի փառաւոր ջարդ տուին երկրին անծանօթ ասկեարներին, որ նրանք հազիւ կարողացան փախչել՝ թողնելով բազմաթիւ ռազմամթերք ու սպանուածներ:

Յաղթութեան լուրը հասաւ Գորիս: Արսէն Շահմազեանը յայտնեց այդ մասին քաղաքի հասարակութեան եւ շնորհակալութիւն յայտնեց գնդապետ Սմբատ Թորոսեանին՝ անուանելով նրան Թորոս իշխանի արժանաւոր ժառանգը:

Պատերազմական գործողութիւնները չդադարեցին Սիւնիքում: Եթէ մի շրջանում դադարում էին, սկսւում էին մի ուրիշ հեռաւոր ծայրում: Տեղական թուրքերը մեղաւոր չէին, քանի որ կենտրոնն էր նրանց թելադրում: Նրանք նպատակ էին դրել Սիւնիքի ըմբոստութիւնը կոտրել եւ այն դնել Ադրբէջանի տրամադրութեան տակ: Սիւնեցիք այդ լաւ գիտէին եւ տալիս էին ուժեղ հակահարուած:

Վերին Ղափանի շրջանում կատարւում էին մեծ քանակութեամբ սոսկալի մարդասպանութիւններ: Թուրքերը Գողթանից եւ Ագուլիսից դէպի Ղափան անցնող հայ գաղթականներին շրջապատում եւ կոտորում էին կիրճերում եւ ձորերում: Եւ թշնամին յաջողում էր այդ անել Օխչի թրքաբնակ գիւղի շնորհիւ, որը գտնւում էր Փիրդաւդանի ստորոտում, համանուն գետի ակունքների վրայ, եւ պատուհաս էր դարձել այդ շրջանում:

Նախիջեւանի եւ Օրդուբադի տաճկական զօրամասերից սպաները եւ գործակալները բոյն էին դրել Օխչիի շրջանում եւ կազմակերպում էին տեղական թուրքերին ապագայ մեծ արշաւանքի համար: Նրանք կապ էին պահպանում նաեւ Գեղուայ ձորի թուրքերի հետ:

Պէտք է ասել, որ ամէն թուրք կամ թաթար գիւղում մէկ-մէկ տաճկական գործակալ կար նստած՝ ժողովուրդի ռազմական կորովը բարձր պահելու համար:

Ղափանի հայոց ազգային խորհուրդը լաւ իրազեկ էր կացութեան եւ քանիցս դիմել էր օխչու ձորի թուրքերին, որ յետ կենային իրենց դաւադրական ծրագիրներից՝ քանի որ Օխչու ձորը եւ Գեղուայ ձորը կազմում էին Ղափանի շրջանի հարազատ մասերը:

Բայց Օխչու ձորի թրքութիւնը, տաճկական վաշտերի ներկայութիւնից ոգեւորուած, չէր ուզում լսել Ղափանի հայոց ազգային խորհրդի արդարացի պահանջը եւ շարունակում էր գոց պահել Ղափանի ու Գողթանի միջեւ ընկած ձորերի ճամփան եւ շարունակում էր ոչնչացնել դէպի Զանգեզուր եկող հայ գաղթականներին, որոնց զոհերի թիւը հազարների էր հասնում: Այդ պատճառով Ղափանի Ազգային խորհուրդը, ստիպուած եղաւ խիստ միջոցների դիմել՝ տեղական զինուորական ուժերը շարժման մէջ դնելով: Եւ շնորհիւ Աբգար Նասիբեանի, Գերասիմի, Նաւասարդի, Կարապետ Նուրիջանեանի եւ Երիցվանիկի գիւղացի Գրիգոր Տէր Յարութիւնեանի հերոսական ջանքերի, վերացաւ Օխչին մէջտեղից եւ դադարեց վտանգ լինելուց Վերին Ղափանին:

Հայերի տարած փառաւոր յաղթութեան լուրը՝ Օխչու, Շաբադինի եւ Փիրդաւդանի մաքրագործումը առիթ տուեց թուրքերին յարձակելու մի քանի մեկուսացած հայ գիւղերի վրայ եւ գրաւեցին Ուժանիս, Մողէս եւ Հագարակ հայ գիւղերը՝ հրդեհելով նաեւ Ղարաբաբա գիւղը: Սակայն բնակիչները, գիւղերից հեռանալով ու քաջաբար կռուելով, կասեցրին թրքական յառաջխաղացումը եւ մեծ կորուստներ պատճառեցին թշնամուն:

Հայերը ունեցան միայն մի քանի զոհեր Ղարաբաբա գիւղից:

Թշնամին, հարաւ-արեւելեան մասում յաջողութիւն չունենալով, իր ուշադրութիւնը դարձրեց Նախիջեւանի եւ Գողթանի վրայ:

Նախիջեւանի եւ Գողթանի մի քանի գիւղերը թուրքերի ճնշման տակ անցան Գողթանի լեռնային մասը: Ագուլիսը, որ Գողթանի մշակութային գեղեցիկ կենտրոնն էր, եւ որի բնակիչները միշտ խաղաղ կեանք կը վարէին, փորձեց դիւանագիտական ճանապարհով փրկութեան մի ելք գտնել: Նրանք հաւատացին թուրքերի կեղծ խոստումներին, վայր դրին իրենց զէնքերը ու յանձնուեցին թուրքերին: Այնուհետեւ կատարուեց գազանային խրախճանք: Թուրքերը կոտորեցին բոլոր տղամարդկանց, իսկ հայ կանանց եւ աղջիկներին առեւանգեցին:

Գողթանի կառավարիչ Աշոտ Մելիք-Մուսեան սոսկալի մանրամասնութիւններով նկարագրում էր Գողթանի անտանելի վիճակը եւ Ագուլիսի կոտորածը: Հայաստանի կառավարութիւնից նա շուտափոյթ օգնութիւն էր ուզում:

Սակայն, սպասուած օգնութիւնը չեկաւ, որովհետեւ Հայաստանի կառավարութիւնը այդ ժամանակ զբաղուած էր Շարուրի եւ Վեդի-Բազարի կռիւներով:

Հայաստանի կառավարութիւնը թէեւ չկարողացաւ զօրք ուղարկել, բայց ուղարկեց կռիւների մէջ փորձուած երկու ղեկավար անձանց՝ Ղազարին դէպի Գողթան, իսկ փոխգնդապետ Գարեգին Նժդեհին Ղափան:

Այդ սոսկալի պայմանների մէջ էր, որ տեղի ունեցան Հայաստանի պառլամենտի ընտրութիւնները Սիւնիքում 1919թ.:

Ամբողջ գաւառը բաժանուած էր չորս ընտրական շրջանների: Կենտրոնից ուղարկել էին բոլոր կուսակցութիւնների ցուցակները: Առաջին անգամն էր, որ Սիւնիքը կատարում էր գաղտնի, ընդհանուր եւ հաւասար քուէարկութեամբ ընտրութիւններ:

Ընտրութիւնները ամբողջ գաւառում ղեկավարելու համար, նշանակուած էին հետեւեալ անձերը. –

Ղափանի եւ Մեղրու շրջանի համար տողերիս գրողը Ս.Մ.Փ., Զանգեզուրի համար՝ Տիգրան Պարոնեանը, իսկ Սիսիանի համար՝ Գ.Ղազարեանը:

Ամբողջ նախապատրաստական եւ ընտրական աշխատանքը տեւեց երկու ամիս: Ընտրութիւններին մասնակցեց ամբողջ հայ բնակչութիւնը եւ ձայների մեծամասնութեամբ անցաւ թիւ 4-րդ ցուցակը, որ կը պատկանէր Հ.Յ.Դ.-եան:

Սիւնիքը ընտրեց իր լաւագոյն զաւակներին՝ Վահան Խորենուն, Արշակ Շիրինեանին եւ Գորիս գիւղացի Պօղոս Փարսեանին որպէս Հայաստանի պառլամենտի անդամներ: Սիւնեաց երկրի ձայնը գնաց միանալու Հայաստանի ժողովուրդի ձայնին, տանելով իր հետ նաեւ Զանգեզուրի վճռական որոշումը, որ Սիւնեաց աշխարհը Հայաստանի անբաժան մասն է:

Ղարաբաղը չէր կարող մասնակցիլ պառլամենտական ընտրութիւններին, քանի որ



ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏ

այնտեղ տիրում էր թաթար Սուլթանովի իշխանութիւնը:

Այնտեղ էին եւ անգլիացիները:

Շուշուց՝ Գորիս եկան մի քանի հոգի, գլխաւորութեամբ անգլիացի մայոր Մաք Մեղենի: Նրանք ժողովի հրաւիրեցին Զանգեզուրի եւ Ղարաբաղի շրջանային խորհրդի անդամներին եւ դրին հետեւյալ պահանջները.

ա) ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը՝ երկրում կարգ ստեղծելու, ճանապարհները բանալու եւ ժողովրդին պարէն հասցնելու համար:

բ) Յարմարութիւններ տալ թուրք քոչուորներին բարձրանալու Զանգեզուրի սարերը:

Շրջանային խորհուրդը Մայիսի 3-ին տուեց հետեւեալ գրաւոր պատասխանը.

«Զանգեզուրի առաջին գիւղացիական համագումարի որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետութեան երկրամաս Զանգեզուրի դէմ կատարուած իւրաքանչիւր յարձակողական գործողութիւն կը հանդիպի ամենայամառ եւ կատաղի դիմադրութեան Զանգեզուրի հայ ժողովրդի կողմից:

«Հայաստանի Հանրապետութեան երկրամասում չապրող քոչւորներին ոչ մի դէպքում չի թոյլատրուում բարձրանալ Զանգեզուրի սարերը:

«Ինչ վերաբերւում է իշխանութիւն հաստատելուն, պէտք է ասենք, որ ոչ միայն այժմ, այլեւ համատարած անիշխանութեան օրերին Զանգեզուրում միշտ բազաւորել է օրինակելի իշխանութիւն, եւ այժմ հարկ չկայ իշխանութիւն հաստատելու այնտեղ, ուր անիշխանութիւն չկայ:

«Ուղիղ երկու տարի է, որ Զանգեզուրը կտրուած է քաղաքակիրթ աշխարհից եւ նրա առաջ փակուած են եղել հաղորդակցութեան ճանապարհները: Զանգեզուրը հաշտուել է այդ հանգամանքի հետ, գտնելով որ իր ազատութիւնը վեր է ամեն տեսակի յարմարութիւններից եւ կուլտուրական բարիքներից»:

Այս յանդուգն պատասխանը ստանալուց յետոյ, անգլիական ներկայացուցիչը հեռացաւ Գորիսից:

Սակայն, նրա հեռանալով Զանգեզուրի ժողովուրդը զգաց, որ փոթորիկ է պատրաստւում իր գլխին եւ իր մշտարթուն ու հայրենասէր ներկայացուցիչները սկսեցին բախել Հայաստանի կառավարութեան դռները, որպէսզի նա օգնութիւն հասցնէր մեկուսացած Զանգեզուրին:

Հայաստանի կառավարութիւնը, թէեւ ծանրաբեռնուած կենտրոնական Հայաստանի ինքնապաշտպանութեան դժուարին գործով, իր սահմանափակ միջոցներից բաժին հանեց Զանգեզուրին, ուղարկելով չորս թնդանօթ ու ռազմամթերք փորձուած սպաների հետ, ղեկավարութեամբ Սիմոն Տէր Սահակեանի:

Սիմոն Տէր Սահակեանը աւարտել էր Շուշուայ թեմական դպրոցը եւ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զինուորական էր ենթարկուած ու դարձած նշանաւոր թնդանօթաձիգ, ինչ որ նա ցոյց տուեց 1919թ. աշնան Զանգեզուրի հերոսամարտի ժամանակ:

Արսէն Շահմազեանը, իր տրամադրութեան տակ ունենալով չորս թնդանօթ, փորձուած սպաներ եւ զօրակոչի ենթարկուած երիտասարդութիւն, այլեւս աւելի մեծ վստահութեամբ իր պատասխանատուութեան տակ վերցրեց ամբողջ Սիւնիքի ինքնապաշտպանութեան գործը ու դուրս եկաւ յաղթական:

Ադրբէջանը չէր դադրեցնում իր ոտնձգութիւնները: Նրա թիկունքը չափազանց ուժեղ էր, քանի որ անգլիական հրամանատարութիւնը յանձին զօր. Տամսըրնի նստած էր Բագուայ հարուստ նաւթաշխարհի հսկայական հարստութեան կողքին: Եւ այս վերջինը սիրայօժար կերպով ընդ առաջ էր գնում Ադրբէջանցիներին եւ Բագուից աշխատում էր պարտադրել իր կամքը Ղարաբաղին եւ Զանգեզուրին:

Ու ահա նա կատարեց մի փորձ եւս: Զանգեզուր ուղարկեց իր տեղակալ զօր. Շատելվորդին: Սա եկաւ Գորիս իր շքախմբով եւ նոյն պահանջը դրեց, ինչ որ Մաք Մեզենը, այսինքն՝ Զանգեզուրը ենթարկել Ադրբէջանին:

Երբ ստացաւ բացասական պատասխան, ասաց.

«Ես ուղղակի զարմանում եմ ձեզ վրայ: Միթէ՞ չգիտէք, որ թուրք զանգւածը տգէտ է: Եւ այդ տգէտները չէ որ պիտի կառավարեն երկիրը, այլ նրանց պառլամենտը: Իսկ այդ պառլամենտի մէջ դուք պիտի նստէք որպէս բանիմաց մարդիկ. ամբողջ ղեկը ձեր ձեռքին կը լինի: Դուք էք, որ ընտրուելով կը բազմէք Ադրբէջանի պառլամենտի օթեակներում»:

Խաբուսիկ մի սիրաշահութիւն էր այդ՝ հայ մտաւորականութեան հասցէին: Բայց նա սխալուեց իր մտածումների եւ հաշիւների մէջ: Հայ մտաւորականութիւնը հայ ժողովրդի հարազատ զաւակն է: Եւ Զանգեզուրի հայ ժողովրդի կամքը մի գիշերուայ մէջ դարբնուեց ու իր ցասումը արտայայտեց լուսաբացին ուժեղ ցոյցով:

Հետեւեալ առաւօտ, երբ զօր. Շատելվորդը արթնացաւ, ինքն իրեն գտաւ կազմակերպուած ցոյցի եւ ռազմական երգերի բարձրագոչ աղմուկի առջեւ:

Շրջակայ գիւղերի զինուորները, իրենց վաշտապետերով եւ զէնքերով, լոյսը դեռ չբացուած, ռազմական քայլերգով մի չտեսնուած ուժեղ ցոյց կազմակերպեցին Գորիսի հրապարակում՝ շրջելով մի քանի անգամ զօր. Շատելվորդի բնակարանի շուրջը: Զօրավարը, քնից նոր արթնացած ու դեռ չհագնուած, լուսամուտից դիտում էր այդ բոլորը, տեսնելով Սիւնեաց երկրի բողոքն ու ուժգին ժողովրդական ցասումը: Եւ, զգալով, որ չպիտի կարողանայ կոտրել ժողովրդի այսքան ուժեղ ըմբոստ կամքը, դիմեց իր ցեղի յատուկ դիւանագիտութեան, ասելով.

«Ես կը տանեմ ձեր ժողովրդի վճռական կամքը կենտրոն բանակցութիւնների համար: Սակայն, տուէք երկու բանիմաց ներկայացուցիչներ, որոնք բանաւոր կերպով պիտի հաստատեն իմ ասածները այնտեղ Բագւում հրամանատարութեան առջեւ»:

Այս ասելով՝ հանեց իր ծոցում պահած երկու ազդեցիկ անձանց՝ Արշակ Շիրինեանի եւ Նիկոլայ Յովսէփեանի անունները, հրաւիրեց նրանց, որ նստեն իր մեքենայի մէջ: Երբ սրանք տեղ բռնեցին ինքնաշարժի մէջ, վրայ հասան Գորիսի վրդովուած ծերունիները, Ղազար Պարոնեանի գլխաւորութեամբ, եւ դուրս քաշեցին մեքենայում նստած հայ պատուիրակներին՝ ասելով. –

«Մենք մարդ չունինք՝ Բագու ուղարկելու համար, եւ ոչ մի խորհրդակցութեան պէտք չունինք: Մեր խօսքը վճռական է: Կը մեռնենք ամբողջ ժողովրդով, բայց չենք ենթարկուի ձեր բարեկամ ոչքրիստոնեայ ժողովրդի կամքին: Մենք ձեզ վրայ նայել ենք, որպէս քրիստոնեայ ժողովրդի պաշտպանի, բայց դուրս եկաւ հակառակը ... կարող էք գնալ, որտեղից որ եկել էք»:

Զօրավար Շատելվորդը, տեսնելով եւ լսելով այդ ամէնը, առանց տատանուելու նստեց մեքենան ու իր շքախմբով հեռացաւ Գորիսից:

Բագւում նստած անգլիական հրամանատարութիւնը զգալով կացութեան լրջութիւնը, բարձր պահելու համար իր հեղինակութիւնը, տրամադրութիւն յայտնեց զէնքի ուժով գրաւելու Զանգեզուրը:

Այնուհետեւ Ադրբէջանը գործի անցաւ, այն է՝ կազմակերպեց ուժեղ զօրք, որպէսզի զէնքի ուժով գրաւէր ըմբոստ Զանգեզուրը:

Սակայն մի վերջին փորձ էլ կատարեցին խաղաղօրէն գրաւելու համար Զանգեզուրը: Խոսրով բէկ Սուլթանովի ստորագրութեամբ մի կոչ ուղղեցին Զանգեզուրի հայերին, որ նրանք չլսեն խռովարարներին եւ ենթարկուեն Ադրբէջանի կառավարութեան: Խոստանում էին ներման պարգեւել, եթէ վայր դնեն զէնքերը: Ի հարկէ, այդ կոչն էլ մնաց անպատասխան ու անհետեւանք:

1919թ. Նոյեմբերի 1-ին սկսուեց թշնամու ընդհանուր յարձակումը Զանգեզուրի վրայ: Այդ յարձակումը համաձայնեցրուած էր Նախիջեւանի եւ Կարեաղինի յարձակումներին: Թշնամին ձգտում էր չորս կողմից օղակել Զանգեզուրը, շփոթութեան մէջ գցել այն, որպէսզի կարողանար իր զինուորական գլխաւոր ուժերը կենտրոնացնել Շուշին եւ Գորիսը միացնող գծի վրայ, որտեղով հնարաւոր էր շարժել թէ՛ թնդանօթներ եւ թէ՛ ռազմամթերք մեծ քանակութեամբ: Միւս շրջաններում գործողութիւնները մեզ զբաղեցնելու փորձեր էին միայն:

Առաջին օրերում նրանք գրաւեցին Խնածախի, Խոզնավարի եւ Կոռնի ձորի բարձունքները: Զաբուղի ձորերից՝ աննկատելի զառիվայրերով գաղտնագողի բարձրացան Գորիսի կաթսայանման հովտին նայող ամենաբարձր «Քաչալ-Դաղը»:

Քաչալ-Դաղը թէք զառիվայրով նայում է Գորիսին: Երեկոյեան, արեւը մայր մտնելուց յետոյ թուրքերը նոյն սարի երկար լանջին չորացած խոտերից մի խարոյկ վառեցին կիսալուսնի ձեւով: Այդ արդէն ազդանշան էր հեռաւոր շրջաններին, որ պատերազմի ահազանգն էր տրուած: Այդ կերպով նաեւ նրանք ուզում էին սարսափ տարածել Գորիսի հովտում ընկած քաղաքի ու ազգաբնակութեան վրայ: Եւ վստահ իրենց յաջողութեան վրայ՝ հաղորդեցին Բագուի իրենց ղեկավարներին, որ Զանգեզուրի գրաւումը մի քանի ժամուայ գործ է այլեւս:

Ինչպէս ասացի, թուրքերը իրենց գլխաւոր ուժերը կենտրոնացրել էին Շուշին Գորիսի հետ միացնող խճուղիի վրայ՝ ղեկավարութեամբ զօր. Շիխլինսկու: Քանի որ այդ նոյն խճուղիի բլուրների վրայ թառած Ղարադչլազ հայկական գիւղը առաջուց էին նենգութեամբ ոչնչացրած, նրանք, իրենց թիկունքը ապահով զգալով, իրենց կեդրոն դարձրին Ալղանլար թրքական գիւղը, որ Սովետների օրով դարձաւ Լաչին քաղաքը:

Այդ տեղից թուրքերը պիտի իջնէին Զաբուղի խոր ձորերը ու յետոյ ոլորապտոյտ խճուղիով պիտի բարձրանային բլրի վրայ գտնուող հարթ տարածութիւնը եւ ռմբակոծէին Զանգեզուրի նախադուռը՝ հայկական ՏԵՂ գիւղը, ապա քսան վերստի վրայ գտնուող Գորիսը:

Այդ բնական ամրութիւնները եւ դժուարութիւնները յաղթահարելու համար՝ նրանք ստիպուած էին բաժանել Զանգեզուրը իր շրջաններից՝ Սիսիանից եւ Ղափանից: Այդ նպատակով էին նրանք բարձրացել Քաչալ-Դաղը եւ դէպի Ուշ Թափան նայող բարձրութիւնները: Այս կերպով երեք մասի բաժանելով Զանգեզուրը՝ նրանք համոզուած էին, որ դիւրութեամբ պիտի գրաւէին այն: Սակայն, այդտեղ եւս սխալուեցին, որովհետեւ Ղափանում էր գտնւում Գարեգին Նժդեհը, որին թուրքերը տուել էին Աժդահա Փաշա մականունը: Իսկ Սիսիանը պաշտպանում էին անվեհեր գնդապետ Պօղոս Տէր Դաւիթեանը եւ Սմբատ Թորոսեանը:

Այն երեկոյեան, երբ Գորիսի հայութիւնը տեսաւ իր սարի լանջին կիսալուսնի խարոյկը, զգաց, որ հասել էր վճռական օրը եւ որ սիւնեցիք կամ պիտի մեռնէին, կամ պիտի յաղթէին:

Մղձաւանջի պէս ծանր գիշերը տեղի տուեց արշալոյսի արեգակի փայլուն ճառագայթներին: Թշնամու թնդանօթների որոտը աւետեց ամբողջ շրջանին, որ ահեղ մարտը սկսուած էր:

Պաղարիւն կապիտան Ռուբէն Նարինեանը, Սնարի հարազատ եղբայրը, եւ թնդանօթաձիգ Սիմոն Տէր Սահակեանը, կրակոտ նժոյգների վրայ նստած, բարձրացան Սիսիան տանող բարձունքները, որոնք Քաչալ-Դաղի դէմն են: Այնտեղ տեղաւորուած էին Սիմոնի օգնական սպաները եւ թնդանօթները: Եւ մեր թնդանօթների մի քանի հարուածներով Քաչալ-Դաղի թուրքերի երեւակայած յաջողութիւնները յօդս ցնդեցին, իրենց դիրքապահների վրաններին հետ միասին:

Այդ միեւնոյն ժամանակ սարի ստորոտում պատրաստ սպասող սպայ Միշա Իշխանեանի վաշտը վագրի արագութեամբ բարձրացաւ սարի կատարը եւ այնպիսի շփոթութիւն առաջ բերեց, որ թուրքերը Քաչալ-Դաղից անհետ կորան՝ թափուելով Զաբուղի ձորը:

Թնդանօթաձիգ հերոս Սիմոնը եւ իր սքանչելի օգնականները թնդանօթները շարժեցին սարերի գլխով ու Խնածախի հողամասերով դէպի ՏԵՂ գիւղի սահմանները, ուր վճռական ճակատամարտը պիտի որոշէր Զանգեզուրի բախտը:

Այդ լեռնային շրջանում թնդանօթների փոխադրութեան համար կային անգլիական ուժեղ եւ դիմացկուն ջորիներ, որոնց դիմացկունութիւնը համապատասխանում էր տեղական լեռներին: Երկար ժամեր էին պէտք, որ նրանք հասնէին կռուի վայրին:

Այդ նոյն օրը, առաւօտեան, Սիսիանի հեծելազօրը, Թոմասի եւ Զաքոյի գլխաւորութեամբ կանգ առաւ Գորիսում Արսէն Շահմազեանի բնակարանի առջեւը՝ ստանալու համար կարեւոր հրահանգները:

Գորիսի հայութեան խանդավառութիւնը չափ ու սահման չունէր: Տեսնելով Զանգեզուրի արծիւներին, ոչինչ չէին խնայում նրանց հիւրասիրելու համար:

ՏԵՂ եւ ԿՈՌՆԻՁՈՐ գիւղերի ճակատը պաշտպանում էին տեղական ուժերը, եւ երբ երկու ժամից յետոյ հասաւ Սիսիանի քաջերը, տեղական զինուորների ոգեւորութեան չափ չկար:

Թշնամին իր ուժեղ հարուածը արդէն կեդրոնացրել էր ՏԵՂ գիւղի վրայ եւ գրոհ տալիս մեծ զօրքով ու խուժանով:

Կացութիւնը վատթարացաւ, մանաւանդ երբ թշնամին իմացաւ հայկ. միակ ծանր թնդանօթի տեղը, որ Անդրանիկի ժամանակից մնացել էր ՏԵՂ գիւղում: Թշնամին միմեանց յաջորդող հարուածներով դուրս մղեց գործածութիւնից հայկական մեծ թնդանօթը: Երբ թուրքերը համոզուեցին, որ հայերը այլեւս թնդանօթ չունէին, աւելի եւս ուժեղացրին իրենց կրակը եւ, իրենց թնդանօթները թաքստեան տեղից հանելով, շարեցին հարթ տարածութեան ծայրին ու սկսեցին ռմբակոծել գիւղի ուղղութեամբ՝ վստահելով եկեղեցին ու մի քանի շէնքեր:

Թշնամու եւ Հայերի հեռաւորութիւնը շատ կարճ էր: Ընդամենը մնում էր չորս կիլոմետր տարածութիւն, մինչեւ ՏԵՂ գիւղը:

Ռմբակոծութիւնից խրախուսուած թուրք զինուորներն ու ասկեարները խուժանի հետ առաջ խաղացին ընկան արտերի մէջ, բռնելով ձորի եւ ջրաղացների ճանապարհը: Նրանց խօսակցութիւնները պարզ լսում էին մեր դիրքերից:

Քեօմուր թափայի եւ Կոռնձորի դիրքերի վրայ եղած հայ զինուորները յուզւում էին, որ հայերի կողմից թնդանօթները չէին աշխատում:

Թնդանօթաձիգ Սիմոնը լռութիւն էր պահում, երբ թուրքերը մօտենում էին գիւղին: Թուրքերի գրոհը, սակայն, յետ կասեցրին հայերը: Հերոս Զաքօն եւ Թոմասը՝ բլուր բլրի յետեւից էին խլում: Այդ կռուի ամենատաք ժամանակին էր, որ սկսեցին որոտալ Սիմոնի թնդանօթները: Նա դիտաւորեալ կերպով չէր խփում, քանի դեռ թշնամին իր թնդանօթները չէր հանել թաքստեան տեղից: Բայց, երբ տեսաւ որ թուրքերը համարձակ կերպով շարեցին թնդանօթները դաշտի ծայրին, նա շեշտակի եւ խաչաձեւ հարուածներով թուրքերի թնդանօթները փչացրեց: Եւ այդ միջոցին հայ կտրիճները, դուրս գալով դիրքերից ու միանալով Սիսիանի հեծելազօրի արշաւին, յաղթական ուռաներով դաշտի բազմաթիւ յետ նահանջող հազարաւոր թուրքերին թափեցին Զաբուղի ձորը: Թուրքերը, թողնելով բազմաթիւ սպանուածներ, գլուխները կորցրած, հազիւ հազ կարողացան ընկնել Զաբուղի անդունդները:

Հայերը, տիրանալով հարթ տարածութեան, զէնք գործածելու փոխարէն, ժայռերից խոշոր քարեր գլորեցին՝ խանգարելու համար թուրքերի փախուստը:

Թուրքերի զինուորական ուժերը չափազանց մեծ էին: Բաղկացած էին երեք հետեւակ եւ երկու ձիաւոր գնդերից, ծանր ու թեթեւ թնդանօթներով:

Զանգեզուրի հերոսամարտը տեւեց չորս օր ու վերջացաւ հայերի փայլուն յաղթանակով: Ամենանշանաւորն այն է, որ Զանգեզուրը, առանց դրսից օժանդակ ուժերի, կարողացաւ պատուով դուրս գալ իր հայրենիքի հարազատ զաւակների քաջութեամբ:

Թուրքերը իրենց խայտառակ պարտութեան թոյնը թափեցին մի քանի թուրք եւ ռուս զինուորականների վրայ, գնդակահարելով նրանց, ամբողջ կռուի անյաջողութիւնը նրանց վրայ բարդելով:

Հայերը բռնեցին ՏԵՂ-ԿՈՌՆՁՈՐ ու միւս բարձունքները եւ հրճուանքով դիտում էին Ալղանլարից դէպի Շուշի փախչող Ադրբէջանի զօրքը:

Զանգեզուրը յաղթեց գլխաւորութեամբ ԱՐՍԷՆ ՇԱՀՄԱԶԵԱՆԻ եւ նրա պատրաստած զինակից արծիւ հերոսների: Սիւնիքը ազատուեց Ադրբէջանի վտանգից դառնալով Հայաստանի անբաժան մասը: ԶԱՆԳԵԶՈՒՐԻ հերոսամարտը պսակուեց հայերի պանծալի յաղթութեամբ շնորհիւ ժողովրդի միասնականութեան:

Նոյն ձեւով արտաքսեցին նաեւ Սիսիանի Ղափանի վրայ Կարեաղինից ու Նախիջեւանից յարձակուող թշնամիները:

ԱՐՍԷՆ ՇԱՀՄԱԶԵԱՆԸ, որ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ Հերոսամարտի դարբնողն եւ յանդուգն ղեկավարն էր, բնաւորութեամբ համեստ անձնաւորութիւն էր: Երբ Զանգեզուրի հերոսամարտը վերջացաւ, Հայաստանի կառավարութիւնը նրան յետ կանչեց Երեւան: Երբ բոլշեւիկները գրաւեցին Հայաստանը, նա շատ շատերի բախտին ենթարկուեց: Ձերբակալուեց եւ տարուեց Օրէլ քաղաքը եւ այնտեղից էլ աքսորուեց Նովօ-Տուրուխանսկ: Բանտը, աքսորը եւ Սիբիրի խիստ կլիման քայքայեցին նրա առողջութիւնը, եւ այնտեղ էլ նա կնքեց իր մահկանացուն, հեռու հայրենիքից ու հարազատներից:

**1963թ., փետրվար, «Հայրենիք ամսագիր»**

**Գրեց՝ Ստեմել**

*Նյութը տրամադրել է Աշոտ Սիմոնյանը (Վայոց ձոր)*

Հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Կապան, Շահումյան 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
Էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հուլիսից
հրատարակվում է ամսական 1-ից
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

## ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏ

# Սյունիքի ինքնավարության ազդարարումը

Հատված Արամ Սիմոնյանի «Զանգեզուրի գոյամարտը» գրքից



**Գարեգին Նժդեհի տուփակերպ հուշարձանն Ավանգարդ թաղամասի հրապարակում: Բացումը տեղի է ունեցել 1991թ. մայիսի 28-ին: Հուշարձանը կերտել են արարապետ ճարտարապետներ Ռուբիկ Գրիգորյանը (Մսրո) եւ Սարգիս Նազարեթյանը (Կամա): Կառուցմանն աջակցել է Գորիսի քաղխորհրդի գործկոմը (նախագահ՝ Համլետ Մկրտչյան):**

Սկիզբը՝ էջ 59

մարդուց, 6 անդամ՝ Խորհրդարանի մի նստաշրջանից մյուսն ընկած ժամանակաշրջանի համար:

Համագումարը որոշեց, որ պետական-դիվանն ունենում է հետեւյալ 10 վարչությունները. Ներքին գործերի, Արտաքին գործերի, Պարենավորման, Արդարադատության, Ֆինանսական, Լուսավորության, Առեւտրաարդյունաբերության, Հողային, Ճանապարհների հաղորդակցության (փոստ, հեռագիր, հեռախոս եւ խճուղի), Խնամատարության:

Ինքնավար Սյունիքի կառավարության մեջ մտնելու համար համագումարում առաջադրվել էր 15 մարդու թեկնածություն: Դրանցից ծայրերի մեծամասնությամբ ընտրվեցին 8 գործիչներ՝ Գեղեոն Տեր-Մինասյանը, Նիկոլայ Դորունցը, Իսրայել Մելիք-Փարսադանյանը, Գրիգոր Գրիգորյանը, Եզրո Հարությունյանը, Սիմոն Տեր-Մկրտչյանը, Տիգրան Մելիք-Հովսեփյանը եւ Սամվել Սաշուրյանը:

...

**Ինքնավար Սյունիքի իշխանության կենտրոնացման ընտրությունը:**

...

Համագումարի որոշումները ...





Սյունյաց երկիր

## ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏ

# Լեռնահայաստանի անկախության ազդարարումը

Հատված Արամ Սիմոնյանի «Զանգեզուրի գոյամարտը» գրքից



**Սպարապետ Գարեգին Նժդեհ**

Հայրենիքի փրկության կոմիտեի լուծարումից եւ Հայաստանի նոր կառավարության ստեղծումից 5 օր հետո, Սյունիքի խորհրդարանի դիվանի հրավերով, 1921թ. ապրիլի 26-ին Տաթեւի վանքում կայացավ Ինքնավար Սյունիքի հայ ազգաբնակչության 2-րդ (Արտակարգ) համագումարը, որտեղ 64 գյուղից ներկա էին 95 պատգամավոր եւ սպարապետ Նժդեհը:

Ինքնավար Սյունիքի կառավարության նախագահ Գեղեոն Տեր-Մինասյանը, բացելով համագումարը, առաջարկեց ընտրել նախագահություն: ...

Համագումարի հաստատում է հետեւյալ օրակարգը. *1. Ինքնավար Սյունիքի դիվանի կազմի հրաժարականը, 2. Պարենավորումը, 3. Ինքնավար Սյունիքի սահմանադրության վերանայումը, 4. Ազատ հողերի բաշխման հարցը, 5. Պաշտոնյաների վարձատրության մասին, 6. Դպրոցական գործ, 7. Պետական հարստության պահպանության մասին, 8. Նոր կառավարության (դիվանի) ընտրություն, 9. Համագումարում հարուցվելիք խնդիրներ:*

...

1921թ. գարնան ամիսներին սովի ...

...

Շարունակությունը՝ էջ 64



## Ինքնավար Սյունիքի քայլերգը եւ զինանշանը

*Մեր սարերը անառիկ ու հպարտ,*
*Մեր դաշտերը կյանքի ու առատ,*
*Խոր ձորերը Սյունիքի անվախ,*
*Շիրիմ են թշնամու դարավոր:*

*Թշնամին հագարով միշտ մեր դեմ,*
*Կարմիր երթի մենք կանգնած նրա դեմ:*
*Չենք դողում, չենք սարսում մենք մահից,*
*Մեր մահը թեթեւ թեթեւ թեւից:*

*Ինքնավար Սյունիքին ցանկանք*
*Միշտ լինել թշնամու սպանում,*
*Շաքր ապրի մեզ համար սյունեցին,*
*Քաջ Ժիտո Նժդեհ Սպարապետ:*

**Տեքստի հեղինակն է Տիգրան Սազանդարյանը**



**Արշակ Շիրինյան**



**Գեղեոն Տեր-Մինասյան**



**Սիմոն Վրացյան**

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏ

# Լեռնահայաստանի անկախության ազդարարումը

Հատված Արամ Սիմոնյանի «Զանգեզուրի գոյամարտը» գրքից



Լեռնահայաստանի կառավարության շենքը Գորիսում:

Լուսանկարը՝ Կ.Յովհաննիսյանի

Սկիզբը՝ էջ 63

Կուռոյի զորքերը պետք է մնային նոր կառավարության տրամադրության տակ, Բազարչայում:

Համագումարում հարց է բարձրացվում սպարապետ Նժդեհին զորավարի (գեներալի) աստիճան շնորհելու մասին: Մտքերի եւ կարծիքների փոխանակումից հետո խորհրդարան-համագումարը միաձայն որոշում է գնդապետ Նժդեհին շնորհել զորավարի աստիճան եւ նրան պարգեւատրել «Խուստուպյան արծիվ» երկաթե շքանշանով:

Համագումարը, այնուհետեւ, օրակարգի համաձայն, ապրիլի 27-ին որոշում է նոր կառավարության կազմը: Նժդեհը համագումարի հաստատմանը գրավոր ներկայացնում է կառավարության՝ յոթ մարդուց բաղկացած հետեւյալ կազմը.

1.Գ.Նժդեհ՝ վարչապետ եւ արտաքին գործոց նախարար, 2. Ս.Մելիք-Յոլչյան՝ ներքին գործոց, 3. Հ.Տեր-Հակոբյան՝ պարենավորման, 4. բժիշկ Մ.Մինասյան՝ խնամատարության, 5. Հովհ. Տեւեճյան՝ արդարադատության եւ լուսավորության, 6. Ավ.Օհանջանյան՝ հաղորդակցության եւ փոստ-հեռագրի, 7. բժիշկ Ս.Եղիազարյան՝ ֆինանսների նախարար:

Կառավարության կազմը հաստատելուց հետո մի ժամով հայտարարվում է ընդմիջում, որից հետո կարդացվում եւ ընդունվում է Լեռնահայաստանի զորքին ու ղեկավարներին ուղղված՝ հետեւյալ բովանդակությամբ՝ համագումարի ողջույնի ուղերձը.

«Համազանգեզուրյան Տաթեւի 2-րդ Խորհրդարանը սրտանց ողջունում է իր կուռ, անհաղթելի եւ տոկուն բանակի ռազմիկներին եւ լիահույս է, որ այդ անհաղթ բանակը, որ մինչեւ օրս իր փառապանծ հաղթանակներով աշխարհին է զարմացրել, այսուհետեւ էլ պատրաստ կը լինի նոր հրաշքներ, նոր զարմանքներ ցուցադրելու քաղաքակիրթ աշխարհին, իր կատարյալ եւ վերջնական հարվածը տալով հայ աշխատավորության թշնամիներին:

Կազմված է կառավարություն:

Մեր ինքնավար Սյունիքն այսուհետեւ կոչվելու է Լեռնահայաստան, որն իր քաջարի զորքով, իր անպարտ առյուծասիրտ մարտիկներով սպառնալիք պետք է լինի մեր բոլոր թշնամիների համար:

Մեր ազատարար սպարապետ Նժդեհին տրված է զորավարի տիտղոս եւ «Խուստուպյան արծիվ» շքանշան:

Այս սուրբ տաճարում նա ուխտեց եւ իր սրբազան խոսքն ասաց՝ ձեզ հետ միասին, սեւ օրվա համար հայության բաժին համարված Սյունիքը դարձնել հայության վերածննության օրրան»:

1921թ. մայիսի 1-ին Լեռնահայաստանի կառավարությունը Գորիսում հանդես եկավ Դեկլարացիայով: Կառավարությունը հայտարարում էր, որ «իր առաջնակարգ պարտքն է համարում լարել երկրի բոլոր ուժերը զորացնելու մեր հայրենիքի ինքնապաշտպանության ռազմական կորովը. Լեռնահայաստանը պետք է լինի ամուր հենակետ մոտ ապագայում Մայր Հայաստանը թշնամի տարրերից ազատելու համար»:

Կառավարությունն իր կարեւորագույն խնդիրներից էր համարում պարենավորման գործի արմատական բարելավումը, գյուղացիական տնտեսությունների արագ զարգացումը: Միաժամանակ ազդարարվում էր կառուցել իրավական պետություն՝ «մոտեցնելով ժողովրդին եւ մատչելի դարձնելով դատավարությունը, զարկ տալ ժողովրդի լուսավորության գործին՝ կազմակերպելով նորանոր դպրոցներ, անգրագետների դասընթացներ, դասախոսություններ, զրույցներ, երեկույթներ եւ տարածելով գրավոր հրատարակություններ: Կառավարությունը ջանք չի խնայելու հանրային առողջապահությունը եւ բժշկական օգնությունը դնելու ավելի լավ հիմքերի վրա»:

«Լեռնահայաստանի կառավարության դեկլարացիայում» շեշտված էր հարեւան ժողովուրդների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման հրամայականը: «Լեռնահայաստանի կառավարությունը պետք է ջանա սերտ բարեկամական, բարիդրացիական հարաբերություններ հաստատել մեր երկրի սահմաններում բնակվող եւ սահմանամերձ ազգությունների, մանավանդ թուրք ժողովրդի հետ: Տնտեսական եւ առեւտրական փոխհարաբերությունների զարգացումը ավելի եւս կնպաստի հայ ժողովրդի մերձեցմանն թուրք, պարսիկ եւ տաճիկ ժողովուրդների հետ: Կառավարությունը նաեւ պիտի ձգտի ապահովել միջազգային բոլոր բարեկամ ուժերի օժանդակությունը մեր ազգային դատի բարեհաջող լուծման համար»:

Կառավարությունը վստահ էր, որ ժողովրդի միակամ աջակցության պայմաններում ինքը կարող է կատարել իր առաքելությունը: «Լիահույս լինելով, որ Լեռնահայաստանի ազատատենչ ժողովուրդը եւ պարտաճանաչ պաշտոնեությունը ոչ մի ջանք չեն խնայի ընդառաջ գնալու եւ բոլոր ուժերով աջակցելու կառավարությանդ համագումարի կողմից նրա վրա դրած պարտականությունները կատարելիս, նաեւ վստահ լինելով, որ Սյունյաց Աշխարհի հերոսացած Դավիթբեկյան զորքերը, միացած բուն Հայաստանի զորամասերի հետ, նորանոր սխրագործություններով պիտի զորավիգ հանդիսանան կառավարությանը, իրենց Սպարապետի ղեկավարությամբ՝ Լեռնահայաստանի կառավարությունը ստանձնում է երկրի ծանր ղեկը»:

Այսպիսով, 1921թ. ապրիլի 27-ից մի փոքր լեռնաշխարհում կողք կողքի գոյություն ունեին դաշնակցական երկու կառավարություններ՝ Սիմոն Վրացյանի գլխավորած Հայաստանի Հանրապետության նոր կառավարությունը եւ Լեռնահայաստանի հանրապետության նոր կառավարությունը՝ Գարեգին Նժդեհի վարչապետությամբ: «Մի կտոր հողի վրա երկու կառավարություն», – հեգնանքով գրում էր նշանավոր դաշնակցական գործիչներից մեկը:

Նժդեհը նշում էր, որ Լեռնահայաստանի ստեղծման նպատակը «ոչ թե Սյունիքի անկախ գոյությունը երկարացնելն էր», «այլ որպեսզի այդ ապստամբ երկրամասին հնարավորություն տրվեր մի որոշ ժամանակով եւս դիմագրավելու իրեն օղակող թշնամիներին», մինչեւ որ Երեւանից փախչող հայ մտավորականությունը, երկրից հեռացող արեւմտահայ զորամասերը, սպայության մեծագույն մասը, խմբապետների մի որոշ մասը անցնեն Պարսկաստան»:

Արաքսի հայկական ափին՝ Մեղրի գյուղի դիմաց, շարունակում էին խռնվել հազարավոր գաղթականներ:

Նժդեհը ստիպված էր երկրորդ անգամ անցնելու Արաքսը եւ անձամբ տեսնվելու պարսից իշխանության ներկայացուցիչների եւ իր բարեկամ խաների հետ: Պարսկական կողմն այն մտահոգությունն ուներ, որ Սյունիքից Արաքսն անցնողների մեջ մեծ թիվ կարող են կազմել զինվորական ուժերը: Դա նրան հիմք էր տալիս կարծելու, որ զանգեզուրցիները որոշել են դադարեցնել կռիվը կարմիր բանակի դեմ, այն դեպքում, երբ իրենք հույս ունեին, որ Սյունիքը ի վիճակի է լինելու կանգնեցնել բոլշեւիկների առաջխաղացումը եւ նրանց հեռու պահել պարսկական սահմանից:

Նժդեհին հարկ եղավ բազմիցս հավաստիացնելու պարսկական իշխանությունների ներկայացուցիչներին, որ Սյունիքը չի մտածում տեղի տալու, որ արարատյան գաղթականությունը փոխադրվում է Պարսկաստան ոչ թե Սյունիքը վտանգված լինելու պատճառով, այլ որովհետեւ այնտեղ հաց չկա: Բացառված համարելով Սյունիքի անձնատվությունը՝ Նժդեհը նշում էր, որ ինքը իր զինված ուժերի հետ «մինչեւ վերջին փամփուշտը» կռվելու է անկախության համար:

Իր բարեկամ խաների հետ զրույցների ընթացքում պարզվեց նաեւ, որ որոշ մութ ուժեր պարսկական ափում սադրիչ լուրեր են տարածել, թե ինքը՝ Նժդեհը, պատրաստվում է լքել Զանգեզուրը եւ անցնել Պարսկաստան: Այս տեղեկությունը հատկապես խիստ բացասաբար էր անդրադարձել պարսկական կողմի վրա, որը եւ որոշել էր փակել գետանցը:

Թյուրիմացությունները պարզելուց հետո վերսկսվեց գաղթականության անցը Արաքսի վրայով: Նժդեհը վերադարձավ Գորիս:

«Ահա թե նաեւ ի՞նչ պատճառներով 3-4 ամիս եւս անհրաժեշտ էր դառնում երկարաձգել Ազատ Լեռնահայաստանի գոյությունը», – գրել է Նժդեհը:

■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց երկիր


ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ

# Գորիսեցիները Հայրենական մեծ պատերազմում



ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գորիսի պետական համալսարանի դասախոս

**Խորհրդային Միության եւ սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզումից հետո ազգային բոլոր միջավայրերում ակտիվ քննարկումներ ծավալվեցին պատմության հիմնախնդիրների վերանայման, վերագնահատման ուղղությամբ:**

Պատմագիտական վերագնահատումների հիմնական առարկա դարձան հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ նրա հիմնական մաս կազմող Հայրենական մեծ պատերազմի (1941-1945թթ.) պատմության հարցերը, ինչը պայմանավորված էր այդ իրադարձությունների շրջադարձային լինելու հանգամանքով՝ թե՛ կորուստների եւ թե՛ ձեռքբերումների իմաստով: Սակայն վերագնահատումները միշտ չէ, որ ուղղված էին պատմական օբյեկտիվության բացահայտմանը կամ վերականգնմանը: Առանձին երկրներում (նախկին Խորհրդային Միության կազմի մեջ մտնող որոշ հանրապետություններ եւ արեւելաեվրոպական երկրներ) գաղափարական եւ քաղաքական բազմաթիվ գործոնների ազդեցությամբ այդ վերագնահատումները կատարեցին հակառակ ծայրահեղությամբ՝ արդյունքում խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը: Սակայն այդ հարցի քննարկումը չէ այսօրվա մեր թեման: Փաստն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում Հայրենական մեծ պատերազմի պատմության վերագնահատման անհրաժեշտություն ունեցող հարցերը քննարկվել են պատմական օբյեկտիվության սահմաններում, իսկ երկրում գործող քաղաքական ուժերը միշտ էլ հավասարակշռված մոտեցում են ցուցաբերել այդ իրադարձության քաղաքական գնահատականի հարցում՝ առանց հարցականի տակ դնելու մեր ժողովրդի մի ամբողջ սերնդի բարոյական կերպարը: Ավելին, մեր երկրում արդարացիորեն միշտ էլ բարձր են գնահատվել Հայրենական մեծ պատերազմում ձեռք բերված հաղթանակը եւ այդ հաղթանակը կրող սերնդի ներդրումն ու ավանդը մեր ազգային մարտական ոգու անմրապնդման ու հայրենիքի շենացման գործերում:

Հայ ժողովուրդը Խորհրդային Միության մյուս ժողովուրդների հետ միասին անուրանալի ներդրում ունի ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում: Ընդհանուր հաշվով պատերազմին մասնակցեցին 600000 հայեր, որոնցից 200000-ը զոհվեց ռազմական գործողությունների ընթացքում(1): Նշենք, որ այդ պատերազմում Խորհրդային Միության մարդկային կորուստները հասան 27 միլիոնի: Հայերից 106 հոգի արժանացան Խորհրդային Միության հերոսի բարձրագույն կոչման(2):

Քաղաքակրթության պատմության մեջ իր ընդգրկմամբ, ընթացքով եւ հետեւանքներով աննախադեպ այդ ռազմական բախումը չշրջանցեց նաեւ Գորիսի շրջանը: Դարերի ընթացքում գոյության, արժանապատվության, ազգային ինքնության համար պայքարը կենսաձեւ դարձրած գորիսեցին նորից հայտնվեց պատերազմի փոթորիկների մեջ: Պատերազմին շրջանի ակտիվ մասնակցությունն արտահայտվեց ոչ միայն թիկունքում բնակչության ծայրահեղ զրկանքների հաղթահարման գնով, աշխատանքային սխրանքներով ու ռազմական գործողություններին ուղղակի մասնակիցների թվով, այլ նաեւ տարբեր ռազմաճակատներում նրա բազմաթիվ զավակների զորավարական տաղանդով ու մարտական սխրանքներով:

Պատերազմի բոթը Գորիս հասավ հունիսի 22-ին, երբ ռադիոն Խորհրդային Միության ամբողջ տարածքով մեկ սփռեց Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակման մասին պաշտոնական հաղորդագրությունը: Պատերազմի առաջին իսկ օրերին Խորհրդային Միության կենտրոնական մարմինների կողմից կիրառվող արտակարգ միջոցառումների պահանջներին համապատասխան՝ շրջանային խորհրդի գործադիր կոմիտեն եւ շրջանային զինկոմիսարիատն անցան լարված աշխատանքի: Հասարակական բոլոր ոլորտների կենսագործունեությունն ուղղվեց պատերազմի պահանջների բավարարմանը:

Ընդհանուր թվով պատերազմի ընթացքում Գորիսի շրջանից բանակ զորակոչվեց 9146 մարդ: Նրանցից 4144-ը զոհվեց տարբեր ռազմաճակատներում: Գորիսեցի մարտիկների մեծ մասը՝ հիմնականում ուսուցիչներ, զոհվեցին Բելոռուսիայի համար մղվող արյունահեղ մարտերում: Սյունիքի մարզպետի նախաձեռնությամբ անցած տարի մի հրաշալի խաչքար ուղարկվեց Բելոռուսիա՝ մեր սրբազան զոհերի հիշատակի հավերժացման համար:

Գորիսի շրջանից զորակոչվածները գործող բանակի տարբեր ռազմաճակատներում, Խորհրդային Միության արեւմտյան շրջաններում ձեւավորված պարտիզանական ջոկատների ու ընդհատակյա կազմակերպությունների կազմում, եվրոպական տարբեր երկրներում ծավալված դիմադրական շարժման ռազմական կազմավորումների շարքերում ակտիվ մասնակցություն ունեցան ֆաշիզմի դեմ մղվող պայքարին:

Մեր շրջանի չորս զավակներ պատերազմի ընթացքում արժանացան Խորհրդային Միության հերոսի բարձրագույն կոչման, իսկ մեկը՝ Փառքի 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի շքանշանների: Նշենք, որ 1967թ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով Փառքի երեք աստիճաններով պարգեւատրվածների իրավունքներն ու արտոնությունները հավասարեցվեցին Խորհրդային Միության հերոսի կոչման իրավունքներին ու արտոնություններին:

Մեր հայրենակիցներից առաջինը հետմահու այդ բարձրագույն կոչմանն արժանացավ 2-րդ տանկային բանակի 11-րդ առանձին տանկային բրիգադի հրամանատարի քաղգծով տեղակալ, գվարդիայի գնդապետ Գրիգոր Գալստյանը(3): Ծնվել է 1908թ. Բաքվում՝ այնտեղ տեղափոխված քարահունջեցու ընտանիքում: Այդ կոչմանն արժանացավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1943թ. նոյեմբերի 4-ի հրամանագրով՝ Կուրսկի ահեղ ճակատամարտի ընթացքում բրիգադի հարձակողական գործողությունները նրա հրամանատարի հետ միասին հմտորեն ու արդյունավետ կազմակերպելու համար: 1943թ. օգոստոսի 4-ին հենց այդ գործողությունների ընթացքում խիզախ հրամանատարը զոհվեց խրամատում, իր զինվորների կողքին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944թ. հունվարի 10-ի հրամանագրով Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց Կենտրոնական ռազմաճակատի 61-րդ բանակի 14-րդ գվարդիական հեծյալ դիվիզիայի 54-րդ էսկադրոնի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Գուրգեն Արզումանյանին (1914թ., Խնձորեսկ): Հերոս զանգեզուրցին բարձրագույն կոչմանն արժանացավ Դեսնայի վտակ Սնովի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության համար: Կոչումը նրան շնորհվեց հետմահու: Գուրգեն Արզումանյանի պարգեւատրման թերթիկի տակ ստորագրել էր Կենտրոնական ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Կ.Ռոկոսովսկին(4):

Փառահեղ մարտական կենսագրություն կերտեց 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի 526-րդ հրաձգային գնդի I գնդացրային վաշտի հրամանատար, ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանը (Տաթեւ, 1911թ.): Կրասնոդարի երկրամասի Անապայի շրջանի Կուրբացկի խուտորի համար մղվող թեժ մարտերում խիզախ հայորդին իր մարմնով փակում է հակառակորդի կրակակետի ելքը եւ այդ քայլով հնարավորություն տալիս հետեւակին շրջանցել ու գրավել կրակակետը: Նշենք, որ ընդամենը մի քանի օր առաջ՝ սեպտեմբերի 16-ին, նման սխրանք կատարել էր մեկ այլ սյունեցի՝ նույն դիվիզիայի մարտիկ Հունան Ավետիսյանը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944թ. մայիսի 16-ի հրամանագրով Սուրեն Առաքելյանին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում(5):

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944թ. հունիսի 22-ի հրամանագրով Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց I Բելոռուսական ռազմաճակատի 6-րդ գվարդիական բանակի 51-րդ հրաձգային դիվիզիայի 158-րդ գնդի գնդացրային հաշվարկի հրամանատար, եֆրեյտոր Արամայիս Սարկիսյանին (1922թ., գ. Տեղ): Նրա պարգեւատրման թերթիկում, որն ստորագրել է բանակի հրամանատար, գեներալ-գնդապետ Չեստյակովը, նշվում է, որ խիզախ հայորդին այդ բարձր կոչմանն արժանացել է 1944թ. հունիսի 25-ին Արեւմտյան Դվինի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության համար(6):

Պատերազմի ընթացքում զինվորական տարբեր աստիճաններով բազմաթիվ գորիսեցիներ, այդ թվում՝ գեներալներ, գնդապետներ, փոխգնդապետներ, գլխավորում էին խորհրդային բանակի տարբեր ստորաբաժանումներ եւ պատվով կատարեցին հրամանատարական իրենց պարտականությունները:

Պատերազմի սկզբում՝ խորհրդային բանակի ամենածանր օրերին, Հարավարեւմտյան ռազմաճակատի 12-րդ բանակի շտաբը գլխավորում էր գեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը (ծնվել է Վերիշենում): Նա խորհրդային բանակում առաջիններից մեկն էր, որ արժանացավ գեներալ-մայորի աստիճանի: 12-րդ բանակը չափազանց վճռական դեր խաղաց պատերազմի սկզբնական փուլում եւ պատահական չէ, որ գեներալը 1941թ. նոյեմբերի 29-ին պարգեւատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: 1943թ. դեկտեմբերին մեր հայրենակիցը նշանակվում է 1-ին Բելոռուսական ռազմաճակատի 4-րդ հարվածային բանակի հրամանատարի տեղակալ: Նա գործնական մասնակցություն ունեցավ 1943թ. դեկտեմբերի 13-31-ն ընկած ժամանակահատվածում Գրոդնոյի հայտնի գործողության իրականացման գործում, որի արդյունքում մեր զորքերը գլխավոր ուղղությամբ առաջ շարժվեցին 60կմ խորությամբ(7): Շուտով նա նշանակվեց նույն ռազմաճակատի 4-րդ հարվածային բանակի 14-րդ հրաձգային կորպուսի հրամանատար եւ ակտիվ մասնակցություն ունեցավ Բելոռուսիայի ազատագրմանը(8): Տաղանդավոր զորահրամանատարը, մարտավարական իրավիճակից ելնելով, 1944թ. օգոստոսին նշանակվեց 2-րդ հարվածային բանակի 11-րդ գվարդիական կորպուսի հրամանատար եւ մասնակցեց Բելոռուսիայի վերջնական ազատագրմանը: Նա արժանացել է բազմաթիվ պետական շքանշանների: 1945թ. մայիսի 29-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգեւատրվեց Սուվորովի II աստիճանի շքանշանով եւ արժանացավ գեներալ-լեյտենանտի կոչման:

Մոսկվայի համար մղվող ռազմական գործողությունների ամենածանր օրերին հրամանատարական իր տաղանդով աչքի ընկավ 1-ին գվարդիական մոտոհրաձգային դիվիզիայի 6-րդ գնդի հրամանատար, փոխգնդապետ Ներսես Բալոյանը: Սմոլենսկի ճակատամարտի ընթացքում նրա գունդն առաջիններից մեկն էր, որ արժանացավ գվարդիականի կոչման: Իսկ Մոսկվայի մատույցներում Ն.Բալոյանի մարտավարական մանեւրները բարձր գնահատվեցին հրամանատարության կողմից, եւ նա զորապետների շրջանում կրեց «Բագրատիոն» մականունը: Դեկտեմբերի սկզբին խորհրդային զորքերի հակահարձակման ընթացքում գունդը նրա հրամանատարությամբ ակտիվ մասնակցություն ունեցավ մի շարք բնակավայրերի ազատագրմանը(9): Գնդի գործողությունները հմուտ կերպով ղեկավարելու համար պարգեւատրվեց Կարմիր Աստղի շքանշանով եւ ստացավ գնդապետի կոչում(10): Շուտով դարձավ 146-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար:

1943թ. հունիսի 16-ից Թամանյան դիվիզիայի 390–րդ հրաձգային գունդը գլխավորեց փոխգնդապետ Երվանդ Կարապետյանը (1904թ., Խնձորեսկ)(11): Գունդը հիմնական գործողությունները ծավալել էր Թաման թերակղզում հակառակորդի ամրացված դիրքերը ճեղքելու ուղղությամբ: Հենց նրա շարքերում էր մարտնչում Հունան Ավետիսյանը,

Շարունակությունը՝ էջ 66

## Խորհրդային միության գորիսեցի հերոսները



Արամայիս Սարգսյան



Գրիգոր Գալստյան



Գուրգեն Արզումանյան



Սուրեն Առաքելյան

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ **«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ **(0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02**
էլ.հասցե՝ **www.syuniacyerkir.am**
էլ.փոստ՝ **syuniacyerkir@mail.ru**
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010



# Գորիսեցիները Հայրենական մեծ պատերազմում

**Սկիզբը՝ էջ 65**

որը Դոլգայա բարձունքի գրավման ժամանակ կատարեց իր անօրինակ սխրագործությունը: Գունդը Ե.Կարապետյանի հրամանատարությամբ մասնակցեց նաեւ Ղրիմի թերակղզու ազատագրմանը:

Հայրենական մեծ պատերազմում աչքի ընկած մեր հայրենակիցների մեջ առանձնանում է նաեւ 32-րդ տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ, գնդապետ Մուշեղ Մինասյանը (1902 թ., Գորիս): Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին նա դասախոսում էր Մոսկվայի զրահատանկային ակադեմիայում: Պատերազմի սկզբնական փուլում հիմնականում զբաղված էր քաղաքական աշխատանքով: 1943թ. դեկտեմբերից եղել է Մերձբալթյան ռազմաճակատի տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ: Հատկապես աչքի ընկավ Մինսկի եւ Վիլնյուսի ուղղություններով մղվող մարտական գործողությունների ընթացքում եւ զորավարական հնարամտության համար պարգեւատրվեց Կարմիր դրոշի շքանշանով:

1945թ. մարտի 4-ին ԽՍՀՄ Գերագույն գլխավոր հրամանատարությունը լեհական Դրավսկա-Պոմորսկ քաղաքի ազատագրման համար հատուկ շնորհակալություն հայտնեց 1-ին Բելոռուսական ռազմաճակատի 3-րդ հարվածային բանակի 146-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմին, որի հրամանատարն էր գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը (1899թ., Խնձորեսկ): Դիվիզիան մարտերով հասավ մինչեւ Բեռլին: 1945թ. մայիսի 29-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով գեներալը պարգեւատրվեց Սուվորովի I աստիճանի շքանշանով: Նույն հրամանագրով Սուվորովի II աստիճանի շքանշանով պարգեւատրվեց նաեւ մեր մեկ այլ հայրենակից, Բելոռուսական 3-րդ ռազմաճակատի 11-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը:

Բացի վերոհիշյալից՝ մեր հայրենակից հարյուրավոր կրտսեր սպաներ, շարքային զինվորներ, ռազմական ավիացիայի օդաչուներ աչքի ընկան տարբեր ուղղություններով մղվող մարտական գործողություններում:

Մոսկվայի պաշտպանության ծանր օրերին ժողովրդական աշխարհազորի 4-րդ դիվիզիայի 3-րդ գնդի քիմիական ծառայությունը գլխավորում էր լեյտենանտ Սամվել Միրզոյանը (1918թ., Գորիս): Այնուհետեւ նա դառնում է հարավարեւմտյան ռազմաճակատի 908-րդ կործանիչ ավիագնդի քիմիական ծառայության պետ, մասնակցում Ուկրաինայի եւ Լեհաստանի ազատագրման համար մղվող մարտերին: Հետագայում դարձավ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ինֆորմատիզացման միջազգային ակադեմիայի ակադեմիկոս:

Կուրսկի ճակատամարտի օրերին 16-րդ ռազմաօդային բանակում իր մարտական սխրանքներով հատկապես աչքի ընկավ 455-րդ ավիոէսկադրիլայի կապի ավագ Սմբատ Մկրտչյանը (1914թ., Տաթեւ), որը պարգեւատրվեց կառավարական տարբեր պարգեւներով (12): 1944թ. օգոստոսի 2-ին ռազմաօդային բանակի հրամանատարի կողմից պարգեւատրվեց Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով (13):

Կովկասի համար մղվող մարտերում ցուցաբերած խիզախության համար պարգեւատրվածների թվում էին 400-րդ հրաձգային գնդի լեյտենանտ Խիկար Բարսեղյանը՝(14) հետագայում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 61-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, գնդի կոմիսար Սուրեն Թովմասյանը՝(15) հետագայում նշանավոր պետական-քաղաքական գործիչ, 61-րդ հրաձգային դիվիզիայի առանձին գնդացրային գումարտակի 1-ին գնդացրային վաշտի 1-ին դասակի հրամանատար լեյտենանտ Արամ Հարությունյանը (1921թ., Տաթեւ),(16) ծովային բրիգադի գնդացրորդ, 2-րդ կարգի ավագ Խաչատուր Բակունցը (Գորիս): Կերչի համար մղվող մարտերում հետմահու Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով պարգեւատրվեց Սուրեն Շահնազարյանը (1910թ., Խնձորեսկ): Նշվածներից Սուրեն Թովմասյանը հետագայում՝ 1944թ. հոկտեմբերի 7-ին, մարշալ Կ.Ռոկոսովսկու հրամանով պարգեւատրվեց Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով(17): Նույն՝ 61-րդ դիվիզիան 28-րդ բանակի կազմում ակտիվ մասնակցություն ունեցավ Պրահայի շրջանում ընթացող մարտերին, որտեղ նորից աչքի ընկավ՝ արդեն որպես դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ: Մեր հայրենակիցներից այդ մարտերում աչքի ընկավ նաեւ գնդի հակահետախուզության ավագ օպերլիազոր, կապիտան Արամայիս Տատինցյանը: Նշենք, որ այս դիվիզիան կազմավորվել էր Հայաստանում եւ մեծ թվով հայ ռազմիկներ էին ծառայում նրա շարքերում:

Ուկրաինայի համար մղվող մարտերում աչքի ընկած մեր հայրենակիցներից է հրետանային գնդի կապիտան Անդրանիկ Ղահրամանյանը (1908թ., Քարահունջ): Դնեպրի անցման ընթացքում նա արդեն մայորի աստիճանով առաջնորդում էր 310-րդ գվարդիական հրետանային գունդը: Ղահրամանյանի պարգեւատրման թերթիկում դիվիզիայի հրամանատար գեներալ-գնդապետ Ֆոգելն ուղղակի գրում է. «Մարտական գործողությունների ընթացքում ընկ. Ղահրամանյանն իրեն դրսեւորեց որպես խելացի եւ վճռական սպա»(18): 1944թ. հուլիսի 27-ին Բելոստոկ քաղաքի ազատագրման մարտերին ակտիվ մասնակցություն ունեցավ 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի 120-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 310-րդ գվարդիական հրետանային գունդը, որի հրամանատարն էր արդեն փոխգնդապետ Անդրանիկ Ղահրամանյանը: 1944թ. հուլիսի 27-ին Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանագրով գնդի անձնակազմին շնորհակալություն հայտնվեց, եւ գունդը վերանվանվեց Բելոստոկյան(19): Պատերազմի ավարտական փուլում գունդը գլխավորում էր Էլբայի ուղղությամբ մղվող մարտերը:

1944թ. օգոստոսի 12-ին Կարելական ռազմաճակատի հրամանատարի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգեւատրվեց Դաշտային վիրաբուժական շարժական հոսպիտալի պետ, բժշկական ծառայության մայոր (հետագայում՝ գնդապետ) Եղիշե Օհանյանը (1915թ., Զորաշեն), որն իր մասնագիտական ծառայությունն իրականացնում էր, ինչպես նշված է պարգեւատրման թերթիկում, «հրետանու անընդհատ կրակի տակ, առաջին գծում»(20):

Մերձբալթիկայում ընթացող մարտերի ժամանակ աչքի ընկավ 51-րդ տանկային բանակի առանձին ծանր տանկային գնդի 1-ին վաշտի հրամանատար, կապիտան Աբել Սիմոնյանը (1922թ., Խնձորեսկ): 1944թ. սեպտեմբերի 20-ին բանակի հրամանատարի կողմից նա պարգեւատրվեց Կարմիր դրոշի շքանշանով(21):

Լենինգրադի (Սանկտ-Պետերբուրգ) պաշտպանության համար մղվող անհավասար մարտերում 1941թ. սեպտեմբերին զոհվեց հատուկ նշանակության III գնդացրային գումարտակի շտաբի պետ Վլադիմիր Օրբելովը: Նա հետմահու արժանացավ կառավարական շքանշանի: Մինչեւ պատերազմը ճանաչված սպորտային լրագրող էր եւ աշխատում էր «Կրասնի սպորտ», «Սովետսկի սպորտ» թերթերում: Օրբելովը ծագում էր Օրբելյան նշանավոր տոհմից:

Լենինգրադի ճեղքման համար մղվող ահեղ մարտերում աչքի ընկավ 63-րդ գվարդիական դիվիզիայի 188-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատարի քաղգծով տեղակալ մայոր Արամ Սիլանյանը: Ծնվել է Բաքվում՝ այնտեղ տեղափոխված խնձորեսկցիների ընտանիքում: Այդ մարտերում աչքի ընկավ նաեւ 2-րդ հրաձգային դիվիզիայի 261-րդ հրաձգային գնդի ականանետային հաշվարկի հրամանատար, լեյտենանտ Սերո Խանզադյանը:


ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ
Գորիս, Հայկազունիների 4
Հեռախոսներ՝
(0284) 2 01 85,
(099) 10 10 96


*Լույսի եւ շնորհաբաշխության աղբյուր՝ 1928 թվականից*
- Տասնամյակների ավանդույթ, փորձ, կրթության եւ դաստիարակության արդիական մեթոդներ, ուսումնանյութական հարուստ բազա, դասախոսական բարձրորակ անձնակազմ
- Առանց ընդունելության քննությունների Գորիսի պետհամալսարանում եւ հանրապետության մյուս պետական բուհերում ուսումը շարունակելու հնարավորություն




№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ **«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ **(0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02**
էլ.հասցե՝ **www.syuniacyerkir.am**
էլ.փոստ՝ **syuniacyerkir@mail.ru**
Սյունյաց երկիր





Կարմիր աստղի եւ Փառքի 3-րդ աստիճանի շքանշաններով է պարգեւատրվել Գուրգեն Ադունցը: Նրա մարտական կենսագրությունը կապված է Թամանյան 89-րդ հայկական դիվիզիայի մարտական ուղու հետ՝ Թերեքից մինչեւ Բեռլին:

Արեւելյան Եվրոպայի ազատագրական մարտերում իր սխրանքներով աչքի ընկավ Արկադիա Հարությունյանը (Թունյան) (1918թ., Խնձորեսկ): Ավարտելով Օռլովի զրահատանկային ռազմական ուսումնարանը, այնուհետեւ որպես տանկային դասակի հրամանատար, մարտերի մեջ է մտնում Կուրսկի աղեղում: 1943թ. հունիսի 12-ին մասնակցել է Պրոխորովկայի շրջանում՝ մարդկության պատմության մեջ երբեւէ տեղի ունեցած ամենախոշոր տանկային ճակատամարտին: Նա ակտիվ մասնակցություն ունեցավ հատկապես Լեհաստանի ազատագրման համար մղվող ահեղ մարտերին: Լեհական կառավարությունը, բարձր գնահատելով Ա. Հարությունյանի մատուցած ծառայությունները, նրան պարգեւատրել է Վերետուրի Վերետարի (Փառքի խաչ) 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի շքանշաններով եւ շնորհել Լեհաստանի պատվավոր քաղաքացիություն: Պարգեւատրվել է նաեւ Խորհրդային Միության մի շարք շքանշաններով:

Լեհաստանի ազատագրության համար մղվող մարտերում աչքի ընկավ նաեւ Անտոն Հախնազարյանը (1923թ., Խնձորեսկ): Նրա մարտական սխրանքների մասին դեռեւս պատերազմի տարիներին գրվել է հանրապետական մամուլում: Լեհական կառավարությունը, բարձր գնահատելով Ա.Հախնազարյանի մարտական սխրանքները, հետմահու պարգեւատրեց «Փառքի խաչ» շքանշանով:

Մեր հայրենակիցներն ակտիվ մասնակցություն ունեցան նաեւ ԽՍՀՄ արեւմտյան շրջաններում ծավալված ընդհատակյա ու պարտիզանական եւ եվրոպական ժողովուրդների դիմադրական շարժումներին: Այդ տեսակետից իր մարտական կենսագրությամբ առանձնանում է Հովհաննես (Մանուչ) Խաչատրյանը (1916թ., Տեղ): Նա պատերազմը դիմավորել է Բելոռուսիայում՝ ծանր պաշտպանական մարտեր մղող 56-րդ հրաձգային դիվիզիայի 37-րդ գնդի կազմում: Այդ զորամիավորման կազմալուծումից հետո միանում է Բելոռուսիայի պարտիզաններին եւ մարտնչում նրանց շարքերում: Շուտով դառնում է 61-րդ պարտիզանական ջոկատի, իսկ 1943թ.՝ 5-րդ պարտիզանական բրիգադի կոմիսարը: Բելոռուսիայի ազատագրության համար մղվող մարտերին մասնակցեց որպես Չապաեւի անվան 620-րդ պարտիզանական գնդի կոմիսար: Պարգեւատրվել է բազմաթիվ շքանշաններով:

Ավետիք Բուդաղյանը (1917թ., Խնձորեսկ) պատերազմը դիմավորել է Մոլդովիայում: Ծանր մարտերի ընթացքում դուրս գալով շրջապատման օղակից՝ միանում է Ուկրաինայում գործող «Հանուն հայրենքի» պատիզանական միավորմանը, կռվում նրա կազմի մեջ մտնող «Խորհրդային Մոլդովիա» պարտիզանական ջոկատի շարքերում: Հետագայում դառնում է այդ ջոկատի հրամանատարը: 1944թ. մարտ ամսին իր մարտական մի քանի ընկերների հետ միասին հերթական առաջադրանքի կատարման ժամանակ մատնվում է դավաճանի կողմից եւ զոհվում ուկրաինական Նագորնոյե գյուղի մատույցներում:

Ֆրանսիայում ծավալված դիմադրական շարժման ականավոր գործիչներից է Արբեն (Ղազար) Դավթյանը: Խորհրդային Միությունում նախապատերազմական ժամանակաշրջանում ծավալված բռնությունները պատճառ դարձան մեր խիզախ հայրենակցի ոդիսականի համար: Կուսակցության XVII համագումարի եւ Ս.Կիրովի սպանության հետ կապված զանգվածային բռնությունների կանխազգացումը ստիպեց կուսակցական պատասխանատու պաշտոններ վարող Արբեն Դավթյանին 1935թ. հեռանալ նախ Իրան, ապա Ֆրանսիա: Գերմանական օկուպացիայից հետո Ա.Դավթյանն ընդգրկվում է ընդհատակյա հայրենասիրական խմբի մեջ՝ բնակչության շրջանում քարոզչական աշխատանքներ իրականացնելու նպատակով: 1943թ. մարտին անդամագրվում է «Ստալինգրադ» ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատին եւ ակտիվ մասնակցություն ունենում հակաֆաշիստական ահաբեկչական գործողություններին: Ձերբակալվել է նույն թվականի նոյեմբերի 20-ին եւ գնդակահարվել 1944թ. փետրվարի 21-ին Փարիզի Մոն Վալերիեն արվարձանում: Թաղված է Պեր-Լաշեզ գերեզմանատանը: Գերեզմանի վրա կանգնեցված է «Հերոս Արբեն Դավթյան» գրառումով հուշասյունը:

Ֆրանսիական դիմադրական շարժման շարքերում մարտնչեց նաեւ Վահան Օհանյանը: Ծնվել է 1911թ. Վերիշեն գյուղում: Նրա ընտանիքը Վերիշեն է տեղափոխվել Զանգեզուրի գավառի Մինքենդ գյուղից 1905թ. հայ-թուրքական ընդհարումների հետեւանքով: Մասնակցել է Կովկասի պաշտպանության համար մղվող մարտերին, այնուհետեւ գերի ընկել, փախել գերմանական համակենտրոնացման ճամբարից եւ միացել Ֆրանսիացի պարտիզաններին: Պատերազմի հաղթական ավարտից հետո վերադարձել է հայրենիք, զբաղվել գիտությամբ, դարձել գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դասախոսել Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում, այնուհետեւ զբաղեցրել պատասխանատու պաշտոններ գյուղատնտեսության ոլորտում:

Բացի պատերազմի տարբեր ռազմաճակատներում դրսեւորած մարտական անկոտրում ոգուց՝ մեր հայրենակիցներից շատերը գիտական անուրանալի ներդրում ունեցան ռազմական արդյունաբերության կազմակերպման ու արդյունավետ զարգացման գործում:

Հատկապես փայլուն կենսագրություն ունեցավ ինժեներահրետանային ծառայության գեներալ-մայոր, ԽՍՀՄ պետական մրցանակի քառակի դափնեկիր Համո Յոլյանը: Ծնվել է 1903թ. հունվարի 10-ին Գորիս քաղաքում: Սովորել է ծննդավայրի դպրոցում, այնուհետեւ ավարտել Շուշիի ռեալական ուսումնարանը: Բարձրագույն կրթությունն ստացել է Բաքվում: Պատերազմի տարիներին գլխավորել է Գորկու 92-րդ հրետանային գործարանը: Միաժամանակ, որպես կոնստրուկտոր, մեծ ներդրում ունի խորհրդային հրետանային տեխնիկայի զարգացման գործում: Իրենց մարտական հատկանիշներով հատկապես փառավորվեցին 72մմ-ոց հակատանկային հրանոթները, որոնք վճռական դեր խաղացին գերմանական զրահատանկային տեխնիկայի դեմ պայքարի ընթացքում: Նշենք, որ պատերազմի տարիներին գերմանական ռազմավարության մեջ առանցքային տեղ էր հատկացված կոնկրետ ուղղություններում տանկային զանգվածային հարվածներին: Հենց այդ նկատառումով խորհրդային հրամանատարությունը լուրջ ուշադրություն էր դարձնում հակատանկային հրետանու կատարելագործմանը, ինչի հետ եւ կապված էր մեր տաղանդավոր հայրենակցի գիտական գործունեությունը: Պատերազմից հետո Հ.Յոլյանը մասնակցեց նաեւ զենիթային հրթիռային համալիրների ստեղծմանը, այդ թվում՝ աշխարհում առաջին հակաօդային պաշտպանության C-25 «Բերկուտ» համակարգի ստեղծմանը: 1952թ. նշանակվեց ԽՍՀՄ սպառազինության նախարարի առաջին տեղակալ, սակայն 1955թ. անհիմն մեղադրանքով ազատվեց պաշտոնից եւ զորացրվեց, ինչը ծանր բարոյական ու հոգեկան հարված էր մեծ գիտնականի համար:

Պատերազմի տարիներին իր գիտական տաղանդով ռազմական արդյունաբերության ոլորտում նշանակալից ներդրում ունեցավ ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Անդրանիկ Ամարյանը (1914թ., Գորիս): Նա ակտիվ մասնակցություն ունեցավ Խորհրդային Միությունում կոբալտի ստացման տեխնոլոգիաների մշակման գիտական աշխատանքներին: Պատերազմի տարիներին մշակեց ռեակտիվ ականների բաղադրամասերի ջերմամշակման տեխնոլոգիաներ, որոնք շրջադարձային նշանակություն ունեցան ռազմական արդյունաբերության այդ ոլորտի հետագա զարգացման համար: Պատերազմից հետո մեծ ներդրում ունեցավ ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի զարգացման գործում:

1940թ. մինչեւ պատերազմի ավարտը՝ 1945թ., Տուլայի հռչակավոր ռազմական գործարանի տնօրենն էր ինժեներ-կոնստրուկտոր Սուրեն Վարդազարյանը: Ծնվել է Մինքենդ գյուղում 1906թ.: Հայ-թուրքական ընդհարումների հետեւանքով նրանց ընտանիքը տեղափոխվել էր Վերիշեն: Նա մեծ ներդրում ունի հրաձգային զենքերի տեխնիկական հնարավորությունների եւ դրանց արտադրության կատարելագործման ասպարեզում: Արժանացել է պետական բարձր պարգեւների:

Պատերազմին մասնակից մեր շատ հայրենակիցներ, որոնք աչքի են ընկել ռազմաճակատի տարբեր

**Շարունակությունը՝ էջ 68**

44 ՏԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
«ԶԱՆԳԵԶՈՒՐՏՐԱՆՍՇԻՆ»
փակ բաժնետիրական ընկերություն





ԳՈՐԻՍ, ԳԱԼՍՏՅԱՆ 2
**(0284) 2 17 47, (093) 92 96 96**

Էլ.հասցե www.syuniacyerkir.am
Էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
(0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010



# Գորիսեցիները Հայրենական մեծ պատերազմում



Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

**Հայրենական մեծ պատերազմում զոհված գորիսեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը: Կառուցվել է 1980-ին՝ գորիսեցիների հանգանակած միջոցներով: Նախագծի հեղինակ եւ ճարտարապետ՝ Գեւորգ Մուշեղյան: Հուշարձանի շրջակայքը վերակառուցվել է 1985թ.՝ Սեւադա Զաքարյանի նախագծով, Գորիսի քաղխորհրդի գործկոմի պապվերով (գործկոմի նախագահ՝ Գրիշա Մանուչարյան):**

Սկիզբը՝ էջ 67

հատվածներում, հետագայում դարձան գիտության ու մշակույթի նշանավոր ներկայացուցիչներ:

Հայրենական մեծ պատերազմի փոթորիկներով են անցել հետագայում ականավոր գրողներ Սուրեն Այվազյանը, Գարեգին Սեւունցը, Սերո Խանզադյանը: Իսկ բազմաթիվ տաղանդավոր երիտասարդներ, ովքեր իրենց գրական առաջին քայլերն էին կատարում եւ արդեն արժանացել էին գրական ավագանու գնահատականին, իրենց անունը փառքով պսակեցին պատերազմի տարբեր ռազմաճակատներում եւ որպես ցավի ու ափսոսանքի խորան՝ թողեցին մի «անավարտ քնար»:

Անդրանիկ Աղաբեկյանը (1912թ., Ազատաշեն) որպես ուսուցիչ աշխատել է Գորիսի շրջանի գյուղերում, այնուհետեւ զորակոչվել բանակ, մասնակցել խորհրդաֆիննական պատերազմին: Հայրենական մեծ պատերազմը դիմավորել է Բելոռուսիայում, որտեղ ընթացող դաժան մարտերի ընթացքում էլ ընկավ քաջի մահով: 1935-1938թթ. նրա ստեղծագործությունները տպագրվեցին հանրապետական գրական մամուլում, որոնք բարձր գնահատականի արժանացան Ն.Զարյանի կողմից: Տաղանդավոր բանաստեղծն իր ստեղծագործությունները տպագրում էր Ռաստի գրական կեղծանվամբ:

Բագրատ Միրզոյանը (1924թ., Խնձորեսկ) պատերազմի նախօրյակին աշխատում էր «Ստալինյան դրոշով» շրջանային թերթում: Հայրենական մեծ պատերազմի հենց առաջին օրերից մեկնել է ռազմաճակատ եւ զոհվել 1942թ. Կովկասի համար մղվող մարտերի ընթացքում: Գրական լուրջ ապագա խոստացող բանաստեղծի՝ մամուլում տպագրված ստեղծագործություններն ամբողջացվեցին եւ 1995թ. լույս տեսան «Ընդհատված քնար» վերնագրով:

Հանրապետական գրական մամուլում գրական ավագանու կողմից գնահատված եւ խոստումնալից արձակագիր էր Ռուբեն Միրզոյանը (1915թ., Խնձորեսկ): Նա պատմվածքներով հանդես է եկել Բաքվում լույս տեսնող «Խորհրդային գրող» ամսագրի էջերում Գ.Սեւունցի, Հ.Սահյանի, Ս.Այվազյանի, Թ.Հուրյանի հետ միասին: Պատերազմի առաջին օրերից կամավոր մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Ուկրաինայի համար մղվող մարտերին եւ զոհվել 1942թ. փետրվարին: 1960թ. անվանի գրող Ս.Այվազյանը, հավաքելով նրա՝ տարբեր տարիների մամուլում տպագրված պատմվածքները, ամբողջացրեց եւ հրատարակեց «Աղբյուրի մոտ» վերնագրով:

Պատերազմի բովով են անցել մեր հայրենակից բազմաթիվ տաղանդաշատ գիտնականներ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Վահան Ղազարյանը (1918թ., Խնձորեսկ), կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գաբրիել Խաչատրյանը (1924թ., Ակներ), մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գաբրիել Աղաբաբյանը (1913թ., Տեղ), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գյուլխասյանը (1915թ., Խնձորեսկ), ճարտարագիտության թեկնածու Շմավոն Գյուլխասյանը (1925թ., Խնձորեսկ), իրավաբանական գիտությունների դոկտոր Արմենակ Դանիելյանը (1912թ., Խնձորեսկ), փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Թելունցը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաղդասար Լալաբեկյանը (1911թ., Տեղ), բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Հասրաթյանը (1910թ., Տեղ), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հասրաթյանը (1917թ., Տեղ), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեորգի Հարությունովը (1913թ., Քարահունջ), կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտուն Մանուչարյանը (1925թ., Գորիս), կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Միրզոյանը (1918թ., Գորիս), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բենիկ Յուզբաշյանը (1919թ., Խնձորեսկ) եւ ուրիշներ, որոնք իրենց ուրույն տեղն ունեցան եւ ունեն գիտության տարբեր բնագավառներում:

Պատերազմը ռազմի փոթորիկների մեջ ընդգրկեց հասարակության տարբեր խավերի: Նրա կրակների միջով անցան տասնյակ բժիշկներ, ուսուցիչներ եւ այլ մասնագիտության մարդիկ, ովքեր պարգեւատրվեցին տարբեր շքանշաններով ու մեդալներով:

Մեր ժողովրդի համար Հայրենական մեծ պատերազմը ծանր փորձություն էր, որ գումարվեց 20-րդ դարի 20-30-ական թթ. քաղաքական բռնությունների արդյունքում ձեւավորված վախի ու սարսափի մթնոլորտին, բռնի կոլեկտիվացման հետեւանքով առաջ եկած սովին ու զրկանքներին: Պատերազմի արհավիրքները ռազմի փոթորիկներում այնպես սարսափելի չեն արտահայտվում, ինչպես թիկունքում, քանի որ ճակատում կրած կորուստների ողբերգական հետեւանքներն առավել տեսանելի են թիկունքում: Մի կողմից՝ կիսաքաղց, անտանելի աշխատանքային պայմաններ՝ զորանոցային ռեժիմով, մյուս կողմից՝ մարդկային հսկայական կորուստներ եւ, որպես հետեւանք, որդեկորույս մայրեր, այրիացած երիտասարդ կանայք, որբացած երեխաներ, փշրված սերեր...

Տարածաշրջանը հիմնականում գյուղատնտեսական էր, եւ բնակչության մեծ մասը զբաղված էր այդ ոլորտում: Ռազմաճակատ մեկնած տղամարդկանց աշխատանքային ասպարեզում փոխարինեցին ծերերը, կանայք ու երեխաները: Գորիս քաղաքում 1941թ. սեպտեմբերից սկսեցին կիրառել հացի մատակարարման քարտային համակարգ՝ երեխաների համար սահմանելով 450, իսկ չափահասների համար՝ 500 գրամ հաց: Ընդ որում, քարտային համակարգը վերաբերում էր միայն բանվոր-ծառայողներին: Գյուղացիությունը, որ բնակչության հիմնական զանգվածն էր, զրկված էր քարտային համակարգից օգտվելու հնարավորությունից: Հացի խնդիրն առավել բարդացավ, երբ Գորիսն ընդունեց ԽՍՀՄ արեւմտյան շրջաններից էվակուացված ավելի քան 800 ընտանիք: Վերացվեցին աշխատանքային օրվա տեւողության բոլոր սահմանափակումները, ինչպես նաեւ աշխատողների արձակուրդի եւ հանգստի իրավունքները: Հասարակական կյանքն ամբողջությամբ համապատասխանեցվեց «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» կարգախոսի պահանջներին(22):

Չնայած զրկանքներին ու «սեւ թղթերի» մեծաքանակ հոսքին՝ Գորիսի տարածաշրջանի բնակչությունը, «խանդավառ հայրենասիրությամբ տոգորված», կարողացավ հաղթահարել պատերազմի արհավիրքները: «Ստալինյան ուղիով» շրջանային թերթի 1941-1945թթ. համարները լի են աշխատավորների ու ռազմաճակատային զինվորների հայրենասիրական կոչերով, աշխատանքային ու մարտական սխրանքների մասին պատմող նյութերով: Զանազան ձեւեր էին ընդունում բանակին ուղղակի օգնության եւ պաշտպանության հիմնադրամին կանխիկ վճարումներ կատարելու նպատակով իրականացվող տեղական նախաձեռնությունները: Մարդիկ պաշտպանության հիմնադրամին էին տրամադրում իրենց վերջին խնայողությունները՝ դրանց մեջ տեսնելով հաղթանակի հույսը: Այսպես, օրինակ, Տեղ գյուղում կոլտնտեսականների ընդհանուր ժողովը որոշեց ստեղծել «պաշտպանական հեկտարներ»: Նյութական օգնությունները հիմնականում իրականացվում էին տաք հագուստեղենի եւ բնամթերքի ձեւով(23):

Տարածաշրջանի աշխատավորությունն իր նյութական միջոցներով ու կանխիկ վճարումներով ակտիվ մասնակցություն ունեցավ «Հայաստանի կոլտնտեսական», «Զանգեզուրի լեռնագործ», «Խորհրդային ուսուցչություն», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի կոմերիտական», «երկաթուղային», «Հայաստանի պիոներիա» տանկային շարասյուների եւ «Սովետական Հայաստան» զրահագնացի, ինչպես նաեւ «Հաղթանակ», «Երիտասարդ գվարդիա», «Սովետական արտիստ» ավիաէսկադրիլաների ստեղծմանը: Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ի.Ստալինը հատուկ շնորհակալություն հայտնեց Գորիսի շրջանի աշխատավորությանը՝ պաշտպանության հիմնադրամին իրենց ներդրման համար(24):

Պատերազմի հետեւանքներն իսկապես ծանր էին մեր շրջանի համար: Ա.Իսահակյանը 1948թ. հունիսին լինում է Գորիսում եւ այցելում Խնձորեսկ: Մեծ բանաստեղծն այդ կապակցությամբ գրառումներ է կատարել իր օրագրում, որոնք հետպատերազմյան հայ գյուղի տխուր պատկերներն են. «Խնձորեսկը ունի մոտավորապես 3000 բնակիչ, իսկ կռվում զոհ է տվել 575 հոգի:

Սա ինչ տոկոս է, զարհուրելի տոկոս է»:

«Դժոխք է Հայաստանը, դժոխք»:

«Աղքատություն, հող, քար ու քարափ, անջուր, թուրք եւ այլն...»:

«Խնձորեսկ՝ աղքատ, չափազանց մերկ, աղտոտ, ցնցոտիների մեջ...»:

«Վայ ես ձեր տիրոջ, ես ձեր պետերի հերն անիծեմ, էս ինչ օրի եք ձգել հայ ժողովրդին, ով թուրք, ով անգլիացի, ով գերմանացի, ով ֆրանսիացի...»:

«Վայ էն տանը, որ տան պստիկը պիտի կառավարե: Վայ էն քաղաքին, որի թագավորը մանուկ է: Վայ քեզ, քաղաք, որ թագավորդ մանուկ է: Վայ քեզ, տուն, որ քո պստիկն է կառավարում»:

«Հուսահատված ժողովուրդ, իսկի չի էլ ուզում դեպի տունը ճամփա շինել, սողալով է տուն մտնումխնձորեսկ: Զարհուրելի, չարաշահված... Աստծու, մարդկանց աչքից ընկած մարդիկ՝ հայեր... Սուկին սին, մամածաղի, քյոփակ օղլի»:

Անշուշտ, սարսափելի բնութագրություններ ու նկարագրություններ են: Բայց, այնուամենայնիվ, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակը հայ ժողովրդի մարտական ոգու վերականգնման, մարտական ավանդույթների վերաիմաստավորման դրսեւորում էր: Հենց Հայրենական մեծ պատերազմի սերնդի մարտական ոգու ազդեցությամբ կերտվեց Արցախյան ազատամարտում ձեռք բերված հաղթանակը:

### Օգտագործված գրականության ցանկ

1. «Парад-2000», М.2001, с.124 Վ.Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը եւ տեղաշարժերը XIX-XX դարերում: XXI դարի շեմին, Ե., 2002, էջ 406:
2. Գ.Հարությունյան, Խորհրդային Միության հայ եւ հայաստանցի այլազգի հերոսների ու Փառքի շքանշանի լրիվ ասպետների հիմնահարցը հայ պատմագրության մեջ, Երեւան, 2002, էջ 5:
3. К.А.Арутюнян Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ереван-2004, с.195.
4. Նույն տեղում, էջ 370:
5. Գիրք հերոսների մասին, Երեւան-1964, էջ 371: Бессмертное племя Матросовцев (1941-1945), Москва, Воениздат, 1990, с.235.
6. Герой Советского Союза. Краткий биографический словарь, т.2, с.418.
7. Военный энциклопедический словарь, с.204.
8. Ա.Ղազարյան, Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր, հ.1,Երեւան,1975, էջ 121:
9. Այս մասին առավել մանրամասն Освобождение городов, с.164:
10. Ա.Ղազարյան, Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր, հ.1, Երեւան, 1975, էջ 247:
11. Освобождение городов с.355.
12. К.А.Арутюнян, Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ереван-2004, с.229.
13. Նույն տեղում, էջ 474:
14. Նույն տեղում, էջ 280:
15. Նույն տեղում, էջ 294:
16. Նույն տեղում, էջ 296:
17. Նույն տեղում, էջ 296:
18. Նույն տեղում, էջ 458:
19. Освобождение городов, с. 329.
20. Նույն տեղում, էջ 549:
21. Ա. Սիմոնյանի մասին մանրամասն տես՝ К.А.Арутюнян, М.Саакян. Участие сотрудников Национальной академии наук Республики Армения в Великой Отечественной войне (1941-1945), с.149-151.
22. Սերգեյ Հախվերդյան, Գորիսի ամփոփ պատմություն, Երեւան, 2005թ., էջ 330:
23. «Ստալինյան դրոշով», 1942թ., №14:
24. «Ստալինյան դրոշով»:

■


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
(0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
Էլ.հասցե www.syuniacyerkir.am
Էլ.փոստ syuniacyerkir@mail.ru




# Տաթեւհէկ. դարի կառույցը Զանգեզուրում



**ԺՈՐԱ ՄԱՆՈՒՅԱՆ**

Օրվա հրամայական պահանջ էր դարձել Զանգեզուրը հիդրոէներգետիկայի շտեմարան դարձնելը: ՀՀ առաջին դեմքերն այդպիսի մղումով էին որոշում կայացրել 60-ական թվականներին ու գործի անցել՝ գիտակցելով, որ Զանգեզուրը, նաեւ ամբողջ Հայաստանը, դրա կարիքը շատ ունեն: Դարեր շարունակ ապարդյուն հոսող Որոտան գետի ջրերը կարելի էր սանձել, հունը փոխել, ջրի ուժն օգտագործել՝ էլեկտրաէներգիա արտադրելու, լեռնաշխարհի խավարը ցրելու նպատակով...

Հայաստանի տարածքով հոսող գետերի մեջ Որոտանն իր երկարությամբ գրավում է չորրորդ տեղը: Գետը տարեկան տանում է ավելի քան 700մլն խորանարդ մետր ջուր: Հայաստանի տարածքում այն գլխապտույտ արագությամբ 3045մ բարձրությունից իջնում է մինչեւ 700մ՝ կատարելով 2345մ անկում, եւ այսքանը միայն 119կմ տարածության վրա: Հաշվարկը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր կմ վրա նրա հունի անկումը կազմում է 20մ: Այդ ամենի արդյունքում Որոտանն էլեկտրական էներգիայի անսպառ աղբյուր է հանրապետությունում:

Նախնական հաշվարկներով գետի վրա կարելի էր կառուցել էլեկտրակայանների մի ամբողջ համալիր: Այն կունենար 405 հազար կվտ ընդհանուր կարողություն, տարեկան կարտադրվեր մեկ մլրդ 200 մլն կվտ-ժամ էժան էլէներգիա: Այն կփոխեր ողջ Զանգեզուրի դեմքը, նրա ներքին, արտաքին տեսքն ու կյանքը՝ երաշխիք լինելով նաեւ հազարավոր հեկտար ծարավ հողատարածությունների ոռոգման, նորակերտ բնակավայրերի շենացման, կանաչ տարածքների ստեղծման, նորացվող տնտեսության մեքենայացման:

....1958թ., երբ գարնան շունչն իր դաղձախառն, ծաղկավետ, հրապուրիչ բուրմունքն էր սփռել Զանգեզուրի լեռնաշխարհում, ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանը, Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանը, Հայէներգոշինի վարչության պետ Սուրեն Վարդանյանը, նախագծող բարձրակարգ ինժեներներ Երեւանից ժամանեցին Զանգեզուր «Վիլիս» ավտոմեքենայով: Սիսիանի տարածքում կանգ առան, ուսումնասիրեցին տեղանքը, մինչեւ Շահվերդլար (այժմ՝ Որոտան գյուղ) Որոտան գետի վրա հիդրոկայան կառուցելու նպատակով: 18 կիլոմետր ճանապարհն անցան նաեւ ոտքով: Նպատակն էր՝ որոշարկել ուղղությունը, որ գետնի տակով՝ 300 մետր խորությամբ, Սիսիանից մինչեւ Շահվերդլար ստորգետնյա ճանապարհով, թունելով Որոտանի ջրերը հոսեն դեպի նշված վայր:

Աշխատանքները նորմալ էին ընթանում: Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան ղեկավարները, նրանց հետ եկած մասնագետները կարողացան համաձայնության գալ ու որոշել հիմնահարցը՝ Շահվերդլարում, Որոտան գետի ձախ ափին, Գորիսից Կապան ձգվող ավտոխճուղու կամրջին չհասած, բարձրադիր ժայռի ստորոտում կառուցել հիդրոէլեկտրակայան:

....Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ էին 1961 թվականին:

Խոշոր կառույցի աշխատանքները 1961թ. սկսվեցին ճանապարհաշինարարությունից:

....Գյուղի մի քանի երիտասարդներ, Շինուհայրի մեքենատրակտորային (ՄՏԿ) կայանի շենքերի մոտ կանգնած, զրուցում էին սովորականի նման: Նրանց է մոտենում անծանոթ մի մարդ, ձեռքով բարեւում բոլորին ու անմիջապես ներկայացնում իր ով լինելը:

-Եկել եմ «Հայհիդրոէներգոշին» վարչությունից, Որոտան գետի վրա ՀԷԿ ենք կառուցելու, որ կոչվելու է Տաթեւհէկ:

Ներկայացողը Մարսել Հարությունյանն էր, ով դարձավ Տաթեւհէկի Շինուհայրի կառույցի առաջին պետը (ղեկավարը): Նրա հայտնած ուրախ լուրը գրավեց երիտասարդ մարդկանց ուշադրությունը, ջերմացրեց նրանց սրտերը եւ հետաքրքրությունից վառված՝ ուշադրությամբ լսեցին Մ.Հարությունյանի խոսքի շարունակությունը: Վերջում հայտարարեց, որ Շինուհայր գալու իմաստն այն է, որ հենց այսօրվանից հավաքագրեն ու ցուցակագրեն կառույցում աշխատել կամեցող մարդկանց:

Անմիջապես կազմվեց շինարարական բրիգադ, որը համալրվեց երիտասարդներով. բրիգադավարի պաշտոնը ստանձնեց Յուրիկ Սարգսյանը: Բրիգադի մարդիկ գործի անցան եռանդով: Նրանց առջեւ խնդիրը դրվեց՝ կառուցել Շինուհայրից Հալիձոր գյուղի տարածք, դեպի մայր թունել տանող ճանապարհ, որը կոչվեց տարածքի անունով՝ «Հալիձորի շտրեկ»: Շինուհայրից «Հալիձորի շտրեկ» ճանապարհի հեռավորությունն ութ կմ է: Ճանապարհի կառուցումը պետք է ավարտվեր երեք ամսում: Ճանապարհի հողային աշխատանքները կատարելուց հետո քարապատվեց ու խճապատվեց, բանվորների թիվը հասել էր 50-ի, որոնք եկել էին Գորիսի քաղաքից ու շրջանի գյուղերից:

«Շտրեկ» տանող ճանապարհի կառուցման աշխատանքների ավարտից հետո բրիգադը բաժանվեց նախ՝ երեք, ապա՝ չորս տեղամասի՝ Շինուհայրի, Հալիձորի շտրեկի, Խոտի՝ «Խաչալ կապ» տեղամասի եւ շինարարության՝ Շինուհայրի տեղամասի: Չորս տեղամասից հետո բացվեցին այլ արտադրաշինարարական տեղամասեր եւս՝ Շինուհայրի սղոցարանը, մեխանիկական արհեստանոցը, երկաթբետոնե կառուցվածքների գործարանը: Գործի դրվեց հզոր ավտոհավաքակայանը: Վերջինիս համար ծառայեցվեցին Շինուհայրի ՄՏԿ-ի շինությունները:

«Շտրեկի» ճանապարհի կառուցումն ավարտելուց հետո սկսվեց Շինուհայր-Խոտ՝ «Խաչալ կապ»-Շահվերդլար (դեպի Որոտանի ափ իջնող) դժվարամատչելի, ոլորապտույտ ճանապարհի կառուցումը:

Տաթեւհէկշինի՝ այս խոշոր կառույցի բոլոր տեղամասերի շինարարական աշխատանքների կազմակերպումը 1961թ. մայիսից ղեկավարում էր Սիսակ Սարգսյանը, ով եւ այդ կառույցի հիմնադիրն էր: Նրան փոխարինեց Խոսրով Դուրյանը, ով նույնպես մեկ տարուց փոքր-ինչ ավելի աշխատեց, եւ նախորդի պես արժանավոր, բանիմաց ու հարգված մարդ էր:

1962թ. սկսվեց «Խաչալ կապից» Որոտանի ափ ճանապարհի շինարարությունը: Ինչպես արդեն նշեցինք, տեղանքի ռելիեֆն ուներ շատ բարդ կառուցվածք՝ բարձրադիր ու ցածրադիր լեռներ, ձորեր ու ձորակներ, թեք լանջեր, զառիթափեր...

Մի քանի ամիս անց լեռնային բարձունքից ձգվեց ասֆալտապատ ճանապարհը: Եվ օրական հարյուրավոր մեքենաներ էին Ղափանից երթեւեկում Գորիս, Շինուհայր, Երեւան եւ հակառակ ուղղությամբ, իսկ բեռնատարները Որոտանի ձախ ափին կառուցվելիք ՀԷԿ-ի շենքի ծնունդն իրականացնող աշխատանքների համար նյութեր, հումք եւ օժանդակ միջոցներ էին տեղափոխում...

Ակներեւ դարձավ, որ ճանապարհի՝ ժամկետից շուտ ավարտն ինքնին նախանշում է Տաթեւհէկի աշխատանքների արագացում: Երիտասարդ բրիգադի բոլոր ութ տղաները կոմերիտականներ էին՝ Միխայել Բարսեղյան (Ղարաբաղցի -Մարտակերտ), Ռուդոլֆ Մկրտչյան (Գորիսից), Ժորա Շիրինյան, Ռազմիկ Համբարձումյան, Յուրիկ Սարգսյան, Յուրիկ Մարգարյան, Վլադիկ Հայրապետյան, Մարտուն Գալստյան (Շինուհայրից): Բրիգադը ղեկավարում էր Միխայել Բարսեղյանը: Երկու օր առաջ տեղի ունեցած բազմամարդ միտինգի մասնակիցներն ուրախ տրամադրությամբ, երգ-երաժշտության ախորժալուր հնչյունների ներքո դիմավորեցին շինարարության պետ Սիսակ Սարգսյանին, ով, բացելով միտինգը, ժպիտը դեմքին ողջունեց հավաքվածներին:

– Այժմ մենք պատվոգիր ենք հանձնում կոմերիտական բրիգադի անդամ մի թունելագործի, ով իր ջանքերը մեծ նվիրումով ներդրել է Բրատսկի հէկի կառուցմանը, իսկ այժմ արժանացել է էներգետիկայի մինիստրության բարձր պարգեւին, – ասում եւ հանդիսավորությամբ սեղմում է Միխայել Բարսեղյանի ձեռքը:

Երիտասարդ բրիգադավար Միխայելի մասին ջերմ խոսքեր ասացին նաեւ Դերենիկ Սարգսյանն ու բրիգադի մարդիկ: Նրանք սկսել էին «Խաչալ կապից» ներքեւ խոշոր ջրամբարտակ՝ թունելի ելքով դուրս ժայթքող Որոտանի ջուրը ժամանակավոր կանգնեցնելու, հանգստացնելու կարգավորիչ հանգույց կառուցելու, ապա ջրամբարտակից հսկայական խողովակաշարը լայնաշրջան երախով, կատաղի հոսքով դեպի Շահվերդլար՝ ՀԷԿ-ի կողմը մղելու աշխատանքը, որը շարժման մեջ էր դնելու հսկա գեներատորները:



Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

**Եզակի հիդրոտեխնիկական կառույց. Որոտանի ոռոգման համակարգը (հատված):**

### Հորատանցման աշխատանքների մասին

Սիսիանի տարածքում սկսվել էին հորատանցման աշխատանքները: Ստորգետնյա ճանապարհի ուղղությունը տանում էր դեպի Հալիձորի շտրեկ, որտեղից հորատողների բրիգադը պետք է հետադարձ հորատանցում կատարեր դեպի Սիսիան, իսկ մյուս բրիգադի մարդիկ ճանապարհ բացեին դեպի Շինուհայրի տեղամաս եւ այստեղից մյուս բրիգադը՝ դեպի «Խաչալ կապի» տեղամաս: Այսպես էին կոչվում այդ տեղամասերը՝ Սիսիանի №1, Հալիձորի №2, Շինուհայրի №3, «Խաչալ կապի» №4:

Սկսվել էր աշխատանքային եռուզեռն ինչպես վերերկրյա, այնպես էլ ստորգետնյա պայմաններում: Տաթեւհէկի շինարարների կոլեկտիվում, որտեղ աշխատում էին 20-ից ավելի ազգերի ներկայացուցիչներ, շարունակվում էր գոտեմարտը Որոտանի հետ՝ նրա քմահաճ հոսքին նոր ուղղություն տալու, ապարդյուն ընթացքն արդյունավետ դարձնելու նպատակով:

Շինուհայրի, Սիսիանի ու Հալիձորի տեղամասերից մինչեւ «Խաչալ կապի» տեղամասը վերածվել էր ընդարձակ հրապարակի: Շինուհայրի, Գորիսի շրջանի այլ գյուղերի՝ Խոտի, Քարահունջի, Հարժիսի, Հալիձորի, Տաթեւի, Սեւառանցի, Տանձատափի եւ հանրապետության ու Խորհրդային Միության տարբեր բնակավայրերի հարյուրավոր մասնագիտացված բանվորներ, ինժեներներ, տեխնիկներ եւ այլ մասնագիտությունների տեր մարդիկ եկել էին մասնակցելու ինտերնացիոնալ մեծ կառույցի շինարարությանը: Արագորեն վեր էին սլանում բնակելի շենքերը: Մինչ այդ աշխատողների համար բնակարան էին ծառայում 2-3 սենյականոց 24 հավաքովի ֆիննական տնակները, որոնց կառուցման ու տեղադրման աշխատանքներն ավարտվեցին 10 օրվա ընթացքում: Գորիսի շրջանի բնակչությունը մի նոր կյանք ու նոր ժամանակաշրջան սկսեց ապրել. երգ-երաժշտություն, կինո, թատրոն, էժան ապրանքներ ու սնունդ, հոգեւոր կյանքի զարթոնք, հազարամյակների պատմություն ունեցող շատ գյուղերի՝ անդնդախոր ձորերից դուրս գալ, բնակարանային շինարարություն...

Տաթեւհէկի կառուցման աշխատանքներին մասնակցում էին նաեւ շատ կալանավորներ:

### «Կոմունիստական աշխատանքի հարվածային» կոչման համար

Տաթեւհէկի շինարարության հերոսները դարձան առանձնապես հմուտ, փորձ ունեցող մարդիկ, որոնց շարքերը համալրվեցին նորերով ու այլազգի շինարարներով:

Պատահական չէ, որ ճնշման տեղամասի շրջանում՝ «Խաչալ կապում», Որոտանի ափին, վեր է խոյանում մի շքեղ ավան: Հրճվանքով էր լցվում սիրտդ, երբ կանգնում էիր քարափին ու դիտում աշխույժ Բալաբեկ Քեշիշյանի շինարարական տեղամասի աշխատանքը, որը փռված է «Շինարարության բլրի» հարավարեւելյան ստորոտում, որտեղ կառուցվում էր Շինուհայր բանավանը:

Ներկայացնենք մի երիտասարդի, ով ակտիվ մասնակցություն է ունեցել Աքարբեկյան հէկի կառուցմանը, իր ընկերների հետ պայքարել ու արժանացել կոմունիստական աշխատանքի հարվածային կոչմանը: Իսկ Մնացական Հովհաննիսյանն արժանացել է Լենինի շքանշանի:

...Ահա եւ հորատողներ Դուլիկ Մկրտչյանը, Գուրգեն Գասպարյանը, Կոլյա Հովսեփյանը: Հմուտ թունելագործներ են, արդեն հորատանցել են 50 մետր տարածություն ու լուսավորել լեռան ընդերքը, իսկ դրանց շարքերում, փոքր-ինչ տարիքով փորձառու վարպետ Միշա Խեչոյանն է, ով նույնպես Աքարբեկյան հէկից է եկել:

Ինչպես արդեն ասել ենք, Տաթեւհէկի շինարարության հաջորդ պետը Խոսրով Դուրյանն էր, ով կառավարեց ընդամենը մեկ տարի: Կառույցի ղեկավարման մեծ բաժինը պատկանում է Գեղամ Սարգսյանին, ում կառավարման օրերին Շինուհայր գյուղն ամբողջովին տեղափոխվեց նոր վայր:

### Շինուհայր բանավանը

Շինուհայրեցու տարիների ցանկությունն ու երազանքը մի օր իրականություն դարձան: Չկար արդեն նախկին զարմանքը Տաթեւհէկշինի աշխատանքների հանդեպ, արդեն

Շարունակությունը՝ էջ 70

# Տաթեւիէկ. դարի կառույցը Զանգեզուրում

Սկիզբը՝ էջ 69

համոզմունքն էր գերիշխում օբյեկտիվ իրականության հանդեպ: Ոչ թե զարմանք, այլ ուրախություն էր ծնվում հոգուդ մեջ, երբ աչքովդ տեսնում էիր ամեն օր վեր բարձրացող շինությունները: Այո՛, տեսնում էինք եւ ուրախություն ապրում: Շինուհայր բանավանում իրար հետեւից վեր էին բարձրանում բնակելի հոյակապ շենքերը: Կառուցվեցին 24 բնակարանից բաղկացած եռահարկ 8 բնակելի շենք, բաղնիք, կաթսայատուն, հացի փուռ, խանութներ, մանկապարտեզ, գրասենյակներ, ճաշարան, հիվանդանոց, դպրոց ու նաեւ ստորգետնյա պահեստ՝ մթերքների պահպանության համար: Շինուհայր բանավանը դարձավ գողտրիկ մի բնակավայր՝ ընկղմված պտղատու ծառերի, կանաչների ու վարդերի մեջ: Աշխատանքից հետո Տաթեւիէկի աշխատողներն այստեղ էին անցկացնում իրենց ազատ ժամանակը: Բանավանի տեղամասի պետն էր Հենրիկը: Ամենօրյա կինոցուցադրումները, թատերական ներկայացումները, համերգները, մարզական խաղերն ու բազմազան այլ միջոցառումները մեծ բավականություն էին պատճառում բնակիչներին:

### Երկաթբետոնե կառուցվածքների գործարանը

Գործարանը կառուցվել է Շինուհայրի ՄՏԿ-ի շինություններին կից ազատ տարածության վրա: Այդտեղ աշխատում էր 150-ից ավելի մարդ: Չնայած կային տարբեր մասնագիտության տեր մարդիկ, բայց գործարանը կարիք ուներ ավտոկռունկավարների: Սմբատ Պապյանը, Ժորա Աթայանը, Մելսիկ Հարությունյանը գործուղվեցին Նովոսիբիրսկ քաղաք՝ վերամբարձ կռունկավարի դասընթացներում սովորելու: Ավարտելուց հետո, երբ անցել էր ութ ամիս, երիտասարդ մասնագետները ներկայացան ու աշխատեցին ավտոկռունկավար: Ս.Պապյանը, մինչեւ 1967թ. աշխատելուց հետո, նույն մասնագիտությամբ աշխատեց Գորիս քաղաքում՝ Տաթեւիէկշինի կողմից կառուցվող բնակելի շենքերի շինարարությունում:

Գործարանն իր թողարկած արտադրանքով սպասարկում էր Շինուհայրի, Որոտանի, Սիսիանի, Գորիսի, Հալիձորի տեղամասերին, ապա նաեւ Շինուհայրի ռետինե կոշկեղենի կառուցվող գործարանին: Հետագայում Շինուհայր գյուղի հյուսիս-արեւմտյան մասում կառուցվեց երկաթբետոնե կառուցվածքների երկրորդ գործարանը:

### Ավտոպնփեսությունը

Ավտոմեքենաների այս հավաքակայանը «Հայէներգոշին» տրեստի տեղամասի կենտրոնն էր: Ուներ տարբեր մակնիշի 130 բեռնատար եւ մարդատար մեքենաներ: Ժողովրդատնտեսական բեռների տեղափոխումը կատարվում էր Կապանից, Երասխավանից, Երեւանից, Լուսավանից եւ հանրապետության այլ քաղաքներից ու շրջաններից: Ավտոպարկի աշխատողների թիվը կազմում էր 180 մարդ: Ձեռնարկության առաջին վարիչը Գուրգեն Դոլուխանյանն էր, ով աշխատեց 1961 թվականից մինչեւ 1962 թվականի աշուն: Լավագույն մարդուն եւ կազմակերպչին, ով գյուղի բնակիչների հետ սերտ կապերի մեջ էր, փոխարինեց Արամ Սարգսյանը: Ապա 1965թ. հավաքակայանի վարիչ նշանակվեց Վլադիմիր Պողոսյանը: Ավտովարորդները Գորիսից, մերձակա գյուղերից էին: Միայն Շինուհայրից հավաքակայանում աշխատում էր 40 ավտովարորդ:

### Ճաշարանների միավորումը

Այս նշանավոր կազմակերպությունը Տաթեւիէկշինի աշխատողներին սննդամթերքով ու արդյունաբերական ապրանքներով մատակարարող-ապահովող ձեռնարկություն էր, որը բոլոր շինարարական տեղամասերում ուներ իր օբյեկտները՝ Շինուհայրում, Որոտանում, «Խազալ կապում», Շտրեկում, Սիսիանում: Սպասարկումը կանոնավոր էր, սանիտարահիգիենիկ առումով՝կատարյալ: Տաթեւիէկշինի բանվորների սպասարկման վարչության պետը եղել է Յոլչյանը, ով աշխատել է երեք տարի: Նրան փոխարինել է Սամսոն Հակոբյանը (Գորիսից)՝ մի բարեկիրթ, խելացի, բարեխիղճ մարդ: Վարչության պետ է աշխատել նաեւ Օգսեն Սեմիրջյանը: Նրա մասին քիչ տեղեկություններ գիտենք, բայց հայտնի էր որպես բանիմաց աշխատող: Պետի պաշտոնն ավելի երկար զբաղեցրեց Ազատ Սարգսյանը, ով նույնպես անբասիր աշխատող էր: «Օրսի» վարչության գրասենյակը Տաթեւիէկի կառույցի ավարտից հետո տեղափոխվեց Սիսիան:

### Ակնի ջուրը բարձրացավ բանավան

Ակն աղբյուրը գտնվում է Շինուհայր գյուղից դեպի արեւմուտք՝ «Ակնի քոլի» ստորոտում: Մի հսկա գետ էր դուրս գալիս: Այս ջրի մասին գիտեին հանրապետությունում ու նրանից դուրս: Եվ իզուր չի եղել վարչության համապատասխան ղեկավարների կազմած ծրագիրը՝ ջուրը պոմպակայանի միջոցով Տաթեւիէկշին կառուցող բնակիչներին հասցնելու վերաբերյալ:

Այդ աշխատանքում ընդգրկվեցին հմուտ ու արհեստավարժ զոդողներ՝ Անուշավան Դավթյան, Պավլիկ Բախշյան եւ Յուրիկ Բեգլարյան: Ակնի ջուրն անդնդախոր ձորից պոմպակայանի միջոցով մոտ 1կմ երկարությամբ խողովակաշարով (տեղ-տեղ 50-60 աստիճանի թեքությամբ), բարձրացավ ու լցվեց գյուղի «Շինարարության բլրի» գագաթին կառուցված բետոնապատ կարգավորիչ ջրամբարը: Այնտեղից ջուրը խողովակաշարով հասավ Շահվերդլար ու Շտրեկ:

Գյուղացի Միխայել Սարգսյանը, ով առաջ քեֆերում, հարսանիքներում երգում էր՝ «Ակնին ջուրը կլխանտվեր (վերեւից ներքեւ) քյունումա» հայտնի երգը, դրանից հետո շուռ էր տվել՝ «Ակնին ջուրը տական տիյիր քյինումա, տե՛ս, ծաղիկը ծաղկին նհետ խոսումա»:

### Մեխանիկական արհեստանոցը

Շինուհայրի ՄՏԿ-ի շինություններն օգտագործվեցին հզոր կառույցի համար: Նշված արհեստանոցի շենքում տեղադրվեցին ժամանակակից սարքավորումներ: Արհեստանոցում աշխատում էր մեկ տասնյակից ավելի մարդ՝ խառատներ, զոդողներ, դարբիններ եւ այլք: Այստեղ առաջնակարգ մասնագետներ էին խառատներ Լադիկ Առաքելյանը, Պավլիկ Վարդանյանը, Սարուխան Բարսեղյանը, ուրիշներ: Արհեստանոցը սպասարկում էր Տաթեւիէկշինի բոլոր տեղամասերին: Ամենօրյա պատվերները կատարվում էին անթերի ու որակով: Արհեստանոցի վարիչն Արարատ Դավթյանն էր: Դրա կողքին էր գտնվում տրակտորների հավաքակայանը, այն զինված էր հզոր տրակտորներով եւ այլ տեխնիկայով, կոլեկտիվը ղեկավարում էր Լիպատովը, նրա օգնականն էր հալիձորցի Պեպոն: Տրակտորների եւ այլ մեխանիզմների հավաքակայանի հարեւանությամբ էր գործում մոնտաժի տեղամասը, երկաթյա ձողերի միացման տեղամասը, որտեղ աչքի ընկնող ամրանագործներ էին Հմայակ Ներսիսյանը եւ Սպարտակ Հակոբյանը:

Տեղամասի բոլոր աշխատողները հմուտ մասնագետներ էին: Այս տեղամասը ղեկավարում էր նույն՝ երկաթբետոնյա կառուցվածքների գործարանի տնօրեն Արշակ Գրիգորյանը: Հմուտ շինարար էր, եկել էր իր մասնակցությունն ունենալու Զանգեզուրի մեծ կառույցին:

Տաթեւիէկշինի մյուս կարեւոր օբյեկտները դարձան սղոցարանը եւ ավազահանքը:

Սղոցարանն աշխատում էր երկու հերթով: Վագոններով շինափայտն իր ձեւն էր ստանում սղոցարանում: Տաթեւիէկշինի բոլոր տեղամասերը շինափայտով ապահովվում էին սղոցարանից: Սղոցարանը թողարկում էր գերաններ, տախտակե շիթեր, դռան եւ լուսամուտի շրջանակներ, դռներ, հատակի տախտակներ, շենքի տանիքի ձողեր եւ փայտյա այլ շինվածքներ: Ավազահանքը գտնվում էր Շինուհայրի բանավանի հյուսիսային մասում՝ թիկնած մի հսկայական բլրի, որը նախկինում կոչվում էր Մատաղաբլուր, իսկ հետագայում՝ 1931թ. երկրաշարժից հետո, շինարարության բլուր: Այդ ժամանակ Շինուհայր էր եկել ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը՝ կառավարության ղեկավարների ուղեկցությամբ՝ երկրաշարժից տուժածներին օգնություն ցույց տալու նպատակով: Որոշվեց Շինուհայր գյուղը ձորից տեղափոխել հարթություն: Նույն տարում հարթության վրա սկսվեցին բնակարանների կառուցման աշխատանքները եւ օգտագործեցին մոտակա բլրի ավազը. այդ օրվանից այն կոչվեց Շինարարության բլուր:

Ավազահանքն ուներ ավազի տեսակավորման մի քանի մեխանիզմներ, բարձիչներ, հզոր բուլդոզերներ: Ավազահանքն ավազ



«Ռամար»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Կազմավորվել է 2002 թվականին «Գորիսի ճանշին» ԲԲԸ-ի բազայի հիման վրա
Գորիս, Երեւանյան խճուղի 3
Հեռախոսներ՝
(0284) 2 21 38
(093) 50 25 16
Գորիսի շրջանի ամբողջ տարածքում միջպետական, հանրապետական եւ մարզային ճանապարհների հուսալի պահպանություն
Ձմռան ամիսներին ճանապարհների շուրջօրյա անցանելիության ապահովում
Անհրաժեշտ տեխնիկական զինվածություն
Ստանդարտներին համապատասխան ասֆալտբետոնի արտադրություն











ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ

է մատակարարել Գորիսին ու նրա գյուղերին:

### Թունելագործները

Շինուհայր ու հարեւան գյուղերից եկած հարյուրավոր երիտասարդներ աշխատում էին թունելի տարբեր տեղամասերում: Մեծմասամբ առաջնեկ թունելագործ վարպետներից նրանք սովորել եւ դարձել էին վարպետներ, տիրապետել ստորգետնյա բարդ ու դժվարին աշխատանքներին: Միայն Շինուհայր գյուղից 20-ից ավելի երիտասարդ աշխատում էր թունելի տարբեր տեղամասերում: Հալիձորի տեղամասի №2 կոչվող շտրեկի մի բրիգադ գնում էր ստորգետնյա ճանապարհ բացելու Սիսիանի ուղղությամբ, իսկ Սիսիանի №1 շտրեկի թունելագործները գալիս էին դեպի Շինուհայրի №3 տեղամասի կողմը: Հալիձորի №2 շտրեկից դեպի Շինուհայրի №3 տեղամաս եկող բրիգադի թունելագործներն ութ տարի շարունակ աշխատեցին միասին: Շինուհայրի №3 շտրեկի տեղամասի պետն էր Ալեքսանդր Բուշնեւը: Նա եկել էր Ռուսաստանից, մասնակցել էր Բրատսկի հէկի կառուցմանը, հմուտ եւ փորձառու թունելագործ էր: Լսել էր Հայաստանի հեռավոր շրջաններից մեկում՝ Զանգեզուրում, կառուցվող հսկա կառույցի մասին եւ եկել: Տեղամասի ղեկավարումը ստանձնելուց հետո մեծ պատասխանատվության հետ մեկտեղ գործի է դնում գիտելիքներն ու հարուստ աշխատանքային փորձը: Ա.Բուշնեւի կինը՝ Վալյան, ուսուցչուհի է աշխատել Շինուհայրի միջնակարգ դպրոցում, իսկ երբ դպրոցահասակ երեխաների թիվը մեծացավ, բացվեցին ռուսական դասարաններ: Միեւնույն կոլեկտիվում աշխատող Վալյա Բուշնեւան, Մարիա Օնիշչենկոն, Գալինա Գորբաչովան (Ֆյոդորովա) դարձան Շինուհայրի մանկավարժական կոլեկտիվի լիիրավ անդամներ:

Խոտի «Խազալ կապի» տեղամասի թունելագործները շարժվում էին դեպի Շինուհայրի թունելախորշ տանող ուղղությամբ: Հալիձորի №2 տեղամասի թունելագործների մյուս բրիգադը շարժվում էր Սիսիանի ուղղությամբ: Այս բրիգադի ղեկավարն էր հալիձորցի Սամսոն Խաչյանը: Բրիգադը համալրված էր համապատասխան մասնագետներով: Այստեղ բնակվում էին ընտանիքավորներ: Չափահաս դարձած երեխաների համար բացված եռակոմպլեքս դասարանում ուսուցչի պահանջ կար, անհրաժեշտ էր ուսուցիչ գործուղել: Գորիսի շրջժողկրթբաժնի վարիչ Ա.Առաքելյանը 1968-69 ուստարին նոր սկսած, կանչեց ու ասաց.

– Մանուցյա՛ն, պատիվ չի բերում թունելագործների երեխաներին թողնել դպրոցից դուրս, արի համաձայնվի՛ր, գնա՛ Շտրեկ ու աշխատիր այնտեղ:

Մեծ ուրախությամբ հրամանը ձեռքիս ներկայացա աշխատանքի:

Թունելագործները որոշեցին մեկնել օգնության Խոտից եկող հորատանցողներին: Իրար դեմ էին գալիս արդեն Շինուհայրից ու Խոտից եկող թունելախորշերը: 1.5 տարի անցնելուց հետո թունելագործները հանդիպեցին Խոտի տեղամասում: Թունելագործներն արժանացան Հայաստանի կառավարության բարձր պարգեւների:

Շինուհայրի թունելագործներից շատերը գնացին մասնակցելու Սիսիանում կառուցվող Որոտանի կասկադի երկրորդ հերթի՝ 171 հազար կիլովատ հզորությամբ Շամբի հիդրոէլեկտրակայանի թունելախորշի աշխատանքներին: Սիսիանի շինարարության պետն էր Ջրբաշյանը:

Տաթեւիէկի շինարարության պետ Գեղամ Սարգսյանին փոխարինելու եկավ Միքայել Ալոյանը: Նրա գլխավորությամբ կառուցվեցին անավարտ մնացած շինությունները՝ Խոտի «Խազալ կապ» ջրամբարի կառուցումը, Շինուհայրի բանավանի մաքրման կայանը եւ այլ շինություններ:

Լուրջ եւ դժվարին աշխատանքներ էին գնում «Խազալ կապի» ջրամբարի մերձակայքում: Ամենադժվարին աշխատանքներից մեկը դարձավ ջրամբարից դեպի հէկի շենքը տանող հսկա խողովակների զոդումն ու խողովակների տեղադրումը: Դրան զուգահեռ անց էր կացվում ստորգետնյա թունել՝ ջրամբարից դեպի հէկի շենքը: Թունելի աշխղեկն էր փորձառու Հերոս Ավետյանը:

Տաթեւիէկշինի շինարարության պետ Մ.Ալոյանին փոխարինեց Ալբերտ Բաբայանը, ով Տաթեւիէկշինի վերջին պետն էր. մինչ այդ Տաթեւիէկշինի գլխավոր ինժեներն էր: Նա կարողացավ ի մի բերել եզրափակիչ աշխատանքների կոորդինացումը եւ այն հասցնել ավարտին ու վերջնական հաղթանակի:

Հէկի աշխատանքները վերջնագծին հասան շենքի կառուցումով եւ բարդ ու հզոր սարքավորումների տեղադրումով:

Տաթեւիէկը լույս աշխարհ եկավ եւ լույս ճառագեց Զանգեզուրում:

### Մյուս կառույցների մասին

Հզոր կառույցի շինարարության տարիներին զուգահեռաբար կառուցվեցին կարեւոր նշանակություն ունեցող օբյեկտներ: Գորիսում եւ Երեւանում Տաթեւիէկշինի աշխատողների համար կառուցվեցին բնակելի շենքեր, բոլոր դիմողներն ապահովվեցին հարմարավետ բնակարաններով: Կառուցվեց Տաթեւի առողջարանի շենքը: Շինուհայրում կառուցվեցին երկհարկանի ռետինե կոշկեղենի գործարանի տուֆակերտ չորսհարկանի վարչական շենքը, արհեստանոցը, հզոր կաթսայատունը, հիշեջ ծառայության շենքը եւ մաքրման հզոր կայանը:

Գործարանի կաթսայատան հզորությունն այնքան մեծ էր, որ ջեռուցում մատակարարեց բանավանին, Շինուհայրի դպրոցին, կուլտուրայի տանը, կապի բաժանմունքին, գյուղական խորհրդի շենքին, կենցաղի տանը:

### Աշխատողների կենցաղային պայմանների մասին

Բոլոր աշխատողները ստանում էին բարձր աշխատավարձ: Բարձր էր սպասարկման կուլտուրան: Մեծամասնություն էին կազմում մարդիկ, ովքեր աշխատավարձից տնտեսած փողը պահում էին դրամարկղերում: Երիտասարդության համար գործում էին ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, բռնցքամարտի եւ այլ խմբակներ: Գործում էր գրադարանը, որն ուներ մինչեւ 10000 կտոր գրականություն: Գրադարանն ուներ ընթերցասրահ: Կուլտուրայի օջախներում մշտապես գործում էին երգի, պարի, թատերական, երաժշտական ինքնագործ խմբեր, որոնք հաճախակի հանդես էին գալիս հոծ բազմության առջեւ: Կինոն մեծ մասսայականություն էր վայելում: Վերջին տարիներին մուտք գործեց հեռուստացույցը: Կենցաղում գործում էր հեռախոսակապը: Տաթեւիէկն ուներ իր սեփական հեռախոսային կայանը:

Կարեւոր գործոններից մեկը համարվեց տրանսպորտը. մարդատար ավտոբուսներն օրվա մեջ մի քանի անգամ մեկնում էին Գորիս:

### Վերջաբանի փոխարեն

Տաթեւիէկը տվեց իր արտադրանքը՝ տարեկան 500մլն կվտ-ժամ էլեկտրաէներգիա: Այն մտավ Շինուհայրի ենթակայան, սկսեց էներգիա մատակարարել Գորիսին, Զանգեզուրի մյուս շրջաններին, Հայաստանի ժողտնտեսությանը:

Տաթեւիէկի շինարարության պատվիրատու կազմակերպությունը հիմնադրման օրվանից մինչեւ նրա ավարտը ղեկավարում էր Օնիկ Դավթյանը՝ ծննդով Կապանից: Հզոր շինարարության ավարտից հետո՝ 1970թ., ստեղծվեց Որոտանի հէկերի համակարգի վարչություն, որի առաջին պետը դարձավ ինքը:

1970-74թթ. պետ է աշխատել Ալեքսանդր Հայրապետյանը, 1974-94թթ.՝ Կառլեն (Լյովա) Առուշանյանը, ում հետագայում փոխարինեց Հակոբ Դինգչյանը (1994-2000թթ.): 2000թվականից պետ է աշխատում Սասուն Խաչատրյանը:

1970թ. Տաթեւիէկի գործարկումից հետո արտադրած էլեկտրաէներգիան մտնում էր Շինուհայրի ենթակայան: 1961թ. սկսվեց ենթակայանի կառուցումը, որն ավարտվեց 1966թ.: Այն մեծացրեց ու զարգացրեց Հայաստանի էներգետիկայի բազան, Զանգեզուրը դարձավ էներգիայի հզոր աղբյուր: Շինուհայրի ենթակայանից էլեկտրաէներգիա էր մատակարարվում Զանգեզուրի քաղաքներին ու գյուղերին, արդյունաբերական ձեռնարկություններին, հանքարդյունաբերությանը, շինարարությանը, կոլտնտեսություններին: Զանգեզուրի էներգացանցը միացվեց Հայաստանի էներգահամակարգին:

Տաթեւիէկի շինարարության հետ համաքայլ թափ առավ պետական եւ մասնավոր շինարարությունը: Տարածաշրջանում կառուցվեցին նոր գյուղեր, երկհարկանի հարմարավետ բնակարաններ: Գյուղերը նմանվեցին քաղաքներին: Վերանում էին գյուղի եւ քաղաքի միջեւ եղած տարբերությունները: Սյունիքի բոլոր քաղաքներում շարք մտան արտադրական խոշոր օբյեկտներ, լայն թափ առավ պետության կողմից կառուցվող բնակարանային շինարարությունը: Գնալով շահավետ դարձավ էկոնոմիկան:

Տաթեւիէկից հետո կառուցվեց եւ ծնունդ առավ Որոտանի կասկադը: Կասկադի երկրորդ հերթը դարձավ Շամբի հիդրոէլեկտրակայանը՝ 171 հազար կիլովատ կարողությամբ: Կասկադի երրորդ հերթը Սպանդարյանի հէկն էր: Որոտանը դարձավ հէկերի հզոր աղբյուր, իսկ խոշոր ջրավազանները հէկի եւ ոռոգման ջրատարների կարգավորիչներ: Որոտանի կասկադի հզորությունը գործողության մեջ դնելուց հետո Զանգեզուրի էլեկտրական ցանցը բարձրավոլտ գծով օղակածեւ միացավ ամբողջ Անդրկովկասի էներգահամակարգին:

Որոտանի մասին պատմություններ, պատմավեպեր, բանաստեղծություններ են գրել Ա.Սահինյանը՝ «Եթե խոսեր Որոտանը», Ա.Մարտիրոսյանը՝ «Մազե կամուրջ», ուրիշներ: ■

ԱՄԿ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Կահույքի եւ էլեկտրոնիկայի խանութ Մխիթար Սպարապետի անվան հրապարակում







Անվճար առաքում եւ տեղադրում
Բարձրորակ կահույք
Հարուստ տեսականի
Մատչելի գներ



ք. Գորիս, Մեսրոպ Մաշտոցի 16
(0284) 3 01 02
(0284) 3 01 11

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 ● (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010



# Դրվագներ Գորիսի սոցիալ-տնտեսական զարգացման պատմությունից

Հատված Քրիստափոր Պետրոսյանի «Լեռնաշխարհի վերածնունդը» գրքից



**ՔՐԻՍՏԱՓՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

## Արդյունաբերությունը

Մինչեւ սովետական իշխանությունը Գորիսի շրջանը փաստորեն չուներ արդյունաբերություն: Գորիսում գործում էին Միրումյանների՝ ցեմենտի սալիկներ պատրաստող ֆաբրիկան, պարզունակ սարքավորումներ ունեցող լիմոնադի մի փոքրիկ գործարան, օճառ եփելու մի արհեստանոց, մի քանի կրահորեր, մի դաբաղխանա, կուժ, կուլա եւ կավե գավաթների պատրաստման մի անշուք արհեստանոց, որոշ արդ ու զարդեր պատրաստող եւ «չուստիկներ» կարող մի քանի փոքրիկ արհեստանոց, իսկ երկու գյուղերում կային ձիթհաններ, որոնք աշխատեցվում էին եզներով, եւ վեց ջրաղաց: Ահա հենց դրանք էլ բնորոշում էին շրջանի արդյունաբերական դեմքը:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ 1884 թվականին Գորիսում կային 14 քարհատ, 1 սնդչի (հեքիմ), 9 զուռնաչի, 8 դարբին, 15 հյուսն, 5 դարգի (դերձակ), 2 կոշկակար, 1 արծաթագործ, 3 գլխարկ կարող:

Արհեստով զբաղվում էին նաեւ գյուղերում: Պատրաստում էին փայտե գդալներ, շերեփներ, կավե գավաթներ, կճուճներ, կժեր, կանայք գործում էին կարպետներ, գորգեր, ջվալներ, խուրջիններ, կտավներ եւ այլն: Դրանք կրում էին միայն տնայնագործական բնույթ:

Գրող Ակսել Բակունցն այսպես է նկարագրել հին Գորիսը: «Գորիսն ուներ մի բանտ, մի ռուսաց ժամ, մի հայոց եկեղեցի, մի հյուրանոց՝ 8 սենյականոց, մի բաղնիս: Քաղաքն ուներ մի ժամագործ՝ սիաթսազ Սանդրոն, որը նաեւ ոսկերիչ էր եւ սրում էր թարաքամա քոչվորների դաշույնները: Քաղաքն ուներ լիմոնադի մի գործարան, որ հիմնել էին Շոր աղբյուրի մոտ.... երջանիկ այդ քաղաքում ոչ մի ծխնելույզ չէր մրոտում փիրուզե երկինքը…»:

Ահա այդպիսին էր նախասովետական Գորիսի արդյունաբերությունը: Սովետական իշխանությունը շատ բան է փոխել այստեղ: Առաջին տարիներին հիմք դրվեց արդյունաբերությանը: Գորիսեցի Ալեքսանդր Միրումյանը 1922 թվականի հունվարի 2-ին դիմել է Զանգեզուրի գավառային գործադիր կոմիտեին, թե «կարդալով լրագիրներում Խորհրդային Հայաստանի օգնության կոմիտեի կոչը Հայաստանի վերաշինության մասին, ես իմ բարոյական պարտքն եմ համարում արձագանք տալ այդ կոչին եւ իմ ուժերիս ներածին չափ նպաստել Հայաստանի վերաշինությանը, առաջարկելով հետեւյալը.

Ես Գորիսում ունեմ շինություններ սալարկելու համար ցեմենտի սալիկներ պատրաստող մի ֆաբրիկա, որը միակն է ամբողջ Հայաստանում, դրա կարիքը մեծ է Երեւանում, ուր ահագին շինությունների ծրագիր ունի կառավարությունը: Իմ այս ֆաբրիկան 4 բանվորներով՝ իմ մասնակցությամբ (իբրեւ վարպետ ես կարող եմ օրական պատրաստել 400-500 հատ զանազան սալիկներ) տրամադրում եմ կառավարությանը: Միաժամանակ ունեմ լիմոնադ շինելու մեկ մեքենա, որը նույնպես ուզում եմ տեղափոխել Երեւան: Այդ մեքենաների ծանրությունը 100 փութ է, ես չեմ կարողանում տեղափոխել Երեւան: Խնդրում եմ կառավարությանը իմ ծախսերով տեղափոխել Երեւան...»:

Իհարկե բավարարվում է Միրումյանի խնդրանքը:

Զանգեզուրի աշխատավորները իրենց անձնական խնայողություններով նույնպես օգնում են Հայաստանի տնտեսության վերականգնմանը: Զանգեզուրում անց է կացվում «Օդանավի շաբաթ», որի ընթացքում աշխատավորներն իրենց դրամական նվիրատվություններն են տալիս Խորհրդային Հայաստանի համար օդանավի պատրաստման օգտին: Տպարանի բանվորներն այդ նպատակին նվիրում են 2 միլիոն ռուբլի:

Սկսում է վերականգնվել շրջանի քայքայված տնտեսությունը: 1926 թվականին Գորիսում բացվեց կոճակի գործարան, որը կարեւոր դեր խաղաց նոր, բանվորական կորիզ ստեղծելու եւ բնակչության պահանջմունքները բավարարելու համար:

Մինչեւ 1930 թվականը Գորիսում գրեթե չի բացվել արդյունաբերական այլ ձեռնարկություն: Աշխատավորության պահանջները կիսատ-պռատ հոգում էին այն ժամանակվա մասնավոր արհեստավորները: 30-ական թվականներից շրջանում ծնունդ առան առաջին արդյունաբերական ձեռնարկությունները: Առաջին անգամ շրջանում սկսեցին արտադրել տնային գործածության իրեր, կահույք, աղյուս, կղմինդր, բացվեց սայլաշինական արհեստանոցը, կազմակերպվեց լիմոնադի արտադրությունը եւ այլն:

Այդ ձեռնարկությունները սարքավորված էին պարզունակ ձեւով: Արտադրությունը հիմնված էր հիմնականում ձեռքի աշխատանքի վրա, չկային մեքենաներ, մեխանիզմներ, եւ մի կերպ բավարարում էին բնակչության, նորաստեղծ կոլտնտեսությունների պահանջմունքները: Արտադրության ամբողջ համախառն արտադրանքի ծավալը չէր անցնում մի քանի տասնյակ հազար ռուբլուց:

Բայց անցել են այդ ժամանակները…

Գորիսն այժմ դառնում է հանրապետության արդյունաբերության զարգացած քաղաքներից մեկը: Մի ժամանակ սայլաշինական արտելը համարվում էր քաղաքի, այսպես ասած, ամենամեծ ձեռնարկությունը, որը իշխում էր մի քանի մանր եւ անշուք արհեստանոցների վրա: Այժմ դրա հետքն անգամ չի մնացել: Դրա փոխարեն ծնունդ են առել արդյունաբերական նոր ձեռնարկություններ՝ տրիկոտաժի ֆաբրիկան՝ իր գործող, ներկող, կարող եւ մյուս արտադրամասերով, փոքր էլեկտրաշարժիչների գործարանը, գարեջրի գործարանը՝ լիմոնադի եւ գարեջրի արտադրամասերով: Այստեղ կառուցվել են նաեւ ծխախոտի ֆերմենտացիոն, փայտամշակման, կաթնամթերքների վերամշակման, կրի, երկաթբետոնի կառուցվածքների, ասֆալտի արտադրության նոր գործարաններ, գորգագործական ֆաբրիկա, ավտոնորոգման գործարան, արտադրական եւ կենցաղային սպասարկման կոմբինատներ՝ իրենց բազմաթիվ արհեստանոցներով ու արտադրամասերով, երկաթբետոնե կառուցվածքների հրապարակ եւ այլ ձեռնարկություններ:

Երբ խոսք է բացվում Գորիսի արդյունաբերության մասին, սովորաբար առաջինը հոլովվում է տրիկոտաժի ֆաբրիկան: Այն հիմնադրվել է 1948 թվականին: Այնտեղ առաջին տարում աշխատում էր 17 բանվոր: Համախառն արտադրանքը կազմում էր 42000 ռուբլի (գների նոր մասշտաբով): Հետագայում ֆաբրիկայի հզորությունն աստիճանաբար մեծացավ: 1965 թվականին նրա համախառն արտադրանքը հասավ մեկ միլիոն 115000 ռուբլու: Իսկ 1969




№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 ● (091) 45 90 47 ● (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց երկիր





թվականին ֆաբրիկան տեղափոխվեց մեկ ու կես միլիոն ռուբլու արժողությամբ նորակառույց, տիպային շենք: Դրա շնորհիվ մեծացավ արտադրության ծավալը, հասավ մինչեւ 2 միլիոն ռուբլու, իսկ բանվորների թիվը՝ 470-ի: 1970 թվականին ֆաբրիկայի համախառն արտադրանքի արժեքն արդեն ավելի քան 3 միլիոն ռուբլի էր: Նրա արտադրանքը իրացվում է միության բազմաթիվ քաղաքներում, այդ թվում՝ Վլադիվաստոկում, Խաբարովսկում, Չիտայում, Կույբիշեւում, Կրասնոյարում, Սվերդլովսկում, Իրկուտսկում, Տամբովում, Ուլյանովսկում, Վոլգոգրադում եւ այլուր: Ֆաբրիկայում գնալով աճում են արտադրական հիմնական եւ շրջանառու ֆոնդերը, բարձրանում է դրանց օգտագործման մակարդակը, ավելանում է շահույթը:

1960 թվականին շարք մտավ եւ սկսեց առաջին արտադրանքը տալ փոքր էլեկտրաշարժիչների գործարանը: Այդ տարվա արտադրանքի արժեքը 118000 ռուբլի էր, իսկ մեկ տարի հետո այն տվեց 275 հազար ռուբլու արտադրանք: Ինչ խոսք, որ նորը միշտ էլ դժվարությամբ է ճանապարհ հարթում: Գործարանը դեռեւս ապահովված չէր անհրաժեշտ որակավորում, գիտելիքներ ունեցող կադրերով: Եթե դրան ավելացնենք, որ այդ շրջանում էլեկտրաշարժիչների համարյա բոլոր մասերն ու դետալները ձեռք էին բերվում միության տարբեր քաղաքներից, որը միշտ չէ, որ հաջողվում էր, ապա պարզ կլինի, թե ինչ խոչընդոտներ էին ծառացած գործարանի մարդկանց առջեւ: Այսօր ձեռնարկությունն ունի անհրաժեշտ բոլոր արտադրամասերը, որը հնարավորություն է տալիս բոլոր մասերն ու դետալներն արտադրել տեղում: Իսկ դա մեծապես նպաստում է ոչ միայն առաջադրանքների անթերի կատարմանը, այլեւ արտադրանքի որակի բարելավմանը եւ ինքնարժեքի իջեցմանը: 1970 թվականի կեսերին գործարանում յուրացվեցին արտադրանքի երկու նոր տեսակներ, եւ անմիջապես սկսվեց դրանց մասսայական թողարկումը: Այդ նոր էլեկտրաշարժիչները, որոնք ծավալով զգալիորեն փոքր են առաջիններից, օգտագործվում են առեւտրական եւ կուլտուր-կենցաղային սպասարկման օբյեկտներում, լավ քննություն են բռնել: Այժմ գործարանը թողարկում է փոքր հզորությամբ էլեկտրաշարժիչների մոտ 40 տարատեսակներ եւ առաստաղային հովհարներ:

Երկրի անընդհատ զարգացող ավտոմատիկան եւ կիբեռնետիկան փոքր շարժիչների մեծ պահանջարկ ունեն: Գորիսի փոքր էլեկտրաշարժիչների գործարանը տալիս է բարձր որակի շարժիչներ, որոնց մասին գրեթե չեն ստացվում ռեկլամացիաներ: Հետզհետե աճում է գործարանի արտադրանքի ծավալը: 1965 թվականի համեմատությամբ, 1970 թվականին ուղիղ երեք անգամ մեծացավ ապրանքային արտադրության ծավալը, 1,9 անգամ իրացման ծավալը, ինքնարժեքի իջեցումը կազմեց 17,7 տոկոս: Այժմ կառուցվում է 2,5 միլիոն ռուբլու արժեքով գործարանային նոր տիպային շենք, որը շահագործման կհանձնվի այս տարի: Նոր շենքում գործարանը տարեկան կարտադրի 250 հազար էլեկտրաշարժիչ ներկայիս 80 հազարի փոխարեն: Բացի այդ, այս հնգամյակում նախատեսվում է կառուցել նոր մասնաշենք, որը տարեկան կթողարկի 250 000 հատ առաստաղային հովհար:

Ավտովերանորոգման գործարանը ստեղծվել է 1964 թվականին: Այն սկզբում կոչվում էր մեխանիկական գործարան, որն արտադրում էր մահճակալներ տարեկան 150-180 հազար ռուբլի ծավալով: 1962 թվականին այն վերանվանվեց ավտովերանորոգման գործարանի: Այնտեղ սկսվեցին ավտոմեքենաների, շարժիչների, ագրեգատների վերանորոգման, ինչպես նաեւ ավտոմեքենաների նոր թափքերի պատրաստման, չուգունի ձուլման եւ այլ աշխատանքներ:

Գործարանի արտադրական ծավալը տարեցտարի մեծանում է: Այսպես, եթե 1969 թվականին նրա համախառն արտադրանքի արժեքը եղել է 230 հազար ռուբլի, ապա այժմ հասել է մոտ 300 հազար ռուբլու: Գործարանում աշխատում են 64 մասնագետ մեխանիզատորներ:

Եթե մի ժամանակ կապիտալ նորոգումից դուրս եկած ավտոմեքենաներն ու շարժիչները չէին ապահովում նախատեսված վազքը, ապա այժմ պատվիրատուները չափազանց գոհ են նորոգողների աշխատանքից, նախատեսված 35-40 հազար կիլոմետրի դիմաց նորոգված մեքենաներն ու շարժիչները կատարում են մինչեւ 70 հազար կիլոմետր վազք: Ավտովերանորոգման գործարանը ունի լայն զարգացման հեռանկար:

«Շոր ձոր» կոչվող վայրում, ուր մի ժամանակ կարելի էր տեսնել փուշ ու տատասկ, թփեր ու մացառներ, այժմ օրնիբուն ծխում է հսկայական մի վառարան: Տեղական հարուստ հումքի բազայի վրա կառուցված կրի այս գործարանը Գորիսի, Ղափանի, Սիսիանի, Ադրբեջանական Հանրապետության Լաչինի եւ Կուբաթլիի շրջանների շինարարական կազմակերպություններին տարեկան տալիս է 4500 տոննա բարձրորակ կիր: Այս գործարանից քիչ հեռու փռված է երկաթբետոնե կառուցվածքների հրապարակը, որը շահագործման հանձնվեց 1965 թվականին: Դա արտադրում է շենքերի ծածկեր, պանելներ, միջնորմների սալիկներ: Հրապարակն ունի նաեւ ատաղձագործական արտադրամաս, որն արտադրում է դուռ, պատուհան: Շինանյութերի արտադրությունն ընդլայնելու է եկել վերջերս շարք մտած ասֆալտբետոնե նոր գործարանը:

Գարեջրի գործարանն ստեղծվել է դեռեւս 1940 թվականին: Հայրենական պատերազմը ժամանակավորապես հետաձգեց նրա զարգացումը: 1944 թվականին նա սկսեց արտադրել գարեջուր եւ լիմոնադ: Վեց տարի հետո նրա արտադրանքը հասավ շուրջ 100 հազար դեկալիտրի, իսկ այժմ այն տարեկան արտադրում է մինչեւ 200 հազար դեկալիտր գարեջուր եւ լիմոնադ, որի արժեքը հասնում է մինչեւ կես միլիոն ռուբլու: Գործարանն ունի զարգացման մեծ հեռանկարներ: Արդեն կազմված եւ պատրաստ է նոր գործարանի շինարարության նախագիծը՝ մոտ մեկ միլիոն ռուբլու նախագծային արժեքով: Կառուցումը կսկսվի ընթացիկ տարում: Այդ վերակառուցման շնորհիվ գարեջրի եւ լիմոնադի տարեկան արտադրանքը կհասնի մինչեւ 650-700 հազար դեկալիտրի, կամ՝ այժմվա մակարդակը կգերազանցի մոտ 4 անգամ:

1965 թվականին ստեղծվեց ծխախոտի ֆերմենտացիոն գործարանը, որը վերամշակում է Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջանների կոլտնտեսությունների ու պետական տնտեսությունների ծխախոտի առատ հումքը: Այն սկզբում համարվում էր Երեւանի ծխախոտի ֆերմենտացիոն ֆաբրիկայի մասնաճյուղը: Իսկ 1966 թվականի հունվարից դարձավ ինքնուրույն գործարան: Եվ դրա արդյունքը եղավ այն, որ 1969 թվականին նրա համախառն արտադրանքը 1,5 միլիոնից հասավ մոտ 3 միլիոն ռուբլու: Գրեթե երկու անգամ մեծացել է նաեւ հումքի իրացման ծավալը:

Աշխատավորության հարաճուն պահանջմունքները բավարարելու ուղղությամբ մեծ ու պատվավոր գործ են կատարում «Հայգորգի» Գորիսի մասնաճյուղը, կենցաղային սպասարկման եւ արտադրական կոմբինատները: Գորիսում տարեկան արտադրվում է 17,5 հազար քառակուսի մետր կամ 3550 հատ գորգ:

1955 թվականից կարի, կոշիկի, սայլաշինական արտելների բազայի վրա ստեղծվեց տեղական արդյունաբերական կոմբինատը, որը զբաղվում է նաեւ բնակչության կենցաղային սպասարկման հարցերով: Շուտով կկառուցվի նաեւ կահույքի անհատական պատվերների ֆաբրիկա՝ փայտամշակման եւ սղոցման արտադրամասերով: Տեղական հումքի վրա 1967 թվականին կազմակերպված արդյունաբերական կոմբինատն ունի կրի, կարի, քարհանքերի, ավազի արտադրության, փայտամշակման, առանձին գործիքաշինական, թիթեղագործական, կոճակի պատրաստման եւ այլ արտադրամասեր: Այժմ կառուցվում է արտադրական նոր շենք՝ ավելի քան մեկ միլիոն ռուբլու նախագծային արժողությամբ: 1972 թվականին կոմբինատը բացեց նաեւ պլաստմասսայի արտադրամաս, որը պատրաստում է պլաստմասսե զանազան իրեր, ավտոմեքենաների մասեր եւ այլն: Կոմբինատը կարտադրի նաեւ տղամարդու կոստյումներ, կանացի բրդյա ժակետներ, բարձրորակ կահույք՝ սեղաններ, գրապահարաններ եւ այլն: Շուտով շահագործման կհանձնվեն Գորիսից քիչ հեռու Եռաբլուր սարահարթի շրջակայքի սպիտակ բազալտի նոր քարահանքերը՝ հարուստ պաշարներով:

Գորիսի ամենաերիտասարդ արդյունաբերական ձեռնարկությունը ռետինե կոշիկի գործարանն է, որը կազմակերպվել է 1970 թվականին: Նրա հզորությունն առայժմ տարեկան երկու հարյուր հազար զույգ է, իսկ նոր արտադրական շենքի կառուցումով այն կհասնի հինգ միլիոն զույգի:

Գորիսի շրջանում ծնունդ է առել եւ զարգանում է նաեւ սննդի արդյունաբերությունը: Հատկապես առաջընթաց է ապրում կաթնամթերքների, մսի, երշիկեղենի, հացաբուլկեղենի, մրգերի, բանջարեղենի վերամշակման արտադրությունը եւ ձկնաբուծությունը: Վերջին տարիներին այդ ճյուղերն սկսեցին ավելի ուժեղ տեմպերով զարգանալ:

...Շինուհայրի նորաստեղծ բնակավանում շարք կմտնի ռետինեսպորտային կոշիկների արտադրության նոր գործարանը՝ հինգ միլիոն զույգ տարեկան արտադրանքով:

Հնգամյակի կառույցներից է նաեւ Գորիսի պանրագործարանը՝ իր բազմաթիվ արտադրամասերով, մսի եւ երշիկեղենի, թռչնաբուծական եւ խոզերի բտման կոմբինատները, կենցաղային կոմբինատի նոր արտադրամասերը եւ այլն:

Շրջանի ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը պահանջում է մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա, այդ հարցը լուծվում է Որոտանի կասկադի 3 հիդրոէլեկտրակայանների կառուցումով: Առաջնեկը Տաթեւի հիդրոէլեկտրակայանն է, որ շահագործման հանձնվեց 1970 թվականին:

Գորիսում բոլոր հնարավորությունները կան զարգացնելու նաեւ ռադիոտեխնիկական եւ սարքաշինական արդյունաբերությունը:

Դժվար է սպառիչ պատասխան տալ այն հարցին, թե ինչպիսին կլինի Գորիսի արդյունաբերությունը, բայց մի բան պարզ է, որ կանցնեն տարիներ, եւ հիմնովին կվերափոխվի շրջանի քարտեզը, արդյունաբերությունը կդառնա Գորիսի շրջանի տնտեսության առաջատար եւ որոշիչ ճյուղը: «Գորիս» մակնիշով արտադրանքի բազմաթիվ տեսակները ոչ միայն մեր հանրապետության եւ միության շատ ու շատ քաղաքների, այլեւ արտասահմանյան երկրների ուղեգրեր կստանան:

## Շինարարությունը

Մինչեւ սովետական իշխանության հաստատվելը Գորիսի շրջանում գրեթե շինարարական աշխատանք չի կատարվել: Անցել են ժամանակները, փոխվել են բարքերը: Շրջանն այսօր վեր է ածվել շինարարական հրապարակի: Ամենուրեք վեր են խոյանում շենքերը, բացվում թունելներ, ջրանցքներ, ճանապարհներ, նոր թաղամասեր, փողոցներ, կառուցվում նոր գյուղեր եւ այլն:

Վերջին մի քանի տարիների ընթացքում կառուցումն ավելի ուժեղ թափ ստացավ: Բացի կոլտնտեսային շինարարությունից, պետական կենտրոնացած միջոցներով այստեղ տարեկան կատարվում է 12-13 մլն ռուբլու շինարարական աշխատանք: Մեկ տարվա շինարարությունում ծախսվող գումարի չափը հավասար է շրջանի անցած 45-50 տարվա ամբողջ բյուջեին՝ միասին վերցրած: 1970 թվականին կապիտալ շինարարության ծավալը կազմեց 13,5 մլն ռուբլի: Այն ավելի մեծացավ 1972 թվականին: Գորիսում 9 շինարարական վարչություն կա, որոնք ունեն հարուստ տեխնիկա եւ հմուտ կադրեր: Ամենահինը №1 շինվարչությունն է, որը գործում է 1953 թվականից: Շինվարչությունը կառուցում է բնակելի շենքեր, դպրոցներ, մանկապարտեզներ, հասարակական, արդյունաբերական շենքեր, կոյուղիներ, ջրատար առուներ եւ այլն: 1960 թվականից մինչեւ հիմա քաղաքում շահագործման են հանձնվել 30 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, բազմաթիվ դպրոցական շենքեր, ավելի քան 15 արդյունաբերական, հասարակական, կենցաղային-լուսավորական օբյեկտներ եւ այլն:

1969 թվականի ապրիլին Գորիսում ստեղծվեց 21-րդ շինարարական մեքենայացված շարասյունը: Այս նոր կազմակերպությունը տարեկան կատարում է 1,5 միլիոն ռուբլու շինարարական աշխատանք:

Շինարարական աշխատանքները հմտորեն ղեկավարում է Բ.Կրեչյանը, որը շարքային բանվորից հասել է մինչեւ շինարարության պետի մակարդակին: Նրա ղեկավարած շինարարական կազմակերպությունը 1971-1972 թվականին կառուցեց Տաթեւի, Հալիձորի, Հարժիսի, Շինուհայրի, Զանգեզուրի, Կոռնիձորի միջնակարգ դպրոցները, Վերիշենի, Խնձորեսկի, Քարաշենի, Տեղի, Կոռնիձորի մշակույթի պալատները, քաղաքի փոքր էլեկտրաշարժիչների նոր գործարանը եւ բազմաթիվ այլ կառուցումներ:

Շնորհակալ գործ է կատարում բոլորովին վերջերս ստեղծված շինարարական №3 վարչությունը, որը հիմնականում կառուցում է «Հայգյուղտեխնիկայի» շրջանային բազայի եւ Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի նոր շենքերի համալիրները:

Ինչպես հայտնի է Գորիսի շրջանի ջրային հորդառատ գետերից մեկը՝ Որոտանը, սկիզբ է առնում Ղարաբաղի բարձրավանդակի սիստեմի մեջ մտնող Այգինգիլ սարից: Գետի երկարությունը 194կմ է, որից 127կմ հոսում է Հայաստանի տերիտորիայով, իսկ մնացած 67 կիլոմետրերը՝ Ադրբեջանական ՍՍՀ-ի տերիտորիայով: Որոտանի ջրերը էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով օգտագործվում են կասկադաձեւ կառուցվող 4 հիդրոէլեկտրակայանների՝ Սպանդարյանի, Անգեղակոթի, Շամբի եւ Տաթեւի հիդրոէլեկտրակայանների միջոցով:

Բայց միաժամանակ Որոտան գետի վրա կառուցվելու են նաեւ Սպանդարյանի, Տոլորսի եւ Շամբի ջրամբարները, որոնք ծառայելու են ոռոգման նպատակին:

1962 թվականին Գորիսում ստեղծվեց «Հայհիդրոէներգոշինի» Տաթեւի հիդրոկայանի շինարարական վարչությունը: Շինարարները կառուցեցին եւ 1969 թվականի դեկտեմբերի 11-ին ավարտեցին 19 կիլոմետրանոց թունելը, որի միջով հոսում են Որոտանի ջրերը, միաժամանակ կառուցեցին գէսի շենքը, ճնշման հանգույցը, օրական կարգավորման ջրավազանը: Տաթեւի հիդրոէլեկտրակայանի կառուցվածքների մեջ է մտնում նաեւ Սիսիանի շրջանի Շամբի 49 մետր բարձրության ամբարտակը: Շամբի, Տոլորսի եւ Սպանդարյանի ջրամբարները, ինչպես նաեւ Խոտից վերեւ կառուցված ճնշման ջրավազանը Տաթեւի հիդրոէլեկտրակայանը դարձնում են կարգավորող ու ճկուն էլեկտրակայան՝ Հայկական ՍՍՀ էներգոսիստեմում:

1970 թվականի դեկտեմբերի 25-ին հիդրոէլեկտրակայանի առաջին ագրեգատը հանձնվեց շահագործման, իսկ դեկտեմբերի 30-ին՝ մյուս երկու ագրեգատները:

Բացի էներգետիկ նպատակներից՝ Որոտանի ջրերի մի մասը, տարեկան մոտավորապես 80 միլիոն խորանարդ մետր, կօգտագործվի ոռոգման նպատակով: Այդ ջրերը ոռոգելու են մոտ 19.400 հեկտար հողատարածություն, որից մոտ 7 հազար հեկտարը՝ Գորիսի շրջանում: Դրա համար ջուրը վերցվելու է Խոտից վերեւ կառուցվող ճնշման ջրավազանից:

Այդ աշխատանքների կատարման համար 1966 թվականին Գորիսում ստեղծվեց «Հայջրշին» տրեստի Գորիսի №8 շինվարչությունը, որը կատարում է Որոտանի ջրանցքի շինարարությունը, ավելի քան 12 միլիոն ռուբլի արժողությամբ:

Ջրանցքը 8,5կմ անցնում է զուգահեռ հզոր խողովակաշարերով՝ անդնդախոր ձորերի միջով, 3.5կմ թունելներով, իսկ մնացածը՝ բաց տարածությամբ:

Ջրանցքի վրա կառուցվում են 5 հզոր ջրհան կայաններ, որոնք ջուրը մղելու են դեպի լեռնային դաշտերն ու մարգագետինները, կկառուցվեն նաեւ 170կմ ցանցային ջրատարներ: Ջրանցքին զուգահեռ կառուցվել է 4կմ երկարության հիմնական երկաթգիծ, 160կմ բարեկարգ խճուղի՝ ջրանցքի կառուցվածքը դյուրացնելու, ջրատար խողովակները եւ շինանյութերն այդտեղ տեղափոխելու համար: Շինարարները կառուցում են նաեւ 1460 մեծ ու փոքր ջրհան կայաններ, կամուրջներ եւ այլ շինություններ: Ջրանցքի շինարարությունը կավարտվի ընթացիկ տարում եւ ոռոգման տակ կդրվի մինչեւ 7 հազար հեկտար վարելահող:

1968 թվականի մարտին կազմակերպվեց նաեւ շրջսովետի գործկոմի շինվերանորոգման տեղամասը, որն զբաղվում է քաղաքի եւ գյուղերի բարեկարգման ու վերանորոգման աշխատանքներով, անցկացնում է կոյուղու գծեր, ջրմուղի ցանց, բացում է նոր փողոցներ, ասֆալտապատում եւ այլն: 1969 թվականի մարտին կազմակերպվեց «Կապի շինտրեստի» Գորիսի №4 մեքենայացված շարժական շարասյունը, որն զբաղվում է կապի շինարարությամբ: Կառուցում է հեռախոսային ավտոմատ կայաններ, կաբելային լայն ցանց, ռադիոֆիկացնում գյուղերը:

Գյուղերում շինարարական հզոր աշխատանքներ է ծավալում նաեւ շրջսովետի գյուղատնտեսական վարչության շինարարական կազմակերպությունը: Նա ղեկավարում է նաեւ նոր գյուղերի կառուցապատումները:

Հզոր է շինարարության թափն այսօր: Բայց շատ ավելի մեծ են շինարարության հեռանկարային առա-

Շարունակությունը՝ էջ 74

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ

# Դրվագներ Գորիսի սոցիալ-տնտեսական զարգացման պատմությունից

Հատված Քրիստափոր Պետրոսյանի «Լեռնաշխարհի վերածնունդը» գրքից

**Սկիզբը՝ էջ 73**

ջրադրանքները: Շուտով կստացվի Բռուն-Վերիշեն գյուղերը Գորիս քաղաքին միացնելու, քաղաքն ավելի մեծացնելու գլխավոր հատակագիծը: Ըստ դրա Գորիսը կընդգրկի մոտ 1500 հեկտար տարածություն, որտեղ կբնակվեն 50 հազարից ավելի մարդ:

Հանգստավայրեր են կառուցվում Գորիսի ջրամբարի եւ «Սատանայի կամրջի», անտառտնտեսության վարչության շենքի շրջակա տարածություններում:

Նոր բնակարաններ կկառուցվեն Որոտանում, Շինուհայրում: Գորիս քաղաքում կկառուցվեն վարչական նոր շենքեր, 600 տեղանոց պիոներների պալատ, անասնաբուժարան, յոթ հարկանի հյուրանոց: Արդեն սկսված են Գորիս քաղաքում 800 տեղանոց կուլտուրայի պալատի, գարեջրի գործարանի շենքերի եւ սպորտ ստադիոնի կառուցումները:

Քաղաքի հյուսիսային մասում կկառուցվի եւ շուտով կստեղծվի հանգստյան նոր վայր՝ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների կոթող-հուշարձանով ու ընդարձակ լողավազանով: Կստեղծվի ջեռուցման նոր կենտրոնացված կայան, որը կսպասարկի շատ թաղամասերի:

Գորիսին հարող արեւելյան եւ արեւմտյան անցնող ճանապարհների վրա վեր կխոյանա քաղաքի մուտքը պատկերող գեղարվեստական հուշարձան-համալիրը:

## Ձգվում են ճանապարհները

Անցյալում Գորիսի լեռները, ժայռերը, խորունկ ձորերը զուրկ էին ճանապարհներից, մարդիկ աշխատանքի էին գնում եւ տուն վերադառնում ոտքով, ցախ տեղափոխում շալակով, իսկ որոշ գյուղերում էլ ավանակներով: Ամեն գյուղից դեպի դաշտերն էին ելնում մեկ-երկու կածան, իսկ հարեւան գյուղերն ու շրջկենտրոնը՝ մեկական արահետ: Գորիսն էլ հարեւան Ղափանի, Սիսիանի շրջանների հետ կապված էր արահետներով:

Գորիսեցիները հաճախ էլ այդ արահետների եւ կածանների զոհն էին դառնում: Ահա մի բնորոշ օրինակ, որ տպագրվել է 1909 թվականին Գորիսում լույս տեսնող «Գավառ» թերթի երկրորդ համարում. «Ամսույս (դեկտեմբերի) սկզբներին Ալիղուլեցի (Գորիսի վերաբնակիչ) Բալախանում Մկրտչյանը յուր 11 տարեկան դստեր հետ էշով անտառից ցախ բերելիս բեռը թեքվում է, եւ դժբախտ կինը զառիվայրի կողմից կախվում է բեռը դզելու, որից էշը հավասարակշռությունը կորցնելով գլորվում է՝ յուր հետ տանելով նաեւ կնոջը, էշը իսկույն սատկում է, իսկ կինը ուշաթափ ընկնում է ձորը: Խեղճ աղջիկը, մորը ուշքի բերելու նպատակով, առվից բռով ջուր է բերում, սակայն ձեռքերը սառելով ջուրը կիսաճանապարհին թափում է: Ճարը կտրած աղջիկը ջուրը լցնում է բերանը, որ տանի մորը, սակայն այդ եւս անհաջող: Եվ լալով աղջիկը գնում է Գորիս՝ օգնություն կանչելու»: Քանի՜-քանի՜ այսպիսի պատահարներ են եղել եւ մարդիկ վայրի կածանների զոհ դարձել:

Գորիսեցիները կտրված էին աշխարհից եւ աշխարհն էլ նրանցից: Գյուղացիներից շատերը իրենց ամբողջ կյանքում չէին կարողանում տեսնել Գորիսը կամ հարեւան շրջանը:

Սովետական իշխանության հաստատման հենց առաջին օրվանից Գորիս քաղաքի եւ գյուղերի աշխատավորները ձեռնամուխ եղան գյուղամիջյան, գյուղերից շրջկենտրոն եւ այդ տեղից դեպի հարեւան շրջանները տանող ճանապարհների, խճուղիների կառուցմանը, ներդնելով նյութական եւ աշխատանքային հսկայական միջոցներ: Մինչեւ 1925 թվականը Գորիսի շրջանում հատուկ ճանապարհաշինարարական կազմակերպություն չկար: Ամեն ինչ կատարվում էր աշխատավորների նախաձեռնությամբ եւ ջանքերով: Միայն այդ թվականին, Հայաստանի գլխավոր ճանապարհաշինարարական վարչության №746 հրամանով, առաջին անգամ Գորիսում կազմակերպվեց ճանապարհաշինարարական տեղամաս Գորիս-Սիսիան եւ Գորիս-Ղափան տանող ոչ բարեկարգ ճանապարհների բազայի վրա:

Դրանից հետո սկսվեց ճանապարհների պլանաչափ կառուցումն ու բարեկարգումը: Հիմնական նորոգման էին ենթարկվում ճանապարհները, կամուրջները: Սկսում են ճեղքել ժայռերը, ծառերը արմատահան անել, լայնացնել, նոր ոլորաններ բաց անել, խճապատել Գորիս-Ղափան տանող ճանապարհը:

1941 թվականին Գորիսի ճանապարհաշինարարական տեղամասը բաժանվեց երկու մասի՝ Ջաբուղ-Գորիս եւ Բիչանակ լեռնանցքի, որտեղով անցնում է միութենական նշանակություն ունեցող պետական ճանապարհը: Այդ բազայի վրա Գորիսում կազմակերպվեց №770 ճանապարհային շահագործման տեղամասը: Իսկ հանրապետական նշանակություն ունեցող Գորիս-Ղափան տանող ճանապարհի բազայի վրա՝ №3 ճանապարհային շահագործման տեղամասը: Այդ երկու տեղամասերը կատարեցին միութենական եւ հանրապետական ճանապարհների հիմնական նորոգման աշխատանքները: Հատկապես շատ գործեր արվեցին «Բիչանակ» բարձրաբերձ լեռնանցքում, որը Զանգեզուրի ամենաբարձր լեռնագագաթներից մեկն է: Շինարարները լայնացրին ու բարեկարգեցին Գորիս-Բիչանակ տանող ճանապարհը, որը մինչեւ վերջին ժամանակներն էլ Գորիս-Երեւան տանող միակ ճանապարհն էր:

1957 թվականին №3 եւ №770 ճանապարհաշինարարական տեղամասերը միավորեցին №5 ճանապարհային շահագործման մեկ տեղամասում, որը կատարում էր Ջաբուղ-Գորիս եւ Բիչանակ լեռնանցքի ճանապարհաշինարարական աշխատանքները: Միեւնույն ժամանակ այդ տեղամասին հանձնարարվեց Գորիս-Սիսիան-Ղափան միութենական եւ հանրապետական ճանապարհների շահագործման աշխատանքների կատարումը: 1959 թվականից մինչեւ 1970 թվականը վերափոխման եւ ասֆալտապատման ենթարկվեց շրջանի տերիտորիայով անցնող միութենական ճանապարհը՝ 50կմ երկարությամբ՝ ապահովելով ամբողջ ճանապարհով անվտանգ երթեւեկությունը:

1970 թվականից №5 ճանապարհաշահագործման տեղամասը վերամիավորվել է Գորիսի շրջսովետի գործկոմին կից տեղական նշանակություն ունեցող ճանապարհաշինարարական բաժնին եւ այն անվանվել է Գորիսի ճանապարհների շինարարական եւ շահագործման տեղամաս: Նա է այժմ կատարում շրջանի վարչական տերիտորիայում գտնվող 321կմ ճանապարհների սպասարկման աշխատանքները:

Շրջանում ճանապարհաշինարարության հետագա ծավալմանը հատկապես նպաստեց ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1959 թվականի հունվարի 20-ի հրամանագիրը: Կատարելով այդ հրամանագրի պահանջները, տեղական ճանապարհների շինարարական աշխատանքներին ակտիվորեն մասնակցում են կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, արդյունաբերական ձեռնարկությունները, հիմնարկությունները, տնտեսական, առեւտրական եւ մյուս կազմակերպությունները:

Շատ բարդ էր Շինուհայր-Որոտան կառուցված ճանապարհը: Դժվար էր պատկերացնել, որ մարդու աշխատանքի առաջ կարող են այդպես արագորեն հնազանդվել երկնաքեր ժայռերը եւ անդնդախոր ձորերը:

Դժվարամատչելի էր եւ Գորիս-Տաթեւ 32կմ ճանապարհի կառուցումը: Դա շատ աշխատանք եւ նյութական միջոցներ պահանջեց, մինչեւ որ Որոտանի անդնդախոր կիրճով ձգվեց լայնահուն ու բարեկարգ ճանապարհը: Այժմ այն արագորեն ասֆալտապատվում է եւ կավարտվի ընթացիկ տարում:

Ճանապարհաշինությունը թափ է առնում նաեւ շրջանի գյուղերում, հատկապես՝ Խնձորեսկում, Կորնիձորում, Խնածախում, Քարահունջում, Խոտում, Շինուհայրում, Հարժիսում եւ այլուր: Տեղական ճանապարհների ընդհանուր ցանցը տարեցտարի ընդարձակվում է եւ այն հասել է 185կմ-ի: Այժմ ասֆալտապատվում են նաեւ գյուղական ճանապարհները: Արդեն ասֆալտապատվել են Տեղ, Արավուս, Կորնիձոր, Վերիշեն, Խնձորեսկ, Բռուն, Զանգեզուր գյուղերի ճանապարհները եւ նման աշխատանքներ են կատարվում Խնածախ, Խոզնավար, Վաղատուր, Շինուհայր գյուղերում: Կարգի են բերվում Քարահունջ, Մալդաշ, Աղբուլաղ եւ Կուրթկալաղ գյուղերը տանող ճանապարհները: Նախատեսված է մեկ միլիոն ռուբլու շինարարություն կատարել պետական ճանապարհից Բարձրավան գյուղը տանող նոր հատվածի վրա: Այդ ճանապարհը անցնում է խոր ձորերի, ժայռերի, անտառների միջով: Ճանապարհաշինարարների հզոր թափի առաջ օր օրի հնազանդվում են լեռներն ու ձորերը: Եվ հեռու չէ այն օրը, երբ ավտոմեքենան լեռների եւ ձորերի կրծքով ձգված ասֆալտապատ նորակառույցով կբարձրանա գյուղ՝ ուրախություն պատճառելով բարձրավանցիներին:

**1973թ.**

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Գրական Գորիս

**Սկիզբը՝ էջ 21**

տական մանկավարժական ինստիտուտը (1967): Եղել է Խնձորեսկի դպրոցի տնօրեն: Աշխատել է Գորիսի «Զանգեզուր» թերթի խմբագրությունում:

Բանաստեղծ է եւ արձակագիր: Գրում է իրապատում պատմվածքներ ազատամարտիկների կյանքից: Լույս է ընծայել հետեւյալ գրքերը՝ «Թուրքուշ խուլի գրավումը» (վիպակ, 1998), «Արքաների խիղճը» (առակներ, 2000), «Զանգեզուրյան տաղեր» (2001), «Հողի սիրով» (բանաստեղծություններ, 2001), «Մի կրակեք հայերի վրա» (պատմվածքներ, 2003), «Ապրելու իրավունքով» (պատմվածքներ, 2004), «Առանց հայրենիք չի կարելի» (իրապատում պատմվածքներ, 2005), «Հայրենիքը սկսվում է ծննդավայրից» (իրապատում պատմվածաշար, 2006), «Ծիծաղում է Խնձորեսկը» (երգիծանք, 2006), «Մարդ էլ կա, մարդ էլ» (2006), «Ծուխ ծխանի» (պատմվածքներ, 2007): Վերջերս, ինչպես նշեցինք, նշանակվել է Հայաստանի գրողների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահ: Հաջողություններ մաղթենք նրան այս գործում, որպեսզի աշխուժացնի Գորիսի եւ ամբողջ մարզի գրական կյանքը:

Գրական Գորիսն անհնար է պատկերացնել առանց Ակսել Բակունցի տուն-թանգարանի երկարամյա տնօրեն Քաջիկ Միքայելյանի (Դորունց, ծնվ. 1939): Նրա օրոք թանգարանը դարձել է մի յուրահատուկ գրական հավաքատեղի, որտեղ իրար են հանդիպում ոչ միայն գորիսեցի, այլեւ երեւանցի, հանրապետության այլ քաղաքներից, նաեւ սփյուռքից եկած բազմաթիվ գրողներ, գրական աշխարհի մարդիկ: Բակունցի այգում՝ փոքրիկ սեղանի շուրջ, մինչեւ ուշ երեկո ծավալվում են գրական զրույցներ: Բնույթով նա գրականագետ է՝ բանաստեղծական խառնվածքով: Դրա վկայություններն են նրա գրականագիտական հետազոտությունները՝ «Բուրելու է հատ անմահ ..» (tbd)

Սերգեյ Հախվերդյան, ծնվել է 1946թ. Գորիս քաղաքում: Պատմաբան-պատմագետ է: Համահեղինակ է «Սյունիքի պատմություն» գրքի: Գրել է «Գորիսի պատմություն» ուշագրավ աշխատությունը: Ընթերցողի համար անակնկալ էր պատմվածքների վերջերս լույս տեսած ժողովածուն, որը վկայում է նրա գրական օժտվածության մասին:

Սպարտակ Բակունցը զոհվեց հայրենի Վերիշեն գյուղի հրետակոծման ժամանակ՝ Ղարաբաղյան ազատամարտի օրերին՝ 1992թ. օգոստոսի 10-ին, երբ 38 տարեկան էր: Ստեղծագործել սկսել է պատանեկան տարիներից, բայց իր կենդանության օրոք բանաստեղծություններից գոնե մեկը չտեսավ տպագրված: Մահվանից մեկ տարի անց՝ 1993-ին, լույս տեսավ նրա գիրքը՝ «Հայացքների պայքար» (Համո Սահյանի առաջաբանով, Երեւան, «Նաիրի», 286 էջ), որն աչքի է ընկնում ինքնատիպությամբ:

Արթուր Առաքելյանը ծնվել է 1959թ. Գորիսում: Սովորել է Երեւանի բժշկական ինստիտուտում (1977-1983), հասարակական մասնագիտությունների բաժանմունքի լրագրության բաժնում (1980-1982), ՀԿԿ Կենտկոմի հասարակական-քաղաքական գիտությունների համալսարանի տնտեսագիտության բաժնում (1989-1991): Այժմ աշխատում է Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայանի տնօրեն: Նրա նախասիրությունների կենտրոնում գրականությունն է: Լույս է ընծայել բանաստեղծական երկու ժողովածու՝ «Մեռնձորի լույսը» (2001), «Նյուքի հաղթանակը» (2009): Այս երկու գրքերում զետեղել է նաեւ իր խորհրդածությունները պոեզիայի մասին, որոնք վերնագրել է «Պոեզիայի բնական ընտրությունը» եւ «Պոեզիայի հմայքը»: Սրանք կարեւոր են հեղինակին եւ նրա գրական աշխարհը ճանաչելու համար: Ունի նաեւ գրականագիտական այլ հոդվածներ: Տպագրության է պատրաստում «Մշակութային դեսանտ Գորիսում եւ Կապանում» գիրքը՝ նվիրված վրացական պոեզիայի օրերին Հայաստանում:

Գրական Գորիսի կերպարը լրացնում են նաեւ շատ այլ ստեղծագործողներ, որոնցից պետք է հիշատակել Հաբեթնակ Գրիգորյանին, Սուսաննա Բաբաջանյանին, Լեւոն Սահակյանին, Էդուարդ Հարենցին, Տիգրան Գրիգորյանին, որոնք ունեն գրքեր եւ գրական ներկայություն են Գորիսում: Չպետք է մոռանանք նաեւ երիտասարդներին, նոր-նոր ասպարեզ մտնող գրական անուններին: Բնականորեն ավելի մանրամասն բոլորին անդրադառնալ հնարավոր չէ, ուստի՝ ամփոփենք:

Գորիսը հայոց աշխարհի եզակի վայրերից է, որտեղ մեր ազգային կազմը քիչ է ենթարկվել տեղաշարժերի: Գորիսեցին դարերի ընթացքում մնացել է իր հողի վրա (նույնը նաեւ Արցախը): Վանեցին, խոյեցին, սասունցին, երզնկացին, էզրումցին ենթարկվեցին բռնագաղթի, ստիպված եղան հեռանալ իրենց գյուղերից ու քաղաքներից եւ վերահաստատվել այլուրեք՝ Հայաստանում կամ Հայաստանից դուրս: Տեղաշարժերի հետ կորչում է շատ բան՝ տեղային հատկանիշեր, սովորություններ, նաեւ՝ բարբառ: Քանի համախումբ էին, խոսում էին իրենց բարբառով, մեծ քաղաքներում ո՞ւմ հետ խոսեն:

Գորիսն ունի այդ խոր ավանդույթները, դրանք գալիս են հազարամյակների խորքից: Դրանք պետք է պահպանել եւ չենթարկել համահարթեցման: Այդ ավանդույթների լավագույն արտահայտիչն արվեստն է ու մշակույթը եւ, առաջին հերթին, գրականությունը:

Գորիսն այսօր հայ գրական կյանքի կենդանի ու գործող օջախներից մեկն է, որին շունչ ու ոգի են հաղորդում Բակունցյան ամենամյա օրերը, որոնք վերածվում են մշակութային տոնակատարությունների, գրականագիտական նստաշրջաններն ու գրքերի քննարկումները եւ հատկապես այսօրվա բանաստեղծների ու արձակագիրների եռանդուն գործունեությունը, ովքեր, համախմբված Հայաստանի գրողների միության տեղական մասնաճյուղի մեջ շարունակում են իրենց օժտվածության չափով գործել եւ ստեղծագործել: 140-ամյակը բոլորող Գորիսը, որի արմատները շատ ավելի խոր են, քան քաղաքի այդ երիտասարդ տարիքը, դեռեւս շատ գրական տոներ է նշելու եւ հայ գրականությունը հարստացնելու է ազգային բույր ու երանգ ունեցող նորանոր ստեղծագործություններով:

■


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru


ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ

# Քաղաքական բռնաճնշումները Գորիսում 1930-1940թթ.

20-րդ դարի երրորդ տասնամյակը ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Գորիսում, սկսվում է կոմունիստական իշխանությունների կողմից սանձազերծած անսքող բռնություններով: Բռնության մոլուցքը համաճարակի պես մարդկային որեւէ արժանիք կամ վաստակ հաշվի չէր առնում: Կարեւորը վախի եւ անվստահության մթնոլորտի հաստատումն էր: Բոլորին ստիպեցին հանձնել տներում պահվող, սեփականություն հանդիսացող զենքը, որ մնացել էր հայ-թուրքական կռիվներից: Զենքի հանձնման հարցում կամակորություն ցույց տվեցին Բայանդուր (Վաղատուր) գյուղի բնակիչները: Գյուղն իսկույն շրջափակվեց միլիցիայի, կոմունիստների զինված խմբերի կողմից: Զենքը հանձնվեց, իսկ մի քարայրում հայտնաբերվեցին տասնյակ «Մոսին» հրացաններ ու փամփուշտներ: Հարուցվեց քրեական գործ: ժամանակի պետական-պաշտոնական փաստաթղթերը զննելիս կարելի է եզրակացնել, որ Հայաստանում սկսվել էր ապստամբական (կոմկուսի փաստաթղթերում՝ բանդիտական) շարժում: Ցուցում կար ամենուր բացահայտել դաշնակցական գաղտնի կազմակերպությունները, զինաթափել ու ձերբակալել դրանց անդամներին:

1930թ. Գորիսում 89 անձանց հետ ձերբակալվել եւ երեք տարով դատապարտվել է հանրաճանաչ բժիշկ Մինաս Մինասյանը՝ որպես հակահեղափոխական ընդհատակյա դաշնակցական կազմակերպության անդամ (Մանուկյան Ա., Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ., Երեւան, 1999, էջ 155-156): 1931թ. ձերբակալվում է բուժակ Իգնատ Անանյանը, որը լայն ժողովրդականություն էր վայելում: Նրան մեղադրում են այն բանում, որ իբր իմացել է դաշնակցական ընդհատակյա կազմակերպության գործունեության մասին եւ չի հայտնել ՊՔՎ (պետական քաղաքական վարչության) մարմիններին:

Բուժակ Ի.Անանյանը դատապարտվել է հինգ տարվա ազատազրկման (Մանուկյան, Վերոհիշյալ գրքում բուժակի փոխարեն նշված է բժիշկ): 1933թ. քարահունջեցի Դ.Ծատրյանը իր հողամասից չորացող թթենին հանում է, որ բանջարեղեն ցանի: Գյուղխորհրդին հայտնում են, որ Դավիթը դիտմամբ է հանել թթենին, որպեսզի պետության համար շերամ չպահի: Դատարանը նրան դատապարտել է մեկ տարվա ազատազրկման:

1930թ. սկսած կոմունիստներին եւ նախկին կարմիրբանակայիններին թույլատրվեց զենք կրել: Գաղտնի հրահանգով ստեղծվեցին կոմունիստների զինված խմբեր: 1930թ. մարտի 16-ին ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը Զանգեզուրում (մասնավորապես Սիսիանում) տարածված բանդիտիզմի մասին ընդունում է որոշում, որում կարեւորված է Գորիսի դերը: Որոշման 3-րդ կետի համաձայն՝ Բաքվից 100 հայ զինված կոմունարներ պիտի գործուղվեին Գորիս: Կազմվեցին կուլակների, ունեւորների ցուցակներ: Ցուցակագրմանը մասնակցում էին ինչպես կոմբքիջները, այնպես էլ գյուղխորհուրդներին կից գործող չքավորական խմբակները: 1930-32թթ. գյուղերից Գորիսի շրջգործկոմ էին ներկայացվում ունեւորների, նախկին նէպմանների ցուցակները, դրանք պարբերաբար լրացվում եւ փոփոխվում էին: Կուլակները ենթարկվում էին «լիկվիդացիայի», նրանցից խլվում էր ունեցվածքի մեծ մասը, իսկ իրենց բանտարկում էին, աքսորում (Հայաստանի այլ շրջաններ, Սիբիր) կամ էլ պարզապես գնդակահարում էին Գորիսում: Այդքանից հետո շրջգործկոմ ներկայացվող ցուցակներն անշուշտ պետք է փոփոխվեին: Վերահաստատվում էին նաեւ ձայնազուրկների ցուցակները: Ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկվել ու ձայնազուրկ էին նախկին հոգեւորականները, դաշնակցականները, խմբապետները, բեկերի ժառանգները, կուլակները եւ այլն: 1931թ. Գորիսում եւ նրա գյուղերում ձայնազուրկների ցուցակներում հաշվվում էին 124 մարդ: Դրանցից շուրջ երկու տասնյակը վարչական կարգով աքսորվել էին: Աքսորվածների ընտանիքները զրկանքներ էին կրում, ենթարկվում նվաստացման կամ պարտադիր աշխատանքի: Աքսորվածների կանանց Վերիշենում, օրինակ, քշումտանում էին Եռաբլրի սարահարթ՝ մաքրելու Գորիս-Երեւան մայրուղու ծյունը: Զայնազրկվում էր ոչ միայն ինքը՝ «անհարազատ էլեմենտը», այլեւ նրա ընտանիքի չափահաս անդամները: Գորիսի Սբ. Գր.Լուսավորիչ եկեղեցու քահանա Խորեն Մելիք-Դադայանը եւ նրա կին Սոֆյան ձայնազուրկ էին արվել 1921թ., եւ նրանց ձայնի իրավունքը վերականգնվել է 1933թ. հունիսի 29-ին: Սա լավագույն ելք ունեցող դեպքերից է: Գորիսի ձայնազուրկների ցուցակում նշված է նաեւ Նիկոլայ Հովսեփյանի (Օսիպով) անունը: Նա ձայնազրկվել է 1921թ. եւ ձայնազրկման համար հիմք է ծառայել այն, որ նա «քաղ. կռ. Խ-ի դեմ ղեկավ.», այսինքն, որ նա քաղաքացիական կռիվների ժամանակ խորհրդային իշխանության դեմ կռվել է որպես ղեկավար անձ: Ն.Հովսեփյանի հոր՝ Ասծատուրի եւ կնոջ՝ Վարսենիկի ձայնի իրավունքը հետագայում վերականգնվում է, իսկ իր անվան դիմաց գրված է, որ մահացել է, բայց ո՛չ թիվ է նշված, ո՛չ ամսաթիվ: Չի նշված, քանի որ Ն.Հովսեփյանը գնդակահարվել է, իսկ գնդակահարման տեղը եւ ժամանակը գաղտնիք էր: Գնդակահարված Կարապետ Միրաքյանի ընտանիքի չափահաս անդամների՝ Կատյայի, Սիրանուշի, Մայայի ձայները վերականգնվել են 1932թ.: Կոռնիձորի հանրահայտ քահանայի՝ Գրիգոր Տեր-Սողոմոնյանի (Աղեր) անվան դիմաց գրված է, որ ձայնազուրկ է 1924թ. եւ վարչական կարգով աքսորված: Նրա ընտանիքի անդամներից կինը՝ Վարդին, ձայնազրկվել է ամուսնու հետ, տղան՝ Աշոտը, ձայնազուրկ է 1928 թվականից, Արեւհատ անունով աղջիկը՝ 1936-ից: Վարդիի ձայնի իրավունքը վերականգնվել է 1936թ.:

Կուլակների եւ ունեւորների ցուցակներում ընդգրկված մարդիկ պետությանը պետք է լրացուցիչ տարեկան 25 % ավել հարկ տային: Այդ ցուցակները Գորիսում կազմվեցին 1930-31թթ., դրանցում շրջանից հաշվվում էին 256 անձինք: Միայն 1930թ. Գորիսի շրջանում կուլակաթափ է արվել 130 մարդ: Արխիվում պահպանվել են գյուղխորհուրդների արձանագրություններ՝ այս կամ այն անհատին կուլակ ճանաչելու կամ չճանաչելու մասին (Խանածախ, Խնձորեսկ, Երիցաթումբ (Բարձրավան), Հին Գորիս (Վերիշեն): Այդ որոշումների մեջ, անշուշտ, սպրդել կարող էին նաեւ սուբյեկտիվ մոտեցումներ: Նման դեպքի մասին ամբողջական փաստաթղթեր են պահպանվել Յայջի (Հարժիս) գյուղից: Տիգրան Մինասյանը դիմում է գրում դատախազին՝ բողոքելով, որ իրեն կուլակաթափ անելուց հետո Երեւանում՝ աքսորում եղած ժամանակ, իր տնտեսությունը նորից մտցրել են ունեւորների ցուցակի մեջ եւ նշանակել լրացուցիչ «100 ռ. զինհարկ»: Դատախազն այդ առիթով հարցաքննում է գյուղի կոլխոզի եւ գյուղխորհրդի նախագահներին: Պարզվում է, որ Տ.Մինասյանին եւ նրա հայր Բադուն (նախկին խմբապետ) 1930թ. մարտի 16-ին կուլակաթափ են արել եւ աքսորել: Նրանց ինը շնչից բաղկացած ընտանիքին մնացել է մեկ կով, մեկ եզ: Տիգրանը դիմումի մեջ գրում է. «Հուսով եմ, որ կմտնեք իմ նեղ վիճակը, որ այսօր 3-ից 4 ամիս է ես իմ ընտանիքով սովի ճիրաններին մեջ հաց ենք որոնում»: 1931թ. գարնանը, երբ Տիգրանը գտնվում էր աքսորում, գյուղխորհուրդը նրա ընտանիքին կրկին որպես կուլակի հարկադրում է, քանի որ նրա կինը, որ ծննդկան էր, մարդ էր վարձել ձիով աղունը ջրաղաց տանելու համար եւ դա դիտվել է որպես մարդու կողմից մարդու շահագործում... Դատախազ Ռ.Հովակիմյանը, նկատի ունենալով նաեւ, որ Տիգրանը բաժանված է նախկին խմբապետ հորից, դիմումատուի համար բարենպաստ որոշում է կայացնում 1932թ. հունիսի 11-ին:

«Որոշեցի

Սույն գործը ուղղել Գորիսի շրջգործկոմին՝ Տիգրան Մինասյանին հանելու կուլակների շարքից՝ դարձնելով միջակ տնտեսության, թողնելով ձայնազուրկ որպես քաղաքական էլեմենտի:

Դատախազ (ստորագրություն)»:

Գորիսի ԶԱԳՍ-ի 1932թ. մատյաններում նշումներ կան սովամահության դեպքերի մասին:

1930-40թթ. տասնամյակը Գորիսի համար սկսվեց համայնացումն նախճիրներով: Քաղաքի համար ատելի դժոխավայր դարձավ Շորին ձորը: Այդտեղ են գիշերով գնդակահարվել Ն.Հովսեփյանը, Կ.Միրաքյանը, Արշակ Տոռոզյանը (Բեդուն), վերիշենցի Ասատուր Մաշուրյանը եւ էլի շատ ուրիշներ: Գնդակահարվածների մեջ ամենաերեւելի անձնավորությունը եղել է Նիկոլայ Հովսեփյանը (Օսիպով)՝ Գորիսի եւ ամբողջ գավառի հասարակական-քաղաքական ու ազգային ամենահայտնի գործիչներից մեկը: Գորիսում նա եղել է Անդրանիկի ու Նժդեհի զինակիցը, 1919թ. մարտին նշանակվել է գավառապետ: Նժդեհի հետ 1921թ. անցել է Պարսկաստան, ապա հավատալով կոմունիստների խոստումներին՝ վերադարձել է ծննդավայր: Նրան կոչել են «Զանգեզուրի Բիսմարկ»: Մահվան նախօրեին ցանկացավ միայն տեսնել երկարատեւ՝ 25-ամյա ամուսնությունից հետո ծնված իր մեկամյա դստերը: Շորին ձորում գնդակահարվածների դիակները կարգին հողին չէին հանձնում: Ամիսներ անց անձրեւաջրերը բացում էին դիակները: Ն.Հովսեփյանի աները՝ Ավետիս Մինասյանը, գնացել-գտել է փեսայի դիակը ու մարդավայել հողին է հանձնել հենց տեղում:

1934թ. դեկտեմբերի 5-ից քաղաքական պայքարի ասպարեզ է ելնում «Կարմիր Զանգեզուր» շրջանային թերթը՝ դառնալով գաղափարական պայքարի դրոշակակիր: Թերթի թղթակիցների կեղծանուններն ինքնին խոսուն են՝ «Դիտող», «Տեսնող», «Հարվածող» եւ այլն: Գաղափարական պայքարն ընդգրկում էր սոցիալական տարբեր շերտեր ու խմբեր, դա երեւում է շրջանային թերթի պարզ վերլուծությունից:

**Շարունակությունը՝ էջ 76**

# Գորիս. եւս մեկ իրողություն



2009թ. հունիսի 26-ին ՀՀ կառավարության՝ Կապանում կայացած արտագնա նիստն ընդունեց որոշում «Գորիս» քրեակատարողական հիմնարկը (Գորիսի բանտը) Գորիս քաղաքից հանելու մասին:

2010թ. հունվարի 14-ին ՀՀ կառավարությունը հաստատեց «Գորիս» քրեակատարողական հիմնարկի նոր շենք-շինությունների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթի մշակման տեխնիկական առաջարկը: Գորիսի նոր քրեակատարողական հիմնարկի շենքային համալիրի կառուցման համար նախատեսվում է հատկացնել 10հա ընդհանուր տարածք Գորիս քաղաքից 8կմ դեպի Խնձորեսկ ընկած հատվածում: Քրեակատարողական հիմնարկը նախատեսված է 320 կալանավորված անձ եւ դատապարտյալ պահելու հաշվարկով (երկու անգամ ավելի, քան հիմա):

ՀՀ կառավարության 2010թ. մարտի 18-ի որոշմամբ դադարեցվել է «Մեղրի» քրեակատարողական հիմնարկի գործունեությունը եւ այն վերակազմակերպել որպես «Գորիս» քրեակատարողական հիմնարկի տեղամաս:

Գորիսի բանտը կառուցվել է տակավին 1812թ.: Սկզբնական շրջանում այն զորանոց էր եւ բանտ, իսկ 1870-ից գործում է որպես միայն բանտ: Բանտն այն ժամանակ կառուցվել է մեկուսի վայրում, բայց հետո հայտնվել է քաղաքի կենտրոնում՝ շրջապատված բնակելի շենքերով: Բանտը, ինչպես ժամանակակիցներն են վկայում, 20-րդ դարի 30-ականներին իսկական կառափնարան էին դարձրել Բերիայի եւ Մուղդուսու տեղացի կամակատարները:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010



# Քաղաքական բռնաճնշումները Գորիսում 1930-1940թթ.

Սկիզբը՝ էջ 75

1935թ. հունվարին գյուղտեխնիկումի կոմունիստական երիտասարդական կազմակերպությունից հեռացվում է Վ.Մարտիրոսյանը՝ «հակահեղափոխական», «նացիոնալիստական» տրամադրություններ արտահայտելու համար: Գորիսի ոչ լրիվ միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Լուսիկ Ռշտունին որակվում է որպես «նեխված լիբերալ», քանի որ կարծիք էր հայտնել, թե դասագրքերից չպետք է հանվեն Ակ.Բակունցի, Վ.Թոթովենցի գրվածքները, այլ դրանք պետք է յուրացվեն քննադատաբար: «Նեխված լիբերալները թշնամու ուղղակի աջակցողներ են», – եզրակացնում է թերթի հոդվածագիրը: Թերթի նույն համարում Գորիսի ՄՏԿ-ի (մեքենատրակտորային կայան) արհեստանոցի վարիչ Աբ.Միկիչյանի մասին գրված է. «… Տրոցկիստ Միկիչյանը փորձում է օգտագործել Խանջյանի պրովոկացիոն ինքնասպանության ակտը եւ նացիոնալիստական-դաշնակցական թշնամական տրամադրություններ առաջ բերում ու պառակտում հրահրում Անդրկովկասյան տարբեր ազգությունների աշխատավորների միջեւ»: Գաղափարական պայքարի կիզակետում շարունակում էին մնալ դպրոցը, ուսուցչական կադրերը: Ահա մեղադրանքի մի նմուշ. «Աշխարհագրության դասին Միրաքյանը (Վարդանուշ) դասարանում ֆալսիֆիկացիայի է ենթարկել 14 թվի իմպերիալիստական պատերազմի բնույթը՝ ցուցաբերելով կարեկցություն դեպի գերմանական իմպերիալիզմը»: Մաթեմատիկայի ուսուցիչ Հայկ Հարությունյանը մեղադրվում է որպես «քյոխվայի տղա»: 30-ական թվականներին Գորիսում բռնադատվել է հինգ ուսուցիչ:

Գորիսի համար ծանր հարված էր Ակ.Բակունցի ձերբակալումը եւ գնդակահարումը (1937թ., հուլ. 8): Չտանելով որդու կորուստը՝ շուտով մահանում է եւ գրողի հայրը՝ Ստեփանը: Եվ սակայն առավել ողբերգականն այն էր, որ ընդամենը ութ մարդ էր քայլում ծերունու դագաղի ետեւից: Վախը ստիպել էր զգուշանալ հուղարկավորությանը մասնակցելուց:

Կոմունիստների համար դասակարգային պայքարի ուղղություններից մեկն էլ հակակրոնական աշխատանքն էր: Հոգեւորականներն ու հավատացյալ մարդիկ ամենուր հալածվում էին: Զատիկի տոնը, օրինակ, թերթում որակվում էր որպես ռեակցիոն-թշնամական նշանակություն ունեցող իրադարձություն: Գորիսում 1938թ. ձերբակալվել ու գնդակահարվել են քահանաներ տեր Հովհաննես Տեր-Մինասյանը (Սեւարանց), տեր Մինաս Տեր-Մինասյանը (Բայանդուր), տեր Արսեն Տեր-Պետրոսյան-Պողոսյանը (Տաթեւ), տեր Ղեւոնդ Տեր-Սարգսյան-Վարդանյանը (Յայջի-Հարժիս): Յայջի գյուղի երկրորդ քահանան աքսորվել է:

Քաղաքական պայքարը Գորիսում գագաթնակետին է հասնում 1937թ. հոկտեմբերին, երբ «Կարմիր Զանգեզուր»-ի 93-րդ համարում Ռ.Հ. ստորագրությամբ եւ «Հայ ժողովրդի արյունը ծծող թունավոր իժերի նողկալի շայկան Գորիսի շրջանում» վերտառությամբ հոդված է տպագրվում: Այն վերաբերում էր «շրջանը կործանում տանող» շրջկոմի առաջին քարտուղար Մ.Պարոնիկյանին, ՆԳԺԿ Գորիսի բաժանմունքի պետ «ժուլիկ» Սենիկ Հարությունյանին, «Կարմիր Զանգեզուր» թերթի խմբագիր, «քողարկված ժուլիկ» Ար.Մնացականյանին, գյուղտեխնիկումի դիրեկտոր Վարդգես Աթոյանին: Եկել էր միմյանց խժռելու ժամանակը: Հոկտեմբերի 10-12-ը տեղի ունեցավ ՀԿ(բ)Կ Գորիսի շրջկոմի պլենում, որտեղ որպես Հայաստանի նախկին ղեկավարների (Ամատունի եւ այլք) գործակալներ եւ ժողովրդի թշնամիներ կոմկուսից հեռացվում են Մ.Պարոնիկյանը, Ս.Հարությունյանը, Ա.Մարտիրոսյանը, Մ.Աղաբաբյանը, Ս.Թաթարյանը (շրջկոմի երկրորդ քարտուղար): Աշխատանքից ազատվում է նաեւ ՀԼԿԵՄ շրջկոմի առաջին քարտուղար Գր.Մելքումյանը: Հարուցվում է քրեական գործ:

1938թ. ապրիլի 5-12-ը Գորիսում տեղի ունեցավ երեսնականների ամենահայտնի դռնբաց դատական նիստը, որն ուներ հրապարակային հնչեղություն եւ ավելի շատ ցուցադրական էր: Մեղադրյալներին Գորիսի բանտից մինչեւ դատարանի շենքի 600 մետրանոց հատվածը տանում են ոտքով՝ հրացաններով զինվորների ուղեկցությամբ: Հետաքրքրասերների հոծ բազմությունը, մեղադրյալների հարազատներն ու երեխաները հետեւում էին նրանց: Ճամփին երբեմն կոչեր էին հնչում «ժողովրդի թշնամիների» հասցեին: Դատավճիռն ընթերցվեց թատրոնի շենքի ընդարձակ դահլիճում, որը, սակայն, չկարողացավ տեղավորել բոլորին, ովքեր ցանկանում էին ներկա լինել: Դատական նիստը Գորիսում անց էր կացնում ՀԽՍՀ Գերագույն դատարանը: Զավեշտի նման մի բան էր. մեղադրյալի աթոռին նստած էին շրջանի երեկվա հզորները՝ Մանվել Պարոնիկյանը (ՀԿ(բ)Կ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար), Մակար Աղաբաբյանը (շրջգործկոմի նախագահ), Գրիգոր Ավագյանը (շրջգործկոմի նախագահի տեղակալ, հողբաժվար), Աղասի Մարտիրոսյանը (ՄՏԿ-ի դիրեկտոր), Հմայակ Սուքիասյանը (ավագ գյուղատնտես), Ռուբեն Դոխոյանը (մեքենատրակտորային պարկի վարիչ): Կայացվել է այսպիսի դատավճիռ՝ Գր.Ավագյան-մահապատիժ, Մ.Պարոնիկյան-հինգ տարի ազատազրկում, Մ.Աղաբաբյան - վեց տարի ազատազրկում եւ երեք տարի ծայնազրկում, Ա.Մարտիրոսյան-տասը տարի ազատազրկում եւ հինգ տարի ծայնազրկում, Հմ.Սուքիասյան-վեց տարի ազատազրկում եւ երեք տարի ծայնազրկում, Ռ.Դոխոյան-չորս տարի ազատազրկում եւ մեկ տարի ծայնազրկում: Գր.Ավագյանին պատժի առավելագույն չափ սահմանվեց առանձնապես խոշոր չափերի վնասարարության համար: Բանն այն է, որ հեքիմական մեթոդներով փորձել էր անհաջող կերպով բուժել հայրենի Ալիղուլիշեն գյուղի ոչխարի հիվանդ հոտը: Նրա պահանջով գյուղի կոլխոզի ոչխարի հոտը լցրեցին մի մեծ քրատակի (անձավ) մեջ եւ մուտքի մոտ եղեւնու ճյուղերից հսկա խարույկ վառեցին՝ մեջը գցելով կենդանի օձ: Բոլոր ոչխարներն անխտիր ծխից խեղդվեցին ու սատկեցին, իսկ Գր.Ավագյանը դարձավ վնասարար: Նրա ընտանիքին ստիպեցին ազատել իրենց զբաղեցրած պետական սենյակները, որոնց տիրացավ ամենազոր դատախազը:

Գորիսի այնօրյա բարոյահոգեբանական մթնոլորտը ներկայացնելու համար կարդանք «Սյունյաց աշխարհ» թերթի հոդվածից որոշ հատվածներ՝ առանց որեւէ բան ավելացնելու ուսուցչուհի Ալվարդ Բայանի պատմածին. «1937 թվականի աշնան մի օր՝ իրիկնադեմին, Գորիսի նախկին Մարքսի փողոցի թիվ 37 տան դռան շեմին հայտնվեցին երկու զինվորներ: Նրանք տուն ներխուժեցին անկոչ հյուրի պես եւ մի քանի բառ փոխանակելով հորս հետ՝ դուրս տարան նրան թեւանցուկ արած: ...Հորս տանելուց հետո մեզ՝ երեք անչափահաս երեխաներիս, մորս հետ առանձնացրին շենքի աջ մասում: Մորս լեզուն կտրվել էր, չէր կարողանում խոսել: Մի օր նա կապեց վերմակն ու հորս մի քանի ծննդային շորերը եւ մեզ իր փեշից կախ արած տարավ բանտի դուռ, որտեղ քիչ սպասելուց հետո հայտնվեց բանտապետն ու սառը առոգանությամբ հայտարարեց. «Ձեր ամուսնուն մեկ շաբաթ առաջ գնդակահարել են, նա դաշնակ էր»: Հայրս՝ Ռուբեն Ստեփանի Բայյանը, գեղանկարիչ էր: 1924թ. ավարտել էր Մոսկվայի գեղարվեստի ինստիտուտը, ...տիրապետում էր գերմաներեն եւ ռուսերեն լեզուների»:

ՀԽՍՀ ՆԳԺԿ եռյակի որոշմամբ 1937թ. դեկտեմբերին գնդակահարվել է գորիսեցի լուսանկարիչ Ռուբեն Խուրշուդյան-Պարոնյանը: Նա մեղադրվել է որպես Սյունիքի դաշնակցական իշխանության հակահետախուզության աշխատակից:

Մեզ չհաջողվեց ամբողջությամբ պարզել, թե 30-ական թվականներին քանի մարդ է Գորիսից եւ գյուղերից բռնադատվել՝ աքսորվել, բանտարկվել կամ գնդակահարվել: Սակայն երկու գյուղերից ունենք ստույգ տվյալներ, որոնք քիչ թե շատ պատկերացում կարող են տալ, թե 1939թ. մարդահամարի տվյալներով շուրջ 27000 բնակչություն ունեցող շրջանից որքան մարդ տուժած կլինի: Այսպես՝ 485 բնակիչ ունեցող Ակներից (Բռուն) միայն 1937-38թթ. ձերբակալվել եւ աքսորվել են 11 անձինք, որոնցից միայն մեկն է վերադարձել գյուղ: Իսկ ահա ավելի խոշոր, 1939թ. 918 բնակիչ ունեցող Վերիշենից (Հին Գորիս) 1930-37թթ. ձերբակալվել են 51 մարդ, որոնցից փրկվել եւ գյուղ են դարձել տասը անձինք: Կարծում ենք՝ Գորիսի շրջանում բռնադատվածների թիվը տխրահռչակ տասնամյակում կարող էր լինել 500-700 մարդ՝ չհաշված նրանց ընտանիքի տուժած անդամներին:

Գորիսում այդ ժամանակահատվածի քաղաքական հաշվեհարդարների ու պայքարի վերջին ակորդը պետք է համարել Սիսիանի ժողդատարանի արտագնա նիստի անցկացումը Գորիսում՝ 1940թ. նոյեմբերի 16-17-ին: Դատարանը երկու տարի ազատազրկման դատապարտեց Գորիսի կոլխոզ-թատրոնի դիրեկտոր Բաբկեն Շաքարյանին, քանի որ նա հովանավորել էր դերասան-պրոգուլչիկներին (գործը լքողներին): Թատրոնի դերասանները օրական աշխատում էին «ընդամենը» 6-7 ժամ, շատերը, ինչպես եւ ինքը՝ դիրեկտորը, հաճախ ուշանում էին աշխատանքից: Այդպիսին էր մեղադրանքի համառոտ նկարագիրը:

Այսպիսով՝ վերոհիշյալ տասնամյակում խորհրդային իշխանության ձեռնարկած քաղաքական բռնաճնշումներն իրականացվել են նաեւ մայրաքաղաք Երեւանից հեռու ընկած շրջաններում: Ավելին՝ ծայրամասային շրջաններում քաղաքական հաշվեհարդարներն իրականացվում էին ավելի զգայացունց սցենարներով՝ բնակչության մեջ սերմանելով անվստահության եւ վախի մթնոլորտ: Բռնություններին զոհ գնացին տասնյակ մտավորականներ, հոգեւորականներ, քաղաքական, մշակութային գործիչներ:

**Սերգեյ Հախվերդյան,**
**Նազելի Հախվերդյան**

## Գորիս քաղաքի ու շրջանի ղեկավարները

Ներկայացնում է Մարտին Մայսուրյանը



### Գորիսի քաղխորհրդի գործկոմի նախագահներն ու քաղաքապետերը

- 1921թ. օգոստոսի 31-ին քաղաքի կարգավիճակից զրկված Գորիսը 1924թ. ապրիլի 5-ին կրկին ստացավ քաղաքի կարգավիճակ: Քաղխորհրդի նախագահը 1924-28թթ. Նիկոլայ Հայրյանն էր (Քարաշեն գյուղից էր՝ ծնված 1884թ., մահացել է 1962թ.):
- Թե ովքեր են գլխավորել քաղխորհուրդը նրանից հետո, չհաջողվեց պարզել: Հայտնի է միայն, որ 1930-ականների վերջին եւ 40-ականներին քաղխորհուրդը գլխավորել են Սողոմոն Մալինցյանը, Գուրգեն Սարգսյանը (վերջինս՝ մինչեւ 1947թ.):

1. Վաղարշակ Սարգսյան՝ 1947-49թթ.
2. Արտաշ Հարությունյան՝ 1949-59թթ.
3. Արմենակ Մայսուրյան՝ 1959-60թթ.
4. Վազգեն Բադիրյան՝ 1960-65թթ.
5. Հովհաննես Խաչատրյան՝ 1965-71թթ.
6. Գերասիմ Հարությունյան՝ 1971-79թթ.
7. Գարեգին Առաքելյան՝ 1979-83թթ.
8. Գրիշա Մանուչարյան՝ 1983-87թթ.
9. Հայկազ Արզումանյան՝ 1987-89թթ.
10. Մայիս Թունյան՝ 1989-91թթ.
11. Համլետ Մկրտչյան՝ 1991-92թթ.
12. Սամվել Հարությունյան՝ 1992-94թթ.
13. Սեյրան Դոլունց՝ 1994-96թթ.
14. Սուրեն Խաչատրյան՝ 1996-99թթ.
15. Համլետ Մկրտչյան՝ 1999-2000թթ.
16. Նելսոն Ոսկանյան՝ 2000թ.-մ/ա

### ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարները

1. Հովհաննես Հովսեփյան՝ 1931-35թթ.
2. Մանվել Պարոնիկյան՝ 1936-38թթ.
3. Լեւոն Սարգսյան՝ 1938-48թթ.
4. Արմենակ Խաչատրյան՝ 1948-52թթ.
5. Հակոբ Մելոյան՝ 1952-56թթ.
6. Արմենակ Խաչատրյան՝ 1956-61թթ.
7. Արամ Հարությունյան՝ 1962-63թթ.
8. Քրիստափոր Պետրոսյան՝ 1963-74թթ.
9. Արամ Հարությունյան՝ 1974-82թթ.
10. Ռոբերտ Ալեքսանյան՝ 1982-90թթ.
11. Սուրեն Վարդանյան՝ 1990-91թթ.

### Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահները

- Գորիսի շրջանը ձեւավորվել է 1930թ. սեպտեմբերի 9-ին: Հայտնի չէ, թե ով է եղել շրջխորհրդի գործկոմի առաջին նախագահը: Այն պնդումները (այդ մասին կա նաեւ «Գորիսի հանրագիտարանում»), որ 20-ական թվականներին Գորիսի շրջխորհրդի գործկոմը ղեկավարել են Սահակ Հայրապետյանը, Նիկոլայ Հայրյանը, հեռու է ճշմարտությունից, քանզի այդ ժամանակ դեռեւս չկար շրջանային խորհուրդ:

1. Մակար Աղաբաբյան՝ 1933-37թթ.
2. Մաթեւոս Ասատրյան՝ 1937-38թթ.
3. Հակոբ Իվանյան՝ 1938-41թթ.
4. Նիկոլայ Հայրապետյանը՝ 1941-42թթ.
5. Սողոմոն Կարապետյան՝ 1942-48թթ.
6. Հայրապետ Գրիգորյան՝ 1948-49թթ.
7. Պատվական Հարությունյան՝ 1949-52թթ.
8. Արմենակ Մայսուրյան՝ 1952-55թթ.
9. Արմենակ Խաչատրյան՝ 1955-57թթ.
10. Քրիստափոր Պետրոսյան՝ 1957-61թթ.
11. Արտաշես Օհանյան՝ 1961-63թթ.
12. Արամ Հարությունյան՝ 1963-74թթ.
13. Սերոբ Գալստյան՝ 1974-82թթ.
14. Անժելա Բուդաղյան՝ 1982-91թթ.
15. Ռոբերտ Ալեքսանյան՝ 1991-95թթ.

### Կոմերիտմիության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարները

- 1920թ. ամռանը Գորիսում հիմնադրվել է Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության մասնաճյուղը: Հիմնադիր անդամներն են եղել՝ Գուրգեն Մելիք-Դադյանը (Գումեդին), Մուշեղ Մինասյանը, Խաչատուր Զարաջյանը, Վաղարշակ Տեր-Ղազարյանը, Աշոտ Աբրահամյանը, Աբել Օրդուխանյանը:

1. Երվանդ Ջրաղացպանյան՝ 1934-35թթ.
2. Գրիշա Մելքումյան՝ 1935-37թթ.
3. Երվանդ Հովհաննիսյան՝ 1937-40թթ.
4. Մուշեղ Գեւորգյան՝ 1940-41թթ.
5. Պայծառ Օհանյան՝ 1942-43թթ.
6. Արշակ Շեգունց՝ 1944-47թթ.
7. Հակոբ Մանվելյան՝ 1947-49թթ.
8. Արամ Հարությունյան՝ 1950-52թթ.
9. Սերյոժա Հայրապետյան՝1952-56թթ.
10. Մարտին Հայրապետյան՝ 1956-58թթ.
11. Արտուշ Հովսեփյան՝ 1958-61թթ.
12. Մարտին Մայսուրյան՝ 1961-65թթ.
13. Նապոլեոն Շափաղատյան՝ 1965-66թթ.
14. Մարիետա Համբարձումյան՝ 1966-67թթ.
15. Մարատ Հարությունյան՝ 1967-70թթ.
16. Գագիկ Հայրումյան՝ 1970-76թթ.
17. Ռեդիկ Հայրապետյան՝ 1976-79թթ.
18. Ժաննա Դադայան՝ 1979-84թթ.
19. Ալբերտ Տոռոզյան՝ 1984-85թթ.
20. Վարուժան Ալեքսանյան՝ 1985-86թթ.
21. Սուսաննա Սարգսյան՝ 1986-91թթ.
22. Վարդան Թունյան՝ 1991-92թթ. ■


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru




# Իրանահայ հայրենադարձները Գորիսում

**ՍԵՐԳԵՅ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**

Ֆաշիստական Գերմանիայի դեմ մղված պատերազմում ՍՍՀՄ-ի տարած հաղթանակից հետո սկսված հայրենադարձության ալիքը հասել է նաեւ ՀՍՍՀ Գորիսի շրջան: Հայրենադարձ հայերը նոր ավյուն եւ եռանդ ներարկեցին հայրենի հողի վրա ապրող ժողովրդին, հիշեցրին կենցաղի ու հավատի կորսված իրողություններ: Հայաստանի կոմկուսի Գորիսի շրջկոմի անմիջական հսկողությամբ մոտ 8000 բնակիչ ունեցող քաղաքում առանձնացվել էին 100 բնակարան-կացարաններ, որտեղ ստեղծվել էին ապրելու քիչ թե շատ տանելի պայմաններ: Այդ կացարանների մի մասը ժայռերի մեջ գտնվող հին Գորիսում էր. դրանք լքված ժայռափոր քրատակ-քարանձավներ էին, որոնց նախկին բնակիչները տեղափոխվել էին քաղաքի տարածք: Իսկ բուն քաղաքում հայրենադարձների համար նախատեսված ու պետության կողմից վարձված սենյակները գտնվում էին մասնավոր կամ պետական տների առաջին հարկերում: Ներգաղթած շուրջ 80 ընտանիք պետք է տեղավորվեր Գորիսի գյուղերում:

Գորիսի շրջանային թերթը հաղորդում է, որ 1946թ. օգոստոսի 8-ին Իրանից Նախիջեւանի վրայով Գորիս եկող հայրենադարձների քարավանը, թվով 1080 մարդ (169 ընտանիք), ուշ երեկոյան հատուկ գնացքով ժամանել է Կապան: Եկողները Իրանի Բուրվարի շրջանի Շավրավա ու Փահրա գյուղերի բնակիչներն էին, որոնք միակամ, իրենց ծախսերով, հաշվի չառնելով ճանապարհային զրկանքները, ցանկություն էին հայտնել գալ Հայաստան: Այդ մարդկանց նախնիներին Պարսկաստան է տարել Շահ Աբասը՝ 1604թ. բռնագաղթի ժամանակ:

Սակայն արդեն իսկ Կապանում առաջացան խնդիրներ, հայրենադարձները չէին ուզում իջնել լեռների գոգին կանգնած վագոններից: Բանն այն էր, որ նախապես պայմանավորվածություն էր եղել, որ նրանց կտեղավորեն Արարատյան դաշտավայրում: Եկողներն, իսկապես, հարթավայրային տաք գոտու բնակիչներ էին՝ անսովոր լեռներին ու լեռնային կլիմային: Երեւանից շտապ պատասխանատու անձինք եկան, եւ կնճիռը հարթվեց խոստումով, որ դա կարվի հետագայում, երբ Արարատյան դաշտում հայրենադարձների համար կառուցվող գյուղերը պատրաստ կլինեն:

Հայրենադարձների առաջնորդներն այդ համառության համար հետագայում թանկ պետք է վճարեին...

Հայրենադարձների ավտոշարասյունը Գորիս է հասել օգոստոսի 10-ին: Նրանց աղ ու հացով, երաժշտությամբ դիմավորեցին քաղաքի հարավային մատույցներում՝ Սալ քարի մոտ ու մինչեւ վերջնական տեղաբաշխումը եւ ցրումը տեղավորեցին գյուղտեխնիկումի շենքում: Նույն օրը երեկոյան քաղաքի հրապարակում լուսարձակների լույսի ներքո տեղի ունեցավ հանդիսավոր մեծ միտինգ, որի ընթացքում ելույթ ունեցավ ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Լ.Սարգսյանը եւ ողջունեց նրանց գալուստը: Բացի քաղաքից՝ հայրենադարձներին տեղավորեցին նաեւ գյուղերում՝ Ազատաշենն ընդունեց ութ ընտանիք, Կյորուն՝ յոթ, Խոզնավարը՝ յոթ, Քարահունջը՝ 11, Քարաշենը՝ 12 եւ այլն: Հայրենադարձներն, իհարկե, կցանկանային բնակվել միասին միեւնույն տեղում, սակայն տվյալ պահին դա հնարավոր չէր, իսկ քաղաքական առումով դա ձեռնտու չէր կոմունիստական կուսակցությանը: Հայրենադարձներին ցրեցին՝ կյանքի նոր՝ կոլտնտեսային ձեւին հարմարեցնելու նպատակով, որտեղ այլեւս չկային մասնավոր սեփականություն, կալվածատեր ու խան: Այդ անսովոր հասարակական կարգը, անշուշտ, բոլորի սրտովը չէր: Հետաքրքրական է, որ այդ երկու գյուղերից հայրենադարձվածներից ոչ մեկը հետագայում չի ընդունվել ԽՄԿԿ շարքերը: Արդյունքում այդ անվստահությունը դարձավ փոխադարձ, չնայած շրջանային թերթում 1946թ. նոյեմբերի 29-ին տպագրվեցին հայրենի երկրի հասարակարգը, հայր Ստալին առաջնորդին գովերգող հոդվածներ, որոնց տակ դրված էին հայրենադարձ իրանահայերի ստորագրություններ, սակայն դրանց անկեղծ բնույթը, իհարկե, կասկածելի է:

Իրանահայ հայրենադարձների երկրորդ եւ վերջին խումբը Գորիս է եկել Ղարադաղից: Իրանի հյուսիսում՝ Արաքսի աջ ափին, հարթավայրային Զանգեզուրի դիմաց գտնվող լեռնոտ Ղարադաղի Քեյվան եւ Մնճավան գավառակների Ղասումաշեն, Սուրուն, Գինդ կամ Գինդիման, Սղըն, Վինա, Քարագլուխ, Բերդ կամ Բերդիետք, Դեգեոյ հայաբնակ գյուղերից հայրենադարձվածները Գորիսում հայտնվել են 1947-1950թթ.: Իրականում ղարադաղցիների Գորիս գալը նախապես ծրագրված չի եղել խորհրդային իշխանության կողմից: Ղարադաղցի հայերի ներգաղթի հարցում զգալի քարոզչական աշխատանք է կատարել Գորիսում ծնված ու Ղարադաղ գործուղված ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Շմ.Առուշանյանը: Միայն Վինայում նա մնացել է ութ օր, հյուրընկալվել քահանա Խորեն Տեր-Ստեփանյանի տանը: Քահանան անձամբ չի ներգաղթել, սակայն օժանդակել է ներգաղթին: Գորիսում ապրում են քահանայի թոռները:

Ղարադաղցի հայերի առաջին քարավանը Նախիջեւանի վրայով ՀԽՍՀ է եկել 1946թ. կեսերին ու բնակեցվել Աբովյանում (Էլար) եւ Վայոց ձորում (Մալիշկա, Ռինդ, Այնազոր (Աղավնաձոր): Մնճավանի գավառակի հայրենադարձների քարավանի ղեկավարը եղել է դեմոկրատ Սիմոն Նարինյանը, իսկ Քեյվանինը՝ Սուրուն գյուղի տանուտերը, դեմոկրատ Սարգիս Հովհաննիսյանը: Հայրենադարձությանն իր նպաստն է բերել նաեւ Բերդիետք գյուղի տանուտեր, 11 երեխաների հայր Իսաջան Գրիգորյանը: Սակայն Աբովյանի՝ անասնապահության համար անբարենպաստ պայմանները եւ Վայոց ձորի հացի պակասությունն ու սուղ վիճակը ստիպեցին ղարադաղցիներին ձգվելու դեպի Զանգեզուր՝ դեպի Գորիս: 1945 թվականից Գորիսում էր ապրում Ղարադաղի Սուրուն գյուղում ծնված, Մոսկվայում բարձրագույն կրթություն ստացած Ասատուր Աղաջանյանը: Նա զբաղեցնում էր Գորիսի ՄՏԿ-ի (մեքենատրակտորային կայան) գլխավոր ինժեների պատասխանատու եւ կարեւոր պաշտոնը: Եվ պատահական չէ, որ 1947թ. սկզբներին ներգաղթած ղարադաղցիներից առաջինը Գորիսում հայտնվեցին Աղաջանյանները, իսկ վերջին երեք ընտանիքները Գորիս եկան Մալիշկայից՝ 1950թ.: Եկողները զբաղեցրին հին Գորիսի (Գորիս գյուղ) ազատ բնակարանները, քրատակները, ինչպես նաեւ վարձու սենյակներ գտան քաղաքում: Ղարադաղցիները նիստ ու կացով, կենցաղով, հագուկապով էապես տարբերվում էին Իրանի կենտրոնական ու հարավային շրջաններից ներգաղթածներից: Նրանք տեղացիների հետ չունեին նաեւ լեզ-

Շարունակությունը՝ էջ 80

# Գորիսը նախնադարում

**ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ**

**ՕՆԻԿ ԽՆԿԻԿՅԱՆ**

**Պատմական գիտությունների դոկտոր**



Բավական է հպանցիկ հայացք նետել Գորիսի երկրագիտական թանգարանում պահպանվող ցուցանմուշների վրա, որպեսզի համոզվենք, թե տարածաշրջանից հայտնաբերված գտածոներից վաղագույնները պատկանում են մ.թ.ա. 3-րդ հազ. 1-ին կեսին: Դրանք Գորիսից եւ Քարահունջից պատահական հայտնաբերված թասն ու միականթ անոթն են, որոնց նմանները բազմաթիվ են Հայաստանի եւ հարեւան երկրների վաղ բրոնզեդարյան համալիրներում: Ասվածը չի նշանակում, թե կյանքը Գորիսի շրջանում սկիզբ է առել նշված դարաշրջանում: Ո՛չ, տարածաշրջանը, որի մի մասը համընկնում է Սյունիքի 12 գավառներից վեցերորդին՝ Հաբանդին (այն արեւելքից սահմանակից էր Հակարի գետին, արեւմուտքից՝ Ծղուկին, հյուսիսից՝ Աղահեջքին, հարավից՝ Քաշունիքին կամ Աճանանին, այլ կերպ՝ երկու Բաղքերին), բնակեցվել է հին քարի դարաշրջանից (պալեոլիթ), որի լավագույն վկայությունը Հադրութի շրջանի հանրահայտ Ազոխի քարայրը կարող է հանդիսանալ: Այդ հեռավոր ժամանակների հուշարձանների հայտնաբերումը Գորիսի շրջանում, որը լի է քարայրերով, ժամանակի հարց է միայն: Այդ հուշարձանները կհարստացնեն հարյուր հազարավոր տարիներ առաջ ապրած մարդու կենցաղի տարբեր կողմերի վերաբերյալ ունեցած մեր գիտելիքները. դրանք վերջին տարիներին լրացվեցին Սիսիանի շրջանի՝ մոտ 3000մ բարձրության վրա գտնվող Քարքարեր կոչվող հուշարձանի հայտնաբերումով: Միջին քարի դարաշրջանին (մեզոլիթ. այն ընդգրկում է մոտավորապես 13000-9000թթ.) պատկանող այս հուշարձանում, որը տարվա ամառային ամիսներին է բնակեցվել, առկա են օջախներ, քարե կիսապատրաստ գործիքներ, իսկ շրջակա ժայռերի վրա կան ժայռապատկերներ: Այս ժամանակաշրջանում է կատարվել նետ-աղեղի գյուտը, ընտելացվել է շունը: Մարդը իր ժամանակի հիմնական մասը որսին է հատկացրել:

Ավելի երիտասարդ տարիք ունի Կապանի շրջանի Շիկահող գյուղում, անմիջապես Քյուլզին գետակի ափին բացված կիսավեր կացարանը.վերջինիս աղյուսաշեն պատերը չէին պահպանվել: Անվնաս էին մնացել կավածեփ հատակի առանձին հատվածներ, որոնց տակ թաղում էր կատարվել: Մարդու վատ պահպանված ոսկորների մոտից գտնվեցին վարդագույն մակերեսներով ամանների բեկորներ, վանակատի (սատանի եղունգ) բեկորներ եւ գործիքներ, որոնք նախատեսված էին կաշի մշակելու համար: Պղնձեքարեդարյան (էնեոլիթ) այդ նյութերը թվագրվում են մ.թ.ա. 4-րդ հազ. 1-ին կեսով: Այդ դարաշրջանում սովորական երեւույթ էր հանգուցյալին տանը՝ հատակի տակ կամ բնակավայրի տարածքում թաղելը. դրա փաստերը բազմաթիվ են: Դարաշրջանի մեծագույն գյուտը պղնձաքարը իբրեւ մետաղ, այսինքն՝ ձուլվելու, ձեւափոխվելու հատկություն ունեցող նյութի ճանաչումն էր: Սա մի դարաշրջան էր, երբ մարդը վերջնականապես անցավ երկրագործությանն ու անասնապահությանը՝ իրեն ապահովելով մշտական սննդով: Պատահական չէ, որ դարաշրջանի բնակավայրերում սովորական են հանդիսանում այնպիսի գործիքներ, ինչպիսիք են բրիչները, մանգաղների ներդիրները, սանդերը, աղորիքները եւ երկրագործական աշխատանքներում կիրառվող այլ իրեր. վաղ բրոնզի դարաշրջանում, որին պատկանում են Գորիսի գտածոները, մարդը ստեղծում է արորը: Վաղ բրոնզեդարյան բնակավայրերում բացված բազմաթիվ հորերում հայտնաբերված են ցորենի եւ գարու հատիկներ, ինչը ցույց է տալիս, թե նա ողջ բերքից չզրկվելու, ապահովության նպատակով խառը ցանքս է կիրառել:

Քաշող ուժի կիրառումը երկրագործության մեջ մարդուն թույլ տվեց մշակել ընդարձակ տարածություններ: Այդ դարաշրջանում էր, որ մարդը սկսեց լայնորեն կիրառել պղնձամկնդեղային համաձուլվածքը, որն իր ամրությամբ եւ այլ հատկանիշներով շատ էր գերազանցում պղնձին: Մետաղագործները օգտագործում էին նաեւ կավից ու քարից պատրաստված կաղապարներ: Տեղին է նշել, որ Հայաստանի մետաղը, այդ թվում եւ Կապանի պղնձահանքերից ձեռք բերվածը, ինչպես եւ պատրաստի իրերը հասնում էին Ուկրաինա եւ Ուրալյան լեռնաշղթայի հարավային մասերը: Առկա նյութերի քննությունը ցույց է տալիս առանձին գործող մետաղագործ արհեստավորների առկայություն: Դրանց զուգահեռ կային եւ խեցեգործությամբ պարապող արհեստավորներ, իսկ քարագործները պատրաստում էին նաեւ կուռքեր, կամեր եւ այլ իրեր: Տեղին է ասել, որ պարզունակ, քարից պատրաստված մի կամ հայտնաբերվել է շրջանի Շաքարաջուր կոչվող վայրից: Այս բոլորը ցույց են տալիս հասարակության մեջ տեղի ունեցած խոր փոփոխությունները, հասարակության շերտավորումը: Զգալի փոփոխություններ են դիտվում եւ թաղման ծեսում. երեւան են գալիս տարբեր տեսակի դամբարաններ, որոնցում թաղումները կատարված են հիմնականում աջ կամ ձախ կողքի վրա, վերջույթները կծկած վիճակում: Թաղման ժամանակ կիրառվել է նաեւ օխրա, հանգուցյալի հետ ուղեկցող նյութ է դրվել: Դամբարաններն արդեն հեռացվում են բնակավայրից: Այդ բոլորը ցույց են տալիս, որ հավատալիքները բավական բարդացած են եղել: Վաղ բրոնզի դարաշրջանում տեղի ունեցած փոփոխությունները թվարկվածներով չեն սպառվում. հոդվածի շրջանակները թույլ չեն տալիս նույնիսկ հակիրճ կերպով անդրադառնալ դրանց: Հարկ է նշել միայն, որ բնակավայրերը սկսում են շրջափակվել կիկլոպյան պարիսպներով, իսկ դարավերջում երեւան են գալիս առաջնորդներին պատկանող, շքեղ կերպով կատարված թաղումներ: Սոցիալական այդ շերտավորումը խիստ ցայտուն է դիտվում միջին բրոնզեդարում, որն ընդգրկում է 3-րդ հազ. վերջին քառորդ – 2-րդ հազ. կեսերն ընկած ժամանակաշրջանը:

Միջին բրոնզի դարաշրջանին պատկանող նյութերը Գորիսի թանգարանում ներկայացված են ինչպես սեւ փայլեցված մակերեսին կամարաձեւ կամ անկյունավոր սանրատամ զարդ ունեցող անոթներով, այնպես եւ կարմիր ներկած մակերեսին սեւ ներկով արված ալիքավոր եւ այլ ձեւերի նախշեր ունեցող կճուճներով, սափորներով, թասերով եւ այլն: Սիսիանի հիմնահողային դամբարաններից հայտնաբերված այդ նյութերի շարքում են բրոնզաձույլ դաշույններ, նիզակներ, վանակատից պատրաստված նետասլաքներ եւ այլն: Այդ դամբարաններում եւս հանգուցյալները թաղվել են աջ կամ ձախ կողքի պառկեցված, վերին եւ ստորին վերջույթները կծկած վիճակում: Ակնհայտ է, որ առանձին դամբարաններում կմախքները եւ դրանց մոտ գտնված գույքը ծածկվել են կավացեխով. այդ կարծր կավազանգվածը մեծ դժվարությամբ էր հեռացվում: Վերջինիս վրա մինչեւ ծածկասալերը փափուկ հող է լցվել, որի մեջ երբեմն այրված ճյուղեր էին հայտնաբերվում: Թաղումն ավարտելուց հետո դամբարանը ծածկվել է հողաթմբով. փոքրիկ, ցածր բլրակի նմանվող այդ հողաթումբը հաճախ շրջափակվել է քարերով: Շրջանաձեւ այդ կառույցը չարի մուտքը արգելելու նպատակն է ունեցել, իսկ ջուրն ու կրակը կապվել են կյանքի վերածննդի հետ: Խոր նախնադարից եկող այդ հավատալիքների արձագանքները նույնիսկ մեր օրերն են հասնում եւ շատ արարողություններ, որոնք կատարում ենք, արմատներով նախնադարն են հասնում, որտեղ դրանք հազարամյակների ընթացքում են ձեւավորվել. կյանքի եւ մահվան առեղծվածը մշտապես հուզել է մարդուն...

Մ.թ.ա. 2-րդ հազ. կեսերից Հայաստանում, բնականաբար, եւ նրա անքակտելի մաս հանդիսացող Գորիսի շրջանում, մշակույթը հանդես է բերում որոշակի փոփոխություններ: Առաջին հերթին դիտվում է, որ այդ ժամանակաշրջանին (դա ուշ բրոնզի դարաշրջանի սկիզբն է) պատկանող խեցեղեն արտադրանքի տեսականու մեջ գունազարդ ամանները դադարում են հանդիպելուց, իսկ սեւ փայլեցրած խեցանոթների մակերեսը զարդարվում է փայլեցմամբ ստացված, երկրաչափական զանազան բնույթի պատկերներով (ցանցեր, անկյունաձեւ միացող գծափնջեր, հորիզոնական եւ ուղղահայաց տարված լայն փայլագոտիներ եւ այլն): Երեւան են գալիս գեղեցիկ, կատարյալ ձեւավորում ունեցող սկահակներ, ծիսա-

Շարունակությունը՝ էջ 78

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010



# Գորիսը նախնադարում

Սկիզբը՝ էջ 77

կան բնույթի կոշկածեւ անոթներ, այլ տեսակներ: Նոր ձեւեր են հանդես գալիս եւ մետաղյա նյութերի շարքում, բայց որ ամենակարեւորն է՝ եզակի օրինակներով հայտնաբերվում են երկաթից պատրաստված նմուշներ: Ինչ վերաբերում է բրոնզաձույլ իրերին, ապա դրանց շարքում տեսնում ենք նախորդ դարաշրջաններում անհայտ, զանգակաձեւ գլխիկ եւ ծալված թեւիկներով, խողովակաձեւ դաստակ ձեւավորող գեղեցիկ դաշույններ, կիսաշրջանաձեւ աշխատաբերանով սակրեր, որոնց շարքում են եւ կոթառի մեջքին սեպաձեւ ելուստներ ունեցողներ: Առկա են նաեւ գավազանների ու մականների գլխակալներ, բրոնզաձույլ ճակատակալներ, որոնց ողջ մակերեսը հաճախ զարդարված է լինում երկրաչափական պատկերներով: Այդ իրերի հետ առաջնորդների պատկանող դամբարաններում գտնվում են եւ բրոնզե թիթեղներից պատրաստված գոտիներ, կաշվե հիմքի վրա ամրացված, լանջապանի մաս հանդիսացած բրոնզյա վահանիկներ: Սակավ չեն եւ մոմե նմուշի միջոցով ստացված կենդանիների եւ թռչունների արձանիկները: Հանդես են գալիս եւ մի շարք այլ նոր նյութեր, որոնց շարքում շարունակում են հանդիպել եւ նախորդ դարաշրջանում գործածված պարզ դաշույններ, այլ իրեր, որոնք շարքային համայնականների թաղումներին ուղեկցող նյութերն են: Ուշ բրոնզեդարյան դամբարանների բնորոշ տեսակը հողի մեջ պատրաստված քարարկղերն են. հիմնահողային դամբարանները Սյունիքի ուշ բրոնզեդարյան դամբարանադաշտերում հազվադեպ են հանդիպում: Երեւան են գալիս եւ հողի մակերեսին պատրաստված, քար ու հողի լիցքից կազմված դամբարանաթմբեր ունեցող դամբարաններ, որոնք, ինչպես եւ նախորդները, պարունակում են նույն գերդաստանին կամ ընտանիքին պատկանող թաղումներ. նոր հանգուցյալին թաղելու համար նախորդի մնացորդները հավաքվել են դամբարանի առանձին հատվածում, որի հետեւանքով ստացվել է անկանոն հավաքված ոսկրակույտ: Նման թաղումներից առանձնանում են տիրոջ հետ թաղված ծառաների կամ ստրուկների կմախքներ պարունակող դամբարանները:

Հասարակության տարբեր խմբերի պատկանող ուշ բրոնզեդարյան դամբարանները սփռված են Գորիսի շրջանում: Նույնը կարելի է ասել եւ երկաթեդարյան դամբարանների վերաբերյալ, որոնք, հանդես գալով մ.թ.ա. 2-րդ հազ. վերջում, ընդգրկում են մինչեւ մ.թ.ա. 6-րդ դարն ընկած ժամանակաշրջանը: Այդ դամբարանները իրենց կառուցվածքով եւ այլ մանրամասներով առանձնապես չեն տարբերվում նախորդներից: Ակնառու տարբերությունը թերեւս այն է, որ մ.թ.ա. 1-ին հազ. 1-ին քառորդին պատկանող դամբարանաթմբերի լիցքը սովորաբար կազմված է լինում տարբեր չափերի քարերից. այդ թմբերը դաշտերը քարերից մաքրելու ժամանակ մի տեղ հավաքված քարակույտերի են նման: Նման դամբարաններում սովորաբար հայտնաբերվում են նախապես կոտրվելուց հետո դամբարան նետված խեցանոթներ: Ժամանակաշրջանի դամբարաններում հաճախ են հանդիպում երկաթյա իրեր, իսկ բրոնզյա իրերի ձեւերը դեպի պարզեցում են գնում. ակնհայտ է ավելորդ աշխատանքից խուսափելու ձգտումը: Այդ երեւույթը դիտվում է ինչպես մետաղե, այնպես եւ տարատեսակ ձեւերով ներկայացված խեցեղեն արտադրանքի քննության ժամանակ. եթե մետաղյա իրերի տեսականուց անհետանում են բրոնզյա սակրերը, ծալված թեւիկներով դաստակ ունեցող դաշույնները եւ այլ տեսակներ, ապա խեցեղեն արտադրանքի շարքում խիստ հազվադեպ են երեւում փայլազարդ եւ փայլեցված մակերես ունեցող ամանները: Բնորոշ են դառնում սեւ, դարչնագույն, գորշ եւ այլ երանգավորումներ ունեցող, անփայլ մակերեսով տարատեսակ անոթները, որոնց զարդը ստացված է փորագիր եղանակով: Ժամանակաշրջանի խեցանոթների շարքում առանձին խումբ են կազմում կենդանակերպ, սնամեջ իրանով ծիսական անոթները: Դրանց մեջ հատիկ կամ հեղուկ է լցվել, որը հաջորդ տարում դատարկվել է ու նորն է լցվել, այսինքն՝ կատարվել են երկրագործական աշխատանքների սկզբին ու ավարտին առնչվող ծեսեր՝ լավ բերք ստանալու ակնկալությամբ:

Հայտնաբերված նյութերի շարքում առկա են եւ ակնհայտորեն ուրարտական մշակույթի ազդեցությամբ պատրաստվածներ: Դրանց շարքում են բրոնզե դիմակալի մասը, վահանիկները, կեռշեղբ դանակները, փռված կողերով թասերը, որոնք, ինչպես եւ Հարժիսից հայտնաբերված երկկանթ գեղեցիկ սափորիկը, որի նմանը պատկերված է Բեհիսթունի ժայռաքանդակի վրայի հայ պատգամավորների ձեռքում, հարատեւում են եւ վաղ հայկական ժամանակաշրջանում:

Գորիսի շրջանի ուրարտական թագավորության սահմաններում ընդգրկված լինելն են փաստում ուրարտական արձանագրությունները: Այս տեսակետից հետաքրքիր է Սեւանի հարավային ափի մոտ գտնվող Ծովինար գյուղի, Ռուսա Ա (մ.թ.ա. 735-713թթ.) թագավորի թողած 23 տողանոց արձանագրությունը: Այդտեղ արքան հայտարարում է, որ ինքը հնազանդեցրել է ապստամբած 23 թագավորների (իմա՝ ցեղամիությունների առաջնորդների), որոնցից չորսի երկրները գտնվել են լճի արեւմտակողմում, իսկ 19-ը՝ արեւելակողմում: Նա հայտնում է նաեւ, որ ինքն այդտեղ կառուցել է Թեյշեբա աստծուն նվիրված ամրոց: Լճի արեւելակողմում գտնվող երկրների թվում հիշատակված է Գուրիա անունը կրող երկիր, որը եւ հետազոտողներից Հ.Կարագեոզյանը նույնացնում է Գորիսի հետ: Այս դեպքում Գորիսի տարիքը ավելի քան 2740 տարի է: Տեղին է նշել, որ միջնադարյան եկեղեցացուցակում նշվում են Գորու եւ Գորայք բնակավայրերը: Գորիսի տարածաշրջանի ուրարտական տերության սահմաններում գտնվելն է վկայում Կապանի շրջանի Սզնակ գյուղից 1961թ. հայտնաբերված բրոնզաձույլ առյուծի արձանիկը. Գորիսի թանգարանում պահպանվող, ուրարտական մետաղագործության այդ հիասքանչ նմուշը յուրաքանչյուր թանգարանի զարդ կարող է հանդիսանալ. մնում է հուսալ, որ մի օր Գորիս-Կապան ճանապարհին կամ շրջանի բնակավայրերից մեկի տարածքում սեպագիր արձանագրություն կհայտնաբերվի, որը լույս կսփռի տարբեր հարցերի վրա: Նման արձանագրության հայտնաբերումը բացառված չէ. Թանահատի վանքից հայտնաբերված Արգիշտի Բ (713-685թթ.) արձանագրությունը ցույց տվեց, որ Ծղուկը, որին ուրարտացիները Ծուլուկու են կոչել, ապրել է անկախ, իր ներքին կյանքով: Այդ «երկրները» (իմա՝ գավառ) կառավարող «թագավորները» (իմա՝ ցեղամիությունների առաջնորդներ) միավորվել են ընդհանուր վտանգի պահին. նման միավորումները պարտության մատնելը, ուրարտական կազմակերպված զորքերի համար, դժվարություն չէր ներկայացնում:

Դժվար չէր նաեւ նրանց բնակավայրերը գրավելը. վերջիններս պաշտպանված էին 2–3 շարք կիկլոպյան պարիսպներով: Դրանցից մեկն է, օրինակ, Խոտ գյուղին կից բնակավայրը, որը հարթավայրային անպաշտպան հատվածում ամրացվել է անմշակ քարերից պատրաստված երեք շարք պարիսպներով, որոնց մնացորդները պահպանված են: Ինչ վերաբերում է բնակավայրին, ապա նախապետական խոշոր գերդաստանների պատկանող ընտանիքների կացարաններն իրարից ընդհանուր պատերով անջատված, առանձին մուտքերով սենյակներ են, որոնք ունեն չոր շարվածքով քարաշեն պատեր: Խումբ-խումբ իրար միացած սենյակներից կազմված այդ բնակարանների միջեւ փողոցներ են ձեւավորված, որոնց եզրերին՝ հողի մակերես ելած ժայռակտորների վրա, առանձին դեպքերում խոշոր սանդեր են փորված: Կացարանների կառուցվածքը բավական պարզ է, հատակներին տեղադրված սալաքարերի վրա կանգնեցվել են կտուրը պահող հենասյուները, իսկ պատերի տակ, առանձին դեպքերում, բարձր ուղղանկյունաձեւ պատվանդան-հարթակներ են պատրաստված, որոնց վրա անկողինները են դասավորվել: Կացարաններից մեկի պատի մեջ բացված փոքրիկ խորշում ծիթաճրագն է դրվել: Առանձին դեպքերում պահպանված են մուտքերի վրա դրված սալաքար-բարավորները: Բնակավայրի կենտրոնում ազատ թողնված ընդարձակ տարածքում ինչ-որ կառույցի հետքեր են պահպանված, հավանաբար այն տաճար-սրբարան հանդիսացած լինի: Բոլոր դեպքերում, առանց պեղումներ կատարելու, չի կարելի վստահորեն ասել այդ շինության ինչ լինելը կամ ինչ առանձնահատկություններ ունենալը: Տվյալ դեպքում նկատի ունենք տաճար-սրբարանների տարբեր աստվածություններին նվիրված լինելու հանգամանքը, ինչը եւ պայմանավորում էր տարբեր բնույթի կուռքերի տեղադրումը: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Հարժիսում հայտնաբերված հնգադեմ քարակերտ կուռքը, որը տեսանելի է եղել բոլոր կողմերից: Դժբախտաբար այդ կուռքի հայտնաբերման, տեղադրման մանրամասները մութ են եւ վստահ ասել վերջինիս ինչ աստվածության նվիրված լինելը, անհնար է:

Այլ է եղել Խնածախ գյուղի մոտակայքում՝ «Բինատեղ» կոչվող վայրում, գտնվող հուշարձանի բնույթը: Սարի վրա տեղակայված այս հուշարձանը շրջափակված է երկու շարքից կազմված կիկլոպյան պարիսպներով. դրանցից արտաքինի վրա լայն մուտք-բացվածք է թողնված: Վերջինիս դեմ դիմաց՝ ներսի կողմի պարսպապատին կից, մի քանի կացարաններ են պատրաստված, որոնցից հայտնաբերվեցին մ.թ.ա. VII-VIդդ. թվագրվող ամանների մասեր, տարբեր քարերից պատրաստված գործիքներ: Ակնհայտ է, որ այս հուշարձանը խաշնարածների համար է եղել, ուր նրանք բարձրացել են գարնանը եւ իջել աշնանը: Անասունների հոտերը գիշերները մնացել են հուշարձանի ազատ տարածքում:

Կացարաններից հայտնաբերված նյութերից չեն տարբերվում եւ հուշարձանի մերձակայքում գտնվող դամբարաններից պեղվածները: Այդ դամբարանները քարարկղեր էին, որոնցից հայտնաբերված նյութերի շարքում առկա էին նաեւ բրոնզյա թերթիկից պատրաստված ձեռքաձեւ կախիկ, գեղեցիկ զարդարված տափաշիշ: Վերջինս Հայաստանում հայտնաբերված իր տեսակի վաղագույն նմուշներից է, իսկ ձեռքի տեսք ունեցողը Հայաստանում դեռեւս եզակի է: Այս ժամանակաշրջանի նյութեր են գտնված նաեւ գյուղի գոմերի մոտ գտնվող դամբարաններից: Համաժամանակյա նյութեր են գտնված նաեւ Բռունի դամբարաններից, որտեղից եւ գտնվեց բրոնզյա դիմակալի մաս. վերջինիս նմանությունը Թեյշեբաինիից (Կարմիր բլուր) եւ այլ վայրերից գտնված ուրարտական նմուշների հետ, ակնհայտ է, ինչը եւ խոսում է ուրարտական մշակույթի ազդեցության մասին: Հիմնականը, սակայն, եւ այս հետեւությունը բխում է ողջ նյութի հետազոտությունից, այն է, որ էնեոլիթից սկսած տեղական մշակույթը ցուցաբերում է տեղական հիմքի վրա անընդմեջ զարգացում՝ գտնվելով համահայաստանյան միասնական մշակույթի ոլորտում: Տարբեր դարաշրջանների պատկանող մշակույթները օրգանապես կապված են միմյանց հետ: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում Գորիսի քարանձավներից մեկի պեղումների արդյունքները. ամբողջությամբ հողի հզոր շերտով ծածկված այդ քարանձավը պատահականորեն բացվել էր ճանապարհաշինարարության ընթացքում: Բարեբախտաբար, ճիշտ ժամանակին գտնված Վարդան Սարգսյանի նամակի շնորհիվ, եւ ցանկալի է, որ բոլորը հետեւեն նրա օրինակին, հնարավոր եղավ պեղել եւ փրկել այդ հուշարձանը ավերումից, որի հետազոտումը թույլ տվեց պարզաբանել շատ կարեւոր հարցեր:

Պեղումների ընթացքում պարզվեց, որ այդ քարայրում թաղում է կատարվել, իսկ մինչ դամբարանի փոխարկվելը, այդ քարայրը կացարան էր հանդիսացել, որի բնակիչները ինչ-ինչ պատճառներով լքել են այն: Իրոք, հատակագծում պարկաձեւ, 7.9մ երկարություն եւ 5.5մ լայնություն ունեցող քարայրի հատակի փափուկ տուֆազանգվածում չորս հորեր էին փորված (խոր. 0.85 եւ 110սմ): Դրանցից երկուսը միջանցիկ անցքով իրար էին միացած: Հորերից երեքը սալերով էին ծածկված: Այդ հորերից բացի՝ հատակին՝ անմիջապես քարայրի մուտքի մոտ, տարբեր չափերի (խոր. 10-18 սմ) եւ ձեւերի փոսորակներ էին փորված. դրանք նախատեսված էին հավաքված ջուրը քասերով հեռացնելու համար: Քարայրի հարավային պատի կենտրոնական հատվածում բացված փոքր խորշի պատերը մրածածկ էին, ինչը եւ ցույց էր տալիս, թե այդտեղ կրակ է վառվել: Այդ տարօրինակ օջախի դիմաց՝ քարայրի հյուսիսային եւ հյուսիսարեւմտյան պատերի տակ երկարուկ տուֆի շերտեր էին թողնված, որոնց բարձրությունը հատակից 26-53սմ էր, դրանք նստարան-մահիճներ էին հանդիսացել: Դժբախտաբար, նյութերի բացակայությունը թույլ չտվեց որոշել այդ քարայր-կացարանի ժամանակաշրջանը: Նյութերի բացակայությունը փաստում էր միայն, որ բնակիչները ոչ թե հանկարծակի են լքել իրենց կացարանը, այլ հավաքելով ողջ ունեցվածքը՝ հանգիստ հեռացել են՝ նպատակ ունենալով կրկին վերադառնալ, որի համար եւ հորերը ծածկել են, որպեսզի դրանք մաքուր մնան: Ակնհայտ է, սակայն, որ նրանք այլեւս հետ չեն վերադարձել, եւ լքված քարայր-կացարանը ժամանակի ընթացքում լցվել է ջրաբերուկային ավազի հարթ շերտով: Այդ տեսքն է ունեցել քարայրը, երբ այն դամբարանի է փոխարկվել, քարայրի հյուսիսային հատվածում՝ երեք տեղում, անմիջապես ավազի շերտի վրա, առկա էին դիակիզման հետքեր՝ մոխրախառն կպչուն հողով: Այդ շերտերի մոտ մի քանի նյութեր հայտնաբերվեցին, իսկ իրերի հիմնական մասը գտնվեց խճի, քարերի եւ հողի լիցքի մեջ: Տպավորությունն այնպիսին էր, որ դիակիզումն ավարտելուց հետո (թաղման այդ ծեսը հաճախ է հանդիպում վաղ հայկական եւ հելլենիստական ժամանակաշրջաններում), թաղման մասնակիցները, կանգնելով մուտքի մոտ, նյութերը դամբարան են նետել հող ու քարի հետ, որի հետեւանքով դրանք հայտնվել էին տարբեր բարձրությունների վրա: Թաղման արարողությունից հետո 1.7մ լայն. եւ 2 մ. բարձրություն ունեցող մուտքը ծածկվել է երեք խոշոր քարերով: Դամբարանից գտնվեցին զենքեր, պերճանքի առարկաներ, խեցանոթներ:

Զենքերը՝ դաշույն, տեգ, երկու դանակ, անխտիր երկաթից էին պատրաստված: Ավելի բազմատեսակ էին պերճանքի առարկաները: Վերջիններիս շարքում են ներճկված մեջքով բրոնզե վզնոցը եւ օձագլուխ ծայրերով ապարանջանները (այդ նյութերի նախաձեւերը երկաթի դարաշրջանում են), օղեր-մատանիները, զարդակոճակները, տարբեր ձեւերի ուլունքները, որոնք պատրաստված են սարդիոնից, շաղախից, ապակուց: Հետաքրքիր է կապույտ ապակուց պատրաստված եւ չորս սպիտակ շրջաններով զարդարված ակնուլունքը, որն ամենայն հավանականությամբ Հայաստան է ներմուծվել Արեւելյան Միջերկրականի ապակեգործական կենտրոններից եւ օգտագործվել որպես թալիսման-պահպանակ: Բավական մեծ խումբ էին կազմում խեցանոթները, որոնց հիմնական մասը կոպիտ, ծանր ամաններ են. դրանք տնայնագործական եղանակով են պատրաստված: Առանձնանում է եռապասկ շուրթով միականթ սափորը, որի շուրթը ուրարտական համանման անոթների ձեւին է հիշեցնում: Ուրարտական նմուշների ձեւին է մերձենում եւ միջնապատի ստորին մասում անցք ունեցող ծիթաճրագը: Հայտնաբերված անոթների թվում է տափաշիշը, որը դամբարան էր նետվել նախապես կոտրվելուց հետո՝ թերի վիճակով: Նույնը կարելի է ասել եւ ծորակավոր անոթների վերաբերյալ: Գտնվեցին եւ փոքրիկ թասեր, ինչպես եւ խայտաքիսի, ոչխարի, նապաստակի, կովի, ջեյրանի առանձին ոսկորներ. դրանք հայտնաբերվում են եւ նախորդ դարաշրջանների դամբարաններում: Հայտնաբերված նյութերը թվագրվում են մ.թ.ա. III-IIդդ., այսինքն՝ պատկանում են հելլենիստական ժամանակաշրջանին:

Համաժամանակյա նյութեր հայտնաբերվեցին նաեւ Բռուն գյուղի դամբարաններից մեկում, որը քարարկղ էր: Այդ նյութերի շարքում էր նաեւ կապույտ ապակուց պատրաստված բազմանիստ կնիքը: Վերջինիս ներքին հարթ մակերեսին պատկերված էր վազող ձի, որի գավակի եւ գլխի վրա, թեւերը ցած իջեցրած վիճակում կանգնած էին կտուցներով իրար դարձած երկու թռչուններ: Ձիու առջեւի ոտքերի մոտ մահիկաձեւ կամ ձկնաձեւ հանվածքը ամենայն հավանականությամբ վնասվելու հետեւանք է: Նման կնիքները տարածման լայն շրջանակ են ունեցել (Անդրկովկաս, Պարսկաստան, Հունաստան, Փոքր Ասիա եւ այլն), որտեղ Հայաստանը այդպիսիների արտադրման կենտրոններից էր: Հայտնաբերված նյութերը թվագրվում են մ.թ.ա. II-Iդդ., որի մասին են վկայում եւ վաղ հայկական ժամանակներից եկող կարմիր ներկած ամանները, որոնք հիմնականն էին Բռունի դամբարանում: Այդ անպաճույճ նյութերը տեղական լինելով ցույց են տալիս ժողովրդի կենցաղը, լրացնում շարքային բնակչության կենցաղի վերաբերյալ եղած բացը, եւ պատահական չէ, որ դրանց զգալի մասը կապվում է բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններից հայտնաբերված նյութերի հետ, ինչը ցույց է տալիս տեղական ավանդույթների զարգացման ընթացքը: Ինչ վերաբերում է ներմուծված նյութերին, ապա դա միանգամայն բնական է հելլենիստական դարաշրջանի հզոր մշակույթի մեջ ընդգրկված, բայց հիմնականում իր ներքին կյանքով ապրող Հայաստանի համար:

■



№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru



# Զագ Հաբանդեցի՝ անվանահայր մեր երկրամասի



ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ

Չվիճարկենք. քաղաքակրթության արշալույսը մետաղամշակության յուրացման պատմական ժամանակաշրջանն է: Թանգարանային պղնձե, բրոնզե կամ երկաթե հնանմուշ ցուցադրություններից ակամա կարելի է մակաբերել, որ դրանց ստեղծման ժամանակներում մարդիկ տիրապետել են հանքաքարից մետաղն առանձնացնելու, կռելու, ողորկելու, դրվագելու արհեստներին:

Հնագետներից ոմանք, ըստ կարողության ու ճաշակի, մետաղամշակման նախագնացներ են համարել Միջագետքի, Փոքր Ասիայի, Կովկասի, հս. Աֆրիկայի եւ այլ երկրներ: Ըստ անգլիացի կովկասագետ Դ. Լենգի՝ մ.թ.ա. 5-րդ հազարամյակից շումերները, եգիպտացիներն ու բաբելացիները պղինձն օգտագործել են մաքուր տեսքով: Ենթադրվում է, որ պղնձաքարը ներկրում էին հյուսիսից՝ Հայաստանից: Հնդիկ հնագետ Ս.Դիքշիթն ավելի կոնկրետ է. «Միանգամայն հնարավոր է, որ «արմենոիդները», եթե նրանք իսկապես իրենց հետ Եգիպտոս բերին պղինձ, արդյունահանում էին ինչ-որ ավելի հյուսիս ընկած աղբյուրներից, հատկապես ժամանակակից Հայաստանի լեռներից»:

Պեղումներով պարզված է, որ «Հայաստանում պղինձը հայտնի էր մ.թ.ա. 4-րդ հազարամյակից»: Բրոնզի դարում (III-I հազարամյակներ) Հայկական լեռնաշխարհում, ընդսմին եւ Սյունիքում, զարգացել են բրոնզի մշակման տեղական կենտրոնները: Նվաճողական պատերազմներին վերջ չկար: Վկայակոչելով եգիպտական քուրմ Մանեթոնի (IV-III դարեր մ.թ.ա.) պատմությունը՝ նորագույն հետազոտողները պարզել են, որ մ.թ.ա. մոտ 1710թ. Մեծ Հայքի ռազմիկները գրավել են Եգիպտոսը, իշխել մոտ 150 տարի, ներդրել անձայնավոր այբուբենն ու մետաղի գործածությունը, երկանիվ սայլը եւ այլն: Արդեն մ.թ.ա. 1500-ական թվականներին Հայաստանում հաջողությամբ կիրառում էին մետաղների մշակման հնարամիտ գործընթացների բազմազան եղանակներ: 2-րդ հազարամյակում Սյունիքի մարզը, ի թիվս այլոց, դարձել էր մետաղահանության, մետաղամշակության ու փոխանակության նշանակալից կենտրոն»: Այդ են վկայում պեղածո բազմաքանակ նյութերը. զորօրինակ՝ Է.Ռեսլերի՝ Տեղ գյուղում 1898թ. ութ դամբարաններից հայտնաբերած դաշույնները, ապարանջանները, բրոնզե կոճակները եւ այլ իրեր, որոնք հնագետ Օ.Խնկիկյանը թվագրել է մ.թ.ա. 2-րդ հազարամյակով:

Բրոնզի դարը մեր պատմագրության մեջ ժամանակագրման նշաններ ունի. 2492թ. Հայկի ու Բելի պատերազմն էր: Իսկ մեր Պատմահոր իմաստնախոս բերանն առ այսօր ոգում եւ ուսուցում է բոլորիս. «Հայկ ծնանի զԱրամանեակ. Արամանեակ ծնանի զԱրամայիս. Արամայիս ծնանի զԱմասիայ. Ամասիայ ծնանի զԳեղամ…Գեղամ ծնաւ զորդի իւր զՍիսակ, զայր սէգ եւ անձնեայ, բարեգեղ, կորովաբան եւ գեղեցկադեղն: …Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. եւ զաշխարհն կոչէ իւրով անուամբ Սիւնիք»:

Այս մեր նախահայր Սիսակին ժամանակագրել է Ղ.Ալիշանը՝ մ.թ.ա. 2100, կորովաբանել սյունեցիներին. «Սիւնիք յամառագոյն իմս թուին հանդիսացեալ ի պահուստ ազգային ոգւոյ եւ աւանդից»:

Իր ժամանակի պատմագրությանը խորագիտակ Սյունյաց մեծահռչակ պատմիչը՝ Ստ. մետրապոլիտ Օրբելյանը, կարծես, լրել-շարունակել է Պատմահորը. Սիսակը սերել է Բաղակին, որի անվամբ է Կապանատան անառիկ Բաղաբերդը, եւ Սիսակի նույն տոհմից էր Զագ նահապետը, որ կառուցել է Հաբանդա բերդն ու այն վերանվանել Զագեձորո բերդ: Հետեւելով Ալիշանին՝ Աճառյանը Բաղակին դնում է մ.թ.ա. 1850թ.: Առասպելի կասկածի նշույլ չունեցողի համար ակներեւ է, որ Բաղակ Սիսակյանն ու Զագ Սիսակյանը գրեթե ժամանակակիցներ են: Սա, թերեւս, հնագույն ժամանակագրական ամրակայումն է Սյունիքի պատմության մեջ:

Բաղակ անվան ծագումնաբանության մասին խոսել են Գր.Ղափանցյանը, Ն.Ադոնցը եւ ուրիշներ: Զագ անվան արմատական քննությունը թեական կարծիքների տեղիք է տվել՝ սակ, ծագ եւ այլն: Անտարակույս, այն մեր նախնյաց համար կիրարկելի անձնանուն էր: Արձագանքները գտնում ենք 9-րդ դարում, երբ Սյունիքում հայտնի էին Կապանա Զագիկյանները, զորօրինակ՝ Զագիկ իշխան, հայր Վահանի: Վերջինիս անվամբ 911 թվականից առ այսօր կա Վահանավանքը:

Ըստ Հր.Աճառյանի ստուգաբանության՝ հնդեվրոպական նախալեզվում ծագը հասկացվել է հատկապես թռչունի ծագ: Իրանյան սոգդերի լեզվով այն տղա կամ սերունդ է նշանակում: Բայց վարկածի մի արահետ էլ կա: Պատկերացնելու է, որ մետաղամշակության օրրանում մարդն իր կացութաձեւին զուգահեռել է զարգացման աստիճանին հարիր հոգեւոր-մշակութային կյանք, որ էր բազմաստվածությունը: Մեր նախնյաց կրոնը ձեւավորվել-զարգացել է, հարկավ, բնության հետ փոխհարաբերվելու արդյունքում: Պաշտամունքային բազմազանությունն առնչվել է ընդերքի, կրակի, ջրի, օդի, երկնքի հետ: Հեթանոսականը ցայժմ էլ ինչ-որ չափով արտացոլում ունի մարդկանց պատկերացումներում: Եվ տեղին էր սպասել, որ նորագույն հետազոտողները Սյունիքում պետք է մակաբերեին բազմաթիվ տեղանունների դիցաբանական ծագումը: Վերջին խոսքը բազմաբեղուն Սերգեյ Ումառյանինն է՝ «Սյունիքը դիցարան» անզուգական աշխատությամբ, որը մեր երկրամասի հնագույն պատմության վրա գիտական նոր լույս է սփռում: Ի շարս այլոց՝ Ումառյանը մատնանշել է հայերենի՝ ցարդ չնկատված ծղ կամ ծաղ բառարմատը, որով առաջացած դիցանունները աղերսվում են կրակի պաշտամունքին: Այդպիսին են Սյունիքի հինավուրց Ծղու, Ծաղքանու, Ծղուկ, Ծաղկերտ, Ծղեկյաց գյուղանունները: Քանի որ հին աստվածությունները տարբեր գործառույթներ են ունեցել մարդկանց պատկերացումներում, ապա երկբայելի չէ կրակի եւ թռչունի պաշտամունքային կապը: Ըստ այդմ՝ Զագ անձնանունը կարող է լեզվի առավել հին վիճակի ծղ (կրակ) արմատի արձագանքը լինել (ցայժմ էլ Սյունիքի խոսվածքները բառասկզբում ծ հնչյուն չեն հանդուրժում): Ծաղը գրաբարում վերառվել է ծ-ով, որի ազդեցությամբ ղ-ն փոխարկվել է գ-ի կամ արտասանական ք-ի: Արդ, ծագը նախապես կարող էր կրակ կամ հուր իմաստներն ունենալ (հմմտ. Հրայր, Հրաչէ, Հրածին անձնանունները):

Երբ պատմության հոլովույթում հայերս մոռացանք Զագ անձնանունը կամ այն դարձրինք փաղաքշական՝ փոքրիկին ծագուկ դիմելով, միջնադարում սյունեցիները Զագեձորը սկսեցին անվանել ծակեր: Ծակ բառը հայերենում գործածվել է նաեւ «քարայր» իմաստով, հմմտ՝ Մեսրոպն աշակերտների հետ գնում, լեռնակյաց, սորամուտ, ծակախիթ էր դառնում: 10-րդ դարում խորեզմցի արաբագիր հանրագիտակ Բիրունին Զագեձորը կոչել է Սակասուր (արաբերենը ծ-ն ուղղակի չի տառադարձում) եւ նշել, որ այնտեղից բերված թուտարի դեղաբույսը քաղցկեղի մի տարատեսակը բուժող հատկություն ունի: Ի դեպ, արաբերեն թուտարին հայերենում ծագախոտ է կոչվում: Զագախոտի բուժական նշանակությունը հայտնի է եղել նաեւ մեր Ամիրդովլաթ Ամասիացուն: Արդ՝ ծագախոտը Զագ նահապետի անվա՞մբ է, թե՞ ինքը բնագետ-բժշկի համբավ ուներ…

Թերեւս Շահնամե դյուցազնապատումի հերոս Շավերան Զանգի անվան ազդեցությամբ մեր հարեւան պարսիկները Զագեձորը կոչեցին Զանգեզուր, եւ նրանց հետեւելով՝ թուրքերը՝ Զյանգյազուր: Առաջինն Ալիշանն է կռահել, որ բոլոր տարինչումները ելնում են նախնական Զագեձոր ձեւից:

Հնամենի Սյունիքը, մեր պետականության կորստյան վայրիվերումների համեմատ, երբեմն հավակնել է նշանակալից դարձած իր առանձին տարածքների անվանը: Այսպես, 14-րդ դարից այն կոչվել է Երկիր Ղափանու: 1652թ. ձեռագրված մի հիշատակարանից. «…մեղսապարտ Մովսես սուտանուն երիցո՝ ի երկրէն Ղափանու, ի մյուս երկրէն Զագեձորո, ի գեղջէն Գորիս»: Զագեձոր անունը, որ տրված էր Վարարակնի մեծատարածք բնաձորին, գործածվել է առմիշտ, եւ մինչեւ 3-րդ հանրապետության ժամանակը, Սյունիքը, որ երբեւէ ձգվում էր Սեւանա լճից մինչեւ Արաքս, հասկացվում էր Զանգեզուր աղավաղված անվամբ:

Զագեձորը մաս էր կազմում «Աշխարհացույցում» առբերված Հաբանդ գավառին: Հաբանդ տեղանունը, որ Գորիսի շրջանի (ՀԽՍՀ վարչական բաժանմամբ) հնագույն անվանումն է, Հյուբշմանը խուսափել է բացատրել: Հ. վրդ. Սանտալճյանն այն ծագած է համարել Արաքսի հովտի Բաբանիս տեղանունից, որը գործածված է Ասորեստանի մի արքայի վերագրվող արձանագրությունում: Դա մերժել է Ս.Ումառյանը եւ տվել իր բացատրությունը. «Հաբանդ անվան արմատը հնդեվրոպական խեթերենում հնչել է հալե-զոհել, որը նորխուռիերեն տառադարձությամբ խալումատաղ անել է: Հայերենը, ըստ որոշ հեղինակների, հայերենին մերձակից այդ լեզվի հնչումի դիմաց ունի հաղ արմատը, որից եւ՝ հաղորդություն, ճաշակ, սրբություն»:

Հետեւաբար, ըստ Ումառյանի, Հաբանդ անունն իր ծագմամբ նշանակում է զոհարան կամ ծիսարան: Հարանման է եւ Սյունիք անվան բացատրությունը:

Հաբանդ անվան այլ ստուգաբանություններն էլ հետաքրքիր են: Եթե նախադիր հ-ն մի կողմ դնենք, ապա կունենանք վաղնջական հայերենի

Շարունակությունը՝ էջ 80

## Գորիս. եւս մի քանի լուսանկար



Գորիսի մշակույթի կենտրոնը



1988թ. Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող (1989թ.): Կառուցվել է Քոլատակ թաղամասի բնակիչների նախաձեռնությամբ՝ Սեւադա Զաքարյանի նախագծով:



Յոթ աղբյուր հուշարձան (1943-1945թթ.): Նախագծի հեղինակ եւ ճարտարապետ՝ ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյան:

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ

# Իրանահայ հայրենադարձները Գորիսում

Սկիզբը՝ էջ 77

վական դժվարություններ, քանի որ խոսում էին նույն՝ Ղարադաղի բարբառի ենթաբարբառներից մեկով: Մինչեւ ներգաղթը Ղարադաղի հայությունը սերտորեն կապված էր Այսրկովկասի հետ, տղամարդիկ (նաեւ ընտանիքներով) տարագնա աշխատանքի էին մեկնում Բաքու, նաեւ ուրիշ քաղաքներ, հասնում մինչեւ Հյուսիսային Կովկաս: Նրանք ծանոթ էին ռուսական մշակույթին ու լեզվին: Ղարադաղի հայերը սերտ կապ են ունեցել նաեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Իրան մտած խորհրդային զորքերի հետ: Ռուսների կամոք ու օժանդակությամբ է, որ հայերն ընդգրկվեցին դեմոկրատական շարժման մեջ: Հայրենադարձների առաջին խմբերի մեջ եղել են հենց դեմոկրատ հայերը: Պատերազմի ավարտից հետո Իրանում նրանց դեմ բռնության վտանգ կար: Ղարադաղցի հայերի մի մասը, մասնավորապես հոգեւորականները, հայրենիք չեն եկել, թեպետ եկողները բացառապես հավատացյալ մարդիկ էին: Ղարադաղցիները Գորիսում իշխանությունների կողմից որեւէ կարգի բռնության կամ աքսորի չեն ենթարկվել, ընդհակառակը, եղել է փոխադարձ վստահություն, բավական մեծ թվով մարդիկ են ընդունվել կոմունիստական կուսակցության շարքերը:

Պետությունը Գորիսում ղարադաղցիներին, հակառակ Բուրվարի շրջանից եկածների, տներ կառուցելու համար վարկ չի տրամադրել, քանի որ նրանք ինքնակամ տեղաշարժվել էին նախատեսված բնակատեղերից: Միայն 1958թ. Գորիսի քաղխորհուրդը որոշում կայացրեց նրանց տնատեղ եւ տնամերձ հողակտորներ հատկացնել քաղաքի Ըղջիյազի-Ավանգարդ թաղամասում, որտեղից պարզ, անամպ եղանակին հստակ նշմարվում են Ղարադաղի լեռների կապույտ ուրվագծերը: Ղարադաղցիների ընտանիքները Գորիսից այլեւս ուրիշ վայր չեն տեղափոխվել: Գորիս քաղաքում նրանց ընտանիքների թիվը հասնում է շուրջ 150-ի: 2005թ. այստեղ ապրող ամենատարեց ղարադաղցին 1908թ. Բերդիետք գյուղում ծնված Սարգիս Պետրոսյանն է: Ղարադաղցի հայերը սերտորեն ընդգրկված են հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի ոլորտներում: Նրանց սերունդների մեջ կան բժիշկներ, ճարտարագետներ, մանկավարժներ, հմուտ շինարար վարպետներ, շատ են զինվորականները:

Հայրենի հողի վրա ծնված երեխաներին հայրենադարձները տվեցին նվիրական անուններ՝ Նորեկ՝ Նորիկ, Գալուստ, Նվերիկ, Հայրենիք, Ազատ եւ այլն: Անշուշտ, լեզվահոգեբանական, կենցաղային սովորույթների որոշակի պատնեշ կար տեղաբնիկ հայերի եւ նորեկների միջեւ, եւ դա բնական կարելի է համարել, եթե հաշվի առնենք սյունեցի հայերի ինքնասիրությունն ու ավանդապահությունը: Մինչեւ օրս հայրենադարձներին, ասես օտարելով նրանց, կոչում են նորեկ հայեր, ինչն անընդունելի է հայրենադարձի համար: Վերջիններիս ավագ սերունդը այդպես էլ չսովորեց տեղական բարբառը, իսկ ահա Գորիսում ծնվածները լիովին տիրապետեցին բարբառին, մերվեցին տեղացիներին, ընդունեցին նրանց վարքն ու բարքը, կենցաղն ու սովորույթները: Եթե ավագ սերնդի համար բացառիկ երեւույթ էր տեղացու հետ ամուսնանալը, ապա նոր սերունդն այն դարձրեց սովորական:

Տեղաբնիկների հետ ունեցած բարոյահոգեբանական արգելքներն ավելի դյուրին ու արագ հաղթահարեցին Ղարադաղից եկած հայերը:

Իրանից հայերի հայրենադարձության հարցը բարձրացվել է 1946թ. գարնանից, երբ այդ առաքելությամբ Իրան են գալիս ՀԽՍՀ ներկայացուցիչներ: Թեհրանում կազմվեց «Իրանի համայն հայերի ներգաղթին օժանդակող կենտրոնական կոմիտե»: Բուրվարի շրջանի հայերի ներգաղթով զբաղվում էր Սուլթանաբադի (Արաք) «Ներգաղթին օժանդակող ենթակոմիտեն»: Վերջինս հայրենադարձների առաջին խմբաքանակի մեջ ընդգրկեց հարավային Բուրվարի հեռավոր ու խուլ հայաբնակ գյուղերը, որոնց թվում եւ Շավրավան ու Փահրան: Ղարադաղի հայերի ներգաղթի հարցերով զբաղվել է Թավրիզի ենթակոմիտեն:

Հայրենադարձները հայրենիքում փորձեցին ապրել հին սովորույթներով, մանավանդ հավատի հարցերում: Քաղաքի փողոցներում հայտնվեցին սքեմավոր քահանաներ: Դա զարմանք ու ցնծություն էր մանավանդ երեխաների համար, քանի որ խորհրդային երկրում նրանք երբեք չէին տեսել եկեղեցու սպասավորների: Շատ ընտանիքներ, որոնք, այնուամենայնիվ, պահել էին հավատը եւ կաշկանդված չէին կուսակցական-աթեիստական կապանքներով, քահանային պարզապես կանչում էին փողոցից եւ խնդրում օրհնել իրենց օջախը: Իրանից հայրենադարձների հետ Գորիս են եկել երեք քահանաներ: Նրանցից մեկը՝ տեր Գեղամ Մուսախանյանը, բնակություն հաստատեց Բարձրավան գյուղում: 1948թ. նա տեղափոխվել է նախկին Հոկտեմբերյանի (Արմավիր) շրջանի Բամբակաշատ գյուղ եւ այնտեղից 1949թ. աքսորվել: Իսկ քահանա Նազարեթ Ադամյանը բնակություն հաստատեց Գորիս քաղաքում, Ակ.Բակունցի փողոցում տուն կառուցեց եւ շուրջ տասը տարի ապրեց այդ տանը: Հետո տունը վաճառեց եւ տեղափոխվեց Արարատյան դաշտավայր: Վերոհիշյալ քահանաները Շավրավա գյուղից էին: Իսկ Փահրա գյուղի քահանա Ավետիս Շաբանդարյանը բնակություն է հաստատել Քարահունջում:

1948-1949թթ. կոմունիստական իշխանության ձեռնարկած մասսայական բռնության հործանուտում իրանահայ հայրենադարձները զերծ չմնացին:

Հայրենիք վերադառնալուց հետո նրանց մոտ առաջին հերթին ծագեցին ներքին սոցիալական խնդիրներ:

Այստեղ անսովոր խորհրդային կարգեր էին, նոր բարքեր: Երեկվա մշակը, դառնալով բրիգադիր, կարող էր կարգադրություն անել նախկին տիրոջը: Խորհրդային բռնատիրության առաջին զոհերը դարձան նախկին հարուստներն ու մտավորականները: 1948թ. Գորիսի շրջանի Բարձրավան գյուղում ձերբակալվեցին ու աքսորվեցին Սեդրակ եւ Արշակ Մուսախանյանները: Նրանք հետագայում վերադարձել են: Իսկ ահա քաղաքից աքսորված Եփրեմ Ջեյնալյանը, որ Շավրավայում եղել էր դպրոցի տնօրենը, չդիմացավ զրկանքներին ու իր մահկանացուն կնքեց աքսորավայրում՝ հեռավոր Ռուսաստանում: Իրանահայ հայրենադարձներից 1949թ. Գորիս քաղաքից ընտանիքներով աքսորվել են Անդրանիկ Ջեյնալյանը (եղել է Շավրավայի տանուտերը) եւ Շահմիրզա (Ալիկ) Ջեյնալյանը (եղել է վաճառական): Այս երկու անձինք այլեւս Գորիս չեն վերադարձել: Խոզնավար գյուղից ընտանիքով աքսորել են Ջեյնալյան ազգանունը կրող եւս մեկ անձնավորության՝ Ռաֆայելին:

1949թ. սեպտեմբերի սկզբին հրդեհի ճարակ դարձան Գորիսի «Ավանգարդ» կոլտնտեսության Կալին պաշի (քարափի) տակ գտնվող խոտի ու դարմանի դեզերը: Քաղաքի միակ հրշեջ ավտոմեքենան ու մոտիկ գյուղերից օգնության հասած մարդիկ մի կերպ կարողացան ամբողջական ոչնչացումից փրկել խոտի դեզերը: Նույն տարին հրդեհվեցին նաեւ Հարժիս, Քարահունջ, Հարթաշեն գյուղերի դեզերը: Չգիտես ով ում դեմ էր թշնամություն անում, բայց «Ավանգարդի» դեզերի հրդեհի առթիվ հարուցված քրեական գործով հարցաքննվեցին նաեւ մի քանի իրանահայ հայրենադարձներ, որոնց թվում եւ քահանա տեր Նազարեթը: Ի վերջո, մեղադրանքը բարդվեց Մինաս Ջեյնալյանի վրա, նրան դատեցին եւ տվեցին տասը տարվա բանտարկություն:

Փոխվում է հայրենի երկրի հանդեպ հայրենադարձների ունեցած դրախտային տեսլականը, փոխվում էր վերաբերմունքը նոր իրականության հանդեպ: Դա էր թերեւս գլխավոր պատճառներից մեկը, որ Բուրվարի շրջանից եկած հայերը սկսեցին մտածել Գորիսը լքելու եւ Արարատյան դաշտ մեկնելու, այնտեղ հավաք ու մեկուսի ապրելու մասին: Այդ մտայնությունն աշխուժացավ հատկապես Ստալինի մահից եւ բռնատիրության կապանքների թուլացումից հետո:

Հայրենադարձ հայերն էական ներդրում ունեցան Գորիս քաղաքի կառուցապատման, առանձին թաղամասերի կազմավորման գործում: Գերազանցապես հայրենադարձ հայեր են ապրում քաղաքի «Տախտակներ» թաղամասում: Այս թաղամասը ձեւավորվել է Հայրենական մեծ պատերազմից հետո եւ 1950թ. ուներ 100 տուն, 1952թ. դրանց քանակը հասավ 130-ի: Գորիսի շրջանային թերթը բազմիցս հարց է բարձրացրել Վարարակն գետի վրա գցված, թաղամասը քաղաքին կապող միակ կամրջի անմխիթար վիճակի, թաղամասի գիշերային լուսավորության, ռադիոֆիկացիայի կամ մթերային խանութի բացման անհրաժեշտության մասին: Այդ տարիներին ձեւավորվեց նաեւ քաղաքի Քոլին Տակ թաղամասը, ուր նույնպես մի քանի տասնյակ իրանահայեր տներ կառուցեցին: Իսկ ահա Ըղջիյազի «Ավանգարդ» թաղամասը, որը ձեւավորվեց մի փոքր ավելի ուշ, գերազանցապես իրանահայերի (բուրվարցիների ու ղաբադաղցիների) թաղամաս է: Եվ միայն այս թաղամասում է, որ չպահպանվեց քաղաքաշինության գորիսյան ավանդույթը: Անշուշտ, նաեւ ճարտարապետի մեղքով փողոցներն այստեղ «ստացվեցին» ծուռումուռ, ոլորուն, փոփոխակի լայնությամբ, առանց մայթերի... Պետությունը տուն կառուցող հայրենադարձին տրամադրում է վարկեր՝ 32000 ռուբլու չափով: Մարդկանց համար առանձնատներ էր կառուցում նաեւ քաղաքի այն ժամանակվա միակ շինարարական կազմակերպությունը՝ շինգրասենյակը: Շինգրասենյակի աշխատուժը հիմնականում հայրենադարձներն էին: Նրանց ջանքերով է իրականացվել քաղաքի փողոցների ասֆալտապատումը: Պետությունը խիստ կարիքավոր, բազմանդամ ընտանիքներին վարկերի հարցում զիջումներ է արել հայրենադարձների համար:

Այնուամենայնիվ, արդեն 20-րդ դարի 50-ական թվականներից սկսվեց Գորիսում եւ նրա գյուղերում բնակեցված իրանահայերի տեղաշարժ, նկատվեց շրջանից նրանց արտահոսքի ավելացում: Դրան նպաստող հանգամանքներ էին՝ մայրաքաղաքի հեռավորությունը, լեռնային կլիման, տեղացիների հետ ունեցած բարոյահոգեբանական կամ լեզվական դժվարությունները: Նրանք նախ լքեցին գյուղերը եւ տեղափոխվեցին Գորիս: Բուրվարի շրջանից եկած հայրենադարձների անկոտրելի ձգտումն էր ապրել կողք կողքի, հավաք ձեւով: Նրանց մեջ դրսեւորվում էին առանձնակի հասարակական արժեքներ ունեցող սոցիալ-հոգեբանական կայուն խմբի հատկանիշներ: Այսօր մատների վրա կարելի է հաշվել շրջանի գյուղերում մնացած իրանահայ հայրենադարձ ընտանիքների: Մեկ կամ երկու ընտանիքներ կան Տեղ, Քարաշեն, Ակներ գյուղերում, փոքր-ինչ ավելին՝ Քարահունջում: Մոտավոր հաշվարկներով Բուրվարի շրջանից 1946թ. եկած հայրենադարձների 70%-ից ավելին Գորիսից հեռացել են: Հեռացածները բնակություն են հաստատել Երեւանում կամ նրա մերձակայքում, իսկ հավաք ձեւով ապրում են Արարատի մարզի Արմաշ եւ Սուրենավան գյուղերում: Նրանք չեն խզել կապերը Գորիսում մնացած հարազատների հետ: Այսօր Գորիսում ապրում են բուրվարցի իրանահայ հայրենադարձների շուրջ 70 ընտանիքներ: Առանձին ընտանիքներ ճյուղավորվելու խոր արմատներ են ձգել սյունյաց հողում, օրինակ՝ Ավետիք Շահնազարյանի երեք որդիներից ընձյուղված օջախների թիվը հասնում է մեկ տասնյակի: Գորիսում 2005թ. ապրող ամենատարեց բուրվարցի իրանահայը Փահրա գյուղում ծնված իննսունամյա Մովսես Սիմոնյանն է, նրա կինն իրենից տասը տարով մեծ է եղել եւ մահացել է 2003թ.: Բուրվարցիները փորձում են պահել իրենց սովորույթները՝ ծերերի հետ անհետացող խոսվածքը, ուրախությունների ժամանակ երբեմն վերհիշում են իրենց «վեր-վերին» կամ ճիպոտներով խմբապարը: Տարեցները չեն մոռանում իրենց ծննդավայրը, նախնիների հանգստարանը: Որոշ մարդիկ՝ որպես տուրիստ, մեկնել են Իրան, եղել իրենց ծննդավայր գյուղերում, հյուրընկալվել պարսիկ հարեւանների մոտ, կատարել նկարահանումներ՝ կարոտը ձգել է նրանց:

Սյունիքը տակավին Դավիթ Բեկի ժամանակներից սերտ կապի մեջ է եղել հարեւան Իրանի հետ: Այդ կապը եւ դրացիական հարաբերությունները առանձնապես կարեւորվեցին 20-րդ դարի 20-ական թվականների սկզբին, երբ շուրջ 10000 հայեր լքեցին հայրենիքը եւ Գ.Նժդեհի օգնությամբ Արաքսի վրայով անցան Իրան: Այդ օրերին հայ եւ իրանցի ժողովուրդների բարեկամության դրսեւորման ամրապնդման գործում անգնահատելի դեր է խաղացել հայ եկեղեցու Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք Թանգյանը: Հայ ժողովրդի վերոհիշյալ երկու երախտավոր զավակների կողմից բոցավառված հայ-իրանական բարեկամության ջահը բոցկլտում է նաեւ մեր օրերում:

**Սերգեյ Հախվերդյան**
**Նազելի Հախվերդյան**

ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

# Զագ Հաբանդեցի՝ անվանահայր մեր երկրամասի

Սկիզբը՝ էջ 79

(ուրարտերեն կոչվածը) աբբա՝ հայր բառը: Վերջածանց անդ-ը հոգնակիակերտ է: Ուրեմն Հաբանդը է՝ հարք, հայրենիք, ոստան: Հրապուրիչ է եւ պարզունակ մեկ այլ դիտարկում. ակներեւ տարանջատելի են պիլ. աբ՝ ջուր եւ բանդ՝ կապ արմատները: Այս պարագային մեր դատողության մեջ զուգորդվում է «ջրակապ, բանտված գետ» ըմբռնումը, որը հղվում է բնաշխարհիս զարմանահրաշ տեսարանին՝ Սատանի կամուրջ կոչվածին:

Ինչեւէ. ղեկավարվենք Ումառյանով: Պատշաճում է, որ քարե բնական բուրգերի ու անձավների ինքնատիպ երկրամասը բազմաստվածության դարաշրջանի զոհարանծիսարան լինի: Արդ, տրամաբանական է, որ Հաբանդա բերդը, որն, ըստ Ս.Բարխուդարյանի, եղել է Լաստի խութի ապառաժների վրա, գոյություն է ունեցել Զագ նահապետից ավելի վաղ, եւ, իր գործունեությանը համեմատ, անվանի Սիսակյանը կա՛մ ընդարձակել է, կա՛մ վերակառուցել: Եթե այս վարկածը դյուրավ մերժելի է, ապա անվիճելի է, որ Հաբանդ գավառանունը եղել է մինչեւ Զագ նախնին: Դնում ենք հնագետի մի դիտողությունը. «Հաբանդի բերդը, որը հետագայում կոչվել է Զագեձորի բերդ»: Աիավասիկ, թե որքան հին է քաղաքակրթության այն սովորույթը, երբ դղյակներն ու քաղաքները վերակոչվում են համբավավոր այրերի (տիկնանց) անուններով: Դե ինչ, մեր նահապետին կարող ենք մեծարել՝ կոչելով Զագ Հաբանդեցի:

Բնականաբար, պատմության հոլովույթի գրեթե 4000-ամյա հետնախորքի վրա Զ.Հաբանդեցին ներկայանում է դույզն-ինչ առասպելական կերպարով: Նա, անշուշտ, Մեծ Հայքի պետականության երեւելի հայկազուն էր, երկրամասի տիրակալ, զի «հայկական պետություն գոյություն է ունեցել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերից մինչեւ մ.թ.ա. 331թ.՝ Հայկազյան դինաստիայի շուրջ 60 թագավորներով»: Սեւանա Լճաշենի՝ 3-րդ հազարամյակին վերաբերող դամբարաններից հայտնաբերված սայլերն ու իրերը խոսում են այն մասին, որ էնեոլիթյան (պղնձաքարի) դարաշրջանից սկսած Սյունիքի նստակյաց ցեղային միություններն ունեցել են ինքնուրույն մշակույթ, օտար զավթիչներին դիմակայելու ռազմական տնտեսություն:

Եվ այսպես է քաղցրաբանում մեր Հայր Ստեփանոսը. «Սկսած նախնի Սիսակից՝ այս նահապետության իշխանությունը ակներեւ հարազատությամբ որդիները հայրերից հաջորդաբար փոխանցեցին երկար ու ձիգ ժամանակով»: Սա զորավոր ազդանշան է, որ խորհենք գորիսյան որոշ տեղանունների՝ անձնանուններով ստուգաբանելու մասին: Այսպես, Գորայք-Գորիս տեղանվան հիմքում երեւում է Գոր անձնանունը, որ գործածված ունենք համեմատաբար ուշ շրջանում. «Սյունյաց տեր Բաբիկը վիճակով բաժին է հանում Գորին Խոտ ավանը»: Նաեւ, ըստ մեր պրոֆ. Գրիգորյանի տեղեկատվության՝ Ռուսա I արքայի (մ.թ.ա. 735-713թթ.)՝ Ծովինարում թողած վիմագրի մեջ հիշատակված Գուրիսյան երկիրը Գորայքն է: Նկատենք, որ միջնադարում տեղանունների ինչաբերումը հայցական հոլովով սովորական էր, հմմտ՝. Բնունիք-Բնունիս, Եղեգիք-Եղեգիս, Վժանիք-Վժանիս, Մոգք-Մոգս-Մողես եւ այլն: Արդ, Գորիս հայցականը ենթադրելու է Գորիք-ից, քան Գորայք-ից:

Հաբանդի Գորու, Բաղքի Գորագիտ, Գեղարքունիքի Զագ գյուղանունները, ըստ իս, անձնանվան ծագում ունեն:

Ի վերջո, կա՞ նպաստ, ըստ որի Զագեձորո բերդը Լաստի խութի վրա էր: Ակադ. Աճառյանն առբերել է լեզվաբանների տեսակետները լաստ-լաստել բառերի վերաբերյալ: Դրանք են՝ տիրել մի երկրի, մի երկիր բռնել եւ այնտեղ տարածվել, բռնակալել, մի տեղ հաստատվել եւ այլն: Ահա թե ինչու իր երկրամասին սիրահարված սյունեցու համար Լաստի խութը պատմության բրոնզե խորքից հառնում է հայրենի եզերաց անվանահայր Զագ Հաբանդեցու ավանդապատումներով: ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց երկիր



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Ուրվագիծ Գորիսի կրթական համակարգի պատմության

Հատված մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարեն Սահակյանի համանուն ուսումնասիրությունից



## Գորիս քաղաքի երկդասյան արական ծխական դպրոց

Արխիվային փաստաթղթերում եւ նույնիսկ տպագրված գործերում մեծ շփոթություն է գոյություն ունեցել Գորիս քաղաքի, Գորիս գյուղի եւ Հին Գորիս գյուղի հարցում: Հաճախ դժվար է որոշել, թե տվյալ դեպքում դրանցից ո՞ր մեկի մասին է խոսքը:

Երկու վավերագրերում Գորիս քաղաքի արական ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1890թ.: Մեկ ուրիշ վավերագրում, որ կազմվել է 1872թ. ապրիլին եւ էջմիածին ուղարկվել, նշվում է, որ «Կորիս գյուղաքաղաքի» ուսումնարանն ունեցել է 27 աշակերտ: Ուսուցիչն է եղել «Կրթեալ առ պապ իւր Կորիսեցի» Հովհաննես Տեր-Մինասյանը (13,117): Սա շատ կարեւոր վկայություն է: Այն ցույց է տալիս, որ դեռեւս ուսուցիչ Հովհաննես պապի ժամանակ (ով գիտի, թե 1872 թվականից քանի տարի առաջ) Գորիսում ուսուցման գործը գոյություն է ունեցել: Եվս մեկ վկայություն: Վրաստանի պետական պատմական արխիվի ֆոնդերից մեկում պահված (1873թ. հունվարի 1-ի տվյալներով) եւ Կովկասում գործած հայկական դպրոցների ցուցակում նշված է նաեւ Գորիս գյուղի դպրոցը, որն ունեցել է 1 ուսուցիչ եւ 30 աշակերտ (13,118): Հանդիպելով անհաղթահարելի դժվարությունների՝ այս դպրոցները որոշ տարիներ դադարել են գործել: 1890 թվականին Կովկասում վերաբացված հայկական դպրոցների ցուցակում նշված է նաեւ Գորիսի դպրոցի անունը: Մեկ ուրիշ վավերագրում նշված է, որ 1896թ. սկզբներին Գորիսի երկդասյան երկսեռ դպրոցն ունեցել է 5 ուսուցիչ եւ 165 աշակերտ: Սակայն նույն թվին փակվել է եւ 1905թ. վերաբացվել որպես միդասյան արական դպրոց (13,119): Երեւանի թեմի դպրոցների 1911-12 ուստարվա տեղեկագրի համաձայն՝ Գորիս քաղաքի եկեղեցական ծխական դպրոցը եղել է քառամյա խառը դպրոց, որտեղ սովորել են 44 տղա եւ 67 աղջիկ (111 հոգի) (13,119): 1914թ. ունեցել է 5 ուսուցիչ եւ նույնքան աշակերտ: 1917թ. ունեցել է 7 ուսուցիչ եւ 202 աշակերտ (107 աղջիկ): 1876թ. Գորիսում գործել է նաեւ, այսպես կոչված, «գյուղական նորմալ դպրոց», որը ենթարկվել է լուսավորության մինիստրությանը: Այն 1882թ. դարձել է երկդասյան ուսումնարան:

## Գորիս գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման ստույգ թվականն անհայտ է: Պետական արխիվի ֆոնդերում նշվում է, որ 1873-ին Գերուսի գյուղում գործել է երկու ծխական դպրոց. հնարավոր է, որ դրանցից մեկը գործած լիներ Գորիս գյուղաքաղաքում, իսկ մյուսը՝ նույնանուն գյուղում (13,119): Մի շարք փաստաթղթերում նշվում է, որ 1890թ. Գերիս (Գերուսի) գյուղում եղել է ծխական դպրոց: Մեկ ուրիշ վավերագրում հանդիպում ենք 1905-1908թթ. վերաբացված ու բացված հայ դպրոցների ցուցակում նշված Փոքր Գերուսի գյուղի դպրոցը (Գորիս քաղաքի դպրոցից բացի):

Երեւանի թեմի եկեղեցական ծխական դպրոցների 1911-12 ուստարվա տեղեկագրում նշված են Գորիս քաղաքի, Գորիս գյուղի եւ Հին Գորիս գյուղի դպրոցները: Եվ Գորիս գյուղի դպրոցի հիմնադրման թիվ է գրված 1905թ. (դա կարող է նաեւ լինել վերաբացման թիվը, իսկ այս թվականներին վերաբացված դպրոցներ, ըստ վավերագրի, բացվել են 1896թ.): 1909-ին եղել է եռամյա երկսեռ դպրոց՝ 100 տղա եւ աղջիկ: 1911-12 ուստարում՝ 60 աշակերտ (6 աղջիկ): 1913-14 ուստարում՝ 70 աշակերտ, 1917թ.՝ 18 աշակերտ (5 աղջիկ) (13,120):


Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

**Գորիսի №2 նախակրթական հաստատության շենքը (Կոմիտասի 8):**

## Գորիսի Ակսել Բակունցի անվան №1 միջն. դպրոց

1884թ. Գորիս քաղաքի մի շարք մեծատուններ (հարուստներ) դիմում են Հայոց կաթողիկոսին Գորիսում դպրոց բացելու խնդրանքով (պետ. արխիվ, ֆոնդ 48, գործ 988): Եվ 1884թ. Գորիսում բացվում է առաջին երկսեռ չորսդասյա դպրոցը՝ չորս ուսուցիչներով: Նրանք էին՝ Ներսիսյան դպրոցի շրջանավարտ Զաքարիա Մկոյան, Թիֆլիսի երկրորդ գիմնազիայի 8-րդ դասարանի շրջանավարտ օրիորդ Աշխեն Մելիք-Շահնազարյան, Ներսիսյան դպրոցի 6-րդ դասարանի շրջանավարտ Սերոբ Տեր-Խաչատրյան, Բաքվի կարուձեւի դպրոցի շրջանավարտ օրիորդ Վարդուհի Ղուկասյան: 1918թ. դպրոցը կոչվել է պրոգիմնազիա, իսկ հետագայում վերանվանվել է կենտրոնական վարժարան, որի հիմքի վրա ստեղծվել է քաղաքի առաջին յոթնամյա դպրոցը: 1933-34 ուստարվանից դպրոցը դարձել է միջնակարգ եւ կոչվել Ասքանազ Մռավյանի անունով: 1935-36 ուստարվանից դպրոցը կոչվել է Գորիսի օրինակելի միջնակարգ դպրոց, որը եւ տվել է իր առաջին 18 շրջանավարտը:

Մեզ հայտնի են միայն 1920թ.-ից աշխատած տնօրենների անունները՝ Ղեւոնդ Սեւլիկյան, Արամ Մինասյան, Մուշեղ Ադունց, Ռուբեն Պետրոսյան, Սերոբ Բարխուդարյան, Աշոտ Օհանյան, Մուշեղ Քյարունց, Ռուբեն Գիչունց, Գուրգեն Դադայան, Գրիշա Մանուչարյան, Ռիտա Սեւլիկյան, Թելման Աբրահամյան:

Այս դպրոցում են սովորել Ակսել Բակունցը, Սերո Խանզադյանը, Գուսան Աշոտը: Դպրոցի առաջին ոսկե մեդալակիրը Սեւադա Բակունցն է: 1984թ. դպրոցում սովորում էր 860 աշակերտ: 2010թ. սովորում էր 572 աշակերտ, աշխատում՝ 51 ուսուցիչ:

## Գորիսի №2 հիմնական դպրոց

Գորիսի №2 միջնակարգ դպրոցը մինչեւ 1952թ. եղել է ութամյա: 1952թ. Հայկ Տատինցյանի նախաձեռնությամբ (նախկին ժողկրթբաժնի վարիչ) այն վերափոխվեց միջնակարգ դպրոցի, եւ պարապմունքները կազմակերպվեցին նախկին №4 միջնակարգ դպրոցում՝ շուրջ 20 տարի: 1972թ. դեկտեմբերին դպրոցն իր նախկին կազմով տեղափոխվեց ներկայիս շենքը:

Դպրոցի տնօրեն են եղել՝ Աշոտ Օհանյան՝ 1952-1966թթ., Ռաֆիկ Պետրոսյան՝ 1966-1984թթ., Արտաշես Գրիգորյան՝ 1984-1991թթ., Ռոբերտ Շալունց՝ 1991-1995թթ., Յուրա Ալեքսանյան՝ 1995-1999թթ., Սիրուշ Ակլունց՝ 1999թ.-մ/ա:

Իր գոյության ժամանակաշրջանում դպրոցը տվել է 61 ոսկե, 56 արծաթե մեդալակիր շրջանավարտ:

Այդ դպրոցն են ավարտել գիտության թեկնածուներ Ալբերտ Օրդյանը, Զանո Տատինցյանը, Ռիմա Շալունցը, Յուրա Ալումյանը, Արմեն Մաշուրյանը, Իրինա Քյարունցը, Սամվել Հովսեփյանը, Ռաֆիկ Բադալյանը, Յուրի Դանիելյանը, Միկիտ Ղազարյանը, Հասմիկ Սաֆարյանը, Գագիկ Հարությունյանը, Սվետլանա Իսախանյանը, գիտության դոկտորներ Յուրի Սաֆարյանը, Սլավիկ Ամիրյանը, ուրիշներ...

Այդ դպրոցում են մանկավարժական գործունեություն ծավալել Սաթիկ Հայրապետյանը, Հայկ Տատինցյանը, Սեդրակ Զաքարյանը, Մարգո Մայսուրյանը, Ռոզա Խանզադյանը, Լաուրա Սուլեյմանյանը, Աստղիկ Մայսուրյանը, Գրետա Միրզոյանը, Էմմա եւ Արաքսյա Աքունցները, Սերաֆիմ Կուրենկովը, Լուսիկ եւ Էմմա Շահնազարյանները, Կոմբրիգ Բաբայանը, Գագիկ Հակոբջանյանը, Էմմա Տատինցյանը, Արմենուհի Յակուբյանը, Արուսյակ Դանիելյանը, Ռոզա Թելունցը, Արեւհատ Նազարյանը, ուրիշներ:

Այսօր դպրոցում սովորում են 422 աշակերտ, աշխատում՝ 38 ուսուցիչ:

## Գորիսի Յու.Բախշյանի անվան №3 հիմնական դպրոց

1966թ. աշնանը Գորիս քաղաքի մայր դպրոցից ծնվեց եւս մեկ դպրոց՝ №3 միջնակարգը: Այդ օրը դպրոցամուտ էր: Նորաբաց դպրոցի 1-ից 9-րդ դասարանների աշակերտները, տնօրեն Արշակ Շեգունցի հրահանգով, ալիք-ալիք շարվեցին՝ ցտեսություն ասելու մայր դպրոցին: Այդ օրը №3 միջնակարգ դպրոցն իր գիրկն առավ առաջին սաներին ու ապրեց առօրյա հոգսերով, անակնկալներով, անկումներով ու վերելքներով: №3 միջնակարգ դպրոցի պատմությունը կերտել են հարգված ու նվիրյալ տնօրեններ Արշակ Շեգունցը՝ 1966-1971թթ., Հայկ Տատինցյանը՝ 1971-1978թթ., Արտաշես Գրիգորյանը՝ 1978-1984թթ., Յաշա Ալեքսանյանը՝ 1984-2005թթ., Կարմեն Կարապետյանը 2005թ.-մ/ա:

Այդ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի անդամներ են եղել վաստակաշատ մանկավարժներ Գրիշա Առուշանյանը, Գուրգեն Դանիելյանը, Վանուհի Իսախանյանը, Անդրանիկ Ադունցը, Էդուարդ Դինգչյանը, Մայսուրա Արզումանյանը, Գայա Մարդանյանը, Գրետա Մանվելյանը եւ ուրիշներ, որոնք սիրով են կրել մանկավարժի պատվավոր կոչումը:

Այսօր դպրոցի աշակերտների թիվը 532 է, մանկավարժական կոլեկտիվում աշխատում է 51 ուսուցիչ:

## Գորիսի №4 ավագ դպրոց

Գորիս քաղաքի №4 դպրոցը՝ որպես միջնակարգ դպրոց, հիմնվել է 1968թ.: Դրանից առաջ եղել է ութամյա: 1968թ. տնօրեն է եղել Անդրանիկ Բուդաղյանը, այնուհետեւ՝ Սերոբ Հովսեփյանը, Մելսիկ Ավետյանը, Էդիկ Գրիգորյանը, Արմինե Շեգունցը: Դպրոցը 2004թ. փակվել է: 2006թ. դեկտեմբերի 1-ից վերաբացվել է որպես Գորիսի պետական համալսարանի հենակետային վարժարան: 2009թ. սեպտեմբերից կոչվում է Գորիսի №4 ավագ դպրոց: 2005թ. մինչեւ այժմ տնօրենն է Արմինե Շեգունցը: 2010թ. դպրոցում սովորում էր 260 աշակերտ, աշխատում՝ 23 ուսուցիչ:

## Գորիսի №5 հիմնական դպրոց

Հիմնադրվել է 1970թ.: Առաջին տնօրենը եղել է Արշակ Սարգսյանը (1970-1983թթ.): Այնուհետեւ՝ Սեդրակ Հասրաթյանը՝ 1983-1989թթ., Շավարշ Մաթեւոսյանը՝ 1989-1990թթ., Միեր Իսախանյանը՝ 1991-2004թթ., Էդիկ Գրիգորյանը՝ 2004թ.-մ/ա:

Դպրոցում են աշխատել վաստակաշատ մանկավարժներ Սամվել Մալինցյանը, Սիրան Արշակյանը, Մայա Մարիոնովան, Գրետա Մանվելյանը, Հենրիկ Հայրապետյանը, Լարիսա Գյուլնազարյանը:

Աշակերտների թիվը 187 է, ուսուցիչների թիվը՝ 28:

## Գորիսի Սերո Խանզադյանի անվան №6 հիմնական դպրոց

Հիմնադրվել է 1921թ. սեպտեմբերի 19-ին՝ որպես քաղաքի երկրորդ յոթնամյա կրթօջախ: Այն տեղավորված էր ներկայիս հյուրանոցից ձախ գտնվող երկհարկանի շենքում: 1962թ. դպրոցը տեղափոխվել է Գորիսի պետական դրամատիկական թատրոնի նախկին շենքը՝ զբաղեցնելով առաջին երկու հարկերը, որ գտնվում էր այժմյան հյուրանոցի տեղում: Սակայն 1968թ. երկրաշարժից խարխլված շենքից այն կրկին փոխադրվեց, այս անգամ՝ գյուղտեխնիկումի հին շենքը: Միայն 1980թ. դեկտեմբերի 10-ին դպրոցը ստացավ իր նոր, հարմարավետ, տիպային շենքը: 1961թ. կրթօջախում բացվել է ռուսական բաժին եւ 1972թ. տվել առաջին շրջանավարտները:

Դպրոցի առաջին վարիչը եղել է Մուշեղ Մկրտչյանը: Առաջին ուսուցիչներն էին Աստղիկ Մելիք-Բաղդասարյանը, Նինա Տեր-Գրիգորյանը, Հեղինե Տեր–Մինասյանը, Վարդանուշ Միրաքյանը: Հետագայում դպրոցում տնօրեն են աշխատել Արամ Մինասյանը (1927-34թթ.), Անտոն Հովհաննիսյանը (1934–38 թթ.), Գուրգեն Մկրտչյանը (1938– 42թթ.), Լեւոն Մարտիրոսյանը (1942–45թթ.), Աշոտ Օհանյանը (1945–52 թթ.), Ռուբեն Պետրոսյանը (1952– 56թթ.), Կոլյա Ղազարյանը (1956–74թթ.), Ջավեն Ստեփանյանը (1974–91 թթ.), Սամվել Հարությունյանը (1991-92թթ.): 1992-ից դպրոցի տնօրենն է Արամայիս Փարսյանը:

2010թ. դպրոցում սովորում էր 461 աշակերտ, աշխատում է 44 ուսուցիչ:

## Գորիսի №1 հատուկ միջն. դպրոց

Դպրոցը (նախկինում թույլ տեսնող երեխաների գիշերօթիկ դպրոց) հիմնադրվել է 1977թ.՝ 95 աշակերտով: Հիմնադիր տնօրենն է եղել Դրաստամատ Օհանյանը, ուսմասվարը՝ Արարատ Այվազյանը: 1990թ. դպրոցը վերանվանվել է սոցիալապես անապահով եւ տեսողության խանգարում ունեցող երեխաների գիշերօթիկ միջնակարգ դպրոց: 2001-2002 ուսումնական տարում դպրոցում սովորող աշակերտների առավելագույն թիվը կազմել է 310: 2005 թվականից դպրոցը կոչվում է №1 հատուկ միջնակարգ դպրոց, որտեղ ընդգրկված է ծնողազուրկ, ծնողական խնամքից զրկված եւ տեսողական խանգարումներ ունեցող 276 աշակերտ:

Այժմ դպրոցի տնօրենն է Վլադիկ Շալունցը: Դպրոցում աշխատում է 60 մանկավարժ:

Շարունակությունը՝ էջ 84

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

# Գորիսի էներգետիկայի պատմություն

ՍԱՍՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Որոտանի հէկերի համակարգ» ՓԲԸ տնօրեն



Էլեկտրական էներգիայի օգտագործման ուղղությամբ առաջին քայլերը կատարվեցին XIX դարի 70-80-ական թվականներին՝ կապված արեւմտյան երկրներում եւ Ռուսաստանում էլեկտրատեխնիկայի բնագավառում կատարված հայտնագործությունների հետ: Մասնավորապես, ժամանակաշրջանի վրա մեծ տպավորություն թողեց աղեղնային եւ շիկացման թելիկով էլեկտրալամպերի հայտնագործումը: Այս գյուտը խթան հանդիսացավ լուծելու էլեկտրական էներգիայի ստացման, տեղափոխման եւ մի քանի սպառիչների միացման խնդիրները, ինչը հետագայում անվանվեց կենտրոնական էներգամատակարարում: Առաջին էլեկտրական սարքավորումները եղել են «տնային» էլեկտրակայանները, որոնք, իրենց հզորությանը համապատասխան, ունեցել են մեկից մինչեւ հարյուր սպառողներ: Այդ սպառողները հիմնականում առեւտրային ու կառավարական հիմնարկներն էին կամ փողոցների ու հրապարակների լուսավորման ցանցերը: Ռուսական կայսրության տարածքում առաջին էլեկտրակայանը կառուցվել է 1886թ. Օդեսայում, որն ուներ 160կվտ հզորություն: Այս եւ հետագայում կառուցված էլեկտրակայանները շոգեշարժիչներով աշխատող տուրբիններ էին: Նույն ժամանակաշրջանում արեւմտյան որոշ երկրներում՝ Ամերիկա, Շվեյցարիա, Ֆրանսիա եւ այլն, արդեն օգտագործում էին գետերի, ջրվեժների ջրի պոտենցիալ էներգիան:

Գորիսում էլեկտրաէներգիայի արտադրության սկզբնավորումը կապված էր նրա՝ գավառի կենտրոն դառնալու հետ: XIX դարի առաջին կեսին առեւտրական խաչուղիների կենտրոնի իմաստով Գորիսի լուրջ մրցակից էր Բռնակոթ մելիքանիստ գյուղը, որը գտնվում էր Նախիջեւանից եկող Մեծ աղի ճանապարհի վրա: Երբ 1829 թվականին Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո ռուս-պարսկական սահմանը հետ քաշվեց մինչեւ Արաքս գետը, եւ հեշտացավ Մեղրու վրայով Թավրիզի հետ անմիջական կապը, իսկ Նախիջեւանը կորցրեց իր նախկին առեւտրատնտեսական նշանակությունը, Աղի ճանապարհը մղվեց երկրորդական պլան: Այս հանգամանքով պայմանավորված Սիսիանի Բիչանակի լեռնանցքով կառուցվելիք ճանապարհը նախատեսվեց կառուցել Բռնակոթից եւ այժմյան Սիսիանից ավելի հյուսիս՝ Եռաբլրի տարածքով: Օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված առեւտրատնտեսական մայրուղիների նման փոփոխության պայմաններում որպես գավառի կենտրոն նախընտրվեց Գորիս գյուղը, որը հետագայում մշակված յուրօրինակ ճարտարապետական պլանով վերածվեց քաղաքի:

Զանգեզուր գավառի վարչական կենտրոնի վերածվելը վճռական նշանակություն ունեցավ Գորիսի հետագա զարգացման համար: Կարճ ժամանակընթացքում քաղաքում հիմնվեցին բաց շուկա, հանրապետությունում առաջին քաղաքային գրքսայգիներից մեկը, առանձնացվեց ընդարձակ քաղաքային հրապարակը, ծեւավորվեցին լայն փողոցներով առանձին թաղերը, կառուցվեցին առեւտրի հանրահայտ կենտրոնը (պասաժը), պետական, հասարակական, մշակութային եւ կրթական հիմնարկների համար բազմաթիվ շենքեր՝ յուրօրինակ ճարտարապետությամբ:

Քաղաքի տնտեսական կյանքն ավելի աշխուժացավ 1882թ. Թիֆլիս-Բաքու երկաթգծի կառուցումից հետո, երբ Շուշիի հետ կապող խճուղով Գորիսը Եվլախ կայարանով կապվեց ռուսական կայսրության ներքին շուկայի հետ:

Արդեն 1885թ. Գորիսում կառուցված էր 55 տուն, 124 խանութ: Քաղաքային կյանքի ակտիվացմանը զուգահեռ, քաղաքի էլեկտրական լամպերով լուսավորման հարցը հուզեց արդեն բավականին հարստացած առեւտրական ու պաշտոնական խավին, որի ներկայացուցիչներն էլ 1898թ. նախաձեռնեցին առաջին հիդրոէլեկտրակայանի շինարարությունը Գորիս քաղաքի հարավային հատվածում՝ Լաստի խուլթի ստորոտում, Վարարակն գետի վրա: Հիմնական նախաձեռնողներն էին քաղաքի մեծահարուստներ Գալուստ եւ Ալեքսան Միրումյան եղբայրները: Այս հիդրոէլեկտրակայանի սարքավորումները Բաքվից գնում եւ Գորիս են տեղափոխում շինուհայրցի բարեգործ Ավագ Պետրոսյանը՝ իր եղբայրներ Գրիգորի եւ Սարգսի հետ:

Հիդրոէլեկտրակայանի գործարկումը տեղի ունեցավ 1903թ., որը մեծ իրադարձություն էր թե՛ քաղաքի, թե՛ տարածաշրջանի համար: Կայանն ուներ 100 լամպի հզորություն եւ հիմնականում նախատեսված էր՝ բավարարելու քաղաքի պաշտոնյաների ու մեծահարուստների բնակարանների լուսավորման պահանջները:

Ա.Բակունցը «Բրուտի տղան» պատմվածքում իրեն հատուկ գեղարվեստական նուրբ պատկերավորությամբ է ներկայացնում առաջին էլեկտրակայանը եւ էլեկտրական լույսի ու միջնադարյան կավե ճրագի հակադրությունը, հնի եւ նորի հակադրության հիմնագույնի վրա: Ահա մի դրվագ գեղարվեստական այդ պատմությունից. **«Ներքեւը, որտեղ հին մարագներն են, առավոտ կանուխ հավաքվում են մշակները: Անդոն նրանց հետ է: Քար են ջարդում եւ պայթեցնում քարափները նոր առվի համար: Անդոն գիշերը քնում է տախտակների վրա եւ հսկում մուրճերի, քլունգների կույտը:**

**«Իլիստրիկի» (էլեկտրակայան) են կառուցում Բաղիրովի տղաները: …Նրանց մեծ եղբայրը Բաքվում հարստություն էր դիզել եւ վերադարձել մեր քաղաքը՝ էլեկտրակայան կառուցելու քարափի տակ, որտեղ գետը սահանքներ է գոյացնում»:**

Պատմվածքի մեկ այլ հատվածում նկարագրում է էլեկտրակայանն այսպես. **«Դամուրի ավերակ մարագը, որ կենդանացել է, խորացել, որովհետեւ ներսը մեքենաներ են դարսել եւ պողպատներ հագցրել ժայռերին: Հիմա բանտարկված գազանի նման մոտորը մռնչում է խունավ քարանձավում, որի կտուրից ջուր է կաթկթում:**

**…Անդոն կփաթաթվի մեքենայի ծածկոցի մեջ եւ հոգնած աչքերով մինչեւ լույս կնայի կարմիր լամպին, պղնձյա սլաքներին եւ փոկերին: Հոգնած կոպերը կծանրանան աչքերի վրա, սակայն նրա զգաստ լսողությունը կհետեւի փոկերի աղմուկին»:**

**Մեկ այլ պատկերում մեծ գրողը ներկայացնում է ճրագի եւ էլեկտրական լույսի ներդաշնակ հակադրությունը. «Այսպես անդունդում սուզվում էր մեր Գյունեյ թաղը, երբ իջնում էր խավարը, քաղաքը ողողվում էր առատ լույսով, իսկ գյուղում հանգչում էր վերջին կավե ճրագը:**

**Մարափի գլխից Անդոն նայում էր գյուղի կողմը եւ դառնացած ասում, որ պղնձե լարերը չեն անցնում գետի մյուս ափը, քարերի մեջ կորած մեր խավար գյուղը»:**

Բակունցյան այս պատկերներն ավելի դիպուկ են ներկայացնում Գորիսում էլեկտրաէներգիայի արտադրության սկզբնավորումն ու նրա արդյունքը:

1913թ.՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, Գորիս քաղաքն արդեն լուսավորվում էր էլեկտրականությամբ:

1919թ. Վարարակն գետի վրա սկսվում է 48կվտ հզորությամբ երկրորդ հէկ-ի կառուցումը:

Էլեկտրաէներգիայի արտադրության գծով ծավալուն աշխատանքներ կատարվեցին խորհրդային իշխանության տարիներին: 1930-1938թթ. Վարարակն գետի վրա կառուցվեց 175կվտ հզորությամբ «Գորիս» հէկ-ը, իսկ 1947-50թթ.՝ կառուցվեցին «Ակներ առաջին» եւ «Ակներ երկրորդ» հէկ-երը, որոնց գումարային հզորությունը 750կվտ էր: Այդ հէկ-երը շահագործվեցին մինչեւ 70-ական թվականները: 1954թ. սկսած դրանք միասին արտադրում էին 3.5 միլիոն կվտ/ժամ էլեկտրաէներգիա:

Գորիս քաղաքի եւ շրջանի զարգացող տնտեսությանն անհրաժեշտ էին էլեկտրական էներգիայի նոր աղբյուրներ, եւ 1961թ. սկսվեց Շինուհայրի ենթակայանի կառուցումը: Այն գործարկվեց 1966թ., որի շնորհիվ Զանգեզուրի էներգացանցը միացվեց Հայաստանի էներգահամակարգին:



«ՈՐՈՏԱՆԻ ՀԷԿԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ»
փակ բաժնետիրական ընկերություն
Գորիս, Սուրբ Գրիգոր Տաթեւացու փողոց 2
Հեռախոսներ՝ (0284) 2 27 58, (091) 40 29 22
Համակարգին է բաժին ընկնում հանրապետությունում արտադրվող
էլեկտրաէներգիայի 20.2 %-ը
հիդրոէլեկտրաէներգիայի 50.6 %-ը
Հիդրոտեխնիկական եզակի կառույցների համալիր
Արդիական սարքավորումներ
Աշխատանքային փորձառու կոլեկտիվ
Համաշխարհային համբավ



ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀՍԿԱՆ 1970 ԹՎԱԿԱՆԻՑ

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ


ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ենթակայանը 220կվ օդային գծերով կապվեց կենտրոնի հետ, 110կվ օդային գծերով՝ Տաթեւ հէկ-ի, Կապանի, Քաջարանի, Սիսիանի, Արցախի հետ, 6.35կվ օդային գծերով՝ շրջանի գյուղերի հետ:

1997թ.-ից Շինուհայրի ենթակայանը 220կվ օդային գծով կապվեց Իրանի Իսլամական Հանրապետության էներգահամակարգին եւ ապահովվեց երկու համակարգերի զուգահեռ աշխատանքը:

Էլեկտրաէներգիայի արտադրության զարգացման իմաստով վճռական նշանակություն ունեցավ Որոտանի հէկերի համակարգի կառուցումը:

1954թ.-ից սկսվում են լեռնաշխարհի ջրային ռեսուրսների ուսումնասիրման աշխատանքները, մասնավորապես, արագահոս Որոտան գետի հնարավորությունները, որից հետո որոշվում է նախագծել եւ կառուցել 1300 մետր անկումով եւ տարեկան մոտ 500 միլիոն խորանարդ մետր ջրերի հաշվարկով Որոտանի հէկերի համակարգը, որը պետք է ընդգրկեր երեք հէկ, չորս ջրամբար, մեկ օրվա կարգավորման ջրավազան, 15կմ ճնշման եւ 28.9կմ ոչ ճնշման թունել, 5.3կմ տուրբինային ջրատար, 4 բանավան եւ այլ օժանդակ կառույցներ:

Որոտանի հէկերի համակարգի կառուցման նախաձեռնողներից ու ջատագովներից մեկը ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, ծնունդով շինուհայրցի Սուրեն Հակոբի Թովմասյանն էր: Օգտագործելով իր մտերմությունը նախկին ԽՍՀՄ կոմունիստական կուսակցության ղեկավարության հետ՝ Թովմասյանը կարողացավ հասնել Որոտանի հէկերի համակարգի շինարարության եւ ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հաստատմանը՝ գործելով հայրենասիրական մեծ սխրանք:

1960-ական թվականների սկզբից խախտելով Որոտանի կիրճի դարավոր անդորրը՝ սկսվում են լեռները գլխատելու, ստորգետնյա ուղիներ բացելու, գետի հունը պատնեշելու աշխատանքները:

Նախ՝ 1961թ. սկսվեց Տաթեւիհէկի շինարարությունը, որը գործարկվեց 1970թ.: Տաթեւի ջրամբարից, որն ունի 13.6 միլիոն խորանարդ մետր տարողություն, ջուրը ոչ ճնշման 18.4կմ երկարությամբ թունելով հասնում է Խոտ գյուղից ներքեւ կառուցված օրվա կարգավորմամբ ջրավազան: Այստեղից 1.9կմ երկարությամբ տուրբինային ջրատարով այն հասցնում է հէկին: Տաթեւիհէկում տեղադրվեցին այդ ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ում եզակի երեք հիդրոագրեգատներ, որոնք միասին ունեին 157200կվտ հզորություն, հաշվարկային 568.8մ ճնշում եւ 33 $м^3$/վրկ ծախս: Տաթեւիհէկի միջին արտադրանքը տարեկան 670 միլիոն կվտ ժամ է:

1962թ.-ից սկսվեցին համակարգի երկրորդ աստիճանի՝ Շամբի հէկի նախագծման աշխատանքները: Շինարարությունը սկսվեց 1968թ. եւ ավարտվեց 1978թ.՝ հէկի գործարկումով: Այդ ընթացքում կառուցվեցին Անգեղակոթի եւ Տոլորսի ջրամբարները, 15կմ երկարությամբ ոչ ճնշման եւ 6.9 երկարությամբ ճնշման թունել, 1.9կմ երկարությամբ տուրբինային ջրատար, 220կվ լարման ենթակայան եւ այլ հարակից կառույցներ: Հէկում տեղադրվեց երկու 85500կվտ հզորությամբ հիդրոագրեգատ: Տոլորսի տարվա կարգավորման ջրամբարի տարողությունը 96 միլիոն մետր խորանարդ է, իսկ պատվարի բարձրությունը՝ 68մ: Շամբի հէկի արտադրանքը կազմում է տարեկան 330 միլիոն կվտ/ժամ:

Համակարգի առաջին աստիճանի՝ Սպանդարյան հէկի նախագծման աշխատանքները սկսվեցին 1963թ., իսկ շինարարությունը՝ 1978թ.: Այն գործարկվեց 1989թ.: Սպանդարյանի ջրամբարն ունի 257 միլիոն մետր խորանարդ ջրատարողություն, իսկ պատվարի բարձրությունը հասնում է 83մ-ի:

Սպանդարյանի ջրամբարից 8.1կմ երկարությամբ ճնշման թունելով եւ 2098մ տուրբինային ջրատարով ջուրը հասցվում է հէկի տուրբիններին: Հէկում տեղադրված են երկու 38000կվտ հզորությամբ հիդրոագրեգատներ, որոնք տարեկան արտադրում են 157 միլիոն կվտ/ժամ էլեկտրաէներգիա:

Որոտանի հէկերի համակարգում շահագործման սկզբից առ այսօր արտադրվել է շուրջ 32 միլիարդ կվտ/ժամ էժան էլեկտրաէներգիա: Համակարգը պատասխանատու է հայկական էներգահամակարգի կայունության եւ հաճախականության կարգավորման համար: Համակարգի Տաթեւիհէկը, լինելով պիկային էլեկտրակայան, այսօր միակն է, որ կարգավորում է էներգահամակարգի ակտիվ բեռը: Բացի դրանից, Որոտանի հէկերի համակարգն է իրականացնում Հայաստանի եւ Իրանի միջեւ կնքված սեզոնային փոխհոսքի պայմանագրի պայմանները՝ ծմռան ժամանակաշրջանում ապահովելով էլեկտրաէներգիայի աճող պահանջարկը: Որոտանի հէկերի համակարգում շահագործվող ագրեգատների եւ սարքավորումների տեխնիկական վիճակի պահպանման եւ նորացման ուղղությամբ կատարվել է բավականին մեծ աշխատանք, որի արդյունքում բարձրացվել է համակարգի հուսալիության աստիճանը, կրճատվել վերանորոգումների քանակը, ավելացել էլեկտրաէներգիայի արտադրանքը: 2003թ. Որոտանի հէկերի համակարգի վերակառուցման «Tasis» ծրագրով «Fichner» ընկերության միջոցով իրականացվել է 2.7 միլիոն եվրոյի աշխատանք, որի հիմնական մասով փոխվել եւ վերակառուցվել են Տաթեւիհէկ-ի արագության կարգավորիչները: 2007թ.-ից գերմանական «KFW» ընկերության հետ ֆինանսական համագործակցության շրջանակներում նախատեսվում է ագրեգատների եւ սարքավորումների փոխարինման եւ վերակառուցման աշխատանքներ իրականացնել համակարգի երեք՝ Տաթեւ, Շամբ եւ Սպանդարյան հէկ-երում: Այդ ծրագրի բյուջեն կազմում է ավելի քան 51 միլիոն եվրո: Ծրագիրը կիրագործվի 2010-2016թթ. ընթացքում:

Որոտանի հէկերի համակարգի կոլեկտիվն այսօր ունի 230 աշխատող: Մինչեւ կոլեկտիվի ծեւավորումը, 1960թ.-ից ստեղծվեց պատվիրատու կազմակերպություն, որի առաջին տնօրենը եղել է ծնունդով կապանցի, գործարար եւ կենսախինդ Օնիկ Վաղարշակի Դավթյանը: Ղեկավարելով կազմակերպությունը՝ նա կարողացել է այդ ընթացքում իրականացնել Տաթեւի հիդրոէլեկտրակայանի անհրաժեշտ սարքավորումների ներկրումը, տեղադրումը եւ մոնտաժումը, Շամբի ջրամբարի գործարկումը, Որոտան բանավանի, Սիսիանում եւ Գորիսում վարչական շենքերի կառուցումը:

1978թ.-ից նրան փոխարինել է Մելս Մուշեղի Բարխուդարյանը՝ լրջախոհ ու շրջահայաց, փորձառու շինարար-ինժեներ: Տասնմեկ տարի աշխատելով որպես տնօրեն՝ նա այդ ընթացքում շահագործում է երկու հէկ, ջրամբարներ եւ կարեւորագույն այլ կառույցներ: Այսօր էլ վաստակաշատ շինարար-ինժեները շարունակում է աշխատել համակարգում՝ իր փորձով ու գիտելիքներով նպաստելով նրա բնականոն գործունեությանը:

1970թ.-ից ստեղծվում է Որոտանի հէկերի համակարգի վարչությունը, որը գլխավորեց Ալեքսանդր Հայրապետի Հայրապետյանը՝ Գորիսի շրջանի Հալիձոր գյուղից: Նա համակարգը ղեկավարել է երեք տարի: Համեմատաբար երկար, 1974-1994թթ. ընթացքում, համակարգի տնօրեն է աշխատել Կառլեն Գրիգորի Առուշանյանը՝ էներգետիկայի բնագավառի բազմափորձ ու կազմակերպված մասնագետներից մեկը: Նրա անվան հետ են կապված շրջանի բազմաթիվ էլեկտրահաղորդման գծերի անցկացման, էներգիայի անխափան մատակարարման, Շամբի, Սպանդարյանի հէկերի մոնտաժման, կարգաբերման աշխատանքները: Նա Հայաստանի Հանրապետության վաստակավոր էներգետիկ էր եւ արժանացել է կառավարական մի շարք պարգեւների ու մեդալների: Նրան փոխարինել է Հակոբ Դինգչյանը:

2000թ. ապրիլից համակարգի ղեկավարումը վստահվել է տողերիս հեղինակին:

Էներգետիկայի ոլորտում բազմափորձ ու մասնագիտական գիտելիքներով զինված անձնավորության՝ համակարգի գլխավոր ինժեներ Գագիկ Մկրտչյանի հետ միասին անցած 10 տարվա ընթացքում, չնայած տնտեսական դժվարություններին, զգալի աշխատանք ու բարեփոխումներ են կատարվել համակարգում: Վերակառուցվել է Տաթեւի հէկի արագության կարգավորիչը, վերանորոգվել եւ վերականգնվել են հիդրոտեխնիկական կառույցներն ու սարքավորումները: Բարվոք վիճակի են բերվել բոլոր հէկի շենքերը, նրանց օժանդակ շինությունները: Համակարգի գործունեության ճիշտ կազմակերպման արդյունքում կտրուկ կերպով բարձրացվել է աշխատողների աշխատավարձը, մեծ աշխատանք է կատարվել աշխատողների սանհիգիենայի եւ աշխատանքի անվտանգության պայմանների ապահովման ուղղությամբ: Որոտանի հէկերի համակարգի կոլեկտիվն իր շարքերում դաստիարակել ու կոփել է բազմաթիվ մասնագետ կադրեր, որոնք աշխատել եւ այսօր էլ աշխատում են Տաթեւի, Շամբի, Սպանդարյանի հիդրոէլեկտրակայաններում: Նրանք գործիմաց ինժեներներ են, օպերատորներ, փականագործներ, այլ մասնագիտությունների տեր մարդիկ:

Համակարգը Հայաստանի էներգահամակարգի այն կարեւոր օղակն է, որն իր տնտեսական ու ռազմավարական նշանակությամբ առանցքային դերակատարում ունի:

…Մեծ Բակունցի «բրուտի տղան» այլեւս չի տխրի, որ պղնձե լարերը գետի մյուս ափ չեն հասնում, քանի որ վաղուց այն բոլորի համար է...

Լույս լինի ձեր ճամփան, լույսի մարդիկ…

■

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# «Զանգեզուրի հայերը»

## Հատված ներածությունից



ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆ

Զանգեզուրի հայերի կենցաղի նկարագրության առաջին փորձը, այնքանով, որքանով տեղական սովորությունները կարող են ազդած լինել շրջանի տնտեսական կյանքի վրա, պատկանում է Ստեփան Զելինսկուն: Նրան՝ ընդարձակ ծրագրով նախագծած այն հետազոտության մեջ, որը հատուկ մասնաժողովը ձեռնարկել էր Անդրկովկասի բոլոր գավառների արքունի գյուղացիների տնտեսական կացությունն ուսումնասիրելու համար, բաժին էր ընկել Զանգեզուրի գավառի հետազոտությունը: Իր հավաքած հարուստ նյութերն ու դիտողությունները նա ամփոփել է մի ընդարձակ հոդվածի մեջ, որը զետեղված է մասնաժողովի հրատարակած ընդհանուր ժողովածուի առաջին հատորի մեջ՝ «Материалы по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», ապա նույն՝ 1886թ. լույս է ընծայվել առանձին գրքով, հետեւյալ վերնագրով՝ «Исследование экономического быта государственных крестьян в Закавказском уезде Елисаветпольской губернии».

Այդ աշխատության մեջ վերին աստիճանի արժեքավոր նյութեր են պարունակում «Население»-«Բնակչություն» եւ մանավանդ «Источники благосостояния крестьян»-«Գյուղացիների բարօրության աղբյուրները» վերնագրերը կրող 1-ին եւ 7-րդ գլուխները:

Աշխատանքը ղեկավարող մասնաժողովը գործում էր հողագործության մինիստրության Անդրկովկասյան լիազոր Ի.Տիխեեւի անմիջական հսկողության ներքո:

Ավելի վաղ՝ 1881 թվին, մի այլ պետական հիմնարկ՝ Կովկասյան ուսումնաշրջանի վարչությունը, սկսել էր Կովկասի բնակավայրերի եւ ցեղերի վերաբերյալ տեղեկությունների հավաքումը դպրոցական ցանցի աշխատողների, գլխավորապես ուսուցիչների միջոցով: Ստացված նյութերը վարչությունը լույս էր ընծայում առանձին հատորներով՝ «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» ընդհանուր վերնագրի տակ: Այդ ժողովածուի մեջ Զանգեզուրի ազգագրական նկարագրությանը նվիրված առաջին հոդվածը լույս է տեսել 1892թ. հրատարակված XIII գրքում: Դա ուսուցիչ Ն.Գրիգորովի «Село Татев» աշխատությունն էր: Հաջորդ՝ 1893թ. լույս տեսած «Ժողովածուի» XVII գրքի մեջ զետեղված է Արծվանիկ գյուղի դպրոցի ուսուցիչ Եփրեմ Մելիք-Շահնազարյանի հոդվածը, «Из поверий, предрассудков и народных примет армян Зангезурского уезда», որը վերահրատարակվեց 1904թ. XXXIV գրքում՝ անեկդոտներով, օրինանքներով, անեծքներով եւ այլ ֆոլկլորային նյութերով ու կենցաղային նկարագրություններով հարստացրած: Նույն հեղինակը հրատարակեց 1894թ. «Ժողովածուի» XIX գրքում՝ «Свадьбы зангезурских армян» հոդվածի մեջ հարսանեկան սովորությունների մանրամասն նկարագրությունն եւ ապա 1898թ. XXV գրքում «Селение Арцваник Зангезурского уезда Елисаветпольской губернии» գավառի տիպիկ գյուղի կենցաղի ամբողջական պատկերը:

Մի երրորդ հիմնարկ, որի գիտական հետաքրքրությունը ընդգրկել է նաեւ Զանգեզուրի կենցաղը, Կովկասի բժշկական ընկերությունն էր: Ընկերության հրատարակած պարբերական հանդեսի՝ «Медицинский сборник» №LVI-ի մեջ 1894թ. լույս է տեսել բժ. Գեղեվանովի հոդվածը՝ «Зангезурский уезд Елисаветпольской губернии в медицинском отношении», որտեղ հեղինակը բարեխղճորեն կատարած դիտողությունների հիման վրա նկարագրում է ժողովրդական դեղերը եւ նրանց հետ շաղկապված սնահավատությունները:

Առաջինը, որը հատկապես ազգագրական ուսումնասիրության նպատակով եւ համապատասխան գիտական նախապատրաստությամբ ձեռնարկեց Զանգեզուրի հայերի ազգագրական նյութերի սիստեմատիկ հավաքումը, Երվանդ Լալայանն էր: Ինքը, կրկնակի այցելելով հետազոտվող վայրերը եւ տեղում գրանցելով իր դիտողությունները, աշխատանքներին ներգրավելով տեղացի գավառագետներին, կարողացավ հարուստ նյութ հավաքել ժողովրդական կենցաղի զանազան կողմերի մասին: Այդ նյութերի ամփոփումը նա տվեց 1898թ.՝ «Սիսիան» եւ 1899թ.՝ «Զանգեզուր» հոդվածների մեջ, որոնք նախ լույս տեսան «Ազգագրական հանդէս»-ում եւ միաժամանակ արտատպվեցին առանձին գրքերով, որպես Ա եւ Բ հատորներ՝ «Զանգեզուրի գավառ» ընդհանուր վերնագրով: Հաջորդ եւ ժամանակով վերջին հետազոտությունը, որը նվիրված է Զանգեզուրի ազգագրական նկարագրությանը, լույս է տեսել 1931թ. ռուսերեն լեզվով՝ «Научные записки Кавказского коммунистического Университета имени 26-и коммунаров» ժողովածուի I հատորի VI պրակում եւ միաժամանակ արտատպվել առանձին գրքով: Հոդվածը պատկանում է պրոֆ. Գ.Ֆ.Չուրսինի գրչին եւ կրում է «Армяне Зангезура» վերնագիրը: Հետազոտողն այդտեղ լայնորեն օգտագործել է թե՛ այն տվյալները, որ գտել է ռուսերեն եւ հայերեն հրատարակություններում, եւ թե՛ տեղում՝ որպես Անդրկովկասի կենտգործկոմին կից գործող «Ассоциация Востоковедения»-ի կողմից 1924թ. գործուղված գիտարշավի անդամ՝ Զանգեզուրում անձամբ հավաքած տեղեկությունները:

1931 թվականին Հայկական ԽՍՀ պետական պատմական թանգարանի ազգագրական բաժինը կազմակերպեց իր առաջին գիտարշավը դեպի Զանգեզուր, դեպի նրա՝ Սիսիանի եւ Գորիսի վարչական շրջանները՝ իմ ղեկավարությամբ, բաժնի ավագ աշխատակցի՝ Եվգինե Գյոզալյանի եւ լուսանկարչի՝ Սուրեն Զալյանի մասնակցությամբ: Գիտարշավի աշխատանքները տեւեցին 43 օր՝ 1931թ. օգոստոսի 30-ից մինչեւ հոկտեմբերի 11-ը:

Հաջորդ տարին նույն նպատակով Զանգեզուր գործուղվեց Պետական պատմական թանգարանի ազգագրական բաժնի երկրորդ գիտարշավը: Այս անգամ նա պիտի իր աշխատանքները փոխադրեր Կապանի վարչական շրջանը, որը նախորդ տարին անհնարին էր եղել այցելել: Գիտարշավը նույն անձնակազմով, միայն հրավիրված նոր լուսանկարչով (Պողոս Գրիգորյան) սկսեց էքսպոնատների հավաքումը եւ ազգագրական նյութերի գրանցումը Մեղրուց եւ ուղղվելով դեպի հյուսիս՝ Տաշտունի (Դիբագլուի) լեռնանցքով տեղափոխվեց Կապան: Գիտարշավը մեկնեց Երեւանից հունիսի 16-ին եւ վերադարձավ օգոստոսի 9-ին: Երկու գիտարշավների միջոցով թանգարանի Ազգագրական բաժինը ձեռք բերեց ազգագրական առարկաների բավական հարուստ ժողովածու՝ 290 իրերից բաղկացած: Այդ ֆոնդի հիման վրա կազմակերպվեց նախ՝ հաշվետու ցուցահանդես եւ ապա՝ մշտական ցուցադրություն, որտեղ Զանգեզուրի եւ Մեղրու «մահացող» կենցաղային երեւույթներին կից տրված էր մի պատկեր այն արմատական փոփոխությունների, որոնք տեղի են ունենում այդ գավառների նիստուկացի բոլոր ճյուղերի մեջ:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Ուրվագիծ Գորիսի կրթական համակարգի պատմության

Հատված մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարեն Սահակյանի համանուն ուսումնասիրությունից

Սկիզբը՝ էջ 81

### Գորիսի պետական քոլեջ

Գորիսի պետական քոլեջը (մանկավարժական ուսումնարանը) հիմնադրվել է ՀԽՍՀ լուսժողկոմատի 1923թ. որոշմամբ: Բացման կազմակերպչական աշխատանքները վստահվել են առաջին տնօրեն Արսեն Առաքելյանին: Ուսումնարանը սկզբում ուներ դպրոցական, այնուհետեւ՝ նախադպրոցական բաժիններ: Առաջին դասատուներից էին Հմայակ Թարախչյանը, Հայկուշ Թումանյանը, Իսահակ Իսահակյանը եւ ուրիշներ: Մանկավարժական ուսումնարանի առաջին սաներից էին Աշոտ Հարությունյանը (պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Արսեն Ամարյանը (տնտես. գիտ. թեկածու, դոցենտ), գրողներ Սերո Խանզադյանը, Սուրեն Այվազյանը, կենսաբանական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահան Ղազարյանը: Գիտական մեծ ճանապարհ անցան նաեւ մյուս սաները՝ Քաջիկ Օհանյան՝ ակադեմիկոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ալեքսանդր Մարգարյան՝ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Աշոտ Գյուլխասյան՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Անդրանիկ Բաղդասարյան՝ աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Աշոտ Թելունց՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գաբրիել Խաչատրյան՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Աշոտ Հարությունյան՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վլադիմիր Ալեքսանյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Նինա Հովսեփյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ռոզա Ղահրամանյանը՝ բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ (15,8):

Այնուհետեւ ուսումնարանում բացվում են «Գրադարանային բաժին», «Աշխատանքի ուսուցում», «Գործավարություն եւ արխիվավարություն», «Երաժշտական դաստիարակություն», «Անգլերեն լեզու» եւ այլ մասնագիտություններ:

Քոլեջում սովորողների կրթության ու դաստիարակության գործում իրենց ավանդն են ունեցել այնպիսի ճանաչված մասնագետներ, ինչպիսիք են՝ Դրաստամատ Օհանյանը, Արշակ Դավթյանը, Արտավազդ Յոլյանը, Ժենյա Բաղդասարյանը, Ռոզա Հովսեփյանը, Իվան Իվանյանը, Ռաիսա Բակունցը, Լենա Տոռոզյանը, Օլյա Գիչունցը, Գագիկ Հակոբջանյանը, Վալյա Հովհաննիսյանը, ուրիշներ:

Քոլեջում տնօրեն են աշխատել Արսեն Առաքելյանը, Հմայակ Թարախչյանը, Հովհաննես Հայրապետյանը, Սաղաթել Քեշիշյանը, Բագրատ Ներսիսյանը, Երվանդ Մինասյանը, Սերոբ Բարխուդարյանը, Ասյա Ծատրյանը, Անդրանիկ Բուդաղյանը, Դրաստամատ Օհանյանը, Ագնեսա Դարբինյանը:

2009թ. ապրիլից քոլեջի տնօրենն է Կարեն Լազարյանը:

Ուսանողների թիվը 245 է, դասախոսների թիվը՝ 30: Քոլեջում գործում են հետեւյալ բաժինները՝ հայոց լեզվի դասավանդում, ռուսաց լեզվի դասավանդում, օտար լեզվի դասավանդում, նախադպրոցական կրթություն, ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ, հաշվողական տեխնիկա եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, քույրական գործ, մանկաբարձական գործ, վարսավիրական գործ եւ այլն:

### Գյուղատնտեսական քոլեջ

Ելնելով գյուղատնտեսության միջին օղակի կադրերի պատրաստման անհրաժեշտությունից՝ 1931թ. ՀԽՍՀ կառավարության որոշմամբ բացվեց Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումը՝ զոոտեխնիկական մասնագիտությամբ, հինգ հոգուց բաղկացած մանկավարժական կազմով: 1934թ. բացվում են նաեւ ագրոնոմիական եւ անասնաբուժական բաժիններ: Սովորողները հիմնականում Գորիսից էին, Կապանից, Մեղրուց, Սիսիանից, Վայքից, Եղեգնաձորից, Արարատյան դաշտավայրից եւ Լեռնային Ղարաբաղից: 1960-ական թվականներին բացվում են գյուղմեքենայացման, մեքենաների տեխնիկական սպասարկման եւ շահագործման, պտղաբուծական, մեղվաբուծական եւ հաշվապահական մասնագիտություններ: 1961թ. բացվում են վերոնշյալ մասնագիտությունների հեռակա բաժինները: Գյուղտեխնիկումը վերելք ապրեց 1970-ական թվականներին, երբ շահագործման հանձնվեց տիպային նախագծով կառուցված բազմահարկ շենքը: 1973թ. կառավարության որոշմամբ տեխնիկումը միացվեց Վերիշենի սովխոզին եւ վերանվանվեց Վերիշենի սովխոզ-տեխնիկում: 1993թ. տեխնիկումը նորից առանձնացավ: 2001թ. տեխնիկումին միացավ արհեստագործական ուսումնարանը եւ դարձավ Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ:

Ներկայումս քոլեջը պատրաստում է գյուղատնտեսության միջին օղակի կադրեր վեց մասնագիտությունների գծով:

Այժմ Գորիսի գյուղատնտեսական քոլեջի տնօրենն է Սուրիկ Ավետիսյանը:

### Գորիսի պետական համալսարան

Մանկավարժական կադրերի պատրաստումն ընդլայնելու եւ գյուղական վայրերում հանրակրթական դպրոցների ուսուցիչներ ապահովելու նպատակով ՀՍՍՀ մինիստրների խորհրդի 1967թ. հոկտեմբերի 1-ի որոշմամբ Գորիսում բացվեց Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղ՝ մաթեմատիկա եւ ֆիզիկա ֆակուլտետներով: Առաջին տարում մաթեմատիկայի ֆակուլտետ ընդունվեցին 76, ֆիզիկայի ֆակուլտետ՝ 71 հոգի: 1971թ. մասնաճյուղը տվեց առաջին շրջանավարտները: Բարձրագույն կրթությամբ 147 մանկավարժներ աշխատանքի անցան հանրապետության դպրոցներում:

Դասախոսություններ կարդալու էին հրավիրվում դոկտոր-պրոֆեսորներ Ա.Բագդոեւը, Գ.Բաղդասարյանը, Ն.Առաքելյանը, Դ.Դավթյանը, Պ.Սահակյանը, Ա.Պողոսյանը, ճանաչված գիտնականներ Է.Չուբարյանը, Վ.Ասլանյանը, Գ.Վիրաբյանը, Յու.Վարդանյանը, Ֆ.Շամոյանը, Ն.Ենգիբարյանը, ուրիշներ:

Կոլեկտիվում մեծ հեղինակություն են վայելել նաեւ տեղացի կադրերը:

Տարեցտարի ավելացավ շրջանավարտների թիվը, 1984թ. այն հասավ 1742-ի, որի շնորհիվ բարձրագույն կրթությամբ մանկավարժներով լիովին ապահովվեցին հանրակրթական դպրոցների պահանջները տարածաշրջանում: Մասնաճյուղը կատարեց իր առջեւ դրված պատվավոր առաքելությունը:

Ելնելով Սյունիքի տարածաշրջանում արդյունաբերության զարգացման շահերից, ինժեներական կադրերի պատրաստման պահանջներից՝ հանրապետության կառավարության որոշումով 1984թ. սեպտեմբերից Երեւանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը վերակազմավորվեց Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղի, 1992թ.-ից՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մասնաճյուղի: Պոլիտեխնիկականի մասնաճյուղի տնօրեն նշանակվեց տեխ. գ/թ, դոցենտ Ա.Սահրադյանը, որի ղեկավարության տարիներին մեծ աշխուժությամբ կազմակերպվեցին մասնաճյուղի բոլոր օղակների աշխատանքները: Կրթօջախի պատմության մեջ չեն մոռացվի այն տնօրենները, որոնցից յուրաքանչյուրը մասնաճյուղի հիմնախնդիրները լուծել է յուրովի եւ դրանով մի քար ավելացրել կրթօջախի 43 տարվա գոյությանը: Նրանք են Շ.Սահակյանը, Լ.Մինասյանը, Քր.Պետրոսյանը, Շ.Օհանջանյանը, Վ.Բաղդագուլյանը, Տ.Այվազյանը, Ա.Սահրադյանը, Յու. Սաֆարյանը: ԲՈւՀ-ը, գործելով ՀՀ ամենահեղինակավոր բուհերից մեկի՝ ՀՊՃՀ-ի համակարգում, ձեռք բերեց բուհական գործունեության հսկայական փորձ եւ կուտակեց որոշակի ներուժ՝ այսուհետեւ գործելու որպես ինքնուրույն պետական համալսարան: ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի թիվ 2400-Ն որոշումով դադարեցվեց ՀՊՃՀ ԳՄ-ի գործունեությունը եւ նրա բազայի վրա ստեղծվեց «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը, որի ռեկտոր ընտրվեց մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յուրի Սաֆարյանը:

Այսօր Գորիսի պետական համալսարանում գործում է հինգ ֆակուլտետ՝ ■ Ճարտարագիտական մասնագիտությունների (դեկան՝տեխ. գ/թ, դոցենտ Ա.Դինգչյան), ■ Մանկավարժական հումանիտար մասնագիտությունների (դեկան՝ մանկ. գ/թ, դոցենտ Կ.Սահակյան), ■ Մանկավարժական բնագիտական մասնագիտությունների (դեկան՝ ֆիզ. մաթ. գ/թ, դոցենտ Կ.Մովսիսյան), ■ Պատմաիրավագիտության ֆակուլտետ (դեկան՝ իրավ. գ./թ, դոցենտ Մ.Ջիլֆուղարյան), ■ Տնտեսագիտության ֆակուլտետ (դեկան՝ տնտ. գ/թ, դոցենտ Հ.Հովսեփյան):

Համալսարանում գործում են 12 ամբիոններ, որոնք ունեն բոլոր պայմանները նորմալ ուսումնական գործընթաց կազմակերպելու եւ բարձր որակավորմամբ շրջանավարտներ պատրաստելու համար: Համալսարանն ունի 2 ուսումնական մասնաշենք՝ իրենց բոլոր հարմարություններով (համակարգչային լսարաններ, լաբորատորիաներ, մասնագիտական կաբինետներ, էլեկտրոնային ընթերցասրահ եւ այլն), երկու համակարգչային կենտրոն, երկու ուսումնական կաբինետ (Ալ.Մարգարյանի եւ Ստ.Օրբելյանի անվան), երկու ընթերցասրահ, ուսանողական ճաշարանի եւ հանրակացարանի շենքեր: Համալսարանում գործում է ինտերնետային կենտրոն:

Վեց մասնագիտությունների գծով համալսարանում գործում է մագիստրական ուսուցում՝ 88 ուսանողով:

Այսօր համալսարանում սովորում են 1800-ից ավելի ուսանողներ:



Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցի շենքը: Անկախության 64:



Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

Պիոներ-դպրոցականների նախկին պալատի շենքը (Ավանգարդ 1): Ներկայումս այստեղ են տեղակայված Շ.Ազնավուրի անվան երաժշտական դպրոցը, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի մասնաճյուղը:

**Օգտագործված գրականության ցանկ**

13. Խուդոյան Ս., Արեւելահայ դպրոցները 1830-1920թթ., Երեւան, 1987:
14. Սիմոնյան Ց., Սարգսյան Ա., Հայ մանկավարժական մտքի պատմության քրեստոմատիա, գիրք առաջին, Երեւան, «Մանկավարժ», 2007:
15. Պետրոսյան Քր., Քարահունջից դեպի լույս, Երեւան, 1966:
16. Պետրոսյան Քր., Լեռնաշխարհի վերածնունդը, Երեւան, «Հայաստան», 1973:
17. Դարբինյան Ա., Վաստակած այցեքարտ՝ պարզած գալիքին, Երեւան, 2003:
18. Միրզոյան Հ., Հայրենի եզերք, Երեւան, «Հրազդան», 2000:

■


№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՄՇԱԿՈՒՅԹ

# Գորիսի թատրոնի պատմություն



ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գորիսի պետական դրամատիկական թատրոնի տնօրեն

Հայ թատրոնի պատմագիրները սովորաբար Հայաստանում թատրոնի ծագումը կապում են հելլենիզմի զարգացման հետ: Սակայն հայ թատրոնի ակունքները պետք է որոնել հայ ժողովրդի ընդերքում եւ շատ ավելի վաղ ժամանակում, քան հելլենիզմի դարաշրջանը: Չխորանալով հայ թատրոնի պատմության, նրա առաջացման ժամանակաշրջանի ու մանրամասների մեջ՝ ասենք, որ նրա անբաժան մասնիկն է կազմում նաեւ Գորիսի թատրոնը, որի ծագման պատմությունը սկսում է հարյուրամյակների խորքից: Այդ են վկայում հին Գորիսի՝ քարանձավային բնակավայրում գտնվող ժայռափոր թատրոնը, որը պահպանվել ու մեզ է հասել իր բեմով, նստելատեղերով եւ հարդասենյակներով: Այս ժայռափոր թատրոնում, ինչպես պատմում է հին Գորիսի դպրոցում աշխատած դասատու, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Մուշեղ Ադունցը, տեղի թատերասերների ուժերով լինում էին զանազան ներկայացումներ, աշուղների մրցույթներ, որոնք երգերի հետ մեկտեղ ցուցադրում էին յուրօրինակ թատերական խաղի դրվագներ՝ զանազան շարժուձեւերի ուղեկցությամբ:

Գորիսի տարեցների վկայությամբ՝ դեռեւս նախահեղափոխական շրջանում Գորիսում գործել են թատերական ինքնագործ խմբեր, որոնք 1912-1918թթ. բեմադրություններով հանդես են եկել հանդիսատեսի առջեւ:

Թատերական կյանքում լուրջ առաջընթաց նկատվեց Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո: Գորիս քաղաքում, Տաթեւում, Շինուհայրում, Խնածախում, Քարահունջում եւ այլուր, մի քանի նախանձախնդիր մարդկանց նախաձեռնությամբ, ստեղծվեցին ոչ պաշտոնական, որեւէ կազմակերպության չենթարկվող թատերական ինքնագործ խմբեր, որոնց փորձերն անցնում էին անհատական տներում: Գորիսի թատերական ինքնագործ խմբի կազմակերպման գործում երախտիքի մեծ բաժին ուներ Արշակ Մանուչարյանը, ով այն ժամանակ Գորիսի լուսբաժնի վարիչն էր:

20-ական թվականների վերջին ստեղծագործական բեկում սկսվեց: Դրան մեծապես նպաստեցին հայ նշանավոր դերասաններ Ժասմեն եւ Հովհաննես Աբելյանների հյուրախաղերը, որոնք դրականորեն ազդեցին սիրող դերասանների եւ հանդիսատեսի գեղագիտական ճաշակի ձեւավորման վրա: Այդ ժամանակ բեմ բարձրացան «Անուշ», «Պատվի համար», «Կենդանի մեռելներ», «Ամուսնություն», «Դատավճիռ» եւ այլ պիեսներ, որոնք նպաստեցին դերասանների պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացմանը:

Գորիս քաղաքում եւ գյուղական բնակավայրերում թատերական ինքնագործ խմբերի թիվը զգալիորեն ավելացավ գյուղական խորհուրդների (1923-24թթ.) ստեղծումից հետո, ապա եւ կոլտնտեսային համատարած շարժումից (1929-31թթ.) հետո: Դա պայմանավորված էր նրանով, որ թատերական խմբակները ոչ միայն գործում էին գյուղական ակումբներին կից կամ կոլտնտեսություններում, այլեւ նրանով, որ խորհուրդներն ու կոլվարչությունները բազմակողմանի նյութական ու բարոյական օգնություն էին ցուցաբերում խմբերին, աջակցում ժողովրդական ինքնագործունեությանը:

1931թ. Բաքվից Գորիս է գալիս եւ պրոֆակումբի վարիչ նշանակվում Բագրատ Ալեքսանյանը, ով ձեռնամուխ է լինում Գորիսի թատերախմբի կազմավորմանը: Կոլեկտիվի մեջ են մտնում նոր անդամներ՝ Վաղարշակ Խուրշուդյանը, Սերյոժա Կարապետյանը, Քալանթար Քալանթարյանը, Համո Ղազարյանը, Միշա Յոլյանը, Իսկուհի Հակոբյանը, Արեւհատ Նազարյանը եւ այլք, որոնք թարմություն են մտցնում թատերական կյանքում:

Բագրատ Ալեքսանյանի ղեկավարությամբ բեմադրվում են «Մորգանի խնամին», «Պատվի համար», «Նամուս», «Պեպո», «Չար ոգի» պիեսները:

1932թ. թատերախումբը համալրվում է նոր ուժերով. Եվգենիա Յուզբաշյան, Շուշանիկ Հովհաննիսյան, Մարո Ժամհարյան, Ամալյա ու Հակոբ Քյարունցներ եւ այլք: 1935թ. ներկայացվեց ին «Քաջ Նազար», «Տմբլաչի Խաչան», «Խաչանը՝ Փարիզում» կատակերգությունները, որոնցում գլխավոր դերում հանդես եկավ Հովհաննես Մկրտչյանը՝ վերջին երկու պիեսների հեղինակը: 1936թ. մոտ երեք ամիս թատերախումբը չգործեց: Մշակութային խոշոր իրադարձություն էր դրամատիկական թատրոնի բացումը, որը Գորիսի Լուսբաժնին կից ստեղծվեց 1936թ. մարտին: Թատրոնի ռեժիսորն էր Արշակ Մանուչարյանը, իսկ դերասանական կազմում ընդգրկված էին Լուսյա Մանուչարյանը, Բագրատ Ալեքսանյանը, Վաղարշակ Խուրշուդյանը, Մանուկզադեն, Հակոբ Քյարունցը, Արեւհատ Նազարյանը, Գրիգոր Մանուչարյանը, Զաքար Ներսիսյանը, Մարո Ժամհարյանը, Աշոտ Առուստամյանը, Արշալույս Բեգլարյանը, Սերյոժա Կարապետյանը, Սաթենիկ Կարապետյանը, Շուշանիկ Բաղդասարյանը, Միշա Յոլյանը, Քալանթար Քալանթարյանը, Մուշեղ Հովհաննիսյանը: Նրանք հիմնականում սիրող դերասաններ էին՝ մանկավարժներ, մտավորականության ներկայացուցիչներ, ովքեր հոգեպես կապված էին թատրոնին, իսկ ոմանք էլ մինչեւ իրենց կյանքի վերջը նվիրված մնացին թատերական արվեստին:

Առաջին ներկայացումը, որ հանձնվեց հանդիսականի քննությանը, Ա.Աբելյանի «Պըլը-Պուղի» պիեսն էր, իսկ երկրորդը՝ «Նամուսը»:

1936թ. «Նամուսից» հետո Գորիսի դրամատիկական թատրոնը բեմադրեց նաեւ Ֆիրդուսու «Շահնամե», Շիրվանզադեի «Եվգինե», Նար-Դոսի «Սպանված աղավնի», «Խանում» գործերը:

1938թ. սեպտեմբերին կազմավորվեց Գորիսի պետական շրջանային թատրոնը, եւ ռեժիսոր նշանակվեց Կարո Վարդանյանը: ՀԽՍՀ ժողկոմխորհի 1938թ. սեպտեմբերի 4-ի որոշմամբ՝ տարվա համար թատրոնին հատկացվեց 60000 ռուբլի, որն ապահովեց բեմադրական աշխատանքների իրականացումը:



Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

Գորիսի պետական դրամատիկական թատրոնի շենքը, Կիմիտասի 28:

Շրջանային գործադիր կոմիտեի որոշմամբ թատրոնին տրամադրվեց շենք (կուլտուրայի տունը), որտեղ կատարվեցին ընթացիկ նորոգումներ: Թատրոնի դերասանական խմբում ընդունվեցին մի շարք նոր դերասան-կատարողներ, որոնք և՛ տեղացիներ էին, և՛ մայրաքաղաքից ժամանածներ: Նախկին 12 սիրող դերասանների փոխարեն թատրոնն ապահովվեց 23 պրոֆեսիոնալ դերասանով: Նրանց ուժերով բեմադրվեցին նոր պիեսներ, հյուրախաղեր կազմակերպվեցին հարեւան շրջաններում: 1940թ. հունիս, հուլիս ամիսներին թատրոնն առաջին անգամ հյուրախաղեր ունեցավ Սիսիանի շրջանում հետեւյալ խաղացանկով՝ «Պաղտասար աղբար», «Սեւիլ», «Նամուս», «Անպարտելին», «Բեկում», «Խնդության սրինգ»: 1939թ. Գորիսի թատրոնն արդեն պրոֆեսիոնալ թատրոն էր: 1940թ. հոկտեմբերին թատրոնի գլխավոր ռեժիսոր նշանակվեց Ցոլակ Ներսիսյանը, իսկ տնօրեն՝ Քարահունջ գյուղից մանկավարժ Անդրանիկ Բաղդասարյանը: Այդ թվականի հոկտեմբերին հանդիսատեսին հանձնվեց Հ.Մանվելյանի «Հայրը» պիեսը, որով սկսվեց նոր թատերաշրջանը: «Երեւակայական հիվանդ» պիեսի ներկայացումով ավարտվեց 1940թ. թատերաշրջանը:

Թատրոնի հաջորդ խաղաշրջանը սկսվեց Օստրովսկու «Անմեղ մեղավորներ» պիեսի ներկայացմամբ, որը Գորիսում բեմ հանվեց տարվա վերջին օրը՝ 1940թ. դեկտեմբերի 31-ին, ռեժիսոր Ց.Նիկողոսյանի ղեկավարությամբ: 1941թ. մայիսի 20-ից հունվարի 1-ը թատրոնը երկու բրիգադով ներկայացումների եւ համերգների մեկնեց գյուղեր:

Թատրոնում շատ ամուր էր աշխատանքային կարգապահությունը, եւ չէր հանդուրժվում ոչ մի թերացում:

Գյուղական հյուրախաղերի ընթացքում թատրոնի առաջատար դերասաններից մեկը՝ Կարո Ջանանյանը, թերանում էր ցուցադրել իր արտիստական ողջ կարողությունը եւ խաղում էր իմիջիայլոց: Հյուրախաղերի կեսում նրան հետ կանչեցին՝ «խալտուրչիկ» մականունը կպցնելով, իսկ շրջանային թերթը գրեց այդ մասին:

Հայրենական մեծ պատերազմը ծանր հարված հասցրեց ոչ միայն թատրոնին, այլեւ ամբողջ մշակույթին ընդհանրապես: Դերասանական կոլեկտիվի անդամներից ոմանք մեկնեցին ռազմաճակատ, մյուսները միացան կռվող բանակին թիկունքից օգնող մարդկանց: Ամբողջապես վերափոխվեց խաղացանկը, առաջին պլան մղվեց հայրենասիրական թեման, որով էլ թատրոնի կոլեկտիվն իր ներդրումն ունեցավ թիկունքի հանդիսատեսի մոտ հաղթանակի նկատմամբ հավատն ամրապնդելու, մարդկանց ոգեւորելու գործում:

1941-1945թթ. Գորիսի թատրոնը բեմադրել է Ն.Զարյանի «Վրեժ», Կ.Յաշչյանի «Զոյա», Ա.Գուլակյանի «Ցասում», Մ.Քոչարյանի «Ռաիսա Տարասովա» եւ այլ հայրենասիրական պիեսներ:

1942թ. սկսած թատրոնը սպասարկում էր նաեւ Կապանի շրջանի աշխատավորությանը, Քաջարանի, Օխչու, Լենհանքերի բանվորներին: Հյուրախաղային ելույթներ են կազմակերպվել Լեռնային Ղարաբաղի տարբեր շրջաններում, Նախիջեւանում, Հրազդանում, Գավառում, Վայքում եւ այլ վայրերում:

Այդ դժվար տարիներին թատրոնի կոլեկտիվը բարձր պահեց իր ոգու կորովը, յուրաքանչյուր դերասան ամուր սյուն դարձավ արվեստի այն տաճար-առաստաղի համար, որը, թվում էր, պիտի փլվեր պատերազմի ծանրությունից: Այդ դերասաններից էին Վարդուշ Թամրազյանը, Վաղարշակ Խուրշուդյանը, Սմբատ Ալեքսանյանը եւ ուրիշներ, որոնք դժվարին տարիներին իրենց ուսերին տարան թատրոնի ողջ ծանրությունը՝ պատվով ու պատասխանատվությամբ փոխարինելով ստալինյան տեռորի սեւ օրերին ձերբակալված կամ շրջանից փախած, ինչպես նաեւ ռազմաճակատ մեկնած ընկերներին:

1942թ. թատրոնի դիրեկտոր եւ ռեժիսոր նշանակվեց Սուրեն Միրզոյանը: Նրա ղեկավարությամբ մեկը մյուսի հետեւից բեմ հանվեցին «Ռուս մարդիկ», «Ցասում», «Հայրենիքի համար», «Հրաբխի վրա», «Առերեսում», «Վրեժ», «Շրջկոմի քարտուղարը», «Զոյա» «Այրող դիմակ», «Բարձունք», «Հայրենասիրական դարպասի մոտ» եւ այլ պիեսներ, որոնք կոփում եւ բարձր էին պահում ժողովրդի մարտական ոգին, նրա հաղթական կամքն ու հավատը: Բեմադրվեցին նաեւ պատմական գործեր՝ «Գեւորգ Մարզպետունի» եւ Սերո Խանզադյանի «Վահրամ Որոտնեցի» պիեսները:

1944թ. ապրիլի 20-ին վերադաս մարմինների որոշմամբ՝ Գորիսի պետական թատրոնն անվանակոչվեց հայ մեծ դերասան Վաղարշ Վաղարշյանի անունով, որը մշտական կապ է ունեցել Գորիսի թատրոնի հետ: «Երկիր հայրենին» բեմադրելուց բացի՝ նա հանդես է եկել Գագիկի դերում, թատրոնի հետ շրջել գյուղից գյուղ՝ տանելով իր մեծ արվեստը եւ բարձրացնելով թատրոնի հեղինակությունը: Այդ տարիներին ու հետագայում Վ.Վաղարշյանի օրինակով հայ բեմի մեծանուն վարպետներ Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը, Գուրգեն Ջանիբեկյանը եւ Դավիթ Մալյանը պարբերաբար իրենց արվեստն են ցուցադրել Գորիսի բեմի վրա:

Թատրոնը զգալի վերելք ապրեց հետպատերազմյան տարիներին: 1946թ. հունվարին բեմադրվեց «Սոս եւ Վարդիթեր» պիեսը, որն առաջին ներկայացումն էր պատերազմից հետո: Այդ դրամային հետեւեց Ա.Տեր-Հովհաննիսյանի «Երեք ամուրիներ» կատակերգությունը, այնուհետեւ «Երկիր հայրենին», որտեղ էլ հենց Վաղարշ Վաղարշյանը խաղաց Գագիկ թագավորի դերը: Այդ պիեսը ներկայացվեց նաեւ Կապանում՝ արժանանալով պատշաճ ուշադրության եւ ջերմության:

Հետագա երկու տարիներին թատրոնը դժվարին օրեր ապրեց դերասանական կադրերի հոսքի պատճառով: Ստեղծագործական կադրերից շատերը մեկնեցին Միջին Ասիա, Երեւան, Կապանի պետթատրոն եւ այլուր: Այդ ընթացքում միայն բեմադրվեցին Մ.Քոչարյանի «Հարազատ մարդիկ» եւ Կոռնեյչուկի «Պլատոն Կրեչետ» նշանավոր պիեսները:

Կոլեկտիվը հիմնականում բավարարվում էր հին պիեսների կրկնությամբ կամ նոր բեմադրությունն իրականացնելիս խուսափում էր մեծ թվով դերասաններ պահանջող պիեսներից: Սակայն 1948թ. վերջին կտրուկ բեկում մտցվեց թատրոնի համակարգում, եւ արդեն հաջորդ տարվա առաջին եռամսյակում կոլեկտիվը հասավ շոշափելի արդյունքների: 1950-60թթ. Գորիսի թատրոնի կոլեկտիվը համալրվեց հանրահայտ եւ երիտասարդ կադրերով, որոնք և՛ տեղացիներ էին, և՛ Երեւանից ժամանած փորձառու դերասաններ: Ժամանածների թվում

Շարունակությունը՝ էջ 86

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 (091) 45 90 47 (077) 06 28 02
Էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010



# Գորիսի թատրոնի պատմություն

Սկիզբը՝ էջ 85

էին ՀՍՍՀ վաստակավոր արտիստ, ռեժիսոր Հ.Կարապետյանը, Լեւոն Հարութը, Զավեն Տեր-Կարապետյանը, Աղասի Աղայանը, Սիրանուշ Խորենյանը, Մարիա Վարդանյանը, ուրիշներ: Նրանց շնորհիվ ավելի բարձրացան բեմադրությունների որակն ու մակարդակը:

1952թ. թատրոնի դիրեկտորի պաշտոնն ստանձնեց ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Բենիամին Բժիկյանը: Այդ ժամանակաընթացքում Բենիամին Բժիկյանի, Աղասի Աղայանի եւ Ավիկ Թորոսյանի բեմադրությամբ հանդիսատեսի դատին հանձնվեցին բարձրորակ ներկայացումներ: 1954թ. դեկտեմբերին միջշրջանային թատրոնների ստուգատեսում թատրոնի «Պատվի համար» եւ «Առանց անուններ տալու» ներկայացումներն արժանացան բարձր գնահատականի:

1956թ. հանդիսավորությամբ նշվեց պետթատրոնի հիմնադրման 20-ամյակը: Այդ օրերին հրապարակվեց ՀՍՍՀ Գերագույն խորհրդի հրամանագիրը, որով ՀՍՍՀ ժող. արտիստի կոչում շնորհվեց Բենիամին Բժիկյանին, վաստակավոր արտիստի կոչում՝ գլխ. ռեժիսոր Աղասի Աղայանին, դերասաններ՝ Սիրանուշ Խորենյանին, Մայրանուշ Վարդանյանին, Վաղարշակ Խուրշուդյանին, Ռուբեն Մուսայելյանին:

1961-62թթ. թատրոնում մշտական աշխատանքի է անցնում ռեժիսոր Եղիշե Ներսիսյանը, որը բեմադրում է մի քանի գործեր, որոնցից հաջողություն է ունենում Գուրգեն Բորյանի «Կամրջի վրա» դրաման:

1958թ. կենսաթոշակի անցնելուց հետո նա պարբերաբար Երեւանից հյուր է գալիս Գորիս եւ բեմադրություններ ներկայացնում թատրոնի բեմում՝ շարունակելով վայելել ժողովրդի համակրանքն ու սերը:

ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Լեւոն Հարութի գործունեությունը երկար չեղավ Գորիսի թատրոնում (1950-53), սակայն այդ ժամանակում նա իր մասնակցությամբ շլացուցիչ փայլ հաղորդեց «Մորգանի խնամին», «Դավիթ Կոպերֆիլդ», «Ռուզան», «Պատվի համար» եւ ուրիշ ներկայացումներին:

1956թ. դեկտեմբերին Աղասի Աղայանին շնորհվեց ՀԽՍՀ վաստակավոր արտիստի կոչում, ով Գորիսում աշխատում էր 1951թ.-ից:

1961թ. Գորիսի թատրոնը որոշ ժամանակով լուծարվեց: Պետական դրամատիկական թատրոնի փակվելուց հետո շրջանային մշակույթի տանը կազմակերպվեց ժողովրդական թատրոն, որի դիրեկտոր եւ ռեժիսոր նշանակվեց պետթատրոնի դերասան, ՀՍՍՀ վաստակավոր արտիստ Ռուբեն Մուսայելյանը (Ռուլենց), իսկ գլխավոր նկարիչ՝ Վազգեն Խշտոյանը: Այդ ժամանակ մեկը մյուսի հետեւից բեմադրվեցին Նաիրի Զարյանի «Սեր եւ գժտություն», «Զառն այս անգամ չբերեց», Գրիգոր Յաշչյանի «Զավարտված դատ» կատակերգությունները:

1964թ. Երեւանում տեղի ունեցած 24 ժողթատրոնների ստուգատեսում Գորիսի ժողթատրոնը Գուրգեն Բորյանի «Կամրջի վրա» պիեսի հաջող բեմադրության համար արժանացավ երկրորդ մրցանակի:

1965թ. Ռուբեն Մուսայելյանն ազատվեց աշխատանքից եւ մեկնեց Ստեփանակերտի թատրոնում աշխատելու: Ժողթատրոնի ղեկավար-ռեժիսոր նշանակվեց Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի շրջանավարտ, Գորիսի փակված պետթատրոնի երկար տարիների դերասան Գուրգեն Սարգսյանը, որը մինչեւ պետթատրոնի վերաբացվելը՝ 1985թ., նվիրվածությամբ ու պատվով կատարեց արվեստագետի եւ ռեժիսոր-բեմադրիչի իր պարտականությունները:

1976թ. կուլտուրայի մինիստրության կողմից Երեւանում կազմակերպված ժողթատրոնների ստուգատեսում Գորիսի ժողթատրոնը «Պըլը-Պուղի» պիեսի բեմադրության համար արժանացավ մրցանակի՝ բրոնզե մեդալի, իսկ Գուրգեն Սարգսյանը՝ պատվոգրի:

Շրջանային կուլտուրայի բաժնի ենթակայությամբ գործող ժողթատրոնի ռեժիսորը 1983-1985թթ. Միրզա Հովհաննիսյանն էր, որ հրավիրվեց Երեւանից: 1984թ. քաղաքի նորաբաց մշակույթի տանը ժողթատրոնի «Մեծապատիվ մուրացկանները» ներկայացման առաջնախաղն էր, որն արժանացավ հանդիսատեսի հավանությանը:

Այսպիսով՝ իր գործունեության 23 տարիների ընթացքում ժողթատրոնը, հաղթահարելով շատ դժվարություններ, պահպանեց ժողովրդի կուլտուրական սպասարկումը:

1985թ. վերաբացվեց Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը: Առաջինը բեմադրվեց Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման՝ ռեժիսոր Երվանդ Մանարյանի ղեկավարությամբ: Բեմադրությունը հիանալի էր եւ հանդիսատեսի կողմից ընդունվեց մեծ բավականությամբ եւ երկարատեւ ծափահարություններով: Այնուհետեւ «Արտասահմանյան փեսացու» պիեսը բեմադրեց Ալֆրեդ Հակոբյանը: Այս բեմադրության մեջ Ալֆրեդ Հակոբյանը կատարում էր Սանասարի, իսկ տաղանդավոր դերասան Գուրգեն Սարգսյանը՝ Գեւորգի դերը, որին հանդիսատեսը ճանաչում էր որպես Գոգի: Թատրոնի կոլեկտիվը տնօրեն՝ Նապոլեոն Մկրտչյանի ղեկավարությամբ արժանանում է հանդիսատեսի համակրանքին: Այդ ժամանակահատվածում է կայանում Վրթ.Փափազյանի «Ժայռը» դրամայի բեմադրությունը, որի ռեժիսորն էր դերասանական եւ ռեժիսորական փորձ ունեցող Միրզա Հովհաննիսյանը (ժողթատրոնի վերջին ռեժիսորն էր):

Թատրոնի դիրեկցիայի, գլխ. ռեժիսոր Ե.Մանարյանի, ներկայացման ռեժիսոր Մ.Հովհաննիսյանի աշխատանքը դրվատանքի էր արժանի: Այդ ապացուցեցին հանդիսատեսի հոտնկայս ծափահարությունները, որոնք թատերական կոլեկտիվի տքնաջան աշխատանքի ճշմարիտ գնահատականը հանդիսացան:

Թատրոնում սկսվել էր ստեղծագործական որոնումների, փնտրտուքների շրջան, որը շարունակվեց նաեւ հետագա տարիներին եւ թատրոնին բերեց նորանոր ձեռքբերումներ ու նվաճումներ: Միայն 1993-94թթ., որը ստեղծագործական վերելքի շրջան հանդիսացավ, դերասանական կազմի ուժերով տրվել է 180 ներկայացում: 1995թ. մարտին կենսաթոշակի անցավ Նապոլեոն Մկրտչյանը, եւ պետթատրոնի նոր տնօրեն հաստատվեց Յուրի Ջավահիրյանը (1995-1998թթ.): Նրա օրոք թատրոնի առաջին պիեսը Ա.Շահինյանի «Բանտարկյալը» պիեսն էր, որը բեմադրեց Ս.Սայունցը: Երեք ամիս անց հանդիսատեսին հանձնվեց Ե.Մանարյանի «Իրարանցում հոգեբուժարանում» պիեսը, որը բեմադրեց հենց ինքը՝ Ե.Մանարյանը: Այնուհետեւ բեմականացվեցին Ա.Բադալյանի «Խոշոր շահում», Հ.Աղաջանյանի «Խղճի խայթ», «Գիքոր», «Շրջազգեստով մարդիկ», որոնք բեմադրվեցին ե՛ւ հրավիրված, ե՛ւ տեղի ռեժիսորների ուժերով: Գրեթե մեկ տարի թատրոնը չուներ գլխ. ռեժիսոր, եւ 1996թ. հրավիրվեց Լիպարիտ Մանյանը: Այդ ժամանակ թատրոն եկան թատերական բարձրագույն կրթությամբ դերասաններ:

### Հայ բեմի մեծանուն վարպետները հաճախ են խաղացել Գորիսի թատրոնի բեմահարթակում


ՎԱՂԱՐՇ ՎԱՂԱՐՇՅԱՆ


ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ


ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ


ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ


ԳՈՒՐԳԵՆ ՋԱՆԻԲԵԿՅԱՆ


ԴԱՎԻԹ ՄԱԼՅԱՆ


ԵՐՎԱՆԴ ՄԱՆԱՐՅԱՆ

2002թ. թատրոնը գտնվում էր համայնքի ենթակայության տակ եւ միջոցների սղության պատճառով թատրոնից հեռացան պրոֆեսիոնալ դերասաններ Կորյուն Մկրտչյանը, Միեր Լեւոնյանը, Շանթ Հովհաննիսյանը:

2004թ. ՀՀ ժող. արտիստ Սոս Սարգսյանի միջնորդությամբ Գորիսում բացվեց Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտը, որը պիտի նպաստեր հետագայում թատրոնը նոր կադրերով ապահովելուն:

1998թ. մայիսից թատրոնի տնօրենի պարտականությունները ստանձնեց տողերիս հեղինակը, իրականացվեցին մի շարք բեմականացումներ: 1999թ. հունիսից հետո, մինչեւ 2000թ. ապրիլ թատրոնի տնօրեններ դարձան Էդիկ Ստեփանյանն ու Սամվել Տիգրանյանը, որոնք, այսպես ասած, չհասցրին նույնիսկ ծանոթանալ ստեղծագործական դրվածքին: 2000թ. ապրիլից թատրոնը ղեկավարեց գեղանկարիչ Ժիրայր Մարտիրոսյանը, որը մինչ այդ կոլեկտիվում աշխատում էր գլխ. նկարիչ: Երկու տարի անց նրան փոխարինեց Ալլա Զաքարյանը (2002-2004թթ.), որից հետո՝ 2005թ. մայիսին, կրկին թատրոնի տնօրեն նշանակվեցի ես:

2005թ. ապրիլի 6-ի կառավարության թիվ 349 որոշմամբ Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությունից անցավ ՀՀ մշակույթի նախարարության ենթակայություն:

2005թ. հունիսին հանդիսատեսի դատին հանձնվեց «Սպանիր ինձ, աղավնյակս» կատակերգությունը, որը բեմադրել էր թատրոնի գլխ. ռեժիսոր Ալֆրեդ Հակոբյանը: Նույն թվականի նոյեմբերին հանձնվեց «Քաջ Նազար» մանկական ներկայացումը: Այս վերջին ներկայացումներում արդեն ԵԹԿՊԻ ուսանողներն ակտիվորեն մասնակցում էին թատրոնի ստեղծագործական աշխատանքին:

2006թ. մայիսին կոլեկտիվը հանձնեց Ա.Արաքսմանյանի «Երբ տանը աչքեր չկան» պիեսը, որտեղ գլխավոր գործող անձինք էին ինստիտուտի շնորհալի ուսանողներ Լյովա Հունունցը, Էրիկ Գրիգորյանը, Լյովա Հակոբյանը, Թեհմինա Աբրահամյանը:

2006թ. «Թատերարվեստի աջակցում եւ խթանում սոցիալ-ստեղծագործական պատվերի միջոցով» ծրագրի շրջանակներում սկսվեցին Ակսել Բակունցի «Կյորես» վիպակի հիման վրա գրված Ռազմիկ Աբրահամյանի համանուն պիեսի բեմադրական աշխատանքները, որին մասնակցում էր քանիինգ դերասան (բեմ.՝ Ս.Սայունց): Ներկայացումը նոր խոսք էր թատրոնի պատմության մեջ, որը մնաց նրա ռեպերտուարում իբրեւ մնայուն գործ:

2006թ. ապրիլին տնօրինությունը կազմակերպեց միջոցառում՝ նվիրված թատրոնի բազմավաստակ դերասանուհի Հրաչուհի Գյուրջյանի աշխատանքային գործունեության 60-ամյակին:

2006թ. հուլիսի 5-ին թատրոնում կայացավ միջոցառում՝ նվիրված Մետաքսյա Սիմոնյանի ծննդյան 80-ամյակին, որին մասնակցում էին մշակույթի գործիչներ, արվեստագետներ, թատերագետներ: Միջոցառման ընթացքում ներկայացվեց Հ.Մաթեւոսյանի «Աշնան արեւ» ստեղծագործությունը (բեմ.՝ Ալֆրեդ Հակոբյան), որը վերականգնվել էր նախորդ տարվա խաղացանկից:

Մայրաքաղաքից ժամանած հյուրերը նշեցին, որ Հ.Գյուրջյանը Արուսի կերպարով յուրահատուկ մեկնաբանություն տվեց ներկայացմանը:

Դերասանուհին հրավիրվեց Երեւան՝ փառատոնի փակմանը մասնակցելու համար, իսկ այնտեղից վերադարձավ իրեն շնորհված «Արտիստ» մրցանակով:

Թատրոնը, ստեղծագործական բուռն շրջանի հասնելով, մեկը մյուսի հետեւից բեմադրում էր նորանոր ներկայացումներ:

2007թ. հանձնվեց Վրեժ Իսրայելյանի «Չնվաճված աշխարհամաս» (բեմ.՝ Ս.Մարգարյանի), Սուսաննա Բաղդասարյանի «Գիքորը 21-րդ դարից» (բեմ.՝ Արա Բաղդասարյանի), «Հոնզան եւ ջութակը» մանկական ներկայացումը (բեմ.՝ Ս.Սայունցի), 2008թ. Ժ.Հարությունյանի «Բախտավոր մարդիկ» (բեմ.՝ Ա.Հակոբյանի), Հ.Թումանյանի «Քեֆ անողին, քեֆ չի պակսի» (բեմ.՝ Ս.Սայունցի):

2008թ. հոկտեմբերի 16-ին «Գիքորը 21-րդ դարից» կատակերգությամբ թատրոնը մասնակցեց «Թատերական Լոռի-2008» փառատոնին, որտեղ «Անսամբլային ներկայացում» անվանակարգում արժանացավ գլխավոր մրցանակի: Թատրոնի կոլեկտիվն առանձնակի ոգեւորությամբ վերադարձավ Լոռուց եւ պատրաստվեց մեկ այլ կատակերգության: Ազատ Շահինյանի «Ախ, էդ սատանան» պիեսի բեմադրական աշխատանքների ղեկավարմանը ձեռնամուխ եղավ թատրոնի գլխավոր ռեժիսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սիրանույշ Ղուկասյանը:

2008թ. դեկտեմբերին հանդիսատեսին հանձնվեց ներկայացումը: Հանդիսատեսը հիացած էր դերասանների հրաշալի խաղով, հատկապես Թեհմինա Աբրահամյանի Նունուֆարի կերպարով, որը հումորային շունչ էր տալիս ներկայացմանը, առաջ բերում բեմադրական նոր լուծումներ ու մոտեցումներ, ոգեւորում եւ ուրախացնում հանդիսատեսին: Իսկ փետրվար ամսին հանձնված «Հոպիկ սիրունիկը» ներկայացումը հասցեագրված էր փոքրիկներին:

2009թ. մարտին հանդիսատեսին հանձնվեց Լ.Վերնեյլի «Խանդոտ կնոջ հաղթանակը» ներկայացումը: Նույն թվականին ՀՀ մշակույթի նախարարության պետպատվերի շրջանակներում ներկայացվեց Ակսել Բակունցի «Մեր ծորերի խորհուրդը» պիես-ալմանախը:

Բեմականացումը բեմադրող ռեժիսոր Ս.Սայունցինն էր, իսկ բեմադրությունը՝ գլխ. ռեժիսոր Ս. Ղուկասյանինը: Ներկայացման մեջ հիանալի կերպով արտացոլված էր Կյորեսի խորհուրդը. ժամանակի շունչը, կենցաղը, բարքերը: Այն՝ որպես դժվար եւ մեծ պատասխանատվություն պահանջող գործ, հիացական գնահատականի արժանացավ Ա.Բակունցի ծննդյան 110-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ, որի ընթացքում էլ հենց կայացավ պիես-ալմանախի առաջնախաղը:

Հետագայում՝ 2009թ նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին, նույն ներկայացմամբ թատրոնը շրջագայություն կատարեց Մեղրի, Քաջարան, Կապան քաղաքներ, իսկ «Ախ, էդ սատանան» եւ «Հոնզան եւ ջութակը» ներկայացումներով եղավ Ստեփանակերտ, Շուշի, Մարտակերտ, Հադրութ քաղաքներում: Այդ հյուրախաղերին էլ հաջորդեցին Արմավիրը եւ Մեծամորը:

Չնայած աշխատանքային ծանրաբեռնվածությանը՝ թատրոնը դրանից հետո պատրաստեց եւ մեծ հաջողությամբ իրագործեց Յու. Իլովայսկու «Սանտա Կլաուս» եւ «Արքայազնի պարգեւը» մանկական ներկայացումները, որոնք կրկնակի նվեր եղան փոքրիկներին՝ թատրոնի նորաբաց դահլիճում ցուցադրելուց հետո:

Թատրոնի նվաճումներն անխզելիորեն կապված են ժողովրդի հետ, որը նրան նոր թեմաների ու գործերի է մղում, եւ թատրոնը ժողովրդի հետ սերտ կապի մեջ է տեսնում իր զարգացման հեռանկարը...

■


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 (091) 45 90 47 (077) 06 28 02
Էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru





Գորիսի գրադարանների կենտրոնացված համակարգի երգչախումբը 1980-ականներին

# Գորիսի գրադարանները. համառոտ փարեգրություն

Գրադարանում եղած հին արձանագրությունները, նախկին աշխատողների թողած գրառումները փաստում են, որ 20-րդ դարասկզբից է սկիզբ առնում մեր քաղաքի գրադարանի պատմությունը:


ՋՈՅԱ ԳԱԼՍՏՅԱՆ
Գորիսի քաղաքային գրադարանի ղեկավար

Առաջին գրադարանավարներ Գ.Ղազարյանի, Ն.Հայրյանի, Գ.Պապիկյանի եւ ուրիշների վկայությունները հիմք են տալիս ասելու, որ 1919թ. Գորիսում՝ մասնավոր մի տան, գործել է շրջիկ գրադարան՝ 468 կտոր գրքային ֆոնդով: Այդ գրադարանը կոմունիստների միջոցով ոչ միայն Գորիսի, այլեւ Զանգեզուրի բնակչությանն է մատակարարել մարքսիստական եւ այլ տիպի գրականություն, ունեցել բավականին ընթերցողներ: Լեռնահայաստանի հանրապետության կործանումից հետո՝ 1921թ. հուլիսին, հենց այդ շրջիկ գրադարանի հիմքի վրա էլ Գորիսում բացվում է գավառագիտական գրադարանը (ներկայիս Գուսան Աշոտի 23 հասցեում), գործել է մինչեւ 2000թ.: Գրադարանի վարիչ է նշանակվում Գառնիկ Պապիկյանը, գրադարանավար՝ Պետրոս (Պետյա) Բադիրյանը: Վերջինս 1923թ. Գ.Պապիկյանից հետո վարիչ է աշխատում մինչեւ 1957թ.:

Այս երկու գրադարանավարները եղան առաջին կազմակերպիչները գրադարանային գործում, իսկ գրադարանը՝ քաղաքի մտավոր կյանքի, գրական, հասարակական-քաղաքական ըմբռնումների ձեւավորման ու տարածման, ընթերցումների, գրական լսումների, քննարկումների, հանդիպումների համար հարմարավետ, լուսավոր օջախ:

Գրադարանի աշխատանքների ակտիվ կազմակերպման, գրքային ֆոնդի հարստացման, նոր գրքերի ձեռքբերման, ընթերցողների ընդգրկման եւ նրանց ընթերցանության ղեկավարման գործում ձեռք բերված ցուցանիշներն այդ երկու գրադարանավարներին շատ կարճ ժամանակամիջոցում լավ ճանաչում են բերում հանրապետությունում եւ արժանացնում «Վաստակավոր գրադարանավարի» կոչման:

1925թ. գրադարանն ուներ 2000, 1930թ.՝ 5000 կտոր գրականություն: 1951թ. գրադարանի գրքային ֆոնդը կազմում էր 16000 կտոր:

Գրքային ֆոնդի մեծացման, ընթերցողների թվի ավելացմանը զուգընթաց ավելանում է նաեւ աշխատողների քանակը: Բազմազան ու բովանդակալից են դառնում գրքերի հետ տարվող աշխատանքները, կազմակերպվում հետաքրքիր միջոցառումներ: Գրադարանի օրինակելի գործունեությունը գրադարանի վարիչ Պետրոս Բադիրյանին արժանի է դարձնում «Աշխատանքային կարմիր դրոշ» շքանշանի, իսկ գրադարանավարուհի Ժենյա Բեգլարյանին՝ ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության պատվոգրի:

1954թ. գրադարանը հանրապետական ստուգատեսում շահում եւ ստանում է դիպլոմ:

Գրադարանի վարիչ Պ.Բադիրյանը, ինչպես նշեցինք, աշխատում է մինչեւ 1957թ., որից հետո կարճ ժամանակով վարիչ է աշխատում Սիմոն Հայրապետյանը, այնուհետեւ՝ Գավրուշ Ղուկասյանը:

1958թ. գրադարանն արժանանում է «Լավագույն աշխատանքի գրադարանի» կոչման:

Այդ շրջանում գրքային ֆոնդը կազմում էր 28056 կտոր, հայերենը՝ 16125, ռուսերենը՝ 11931: Գրադարանն ուներ այն ժամանակի համար հարմարավետ շենքային հնարավորություններ՝ գրապահոցներ, երկու ընթերցասրահ՝ միշտ լեփ-լեցուն ընթերցողներով: Գրապահոցներում գրքային ֆոնդն ունեցել է բաժիններ՝ ըստ գիտության բնագավառների եւ այբբենական դասավորության՝ առանձնացված հայերեն, ռուսերեն, օտար լեզուների:

1959թ. կեսերից գրադարանի վարիչ է նշանակվում Նինա Հովսեփյանը, որը մինչ այդ՝ 1954թ., նույն գրադարանային ընթերցասրահի վարիչ էր:


Գորիսի շրջանային մշակույթի տան ժողգործիքների ժողովրդական անսամբլը 1980-ականներին

Ահա հենց այդ ժամանակից էլ Գորիսի գրադարանի պատմության մեջ մի այլ լուսավոր շրջան է բացվում, մի շրջան, որ գրադարանը գորիսեցու համար դառնում է հաց հանապազօրյա, որտեղ ամեն պահի հերքվում էր մեծ բանաստեղծի խոհատողը. «Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով»:

«Ոգու սովի» վտանգն օտարված էր գորիսեցուց, քանզի նա իր օրը սկսում եւ ավարտում էր գրադարանի պատերից ներս խտացող ոգեւորությամբ, որը սկիզբ էր առնում համաշխարհային դասական գրականության Պառնասից՝ հասնելով մինչեւ Սյունյաց աշուղական արվեստի ելեւէջները, մինչեւ «Միրհավ» գրական խմբակի գործունեությունը՝ գրական-գեղարվեստական ցերեկույթներով, գրական ընթերցումներով, ազգային գաղափարական արծարծումներով, որ աննախադեպ իրողություն լինելով, հիրավի դարձավ հայրենասիրության զարթոնքի, համազգային շարժման, Արցախյան հերոսամարտի առաջին հունդերից:

1959թ. գրադարանն ուներ բավականին շատ ընթերցող, գրքատացքը կազմում էր 86930:

Գրադարանն ուներ 15 շրջիկ գրադարան, որոնք առաքման, պրոպագանդման զանգվածային աշխատանքներ էին իրականացնում նաեւ քաղաքի ու շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների բանվործառայողների շրջանում:

Ընթերցողների սպասարկումը լավ կազմակերպելու նպատակով գրադարանը միջգրադարանային աբոնեմենտով կապված էր Մոսկվայի Վ.Լենինի անվան կենտրոնական, Երեւանի Ալ.Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի հետ: 1959թ. այդ գրադարաններից պահանջել եւ ստացվել էր 256 անուն մասնագիտական գիրք:

1956թ. գրադարանը բաժանորդագրվել եւ ստացել էր 75 անուն թերթ եւ ամսագիր: 1960թ. այն արդեն դարձել էր 90 անուն:

1959թ. գրադարանն ուներ ողջ գրքային ֆոնդն արտացոլող այբբենական, սիստեմատիկ, առարկայական, վերնագրային կատալոգներ, երկրագիտական-հայրենագիտական եւ այլ թեմաներ արծարծող թեմատիկ քարտարաններ, որ այդ ժամանակաշրջանի գրադարանների համար հազվագյուտ երեւույթ էր:

Գրադարանում լավ էր գործում գրադարանային խորհուրդը, որի անդամներից էին Զավեն Թաթուլյանը, Կիմ Թաթարյանը, Լենո Աբգարյանը... Նրանց ակտիվ մասնակցությամբ հաճախ էին կազմակերպվում բազմաբովանդակ, հետաքրքիր միջոցառումներ, հանդիպումներ գրողների, արվեստագետների հետ, անց էին կացվում մեծարման երեկոներ, կոնֆերանսներ, գրքերի քննարկումներ, հարց ու պատասխանների երեկոներ, կոնֆերանսներ, գրքերի քննարկումներ: Տեղական ու հանրապետական մամուլում հաճախ էր մեկնաբանվում, մեծարվում գրադարանի գործունեությունը, կազմակերպված միջոցառումների մասին՝ դրվատանքի, երախտագիտության, շնորհակալանքի խոսքեր զետեղվում: Դրանց կենդանի վկաներն են բազում հրավերների, միջոցառումների, սցենարների, հայտարարությունների, մամուլում հրապարակված հոդվածների առկայության փաստերը:

Գրադարանի հիմնադրման 40-ամյակի կապակցությամբ 1959թ. նոյեմբերի 26-ին Գորիսի շրջսովետի գործադիր կոմիտեի որոշմամբ գրադարանը կոչվեց հայ տաղանդավոր գրող Րաֆֆու անունով:

1962թ. քաղաքի 1950թ. հիմնված շրջանային գրադարանը (վարիչ՝ Շուշիկ Հովհաննիսյան) միացնում են Րաֆֆու անվան քաղաքային գրադարանին եւ գրադարանն անվանում Րաֆֆու անվան շրջանային գրադարան. ընդհանուր ֆոնդը դառնում է 60000 կտոր գրականություն, ընթերցողների թիվն անցնում է 4000-ից: Միավորման ժամանակ երկու գրադարանների աշխատողներն ընդգրկվում են նույն գրադարանում՝ գրադարանի առօրյան դարձնելով էլ ավելի բեղուն:

1964թ. Րաֆֆու անվան շրջանային գրադարանը հանրապետությունում արժանանում է «Գերազանց աշխատանքի գրադարանի» կոչման:

Գրադարանի աշխատանքների շրջանակները մեծանում են, եւ այդ նույն թվականին քաղաքի ծայրամասերում բացվում են նույն գրադարանի երկու մասնաճյուղ-գրադարաններ:

1965թ. գրադարանի ասմունքողների կոլեկտիվը մասնակցում է «Ծաղկի՛ր, իմ ռեսպուբլիկա՛» համահայաստանյան II փառատոնին եւ դառնում դափնեկիր գեղարվեստական ասմունքի գծով, պարգեւատրվում փառատոնի բրոնզե մեդալով: 1977թ. գրադարանն արժանանում է Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության «Գերազանց աշխատանքի գրադարանի» կոչման:

Նինա Հովսեփյանից հետո Րաֆֆու անվան շրջանային գրադարանի վարիչ են աշխատել Ժենյա Բեգլարյանը, Օվսաննա Հակոբյանը, Զոյա Գալստյանը:

1979թ. նոյեմբերին Րաֆֆու անվան շրջանային գրադարանի հիմքի վրա ստեղծվում է Գորիսի շրջանի

Շարունակությունը՝ էջ 88

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010



# Սյունիքից մի անկյուն

## Հատված Լեոյի համանուն հիշատակարանից, հատոր 8

Հետեւյալ օրը վաղ առավոտյան տեսնում եմ Գորիսը՝ Զանգեզուրի գավառի այդ կենտրոնը:

Բայց ի՞նչ է դա՝ գյո՞ւղ, թե՞ քաղաք:

Ես դժվարանում եմ պատասխանել: Եթե գյուղ անվանեմ, գյուղերում (գոնե մեր գյուղերում) չեն լինում այսպիսի սիրուն, մեծ-մեծ շինություններ, միհարկանի, երկհարկանի տներ տախտակի կտուրների տակ, խնամքով պահվող տներ, որոնք ունեն մաքուր պսպղուն պատուհաններ, սպիտակացրած պատեր եւ լայն ու մաքուր բակեր: Գյուղ անվանես, այո՛, «բեդամաղ» կլինեին բոլոր հարազատ գորիսեցիները: Ամեն ինչ կարգին է, կա մեծ առեւտրական հրապարակ, ուր կարելի է ամեն ուզածդ գտնել, կան արհեստավորներ, կան վարչական եւ դատաստանական հիմնարկություններ: Լայն եւ ուղիղ փողոցներում ճեմում են մարդիկ, երբեմն երեւում են պճնազարդ եւ տուրնյուրազարդ տիկիններ: Կա, վերջապես, ծառայողների այն ջահել դասակարգը, որ ամեն կերպ աշխատում է կոկված, զարդարուն երեւալ, այն իսկ դասակարգը, որ ռուսներն անվանում են «գավառական առյուծներ»: Միեւնույն ժամանակ դա է եւ գավառական ինտելիգենցիան: Այս դեպքում ինտելիգենցիա ասելով չեմ ուզում վկայել, որ այդ դասակարգը բարձրագույն ուսման տեր է (կան եւ երեք թե չորս այդպիսի անձինք), ինտելիգենտ են անվանվում այն պատճառով, որ տեղյակ են գրին, գիտեն շատ բան՝ օրինակ, իմանում են Իշակ-խանի ով լինելը, նրա տված պատերազմների տեղն ու վախճանը, շատ լավ գիտեն, թե ով է Բուլանժեին վիրավորել եւ ինչու, իսկ Բիսմարկը, ինչ ասել կուզի, նրանց հին ծանոթն է: Բացի այս ամենից՝ իմ հիշած դասակարգը կրում է ամեն մի ինտելիգենցիային պատիվ բերող հատկությունը՝ տխրությունը, եւ այդ տխրությունն այստեղ էլ փարատվում է կանաչ սեղանների շուրջը, կավճի թոզի եւ թվանշանների կույտերի մեջ, այս տեղ էլ շշերը շրխկում են, գարեջուրը, տեղն ընկած ժամանակ եւ շամպանինան, թափվում են, երգվում է գեղեցկությունը, սիրավառ դեմքն ու առհասարակ ամեն մի մարդու սիրտ պղտորող վայելչությունը: Եվ այս ամենը սակավ չի տեղի ունենում, ոչ թե «զատկից զատիկ», այլ շատ հաճախ, շուտ-շուտ, համարյա միշտ: Շատ տներ կմտնեք եւ շատ զարդարուն դահլիճներ կտեսնեք, գեղեցիկ պաստառներ, Վիեննայի աթոռներ, փափուկ բազմոցներ, թանկագին գորգեր, պատուհանների եւ դռների գեղեցիկ վարագույրներ: Կտեսնեք ավանդական հաստափոր վաճառականներին, «խոջաներին», որոնք ոչնչով չեն զանազանվում քաղաքի հենց այդ տեսակ մարդկանցից, կտեսնեք նաեւ ոսկով եւ արծաթով զարդարված ջահիլ վաճառականներին: Վերջապես քանի՞ քաղաքներ ենք ճանաչում Կովկասում, որոնք ունենային այսպիսի լայն եւ ուղիղ փողոցներ, պակաս են կառքերը միայն, դրանք էլ երեւի լույս կընկնեն: Այս բոլորը, ինչպես տեսնում եք, շատ բավական է, որ ամեն մեկը «բեդամաղ» լինի, երբ Գորիսը միանգամից գյուղ անվանեք:

Բայց քաղաք էլ չէ: Շատ փոքր է, շատ պակասություն էլ ունի: Ես նկարագրեցի «Նոր Գորիսը», այն մասը, ուր ընտրյալներն ու հարուստներն են ապրում: Աչք ածեցեք դեպի հյուսիս, դեպի սարի այն լանջը, որից երեկ իջնում էինք, ծեր առաջն է մի գյուղ, Զանգեզուրի սովորական գյուղերից մեկը: Նա շատ, շատ մոտիկ է այս հարուստ եւ նոր մասին, եթե չլիներ գետակը, որ երեկ մեր առաջն էր եկել Գորիսից վերեւ, նորը եւ հինը խառնված կլինեին միմյանց հետ, բայց գետակը մի մեծ ձոր է շինել, այս կողմին, մի հարթ եւ հավասար տեղ նոր Գորիսն է վերցրել, իսկ այն մյուս, ձախ ափը, որ ոչինչ հարթոց չունի եւ թեք լանջիվերի պես ընկած է գետի ձորից մինչեւ լերան գլուխը, բուն գյուղն է մնացել: Նայեցեք, այդ լանջիվերի վրա էլի կույտ-կույտ են դառել մեծ ու փոքր տները, որ Տեղ գյուղի տների պես մոխրակույտերի նմանություն ունեն: Նույն նեղ, ձեռքի ափի չափ լայնություն ունեցող փողոցները, նույն հողե տափակ կտուրները, աղբ ու անմաքրություն ամեն տեղ, աքաղաղների ու հավերի կանչկռտյուն, կանանց ու մարդկանց նահապետական տարազի զգեստներ, մի խոսքով՝ գյուղ: Դա ինքն է Գորիսը, այդ անունը դրա սեփականությունն է: Արիստոկրատների մասը, կամ, ուղիղն ասած, թաղը այդ գյուղից կախումն ունի, առաջին, կրում է նրա անունը, թեեւ իր համար, կարծեմ, վաղուց պատրաստ ունի մի անուն, որ պիտի գործածե քաղաք դառնալուց հետո, իսկ այժմ, կարծես, ամաչում է հրապարակ հանել, երկրորդ, չեք զարմանում, հարուստ մասը սեփական եկեղեցի չունի եւ հարկավոր դեպքում իջնում է գետի ձորը, բարձրանում է գյուղամեջը, ուր կա մի հասարակ գյուղական եկեղեցի: Այսպես, բուն գյուղը ապրում է հարուստ ու փարթամ հատվածից երկու քայլ հեռու, ապրում է այդ հատվածին ամեն օր աչք դրած: Նա հետզհետե ընդունում է նոր քաղաքացու քաղաքային վարքն ու բարքը, նստում, վեր է կենում նոր ձեւի, նոր պահանջի համաձայն: Եվ հավատարիմ մնալով ամեն տեղ հաստատված կանոնին, այդ գյուղը, լինելով նորածին քաղաքի «սեւ մասը», ընդունում, պահում է իր մեջ այն բոլոր կեղտերը, որ դուրս է վիժում «քաղաքակրթության» ճանապարհին հաստատ ոտք դրած հասարակությունը: Այդտեղ, այդ «սեւ մասում» են բույն դրել անառակ կանայք, այդտեղ են անցնում ամուրի ինտելիգենտների բանաստեղծական ժամերը, կատարվում են ամենքին մի հոգով եւ մի աչքով նայող կանանց ընտրած տեղերից անպակաս բոլոր աղմկաշատ ուրախությունները, կռիվները: Անմաքուր մուկը, որ մի փոքրիկ բան է, մի ահագին կարաս է ապականում, ասում է հասարակաց առածը, անբարոյականության թույնը, որ սկզբում պատվաստվել է գյուղի ծայրերում, հետզհետե տարածվում է, ապականում նահապետական պարզությունը, ողջախոհությունը: Նոր, արիստոկրատական Գորիսը, այո, լուսավորվում է, լավ քաղաքակրթվում, բայց դրա համար լավ պատիժ է կրում այդ մեծ, բուն գյուղը, նա պիտի ապականվի, այլակերպվի, որ մեծ-մեծ տները բազմանան, տուրնյուրները ուռչին: Գյուղի գլխին կախ է ընկած մի չոր, սպիտակ եւ տխուր լանջիվայր, իսկ լանջիվայրի վրա կանգնած են էլի մի քանի մեծ-մեծ սրածայր քարեր, արեւելյան կողմից գյուղին կպած է մի մեծ բարձրություն, որ ունի պատի պես ուղղաձիգ, անմատչելի կողեր: Այդ բարձրությունն էլ գյուղի կողմից սպիտակ մերկ մարմին ունի, որ վերջանում է մեծ-մեծ քարերով: Ի՞նչ կմնա գյուղից, եթե մի օր այդ ապառաժները թափվեն... Նայելով այդ տեղերին, նայելով հսկայական շաքարի գլուխներին, հողին՝ մարդն ուզում է ենթադրել, որ ջուրն այստեղ էլ զարմանալի գործեր է կատարել, քերել, տարել է հողը, բաց է արել քարերը, որոնց գլուխը հետզհետե լափելով՝ սրել է եւ այդպիսի տարօրինակ նաեւ ձեւ տվել: Գյուղի մի քանի տները տեղավորված են այդ ժայռերի տակ, խոր ծակերում: Զանգեզուրի հայ գյուղերին հատուկ են այս տեսակ բնակարաններ, եւ դրանց հայրենիքն է Խնձորեսկ անունով գյուղը, որ Գորիսից մի քանի ժամ հեռավորություն ունի: Այդ գյուղն ամենամեծն է Զանգեզուրի հայ գյուղերից, ունի 800 տուն բնակիչ: Ութ հարյուր տները թափված են մի նեղ եւ սարսափելի վայրենի ժայռոտ եւ խոր ձորի մեջ, մտել են ժայռերի տակ, ծակերը: Ես չեմ տեսել այդ գյուղը, բայց ինձ այդպես պատմեցին: Վկայում է այդ մասին եւ Աբրահամ Կրետացի կաթողիկոսը՝ Նադիր Շահի ժամանակակիցը, որ ներկա է եղել շահի թագադրությանը Մուղանի դաշտում: Նա թողել է մի պատմություն, որի մեջ նկարագրել է իր ճանապարհորդությունը Ղարաբաղի եւ Սյունիքի մեջ. այցելել է եւ Խնձորեսկ գյուղը, որի մասին պատմում է, թե ջուր կամ փայտ բերելու համար բնակիչները թոկերից կախ էին ընկնում, իջնում իրենց բույներից եւ հետո էլի թոկերով բարձրանում: Պետք է տեսնել սյունեցու կյանքն այդ տեսակ տեղերում, տեսնել երկար ժամանակ եւ հետո նկարագրել, թողնենք, ուրեմն, Խնձորեսկը, գանք մեր Գորիսը:

Գորիսը, ինչպես ասացի, ձորի մեջ է ընկած, հյուսիսային կողմից Տեղ Գյուղի լեռնադաշտն է, հարավային կողմից՝ Ուչ-Թափալարի լեռնադաշտը, այդ երկու բարձրությունները արեւմտյան կողմից, այժմյան Գորիսից բավական հեռու, միանում են լեռնային մի պայտաձեւ բարձրությամբ, ուստի Գորիսը երեք կողմից փակված է, միայն արեւելյան կողմից է բաց մնում մի նեղ կիրճ, որով հոսում է Գորիսի անանուն գետակը: Այսպիսի մի դիրքն է պատճառը, որ գյուղն այնքան հաջող կլիմայական պայմաններ չունի, ամառն ընդհանրապես շատ տաք է լինում, քամիներն անպակաս են այստեղից, տաքն ու ցուրտը միմյանց հաջորդում են անակնկալ կերպով, ջուրն էլ առողջարար չէ, ունի կրային խառնուրդ, ջերմուտենդ սակավ չի լինում: Գորիսի ձորը շրջապատող լեռներն ու նրանց լայն-լայն լանջերը զուրկ են ծառերից եւ գարուն ու ամառ ծածկվում են շքեղ կանաչ խոտով: Վառելափայտի հեռավորությունն ու թանկությունը աթարն է գործածության մեջ դրել: Բայց աթարի հայրենիքը Սիսիանի գավառակն է, որ Գորիսից դեպի հարավ-արեւմուտք է գտնվում եւ այնքան հեռու չէ: Այդ երկրում ծմակներ ամենեւին չկան, ազգաբնակությունը աթարի օգնությամբ է ապրում:

Ասացի, որ Գորիսը Զանգեզուրի գավառական կենտրոնն է: Այստեղ են խմբված գավառական ոստիկանական վարչության դիվան, հաշտարար դատավորներ, անտառապետ, քննիչ, հաշտարար միջնորդ, պետական գանձարան: Նույնպես այստեղ է առեւտրի կենտրոնը, վաճառականությունը, մի խոսքով՝ հասարակական բոլոր շարժիչները, որոնք կյանք ու կենդանություն են տալիս գավառին, որը, եթե չեմ սխալվում, Գանձակի նահանգի բոլոր գավառներից մեծն է: Թողնենք վարչությունը, պետական հաստատությունները, որոնք գործում են, ինչպես եւ ամեն տեղ, օրենքի որոշած սահմաններում: Մեզ պիտի հետաքրքրի այն հարցը, թե գավառը իր կենտրոնից ի՞նչ է ստանում, ո՞ր աստիճան լավ կամ վատ է վերջինիս ազդեցությունը: Այդ հարցին պատասխանած կլինենք, եթե մի փոքր ակնարկ ձգենք Գորիսի դրության վրա:

Ամբողջ գավառը կրթության եւ լուսավորության կողմից ամենատխուր դրության մեջ է, որովհետեւ իր կենտրոնն էլ այդպես է: Գորիսը, որ աշխատում է զարմացնել հեռվից նայողին իր գեղեցիկ տներով, եվրոպական կարգ ու կանոնով, որ հույս ունի գուցե շուտով իբրեւ քաղաք հռչակվելու եւ բոլորովին բաժանվելու գետի մյուս կողմին, չոր լանջիվայրին կպած գյուղից, այդ Գորիսն ունի մի հատ գյուղական տարրական դպրոց (արքունական), որ բաղկացած է երկու դասարանից եւ ունի, կարծեմ, 60-70 աշակերտ: Կրթությունը տարրականից բարձր չի գնում, տեղացի հայը կարդալ ու գրել սովորելուց հետո կամ վազում է որեւէ պաշտոնատան մեջ գրագիր դառնում, կամ թե մտնում է խանութ «բազարի քերականություն» սովորում: Ուր որ նայում ես, երկու տեսակ մարդիկ ես տեսնում, պսպղուն կոճակներով եւ կոկարդներով զարդարված չինովնիկ եւ վաճառական, երկուսից որը վերցնեք, լուսավորության, հանրային կրթության մասին մեծ պահանջ չունի: Չինովնիկը իր նեղ հայացքով ամեն տեսակ բարօրություն տեսնում է իր թղթերի անսպառ կույտերի մեջ, իսկ վաճառականին հարկավոր է «հաշիվ ու դավթար»: «Եսը» խիստ բռնացած է այստեղ, մանր բամբասանքներ, դատարկ անձնասիրական հաշիվներ, «կասե-կոսեներ»՝ ահա ինչի մեջ է թավալվում այստեղի կյանքը: Համերաշխություն չկա. «ի՞նչ բան ունեմ», – ասում է ամեն մեկը, հեռանում, ինքն իր մեջ մտնում: Ամեն մի խնդիր, որ կարող էր ընդհանուրին վերաբերել, անտարբերության մեջ է խեղդվում, միմյանց օգնել չգիտեն, բայց միմյանց ընդդեմ գնալուն շատ վարժ են: Այս այսպես լինելուց հետո կարող եք երեւակայել, թե ինչ կլինի գավառի խուլ եւ ոչ խուլ անկյունների դրությունը: Սյունյաց երկրի ուսումնարանների թիվը ծիծաղելի է. կարծեմ չորս թե հինգ ուսումնարանից ավելի չկա: Բայց այնքան շատ են բազմամարդ գյուղերը, որոնք ուսումնարանի եւ ուսման մասին հասկացողություն չունեն: Մենք վիճակագրական թվանշաններ չունինք, եթե ունենայինք՝ «հասկացողություն չունին» բառերը այնքան փոքր, հասարակ չէին երեւա: Մի մեծ, մի ահագին աշխարհ, որ վայրենի, անընկճելի բնություն ունի, որի ազգաբնակությունը տեղավորված է խիստ անբարեհաճ պայմանների մեջ, մի այդ տեսակ աշխարհ խավա՜ր է, տգետ, սարսափելի տգետ: Այդ ժողովուրդը թեեւ առանձնացած է լեռների ու ձորերի մեջ, բայց ամեն օր շփվում է մեր ժամանակի ստեղծած դրություններին, պայմաններին, իհարկե, յուրացնել լավը, օգտակարը նա ինքնաբերաբար չի կարող, ուրեմն ի՞նչ տեսակ նեցուկ պիտի ունենա լավ կանգնելու, պինդ պահվելու համար, ի՞նչը պիտի բանա նրա բնության գաղտնիքը, սովորեցնե նրան ապրել գլուխը բարձր պահած, սիրտը հանգիստ: Ժողովրդական կյանքը այս տեսակ դրության նշույլներն անգամ չի ցույց տալիս: Երեւում են միմիայն տխուր նշաններ: Եվ այդ նշաններից ամենամեծն այն հարաբերությունն է, որ կապում է Գորիսը գավառի հետ: Այդ հարաբերությունը ստեղծել է եւ պահում է վաճառականական դասակարգը: Այստեղի վաճառականը վաշխառու է, ունի լավ բռնող ճանկեր, որոնցով դեպի իրան է ձգում գյուղացիներին: Հանդարտ ու անձայն է կատարվում գործողությունը: Հեռավոր տեղից գալիս է գյուղացին, ապրանք է գնում մի խանութից, թանկ թե էժան, այդ Աստծուն է հայտնի: Փողը մնում է, պարտքը տոկոս է շալակում առանց հաշվի: Գյուղացին հաշվի մեջ քաջ չէ, շատերը հաշվում են այսպես՝ «երկու քանն, երեք քանն եւ մի հինգ»: Հաշիվ չիմանալը, ինչպես ասում են մեզ մոտ, նրա վիզը կոտրում է. մարդը աշխատում է, մանեթները բազմաթիվ ծալքերի մեջ է պահում, նա արբեցություն անել չգիտե, շռայլություններից հեռու է, կիրակի եւ չորեքշաբթի միեւնույն գույնն ունին նրա համար: Բայց արի ու տես, մարզը չգիտե, թե ինչպես եկան մանեթներն ու որտե՞ղ գնացին, ձի պիտի առներ, շատ հարկավոր է, պատրաստվել էր առնելու, մեջ ընկավ կովի հարցը. կովը սատկել է, երեխաները անթաց են մնացել, հարկը պահանջում են, արտը քիչ է տվել, պետք է հաց առնել, երկու թե երեք այսպիսի պահանջներ եկան, խառնվեցան՝ մարդը գլուխը կորցրեց, մնում է ձեռքը ծոցում դրած: Միակ ապավենը վաճառականն է: Դա քաղցր մարդ է. կխոսի, կծիծաղի, խորհուրդ կտա, կափսոսա, հույս կտա, միանգամայն կքրքրե, կհիացնե նրա սիրտը եւ այդ «սրտից ջուր կխմե» եւ ապա կտա նրան այն, ինչին այնքան կարոտ է նա: Թուղթ էլ չլինի, ոչինչ, հոգու պարտք է, եւ այն մարդ չպիտի լինի, որ իր հոգու պարտքն ուրանա: Գյուղացին գնաց, որ էլի գլուխ ճաքեցնի իր հաշիվների վրա: «Աստված, աստված», ասաց ու հանգստացավ, իսկ ի՞նչ արեց վաճառականը, ինչպե՞ս կարող է իմանալ, մի չվալ գարի պետք է թափի, ինքն էլ փափախը վերցնի, կողքին դնի, որ կարողանա մի օր գարով հաշվել տալն, ինչ վաճառականը մի երկու րոպեում հաշվել է մատները հաշվիչի վրա վազեցնելով: Պարտքի վրայով ժամանակ անցավ, որքան շատ, այնքան ավելի վա՛յ պարտականի գլխին... Վաճառականը մի գիրք ունի, մի հրաշալի գիրք, որի մեջ ամեն ինչ ուռչում է, մեծանում: Նրա մեջ գրված է մի թվանշան նրան հանգիստ են տալիս, որ շատ չաղանա: Եվ երբ վերջապես նրան հրամայում են երեւալ այն մարդի աչքին, որի «ոտին է գրած», տեսնում են, որ հրեշային կերպարանք է ստացել, կարող է ուտել, կլանել ամեն ինչ: Նրան միանգամից սպանել չես կարող, պետք է անդամահատել: Սկսում ենք կտրատել այն սուր ու կպչող ճանկերը, որ շարվել են տռզած մարմնի վրա: Բացվում է ծոցի մեջ, սրտի կողքին դրած քսակը, հազիվ մի կամ երկու ճանկն է կտրվում, այդ քիչ է, պարտականը վախենում է, գալիս է նրա ձին, խրխնջալով կանգնում է թվանշան պահողի դռանը, մի երկու ճանկ էլ ընկավ, դուրս է գալիս կովը բառաչելով, ոչխարը մայելով, այծը մկկալով, գալիս է նաեւ պանրի պարկը, յուղի տիկը, ընկնում է վաճառականի շեմքի մոտ: Այդ ամենքը վրա են թափվում, ուժ ուժի են տալիս, հազիվ են կարողանում ուռած թվանշանի բոլոր ճանկերը կոտորել, մնում է մարմինը, որին նորից քնացնում են: Սա մի շատ երկար պրոցես է. կվերջանա ով գիտե երբ: Դեպքը մեկը չէ, երկուսը չէ: Մարդիկ գերի են դառնում տոկոսին խմբերով, գյուղերով: Ժողովուրդը հասկանում է, թե ինչ է վաշխառուի տոկոսը այն գործողությամբ, որ նա է կատարում, ժողովուրդը նրան չի քննում, չգիտե, թե ի՞նչ է նա, ի՞նչ դեմք ունի, ինչո՞վ է ապրում: Ժողովուրդը միայն զգում է նրան, ճանաչում է այդ տոկոսը այն ժամանակ, երբ նա այրում է իր մեջքն ու ուսերը, հենց այդ պատճառով ժողովրդական լեզվի մեջ «տոկոս» բառին կպած է «կրակ» բառը: «Չեմ ուզում կրակ-տոկոսի տակ մտնել, ասում է նա, «թե չէ փող տվող շատ կա»: Շատ էլ չի ուզում, բայց չուզելով հեռու գնալ չի կարելի: Այսպես ահա տոկոսը գերել է գյուղացուն, եւ այսպես է Գորիսը դեպի իրան ձգում գյուղերը: Դրա պես մեծ վաշխառության կենտրոն հազիվ թե միայն ինքը չէ:

Համեմատելով Շուշու եւ Զանգեզուրի գավառները՝ ես մեծ տարբերություն եմ տեսնում այդ միմյանց սահմանակից երկու երկրների ազգաբնակության


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru


ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՍՔԸ

դրության մեջ: Շուշու գավառի գյուղացին դեռ անելու եւ աշխատելու միջոց ունի, սպառման կենտրոնը կա, որ Շուշի քաղաքը եւ նրա արդյունաբերությունը իր գինը չի կորցնում, նրա արտը, այգին, բանջարանոցը տալիս են այնպիսի մթերքներ, որոնց մեծ կարոտություն կա: Նա ծախում է, ինչ որ ավելացնում է իր պաշարից, իսկ եթե քաղաքից մոտ է, բավական է, որ մի քիչ խելք ունենա եւ իր ապրուստի ապահով միջոցը հեշտ կճարի: Մանավանդ հայ գյուղացին. նրա ապրանքը միշտ ծախված է, լավ գին ունի: Եթե հայ գյուղացին այժմ առեւտրական հրապարակում դեռ շատ փոքր դեր է կատարում, եթե թուրք գյուղացին է այսօր «աշխարհի լիացնողը», պատճառն այն է, որ հայը շատ թեթեւ է նայում իր տնտեսության, շատ քիչ քանակությամբ է մթերք վաճառահանում: Բայց ղարաբաղցի հայը, վստահ իր հարուստ բնության, երկրի վրա, այդպիսի մանր հարցերով չի զբաղվում, նա արդեն սովորում է փող աշխատել այնպես, ինչպես քաղաքացին է աշխատում: Առհասարակ ղարաբաղցի գյուղացին գլուխը բարձր է պահում, ունի մի հայտնի աստիճանի հպարտություն եւ միայն վերջին անճարության հասած ժամանակն է ուրիշի համար մշակություն անելը հանձն առնում (իմ խոսքերը գլխավորապես Վարանդա գավառակի բնակիչներին են վերաբերում):

Բայց այդպես չէ Սյունիքը: Սյունեցին չունի սպառման կենտրոն, չի ճանաչում շահավետ հրապարակ, նա իր տանը, իր դռանն է ծախում, ինչ որ ծախելի է, իսկ նրա դուռը եկողը մանր վաճառականն է, չարչին: Որքան գյուղացին ուզում է, թող խելքը բանեցնե. չարչին վերջիվերջո, ինչպես ասում են, նրա ատամները կհանե, միշտ կխաբե: Երկիրը, պետք է ասել, ավելի աղքատ է, քան հարուստ: Բարձր լեռնադաշտերը, որոնց վրա տարվա մեծ մասը սարսափելի ցրտերն են տիրում, գյուղացու արտերի տեղերն են, իսկ սարսափելի ձորերը, որոնց մեջ ամառը խեղդող տոթն է բռնանում, գյուղերի տեղերն են: Հողը, կարծես, հիվանդոտ է, մաշված, տալիս է վտիտ, սեւ ցորեն, որ շատ ցած գին ունի: Լեռները չեն ընդունում այգիներ՝ պտղատու ծառերով: Ավելացրեք այդ ամենի վրա եւ այն, որ այդ երկիրը ունի հաղորդակցության զարհուրելի ճանապարհներ, եւ դուք մասամբ կհասկանաք, թե ինչու սյունեցին մեծ մասամբ մշակ է, աղքատ մշակ, որ ուրիշի համար բան անելով պիտի ապրի: Տնտեսական ծանր հանգամանքները, «կրակ-տոկոսը» հարկադրում են նրան հեռանալ հայրենիքից, ապավինել ուրիշ երկրների օգնության: Ամեն տարի, երբ գարնան տաքը բաց է անում ձյուների եւ բուքերի մեջ խեղդված երկրի դռները, Սյունիքից մեծ-մեծ խմբերով հեռանում են հարյուրավոր, հազարավոր գյուղացիներ, գնում են գլխավորապես Բաքու՝ մշակություն անելու: Քանի որ երկաթուղի չկար, Շուշու եւ Բաքվի մեջ ընկած ահագին տարածությունը 10-15 օրվա ճանապարհ էր. մշակները հանձնում էին իրենց պարկն ու շորը մի ֆուրգոնի, իսկ իրենք համարյա թե ոտով էին այդքան ճանապարհը գնում:

1878 թվականին ես Բաքու էի եւ տեսա, թե ինչ բան է զանգեզուրցի մշակը: Գալիս էին, գալիս, խմբերով, մեծ-մեծ բազմություններով մտնում էին քաղաքը, կարավանսարաներում տեղ չկար նրանց համար, որովհետեւ փող էին պահանջում, ուստի նրանք թափվում էին փողոցներում, մանավանդ «Ցիցիանովսկի սկվեր» ասված փոքր այգում եւ նրա շուրջը գիշեր ու ցերեկ փողոցներում առանց անկողնի, առանց շորի ընկած ողորմելիները ամեն մի պատահածի խնդրում, աղաչում էին, որ իրանց մի գործ տան: Մանրամասնությունները մոռացել եմ, բայց այժմ էլ, 10 տարուց հետո, իմ աչքիս առջեւ պարզ պատկերվում է այն ընդհանուր տեսարանը, որին ականատես էի ամեն օր, հիշում եմ այն մոխրագույն մասսան, նվաղած, թառամած դեմքերը, այն առաջավոր եւ հուսահատ շարժվածքները, որոնցով դիմում էին անցորդին: Կային ամեն հասակի տեր մարդիկ՝ 12-14 տարեկան երեխաներ, ժիր եւ առույգ երիտասարդներ, ալեւորներ, թողած իրենց տունն ու տեղը, եկել էին այդ մեծ քաղաքը, որ իրենց ողնաշարի պնդությունը փորձեն, հաց աշխատեն: Իհարկե, շատ աղետալի մահեր, շատ անժամանակ կորուստներ եւ շատ սրտատոչոր դժբախտություններ էին պատահում այդ ամբոխի մեջ. բայց ես չգիտեմ, մոռացել եմ: Չեմ մոռանում (եւ երբեք չեմ մոռանա) մի թշվառ սյունեցու, որ սիֆիլիսով եւ մի քանի ուրիշ կեղտոտ հիվանդություններով վարակված էր: Նա այնպես հուսահատ էր, այնպես շլացած, գժված, որ նույնիսկ փողոցում էլ բաց էր անում իր գարշելի վերքերը մարմնի ծածուկ տեղերի վրա, ցույց էր տալիս ամենքին եւ աղաչում էր մի ճար անել: Նրան խաբել, հրապուրել էին կնիկ ասված մի քանի հրեշ արարածներ, որոնք ապրում էին քաղաքի խուլ ծայրերում եւ համարյա թե թմբուկներով էին հրավիրում մարդկանց իրանց սարսափելի գիրկը մտնելու, նրանք կամեցել էին ծաղրել թե պատժել պարզասեր եւ քիչ վայրենաբարո լեռնցուն եւ պարգեւել էին նրան անճոռնի պալարներ: Խեղճը օրեցօր հուսահատության ծայրին էր հասնում, նա ուներ կնիկ, երեխա եւ դատապարտված էր պարապ ման գալ, դեն դնել հայի ավանդական ամոթխածությունը: Բաքվից ես Շուշի ետ դարձա ֆուրգոնով, 10 թե 11 օր ճանապարհորդեցի Կուր գետի անսահման տափարակներում: Մեր թուրք ֆուրգոնչին, որ իր հինգ մատների պես էր ճանաչում այդ սարսափելի միանման, մեռած, անապատ հարթավայրը, մի տեղ, ճանապարհի կողքին մի փոքրիկ թումբի մոտ ցույց տվեց մեզ այդ իսկ սյունեցու գերեզմանը: Այդ թուրքի ֆուրգոնումն էր հիվանդը տուն ետ դառնում, բայց հուսահատությունը կամ գուցեեւ անխնամ թողած վերքերը սպանել էին նրան ճանապարհին: Թուրք ֆուրգոնչին իր մարդասիրությունն էր ցույց տվել, մի փոս էր փորել եւ նրա մեջն էր խրել անբախտ մարդուն: Այդ գերեզմանը այն տխուր, անբնակ անապատում... Ես հիշում եմ տեղի դիրքը, այն հողի հազիվ նկատելի կույտը, որով ծածկված էր պանդխտի կուրծքը նա՝ այդ գերեզմանն է կրում իր վրա հայի պանդխտամոլության պատկերը: Դարերի ընթացքում այդ ազգը չխրատվեց, նա իր ոտների տակ գծեց անթիվ-անհամար ճանապարհներ դեպի աշխարհի բոլոր կողմերը, անհիշատակ տխուր գերեզմաններ թողեց այդ ճանապարհների կողքերին եւ այժմ էլ պանդխտության կորստյան նորանոր ճանապարհներ է բանում, այժմ գնացել է, դուրս եկել մի կողմից Ամերիկա, մյուս կողմից այնպիսի տեղեր, որ հասկանալ, ճանաչել անգամ անկարելի է:

Միանգամայն ցավալի է ասել, որ մշակների այդ ահագին բազմությունը բացառապես Սյունիքի հայ գյուղերից է դուրս գալիս: Թեեւ այդ գավառի թուրք ազգաբնակությունը հայերից շատ որ չլինի, քիչ էլ չէ, բայց թուրքը կորստաբեր պանդխտության սովոր չէ, լավ թե վատ, ապրում է իր տանը: Սյունեցի մշակը տարվա ամենալավ ժամանակը օտարության մեջ է անց կացնում. գարնան սկզբին գնում է, աշնան վերջին վերադառնում: Աշնան վերջին Շուշու հրապարակում կանգնած կարելի է տեսնել այդ տարափոխիկ թռչուններին: Տեսնում ես, նավթից սեւացած, ժանգոտած, մշակի շորեր հագած սյունեցին մի նոր սնդուկ մի ձիու վրա բեռնած տուն է գնում, այդ սնդուկն է նրա աշխատանքը եւ գուցե մի քանի ռուբլի փող:

Բայց սյունեցին եւ մասնավորապես Սյունիքի Ղափան գավառակի բնակիչը իր տանը մնալով էլ կարող է մշակություն անել. ես վերեւում Սյունիքի բնությունը ավելի աղքատ անվանեցի, քան՝ հարուստ: Այդպես ասելիս ես նկատի ունեի բնության այն հարստությունները, որոնք մատչելի են ամեն մեկին, որոնք հաց ու ապրուստ են տալիս թե՛ անհատին եւ թե՛ մի ամբողջ համայնքին: Թե չէ, ո՞վ չգիտե, որ Սյունիքը հանքային անսպառ հարստություն ունի իր մեջ պահած: Ղափանի գեղեցիկ պղնձահանքերը մեծ անուն ու հռչակ ունեին, այնտեղ այժմ բան են անում հազարավոր մարդիկ: Սակայն այդ հարստությունը կապիտալին է մատչելի, տեղական հասարակությունների համար քիչ արժեք ունի: Հանքերը հույների ձեռքին են: Հեռու տեղից գալիս է հույնը, բերում է իր հետ շատ թե քիչ փող, նստում է որեւէ տեղ, գործ է սկսում: Այդ գործը համարել են եւ համարում են միայն հույնի գործ, նա է միակ տերը, եւ եթե նա չլինի, ոչ ոք չի մոտենա հանքերին: Եվ հույնը բույն է դրել այդտեղ, բնակություն է հաստատել, իր ձեռքի տակն է հավաքել տեղացիներին: Ղափանի պղնձահանքերը տեսնելը ես մի ուրիշ ժամանակի թողեցի, որովհետեւ Գորիսից շատ հեռու են, բայց այժմ ավելորդ չէ մի երկու խոսք հաղորդել ընթերցողիս, որ ես կարողացա իմանալ: Պղնձահանքերից մի քանիսը պատկանում են հայ եւ թուրք կալվածատերերին, որոնք համեմատաբար թեթեւ վարձ են ստանում: Արդյունագործության համար ունենալով նահապետական կարգ ու կանոններ եւ գործիքներ՝ հույները չէին կարող այնքան լավ աշխատանք անել, եթե չիմանային, թե ինչպես է հարկավոր մշակ պահել: Հույնը վաղուց արդեն գիտե տեղացու պակասությունները. նա ռոճիկ է նշանակում, բանեցնում է մշակին, եւ ունի բոլոր միջոցները այդ ռոճիկը դարձյալ մաս-մաս դեպի իրեն ետ դարձնելու համար: Օրինակ, մշակը փողի հարկավորություն ունի, նա փողը տալիս է, մեկին հինգ գրում, տոկոսներ բարդում, երկար բանեցնում է, մի քանի ամսվա ռոճիկը կտրում է, մշակի արած պարտքը առաջ է քաշում, այնպես կապկապում է նրա ոտն ու ձեռքը, որ նա միշտ պիտի անե եւ ոչինչ կամ շատ քիչ ստանա: Խուլ, հեռու ընկած անկյուն է, ո՞վ է հարցնողը: Պարզ է, որ իր երկրում մշակություն անելով էլ գյուղացու գրպանում շատ բան չի մնում, եւ նա գնում է Բաքու, ուր գոնե կարող է իր արածի վարձն ստանալ: Անցյալներում Մութաֆյանց եւ ընկ. մի գործարան է բացվել, ինչպես ասում են, այս ընկերությունը գործը կանոնավոր կերպով է սկսել եւ գուցե մի ժամանակ կարող կլինի ուրիշ կարգ ու կանոն հաստատել:

Այս ամենից հետո մի քանի խոսք էլ խոսենք ներկա՝ 1888 թվականի մասին Սյունիքի վերաբերյալ: Ինչպես հայտնի է, այս տարի ծանր տարի է բոլոր կողմերի համար, բայց Սյունիքի համար կատարյալ թշվառություն կլինի այս տարին, այնքան աղքատ երկիր է սա: Գորիսում եղած ժամանակ լավ հաց չէր ճարվում, հարուստները Նուխու կողմերից բերել տված ցորենն էին գործածում, ամեն ինչի թանկություն էր, հացը, տեղական ալյուրից թխած հացը, մի սեւ, հում, կոշտ զանգված է, որ մեծ դժվարությամբ է ուտվում: Այդ դեռ ցավ չէ, եթե ալյուրը գոնե առատ լինի, մի քիչ համ տալու համար եփած կարտոֆիլի ջուրն են խառնում խմորի հետ,

Շարունակությունը՝ էջ 93

## Գորիսի քաղաքապետարանը տարբեր ժամանակներում տեղակայվել է այս շենքերում



Լուսանկարը՝ Վ. Յովհաննիսյանի

Մինչեւ 1991թ.՝ մոտ 20 տարի, շրջխորհրդի գործկոմի այս շենքի (Մաշտոցի 3) 3-րդ հարկում էր գտնվում Գորիսի քաղխորհրդի գործկոմը:



Գորիսի քաղաքապետարանի ներկայիս շենքն է՝ 1991թ.-ից (Անկախության 3): Կառուցվել է 1957-58թթ., կից կառույցը (աջից) ավելացվել է 1980-ականներին: Մինչեւ 1991թ. ծառայել է իբրեւ ՀԿԿ շրջկոմի շենք:



Լուսանկարը՝ Վ. Յովհաննիսյանի

Մաշտոցի 14 շենքը մինչեւ 1921թ. պատկանում էր Զանգեզուրի ազգային խորհրդի նախագահ Միշա (Միքայել) Պարոնյանին: Պետականացվելուց հետո 20-ականներին ծառայել է իբրեւ քաղաքային խորհրդի շենք:



Լուսանկարը՝ Վ. Յովհաննիսյանի

Անկախության 7 հասցեում գտնվող այս շենքը 20-ականների 2-րդ կեսին ծառայեց իբրեւ քաղաքային խորհրդի շենք:

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010



# Գորիս

Երվանդ Լալայան



Զանգեզուրի ոստիկանական շրջանը այժմ բաժանվում է չորս մասի՝ Հաջիսամլու, Ալիանլի, Բարկուշատ եւ Հաքարու: Հաջիսամլիի մասը բռնում է Շալվա-չայի, Ալաքչու եւ Հոչասի ջրաբաշխները, Ալիանլուն՝ Հաքարի գետի ձախ կողմը, որ տարածվում է Շուշի-Գորիսյան խճուղուց հարավ: Բարկուշատի եւ Հաքարու մասերը բռնում են Բարկուշատ եւ Հաքարի գետերի ստորին եւ միջին ընթացքների ափերը: Այս գավառամասի գրեթե մեջտեղում գտնվում է Գորիս ավանը, որ բաժանվում է Հին եւ Նոր մասերի: Այս վերջինը կազմում է Զանգեզուրի գավառի կենտրոնը: Այստեղ են զետեղված բոլոր վարչական հաստատությունները, այստեղ են խմբված այս գավառամասի մտավորական եւ առեւտրական ուժերը:

Գորիսի արեւելյան կողմում ձգվում են Տեղի, իսկ արեւմտյան մասերում՝ Ուչքափալարի բարձրավանդակները. սրանք հարավում մոտենում են միմյանց, իսկ հյուսիսային կողմում հեռանում են միմյանցից՝ կազմելով մի փոքրիկ հովիտ, որի միջով հոսում է Գորիս գետակը:

Տեղի բարձրավանդակը կտրվում է մի ուրիշ ձորակով, որ արեւելքից իջնում է դեպի հս-արմ: Ձորակի մոտ բարձրանում է Լաստ գագաթը, իսկ սրա մոտ՝ մի ապառաժ, բարձր ժայռ, որի վրա հնում բերդ է եղել: Այժմ նրա բնականից փորված, տեղ-տեղ նոր պատով կարկատած պարսպի հետքերն են մնում: Բերդի ժայռն իր շարունակության վրա ունի զանազան մեծության կոնաձեւ գագաթներ, որոնք կազմված են ջրի ազդեցությամբ: Նույնպիսի կոնաձեւ ժայռեր կան նաեւ մոտակա ձորակի երկու կողմին: Սրանք ընդհանրապես կարմիր ավազի շերտերից են բաղկացած, տեղ-տեղ ժայռ քարերի խառնուրդով: Կան որպես բացառություն սպիտակներ էլ: Նույնպիսի կազմություն եւ կարմիր կամ սպիտակ գույն ունի նաեւ բարձրավանդակի բերդի դիմաց գտնվող լանջը, որ ուղղահայաց զառիվայր ունի: Այս լանջի, ինչպես նաեւ ձորակի եւ բերդի քերծի մեջ կան բազմաթիվ մեծ ու փոքր արհեստական քարայրեր, որոնք երբեմն ծառայել են որպես բնակարաններ, իսկ այժմ առավելապես որպես խոտանոցներ են գործածվում: Ահա այս արհեստական քարայրերն են կազմել մելիքանիստ Գորիս գյուղը, որի աղքատ դասակարգը դարձյալ շարունակում է այդպիսի բնակարաններ փորել իր համար: Իսկ հարուստներն սկսել են շինել կանոնավոր տներ: Գյուղի կենտրոնում գտնվում է հին, հասարակ եկեղեցին, իսկ սրա մոտ՝ Մելիք-Հյուսեինյանների նախկին ապարանքը, որ այժմ ավերակ է:

Գյուղն ընդհանրապես կեղտոտ է, անկանոն եւ միմյանց վրա դիզված տներով ու նեղ, ծուռումուռ փողոցներով:

Սրա հակապատկերն է ներկայացնում Նոր Գորիսը, որ հնից բաժանվում է Գորիս գետով: Սա հիմնված է 1870թ. Ստարացկի գավառապետի ձեռքով եւ Մանուչար բեկ Մելիք-Հյուսեինյանի խորհրդով: Սրա տեղը հարթ է, նեղ, բայց բավական երկար: Հինգ կանոնավոր եւ շատ լայն փողոցներ ձգվում են հարավից հյուսիս՝ հետզհետե հյուսիսային կողմից ավելի ու ավելի երկարելով: Ուրիշ հինգ փողոցներ էլ խաչաձեւ կտրում են այս փողոցները: Գրեթե կենտրոնում գտնվում է մի մեծ հրապարակ, որից ներքեւ կան մի շարք խանութներ, իսկ սրանց առաջ՝ նոր տնկած քաղաքային ընդարձակ պարտեզը՝ հասարակ փայտե ցանկապատով: Այս պարտեզը մի փողոցով բաժանվում է վերին եւ ներքին մասերի, իսկ այս փողոցի եզրին կանգնեցված է Գ.Սիրունյանի աղբյուրը, որի ջուրը չորս խողովակներից դուրս է թափվում գռերի մեջ:

Տներն ընդհանրապես գեղեցիկ են, մեծ մասամբ երկհարկանի, տաշած քարից շինված, փայտե կտուրներով ծածկված: Գրեթե բոլոր տներն իրենց առջեւ պարտեզներ ունեն՝ մի քանի պտղատու ծառերով:

Եկեղեցին, որ այժմ է միայն կառուցվում սաստիկ դանդաղությամբ, բավական փոքր է ու առանց համաչափության, դռներն անհամեմատ մեծ են, իսկ պատուհանները՝ չափազանց նեղ:

Միակ պետական, երկդասյան տղաների դպրոցի շենքը շատ հասարակ եւ անհարմար է:

Բնակիչները հայ լուսավորչականներ են, ընդամենը 460 տուն, 1697 արական, 1449 իգական սեռի՝ ընդամենը 3146 հոգի:

Զբաղվում են երկրագործությամբ, այգեպանությամբ եւ առեւտրով: Շուկան կենդանություն է ստանում, երբ սար գնացող թուրքերը լցվում են ավանը:

Նոր Գորիսից դեպի հյուսիս հազիվ մի վերստ հեռավորությամբ միեւնույն հովտում գտնվում է մի քարաշեն գեղեցիկ վանքի ավերակ՝ քանդված պարսպով ու մի քանի խցերով: Մի քիչ ներքեւ կա մի սառնորակ աղբյուր, որ այժմ Գ.Սիրունյանի ծախսով տարված է Նոր Գորիս: Ոչ մի արձանագրություն չկա բոլոր ավերակների վրա, միայն ավանդությունը պատմում է, թե սա շատ հարուստ վանք է եղել, ունեցել է բազմաթիվ հոտեր, որոնց տված կաթը խողովակներով հոսել է սարից մինչեւ վանք: Այստեղ է եղել եւ այն զորավոր զանգը, որ իր անունը տվել է գավառին:

## ՁԱԳԵՁՈՐ

Այս վանքից դեպի հս-արլ ձգվում է մի բավական խոր ձոր, որի միջով հոսում է Գորիս գետի օժանդակ Շոռջուր վտակը, որի անունով եւ կոչվում է ձորը: Իսկ այն մասը, որ երկու կողմից շրջապատված է բարձր ժայռերով, եւ որոնց մեջ կան բավական թվով քարայրեր, կոչվում է Ձագեձոր կամ Ծակերի ձոր: Այս «ծակերը» կամ «քրատակերը» հեշտությամբ փորված են ձորի լանջերին, որովհետեւ Զանգեզուրը, մի ժամանակ ջրի տակ լինելով, այս բարձրությունները գոյացել են ավազախառն հողի շերտերից: Այս ծակերը զանազան մեծության են, եւ նրանցից մի քանիսը միմյանց հետ միացած են նեղ անցքերով: Ծակերից շատերը շատ բարձր են գտնվում եւ այն էլ այնպիսի ուղղահայաց տեղերում, ուր ոչ մի մարդկային ոտք չի կարող բարձրանալ: Ծերունիները պատմում են, որ լսել են իրենց պապերից, որ այդ ծակերում բնակվողները թոկեր էին քաշ տալիս եւ բռնած բարձրանում: Մինչեւ անգամ այժմ էլ մի ծակի վերեւ մի գերան է ձգված, որից հավանաբար կապել են թոկը: Ծերունիները նկարագրում են, թե ինչպես կանայք, երեխան մեջքներին կապած, ճարպկությամբ բարձրացել են այդ թոկերով: Դրանց խոսքերը հաստատվում են Աբրահամ Կրետացու վկայությամբ, որ ասում է Խնձորեսկի մասին. «Ի բարձրաբերձ տեղիս յայսկոյս եւ յայնկոյս դեմ հանդիման միմյանց՝ փորեալ ապառաժ վէմս քարայր, որ են մաղարայք, իւրաքանչիւր ոք վասն իւրեանց տուն բնակութեան շինեալ բնակէին. եւ այն էր զարմանք, որ կաշէ փոկովք ելանէին եւ իջանէին կանայք՝ զստնդեայ տղայս կապեալ ի վերայ ողին իւրեանց, նոյնպես եւ զսափորն ջրոյ եւ հարկաւոր իրաց. այնպես փոկով ելանէին ի վեր եւ մտանէին ի բարձրագոյն որջս վիմաց, եւ քարշէին զփոկէ առաասանն ի վեր. մարդ ոչ կարէր ելանել»:

Քարայրերից նշանավոր է «Կարմիր եկեղեցի» կոչվածը, որտեղ մինչեւ այժմ էլ Կարմիր կիրակիի օրը բազմաթիվ ուխտավորներ են գնում՝ հիմնականում Հին եւ Նոր Գորիսներից: Այն գտնվում է ձորի աջ կողմին՝ գրեթե գագաթին: Դաշտի վրա կա մի փոքրիկ գերեզմանատուն, որտեղից մի նեղ կածան քերծի լանջերի վրայով իջեցնում է դեպի ձորը, ու բացվում է մի փոքրիկ քարաշեն դուռ: Անցնելով այս դռնից՝ մտնում եք 9.23մ (4 ս. եւ 1 արշ.) երկարությամբ, 4.97մ (2 ս. եւ 1 արշ. ) լայնությամբ եւ 2.84մ (4 արշ.) բարձրությամբ մի այրի մեջ, որի միայն ձորահայաց կողմին քարե պատ է քաշած:

Հյուսիսային կողմում շինված է սեղանը, որի վրա դեռեւս կանգուն մնում է վեմքարը: Ինչպես երեւում է, տեղն անհարմար լինելով՝ հյուսիսային կողմում են զետեղել սեղանը: Արեւմտյան կողմում՝ հողի մեջ, փորված է ավազանը: Սեղանի վրա կան բավական թվով կավե կանթեղներ, որոնցից միջինը շատ գեղեցիկ է:

Կարմիր եկեղեցուց փոքր-ինչ վերեւ՝ նույն ձորակում՝ վտակի անմիջապես ափին, գտնվում է մի քարաշեն փոքրիկ եկեղեցու ավերակ, որի դռան կամարակալ քարի վրա գրված է. «Յիշատակ է սբ. եկեղեցիս Մելիք Օհանին եւ իւր ծնողացն Մելիք Բաղուն թվ. ՌՄԺԴ»:

Սույն եկեղեցու դիմաց գտնվող ժայռի գագաթին նկատելի են փորվածքներ: Ասում են, թե այս տեղը ծառայել է որպես բերդ:

## ՍԻՆԴԱՐԱ

Ձագեձորից փոքր-ինչ բարձր ձգվում է մի ուրիշ հովիտ, որ կոչվում է Սին-Դարա: Այստեղ կա մի քարաշեն, կամարակապ եկեղեցու ավերակ եւ բավականաչափ «քարատակ»-ներ, մի քանիսը՝ քերծերի, մյուսները՝ հողի մեջ փորված:

Ծերունիների ասելով՝ սա Վերի Շենի, այսինքն՝ Հին Գորիսի ամառանոցն է եղել:

## ՀԻՆ ԳՈՐԻՍ ԿԱՄ ՎԵՐԻ ՇԵՆ

Գորիս գետի ուղղությամբ դեպի հյուսիս ձգվում է բլրակների մի շարք, որոնց մեջ կա մի բարձր, կարմիր ժայռ. տեղացիները սրան անվանում են «Պղնձաքար» եւ սրա անվամբ էլ ամբողջ բլրակների շարքը՝ Պղնձաքարի սարեր: Այս Պղնձաքարի ժայռի մեջ կա մի բնական, 10.65մ (5ս.) երկարությամբ, 8.52մ (4ս.) լայնությամբ եւ մոտ 6.39մ (3ս.) բարձրությամբ բնական այր, ուր այժմ ոչխարներ են մակաղում: Այս ժայռից փոքր-ինչ հյուսիս՝ նույնանուն բլրակների լանջին, գտնվում է Վերի Շեն կամ Հին Գորիս գյուղը: Այստեղ էլ տների մեծագույն մասը, մանավանդ հները, «քարատակ»-ներ են, միայն ոչ թե քերծերի, այլ ուղղակի բլրի լանջին փորված: Սրանցից շատերը հենց այժմ էլ ծառայում են որպես բնակարաններ, եւ բացի բոլոր մյուս անհարմարություններից՝ ունեն նաեւ այն անտանելի խնդիրը, որ գարնանը նրանց մեջ սաստիկ կաթում է:

Գյուղում կա մի փոքրիկ, կիսով չափ քերծի մեջ փորված եկեղեցի Նարակունք (Նորակունք) անունով, որի դռան կամարակալ քարի վրա կա հետեւյալ արձանագրությունը. «թ. ՌՀԷ. Ես Նասիպ կանգնեցի սբ. եկեղեցիս ի փրկութիւն հոգւոյս»: Այս եկեղեցին այժմ էլ իբրեւ աղոթատեղի է ծառայում: Բացի սրանից՝ կա նաեւ մի ուրիշ եկեղեցու ավերակ:

Այս գյուղում այժմ բնակվում են 40 տուն հայեր՝ 219 արական, 193 իգական՝ ընդամենը 412 հոգի: Գյուղացիների զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն են:

Մելիք-Հյուսեինյան Մանուչար բեկը պատմում էր, թե այս գյուղում եղել է երկու բրգաձեւ բարձր շինություն: Իր հայրը՝ Մելիք Հարությունը, հրամայել է քանդել դրանցից մեկի գլուխը, եւ երբ մի անցք է բացվել, մի մարդ են կախել ներքեւ. սա իջել է բավական ցած եւ գետնի մեջ տեսել ահագին ժայռ քարերով ծածկված երկու սենյակ, որոնցից մեկի մեջ գտել է ձիու բրոնզե սանձ: Այն ահագին սանձն այժմ էլ մնում է Մանուչար բեկի մոտ: Վերջին ժամանակներս այդ հինավուրց շինությունները քանդվել են:

Վերի Շենից դեպի հյուսիս՝ մոտ երկու վերստ հեռու մի ձորակի մեջ, բխում է մի սառնորակ աղբյուր: Սրա մոտ կան ահագին քերծեր, որոնցից ամենամեծի մեջ կա երեք մեծ «քարատակ». սրանցից երկուսը միմյանց հետ հաղորդակցվում են արհեստական կերպով բացված մի կլոր ծակով: Սրանց մոտ կա եւ մի ուրիշ փոքրիկ քարատակ, որ երկու նեղ անցք ունի: Սա սրբատեղի է համարվում, եւ թեպետ ոչ մի խաչ, ոչ մի պատկեր չկա, բայց եւ այնպես ձեթի հին կանթեղներ են վայր ածած մեծ թվով, եւ ամբողջ քարատակը սեւացած է վառված ձեթի ճրագների եւ մոմերի ծխից: Մինչեւ այժմ էլ այնտեղ ուխտավորներ են գալիս: Այս ժայռերի դիմաց մի ուրիշ ժայռ եւս կա՝ երկու միմյանց հետ հաղորդակցություն ունեցող բնական այրերով: Սրանցից մեկի անկյունում մի օջախ կա, որ ցույց է տալիս, թե սրանք մի ժամանակ իբրեւ բնակարան են ծառայել:

Սրանցից էլ մոտ 40 մետր հեռու՝ Վարարակի ափին, դարձյալ գտնվում են քերծեր, որոնց մեջ կա մի ահագին այր, որ հաղորդակցվում է ուրիշ երկու փոքրիկ այրերի հետ:

Քիչ էլ հեռու՝ նույն Վարարակի մոտ, կա մի ուրիշ բոլորովին կարմիր քերծ, որի մեջ եւս կան բավականաչափ քարատակեր:

Գորիս գետի հովիտը շարունակվում է նաեւ Գորիսից ներքեւ դեպի հվ-արլ եւ գնալով լայնանում ու խորանում է: Ձորի երկու լանջին կան բավական քարայրեր, որոնցից մի քանիսը շատ մեծ են եւ շատ բարձր տեղ են գտնվում: Սրանք մի տեղում չեն խմբված, այլ ցրված են: Նկատելի է, որ այս այրերից շատերն արհեստական են եղել եւ հավանաբար շինված են պաշտպանության համար: Կան նաեւ այնպիսիներ, որոնց մասին կարելի է կարծել, թե ջրի ազդեցությամբ են ստեղծվել: Այս ձորն այժմ էլ ամբողջովին պատված է այգիներով, ուր բացի խաղողի որթից՝ կան նաեւ թթենիներ, կեռասենիներ, խնձորենիներ եւ այլն: Ինչպես երեւում է, հին ժամանակներում էլ այս ձորն էլ առատ է եղել խաղողի որթերով, որովհետեւ ժայռերի մեջ հնձաններ են փորված:

Նշանավոր է նաեւ այն, որ հնձանների մոտ շինված են ձի կապելու տեղեր, ուր ձին միշտ կապած պատրաստ է եղել՝ ավազակների հարձակման դեպքում՝ տիրոջը փախցնելու: Ժողովուրդը դեռ այսօր էլ հիշում է, թե պարսից տիրապետության ժամանակ որքան վտանգավոր էր այդ ձորով անցնելը: Այս ձորի աջ ափին՝ Գորիսից հազիվ երկու կիլոմետր հեռավորության վրա, բարձրանում է Օփավոր բերդը: Սա ձորի գագաթին բարձրացող մի ահագին ժայռի վրա է գտնվում, որի մեջ երեւում են բավական թվով քարայրեր: Պարիսպը նույնիսկ ժայռից է փորված, իսկ տեղ-տեղ արհեստական պատ է քաշած:

Մի կիլոմետր էլ հեռու՝ դարձյալ գետի աջ ափին, բայց փոքր-ինչ հեռու եւ բարձր գտնվում է Քարահունջ գյուղը, որտեղ է Շոռան ջրվեժը: Այս գյուղի տները՝ միմյանց վրա կիտված, մի քանիսը՝ քարատակ, մի քանիսը՝ դարադամ, մի քանիսն էլ կանոնավոր, փայտե կտուրներով գեղեցիկ սենյակներ են:

Հին եկեղեցին այժմ ավերակ է, իսկ նոր եկեղեցին շինված է հին գերեզմանատան մեջ: Գյուղի արեւելյան մասը 1889 եւ 1896 թվականներին երկրաշարժից պատառվել եւ նստել է (փոս է ընկել), ուստի բնակիչները տեղափոխվել են մյուս մասը:

Այս գյուղում, ինչպես ասել ենք, կան երկաթի եւ կավիճի անմշակ հանքեր եւ ծծմբային տաք ջուր:

Բնակիչները բնիկներ են, 105 տուն, 543 արական, 437 իգական՝ ընդամենը 980 հոգի: Զբաղվում են երկրագործությամբ, անասնապահությամբ եւ այգեպանությամբ: Կան նաեւ նշանավոր հյուսներ, որոնք աշխատում են հիմնականում Բաքվում:

Ժողովրդի մտավոր վիճակը, մյուս գյուղերի հետ համեմատելով, բավական բարձր է: Դեռ 1893թ. բացվել է հայոց ծխական երկսեռ դպրոց, որ շուտով նույն գյուղացի հայտնի բարեգործ Առաքել Ծատուրյանը առել է իր հովանավորության ներքո եւ պահել մինչեւ դպրոցների փակվելը՝ 1896թ.: Բացի այս դպրոցից՝ շատերն էլ ուսել են քաղաքներում, եւ այժմ այս գյուղից կան երեք համալսարանական, եւ տասը հոգի՝ միջնակարգ դպրոցներում ավարտողներ:

Քարահունջից էլ մոտ վեց կիլոմետր դեպի հարավ՝ նույն ձորի աջ կողմում, բարձրանում են երեք առանձին, ահագին ժայռեր, որոնցից մեկի վրա կա հինավուրց ամրոց: Այժմ ոչ մի ճանապարհ չկա նրա գլուխը բարձրանալու, միայն հեռվից են երեւում բնականից թողնված պարիսպն ու այրերը: Ոմանք սրան Ղըզ-ղալա են կոչում, ուրիշներն էլ՝ Գյավուր-ղալա:

**«Ազգագրական հանդես», 1898թ., №2**

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց երկիր





# Ակսել Բակունց
# Հյումբաթի ձոր

**ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ**





Լուսանկարը՝ Կ. Հովհաննիսյանի

**Գորիսեցիները հիմա Հյումբաթի ձոր են անվանում այս վայրը: Մինչդեռ Բակունցը նկարի է ունեցել Գորիս գյուղի ձորերից մեկը:**

Գյուղը երեք թաղ ունի՝ Հյումբաթի ձոր, Միջին մահլա եւ Գյունեյ թաղ: Երեք թաղն էլ ձորերի մեջ են, տները՝ գետնափոր, փողոցները՝ քարայծի ճանապարհ: Հնուց բերդ է եղել Հյումբաթի ձորում, ապահով թաքստոցներ, որոնց հետքերն այժմ էլ մնում են, որպես նեղլիկ անցքեր սեպաձեւ ժայռերի լանջին:

Սրածայր ժայռեր են կողք կողքի շարված, փոքր ու մեծ, մեկը՝ ծուռ, կողքին թեքված, փուլ եկող դեզի նման, մյուսն՝ ուղղաձիգ, որպես բարակ բարդի: Ձյունն ու անձրեւը դարերի ընթացքում քերծել են ժայռերի կողերը, լվացել եւ դարձրել ողորկ, հազար ու մի ձեւ տվել, կերտել ու քանդակել տարբեր պատկերներ: Թվում է, թե մեկը հսկա թռչուն է՝ թառած քարի գլխին, մյուսը՝ գորշավուն գորտ, երրորդը՝ կնոջ կիսանդրի:

Մի քիչ ներքեւ՝ տձեւ ժայռերի տակ, Հյումբաթն է, բլրակի վրա՝ Միջին մահլան, արեւկող երեսին՝ Գյունեյ թաղը: Մութն իջնելուց ինչքա՞ն մռայլ են թվում վերի ժայռերը, ինչպես հսկումի կանգնած առասպելական հրեշներ: Հին քարանձավներից, ուր առաջ մարդն է ապրել, մթնով ելնում է գայլը, դունչը գյուղի կողմը դարձնում եւ երկա՞ր ոռնում:

Անհիշելի ժամանակներից մարդիկ ապրում են Հյումբաթի ձորում: Նույն քարանձավում այժմ էլ ապրում է մի սերունդ, որի հին պապերն այդ քարանձավում իրենց մերկությունը ծածկում էին գազանի մորթով, մարդիկ, որոնց բրածո բազուկների հաստ ոսկորները այժմ երանության ու նախանձի ժպիտ են հարուցում մանրացած սերնդի աչքերում:

Հին անտառից ոչինչ չի մնացել՝ ավանդությունից բացի: Այնտեղ, ուր այժմ մի զույգ լղար եզ ծանր կամն է քաշում, կամի վրա նստած ծերունին շոգ օրին միտն է բերում պապի պատմածը կալատեղի եւ այն օրերի մասին, երբ Գյունեյի լանջերին խիտ անտառ էր, ձորում շամբուտներ, որտեղ վարազ էին որսում մելիքները:

Այժմ լերկ են լանջերը, արեւը խանձել է ժայռերի մամուռը, անտառի հետ անհետացել են ծառերի ստվերում բնող խոտերը, կուրացել են աղբյուրները, որոնց երակներն անտառի խոնավությունն էին ծծում եւ ջուրը ցայտում քարի ճեղքերից:

Հյումբաթի ձորում ո՛չ կռիվ է եղել եւ ո՛չ կոտորած: Տարիների հետ պառավել է գյուղը, ուժասպառ եղել տարիքն առած ծերունու պես: Դրա համար էլ այնքան շատ են ավերակները, դուռը հողով ծածկած գոմեր, որոնց մսուրում քանի տասնյակ տարի ոչ մի հորթ դարման չի կրծել:

Ահա երբեմնի փողոցը... Ամեն գարնան վերից իջնող հեղեղը մի քիչ խորացրել է հունը, տարիների ընթացքում դարձրել խորխորատ: Կամարակապ աղբյուրի մի պատը փլվել է, քարե խողովակից իզուր է ջուր ծլլում, որովհետեւ եւ ոչ մի մարդ չի կռանում խողովակից ջուր խմելու: Հեղեղը փորել է տան հիմքերը, կրապատը կախվել է խորխորատի վրա: Մի տարի, երկու-երեք ձյունաշատ ձմեռ, գարնան արագ հալոցք, վարար հեղեղի մի զարկ, եւ կփլվի խարխուլ պատը:

Աղբյուրի կողքին հին ձիթհանքն է: Մելիքներն են շինել եւ ստիպել, որ շրջակա գյուղերից կտավատ հավաքեն՝ ձեթ քաշելու: Ձիթհանքի թանձր պատերն են մնացել եւ կլոր քարը, որ դարձրել են գոմեշները, գիշեր-ցերեկ պտույտ տվել, քարի տակ տրորել բոված կտավատը:

Հիմա էլ ժայռի գլխին մնում են Մելիք-Բախտամի ամարաթի բարձր պատերը, նրա բանտը, մելիքի ախոռները, մուտքը՝ սրբատաշ քարերից եւ գեղեցիկ քանդակներով: Կա մատուռի պես մի շենք՝ ծաղկանկար քանդակներով, հատակը՝ սալքար, դիմացի պատին՝ ժանգոտ երկաթի օղ: Մատուռի պես այդ շենքում Մելիք-Բախտամի ձին կերել է ռամիկի մատներով մեկ-մեկ ընտրած ոսկեհատ գարի եւ Իրանից քարվանով բերած քիշմիշ:

Հյումբաթի ձորով գետ է անցնում, որի մյուս ափին՝ այգեստանների մեջ, գունավոր կտուրներով փոքրիկ քաղաքի տներն են: Հյումբաթի ձորում, Միջին մահլայում եւ Գյունեյ թաղում ո՛չ կռիվ է եղել եւ ո՛չ էլ կոտորած: Այն ժամանակ, երբ քաղաքի տեղը շամբուտ էր եւ անտառ, ձորի բոլոր տներից ծուխ էր բարձրանում: Եվ երբ առաջին մովրովը հրամայեց տափարակի վրա կառուցել սպիտակ քարե զորանոցը, Հյումբաթի ձորի աստղը թեքվեց:

Գետի կամրջով գյուղից հեռացավ նա, ով ոսկի ուներ, եւ, երբ բարձրացան մելիքների ջրաղացի գլուխը, մի անգամ էլ նայեցին հսկումի կանգնած ժայռերին, քոչը վայր դրին սպիտակ զորանոցի մոտ եւ տափարակի վրա փորեցին նոր տների հիմքը:

Այսպես առաջացան քաղաքի տները: Եվ ուղտերը, որոնք, Քիրմանի շալ բարձած, ծանր հակերի տակ տնքալով, չոքում էին Հյումբաթի ձորի հրապարակում՝ փոքրիկ կրպակների առաջ, իրենց գլուխները սպիտակ զորանոցի կողմը դարձրին եւ շամբուտները կոխելով՝ մտան քաղաքի առաջին փողոցը:

Այդ օրից սկսվեց եւ Հյումբաթի ձորի արնաքամ լինելը, որովհետեւ քաղաքը նստում էր կոկորդին, տները փռվում էին ամենալավ հողերի վրա, աղբյուրի ակունքից ամենից առաջ ջուր էր խմում քաղաքը:

Հյումբաթի ձորի հին կրպակները հիմա էլ մնում են՝ կիսով չափ խանգարված, պատերը խարխուլ, կտուրների վրա կանեփի փարթամ թփեր: Նեղլիկ փողոցներում, ուր աջ ու ձախ հին խանութների հետքերն են, մելիքների շուկան, հիմա անցուդարձը քիչ է: Լծից բեզարած մի եզ գործից դառնալիս գուցե վիզը քսի կրպակի սուր անկյունաքարին, վիզը քորի այնտեղ, ուր գունավոր շալի հոտը բուրում էր, որպես Իրանի սաբզա:

Սպիտակ զորանոցն այն ապահով վայրն էր, դեպի ուր մելիքների ջրաղացի ճամփով գնում էին կրպակների տերերը, քաղաքում մեծ խանութներ բացում, խանութների փեղկերը ներկում, ոսկետառ ցուցանակներ կախում եւ ոսկիները հողե կճուճների մեջ դարսելու փոխարեն պահ տալիս բանկին:

Վաղուց արդեն համարձակ մի սովդաքյար բացել էր մեծ քաղաքները տանող ճանապարհը եւ առաջին ապրանքի հետ ուրախ լուր էր բերել Մորոզովից ու Ցինդելից: Վերջին մելիքները հագան Մոսկվայից բերած գուլպաներ, եւ նրանց ջրակալած աչքերը տեսան, թե ինչպես կամարակապ ախոռում ձմռան գիշերին վրնջում է ձին, գարու մեջ փնտրում Մելիք-Բախտամի քիշմիշը:

Բերդի քարերը մեկ-մեկ ընկան, երբ տափարակի վրա բարձրացան սպիտակ զորանոցի պատերը: Մելիքների բանտում սարդը ոստայն հյուսեց, ժանգը դեղին սերմեր մաղեց բանտի երկաթ բանալիների վրա: Մելիք-Բախտամի վերջին ժառանգը մեռավ հեռու մի քաղաքում, որպես ռուսական գնդի հրամանատար:

Հյումբաթի ձորի ժայռերը տեսան, թե ինչպես գունավոր գորգերը հանեցին քարանձավներից, շալակով տարան եւ փոխարենը քաղաքից ստացան նավթ, շաքար: Գորգերն ուրիշ քաղաքներ ուղարկեցին: Ոչխարները քչացան, ձորում ապրողներին մնաց քաղաքում ձեռք բերել բուրդն էլ, ներկն էլ եւ գարնանը պատրաստ գորգեր տալ բրդի տերերին:

Թվաց, թե այդ օրից տորքի երկաթներն այլ կերպ զնգացին, եւ երբ ձմռան գիշերով սպիտակահեր մի կին ձորի աղջիկներին հին նախշերն էր սովորեցնում, ձմռան գիշերին ճրագի պատրույգի հետ մխում էր պառավի սիրտը, երբ հիշում էր չքնաղ գորգերը, որ տարան:

Քաղաքը մեծացավ: Հյումբաթի ձորում, Միջին մահլայում եւ Գյունեյ թաղում մնացին հացթուխներ, գզրար կանայք, լվացարարներ, գորգագործ պառավներ, անտառից շալակով ուրիշի համար ցախ բերող մարդիկ, սրա-նրա դռանը օրահացի աշխատող աղջիկներ եւ մանուկներ, որոնց ամենամեծ հրճվանքը քաղաքում օրնիբուն լվացք անող մոր վերադարձն էր, գոգնոցի ծալքում պահած համեղ պատառը:

Այսպես հալվեց ձորի գյուղի աստղը:

Մելիքների ջաղացի գլխից մեկ-մեկ կարելի է համրել երեք թաղի տները, ավերակները, տեսնել, թե ինչպես դանդաղ քայլերով մի էշ բարձրանում է կածանով, հետեւից տերը բզում է, կանչում եւ կածանի դժվար տեղը հրում էշին, օգնում բարձրանալու:

Գետի ափին կանայք ցորեն էին լվանում աշնան արեւոտ մի օր, երբ երեք թաղն էլ քարափից դիտելուց հետո իջանք ձորը:

Խաղաղություն կար ավերակներում, կրպակներում, ձիթհանքում, ջուրն իզուր ծլլացող աղբյուրում: Ամեն տարի մի քար է ընկել պատից, մահը թեթեւ է թվացել, բողոք չի եղել, ոչ մի թաղ չի տեսել հրդեհ, գերանները փտել են առանց մխալու, քարերը չեն շիկնել կրակից, եւ նստել է մամուռը: Մի կրպակի դուռ գոց էր այնպես, ասես սովդաքյար տերը ճաշի էր գնացել կամ գերեզման-օրհնեքի:

Ման եկանք գյուղում, տեսանք շեն տները՝ հատուկենտ, պառավ լնդերի դեղնած ատամների պես: Հարեւանի ավերակ տունը դարձրել են գոմ ու մարագ: Այնքան շատ են պարապ, կիսախարխուլ տները, դարպասը գոց, ծանր կողպեքները վրան: Թվում է, թե հանդ են գնացել, ներսից ձայն չի լսվում, տան առաջ՝ դարպասի քարերի ճեղքում, բուսել է խոտը:

Մի քանի կտուրների վրա դդում կար շարած, տեղ-տեղ արեւի տակ փռել էին գունավոր լաթեր: Մի հին ու մեծ տան միակ պատուհանի քարին՝ արեւի տակ, պամիդոր էին շարել: Եվ միակ ապացույցը, որ կարող էր համոզել, թե այդ տանն ապրողներ կան, պատուհանի կիսակարմիր պամիդորն էր:

Թեեւ քաղաքը հեռու չէր, եկած ճանապարհը մեզ ծանոթ, բայց եւ այնպես ուրիշ աշխարհ թվաց Հյումբաթի ձորի այդ անկյունը, որի բնիկները կարծես ուրիշ ցեղի մարդիկ էին: Եվ միակ հարցը, որ դառնում էր մեր գլխի մեջ, մի «ինչու» է այն մասին, թե ինչպես են մարդիկ ապրում այս քարերի տակ, ինչո՞ւ չեն հեռացել մի ուրիշ, հարմար տեղ: Հանկարծ եթե ժայռերից մեկն ընկնի կամ մի քար գլորվի վերեւից:

Բակում խաղացող երեխաները մեզ տեսան, զարմացած խաղը թողին: Երբ մեզնից մեկը ջուր ուզեց, ջուր բերող երեխայի անունը հարցրեց, թվաց, թե նա ջուր չէր ուզում, այլ ստուգում էր, թե արդյոք այդ երեխան մեզ նման է խոսում:

– Որ տան կտուրին դդում եք տեսնում, ուրեմն էնտեղ ապրում են, – ասաց բնիկներից մեկը, որ կամրջի գլխին միացել էր մեզ: – Երեկոյան էլ կրակներով կիմանաք: Քանի ճրագ են վառում, էնքան էլ տուն կա: Մնացածը արջաբներ են:

Երեկոն հաստատեց այդ: Մութի հետ հատուկենտ ճրագներ վառվեցին: Մութը չասաց մեզ արջաբներում կենողների մասին, բայց մանրիկ լույսերի թարթոցը կամացուկ պատմում էր, որ Հյումբաթի ձորում քան ճրագ կա, Միջին մահլայի գետափի մասն է ողջ, Գյունեյ թաղի ծայրը: Մնացածն ավերակ տներ են ու մութի մեջ խառնվում են ժայռերին, եւ չի լինում որոշել՝ ո՞րն է ժայռ եւ որը երբեմնի բնակավայր:

Մեկ-մեկ հավաքվում էին հեռու թաղերից, ներս մտնում ընդարձակ սրահը, տեղ բռնում փայտե նստարանների վրա: Երբ գզիրը մի անգամ էլ պտույտ արեց փողոցներում բարձր կանչով, շներն այս ու այն կողմից ձայն տվին ու հանդարտեցին, գզիրի հետ մի քանի հոգի եկան հեռու քարանձավներից: Սրահի կիսամութում փափախները մակաղած ոչխարի պես էին, չիբուխների կրակները՝ խոտերի մեջ լույս տվող բզեզներ:

Խոսքը հողի մասին էր, հարմար մի տեղ նոր գյուղ հիմնելու մասին: Երեւի շատ հնում, երբ վաչկատուն ցեղերը երկրե երկիր էին գաղթում, նոր աշխարհներ գրավում, այդ աշխարհի մասին հազար առասպել բերնեբերան էր անցնում եւ ոգեւորում անցնելու դժվար կիրճեր, սար ու ձոր, անջուր ավազուտներ:

Նոր գյուղի խնդիրը Հյումբաթի ձորի համար երջանիկ աշխարհի առասպելի պես էր, նրանք իրենց հանդերի անուններն էին տալիս, մեկի ջուրը գովում, մյուսի՝ խոտը:

– Մենակ էս ձորից դուրս գանք...

Փափախների տակ պսպղում էին աչքերը, որպես չիբուխի կրակներ, երբ մեկը ծանոթ բանտի նկարագիրն էր անում եւ ուրվագծում վաղվա գյուղը, լայն ճանապարհը եւ ճանապարհի նման ազատ կյանքը:

Երբ ուշ գիշերին ծխից մթնած սրահում նախագահը քվեարկության դրեց նոր գյուղատեղը փոխադրվելու հարցը, ճրագի թույլ լույսի տակ բարձր մեկնած ձեռքերի եւեւ մի պահ չերեւացին փափախները, թվաց, թե հսկա մի մարմին բյուր ձեռքեր է պարզել դեպի սեւացած օճորքը:

Ճրագը թարթում էր լույսի հետ եւ տաքություն տալիս: Ճրագի հետ վաղվա հույսը ջերմություն էր սփռել սրահում: Եվ ուրախ աղմուկով դուրս եկան: Այսպես էր սկսում իր չուն վաչկատուն ցեղը անցած դարերում:

Սանդուղքի գլխին Գյունեյ թաղից մի ալեւոր մոտեցավ մեզ:

– Մի ոտս գերեզմանումն է. ես կարող է չտեսնեմ էն նոր տեղը, բայց տարեք... Գնացե՛ք Հյումբաթի ձորի դժոխքից:

Սանդուղքի գլխից մի պահ նայեցի, թե ինչպես մահակով քարերը շոշափելով ծերունին կորավ մութի մեջ: Լսելի էր, թե ինչպես նա մահակի ծայրով զարկում էր քարերին, ճանապարհը փնտրում:

Կրակները չէին երեւում: Մութի մեջ հազիվ էին նշմարվում գյուղի գլխի ժայռերը, մելիքների ամարաթի պատերը: Ժայռերը թանձր ստվեր էին կախել գյուղի վրա, ամարաթը թվում էր որպես կանգուն դղյակ, որի խավար խուցերում գուցե շրջում է Մելիք-Բախտամը, որպես ուրվական...

■

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԿՅՈՐԵՍԱՊԱՏՈՒՄ

# Մատյան եղելության

## Հատված Սերո Խանզադյանի համանուն վեպից

– Բարի լույս, Ավա՛ն բիձա:

Հենց նոր մտա լուսաբացից շիկնած մեր փոքրիկ քաղաքն ու առաջինը հանդիպեցի մեր հարեւան Ավան բիձային:

Ավան բիձան փողոց մաքրող է: Մեր քաղաքի երեւելի եւ ոչ երեւելի մարդկանց նման նա էլ ավելորդ փոթ անուն ունի՝ Ճել Ավան բիձա:

Երկար կոթին հագցրած ավելը նա մի անգամ էլ քաշեց մայթի սալ քարերով ու նոր միայն նայեց ինձ: Խոր նայեց: Ճանաչեց: Չորուցամաք դեմքից մի տխուր ժպիտ թռավ:

– Ինչպե՞ս ես, Ավա՛ն բիձա:

– Հե՜չ...

Մեզ է մոտենում մեր մյուս հարեւան Գաղթական Սարգիսը: Կոճն է. կացնով էլ չես ճղի: Կոճղը բարի ձեռքեր ունի, բարի հայացք: Նա է ծեգը ծեգին փռի տաք-տաք հացը հասցնում այս փոքրիկ քաղաքի միակ հացի խանութը:

Երբ ես դեռ մի թիզ բան էի, նա հացը շալակով էր կրում խանութ: Այն ժամանակ քաղաքում գրեթե բոլորն արտեր ու թոնիրներ ունեին: Իր հացն ինքն էր ցանում, թխում՝ թե՛ դպրոցի դիրեկտոր Չենդ Մկրտիչը եւ թե՛ տոհմական հողագործ Սեւ Թութին:

Երբ ես սկսեցի դպրոց հաճախել, Գաղթական Սարգիսը հացը փռից խանութ էր տանում շրջկոոպի երկանիվ սայլակով, որին, փողոց մաքրող Ճել Ավան բիձայի նման, լծվում էր ինքը:

– Ճամփա տվեք, հե՜յ...

Հիմա Գաղթական Սարգսի սայլակին մի հեզ ու խոնարհ էշ է լծած: Էշը հոտոտում է գետինը, իսկ տերը բերանից հանում է լրագրի թղթի մեջ փաթաթած ծխախոտը, ծխահամ բեղերով համբուրում ինձ:

– Գառնո՜ւկս, աղվո՜րս…

Ինքը մաշվել-մաքառվել է, ձայնը՝ ոչ:

Այն հեռու, հարամ տարին Գաղթական Սարգսին ահա հենց այս հրապարակում կանգնած մռնչում էր.

– Մըր անուշ աշխարհ ավրեցի՜ն: Տեղ տվեք չոջուխներուս պահեմ:

Մայթերի սալ քարերը մաշվել են շերտ-շերտ: Մի ծանր կյանք է դղրդոցով գլորվել նրանց վրայով:

Գաղթական Սարգսի մռնչոցի արձագանքը ականջներիս մեջ է:

Գաղթական Սարգիսը շոյում է իր էշի աչքերը ու հացի բույր թողնելով՝ սայլակը քշում դեպի խանութ: Ճել Ավան բիձայի ավելը ճանկռում է մաշված սալերը:

– Էլի՞ մաքրում ես, – հարցնում եմ:

– Վերջ չկա:

Քանի հազար ավել է Ճել Ավան բիձան մաշել այս մայթերն, այս փողոցները մաքրելով: Ի՜նչ իմանաս: Ամեն տեղ նրա ավելն աղբ ու փոշի է գտնում իր համար ու մաշվում: Մաշվում է, սակայն աղբն ու փոշին էլի կան:

Մաշվում է նաեւ Ճել Ավան բիձան, մաշվելով էլ գնում: Չեմ ուզում գնա, բայց գնում է: Եվ որպեսզի նա էլի մնա ձորերում մոլորված մեր այս փոքրիկ քաղաքում, էլի մաքրի նրա աղբն ու կեղտը, ես սկսեցի հյուսել այս պատմությունը մեր հին հարեւան, փողոց մաքրող Ճել Ավան բիձայի մասին:

Փողոցներից մի քանիսն անուն ունեն, մի քանիսը՝ ոչ: Անուն չունեցող փողոցները Ճել Ավան բիձան չի սրբում: Այդտեղ Սեւ Թութին լոբի ու դդում է ցանում, Արդար Հաբուդը՝ աքար գցում: Կոմունալ բաժնի տեսուչ Հիմնարկ Ղեւոնը տնկվում է անանուն փողոցի վրա ապրող Սեւ Թութու դռանը:

– Պետական հող ես զավթել, է՜յ: Դատի կտամ:

Դատի է տալիս: Դատարանը լսում է Հիմնարկ Ղեւոնի հարուցած գործը՝ պետական հողը զավթած Սեւ Թութու դեմ, եւ մի կանաչ պատառ ամայանում է իսկույն:

Անուն կրող փողոցների անունները փոխվում են արագ-արագ: Ահա, օրինակ, այս մի փողոցը, որին քաղաքացիք, սեփական նախաձեռնությամբ, հիմա Անտառահայաց են անվանում, կնքվել է վեց անգամ: Ի սկզբանե սրա անունը եղել է Փեխի Կոլոլ, հետո Ցարսկի, հետո, ինչպես վկա է ինքը՝ Ճել Ավան բիձան, կնքվել է Կարմիր Վարդան: Ապա մի այնպիսի խորթ ու խրթին անուն է ունեցել, որ նույնիսկ քաղաքի երեւելի անձ Անտոն ուսուցիչը չի կարողացել առանց կապ ընկնելու արտասանել: Բայց դեռ այդ խորթ-խրթին անվանը չընտելացած, մի այլ խորթությամբ են նախշել այս փողոցի ճակատը: Հետո դա էլ են ջնջել, նորը դրել:

Փողոցների անուններն այսպես արագ են փոխվել, որովհետեւ այդ անունների տեր մարդկանց հետ մի բան է պատահել: Հիմա ահա, այս փողոցին բոլորը, նույնիսկ կոմունալ բաժնի վարիչ ընկեր Երանոսյանը, Անտառահայաց են անվանում, թեեւ սա պաշտոնապես մի նոր, անվանի մարդու անուն է կրում: Բայց անգամ ինքը՝ ընկեր Երանոսյանը, հույս չունի, թե այդ նոր անվան հետ եւս վաղը «մի բան» չի պատահի:

Ուղիղ ու լայն են քաղաքի՝ անուն կրող եւ անանուն փողոցները: Անուն կրողները կոկված, հղկված են ասֆալտով, մայթերին անպտուղ ծառեր ունեն: Անանունները մնում են իրենց նահապետական վիճակում:

Քաղաքի բոլոր տները քարաշեն են եւ զույգ կամարակապ դարբասներ ունեն: Վերջերս Սրեդի Ազի գնացած, այնտեղ ապրող Մուռիկ Սամոնը «դաչ» եկավ ու հոր համար քաղաքում նոր տուն կառուցեց: Բարո՜վ վայելեն: Սակայն Մուռիկ Սամոնը նոր տան դարբասը տափակ շինեց: Այս նորամուծությունը աղմուկ գցեց: Կոմունալ բաժնի վարիչ ընկեր Երանոսյանը Մուռիկ Սամոնին կանչեց իր մոտ:

– Տանդ դարբասը քանդիր, կամարակապ շինիր:

– Ինչի՞, – զարմացավ Մուռիկ Սամոնը:

– Անունդ մուրտառ է, ուզում ես քաղաքիս պատկերքն էլ մուրտառե՞ս, – գոչեց ընկեր Երանոսյանը: – Կամ դարբասդ կամարակապ պիտի լինի, կամ չպիտի լինի: Վե՛րջ:

Մուռիկ Սամոնի՝ հոր համար շինած տան դարբասը դարձավ կամարակապ, եւ քաղաքի պատկերը փրկվեց մուրտառվելուց:

Տների զույգ դարբասներից մեկը մարդկանց ելումուտի համար է, մյուսը՝ անասունների: Ամեն տուն իր առջեւ պարտեզ ունի: Հռչակավոր է այն տունը, որը հոսող ջրի վրա տնկած արտաքնոց ունի եւ քուչի բալկոն:

Անհամար բարդիները քաղաքին երկնամերձ տեսք են տալիս: Ընկուզենիներն իրենց հզոր ճյուղերը մի պարտեզից մյուսն են հասցնում, կռվի ու վեճի առիթ տալիս հին հարեւանների միջեւ: Թթենիներն ամռանը փխրուն պտուղ են թափում մայթերի վրա, աշնանը՝ տերեւների դեղին բոց, որի խշշոցից ցերեկը խրտնում են Արդար Հաբուդի նորածին հորթերը, գիշերը ահ է զգում աղջիկների սրտի գող զինկոմիսարիատի Յուրիկը:

Քաղաքում առաջին բարեւն առնում է փողոց մաքրող Ճել Ավան բիձան: Նրան բարեւ է տալիս թե՛ Գիրք Պետրուսը, որ բնիկ այս քաղաքից է, եւ թե՛ հեռավոր Տափ գյուղացին, որ երբեմն չոր փայտ, հոնի մաղաշար, մասուր ու քոլի տանձ է բերում քաղաք վաճառելու:

– Բարի լույս, Ավա՛ն, – դղրդում է փայտ վաճառողի ձայնը: – Փայտիս մուշտարի կճարվի՞:

– Կճարվի, – գլխով է անում փողոց մաքրողը: – Դպրոցի դիրեկտոր Չենդ Մկրտիչի տանը ծնունդ կա, թոռ է ունեցել: Դենը տար:

Ավան բիձան ավելը երկարելով՝ ցույց է տալիս Չենդ Մկրտչի տունը: Տափ գյուղացին էշն առաջ է հրում: Նրա ձայնը խուժում է քնած դռներից ներս:

– Լավ փա՜յտ, չոր փա՜յտ:

Ավան բիձան մաքրում է նրա էշի թողած տաք աղտեղությունը: Դե, ինչ անի, փայտ ծախողն էլ մարդ է՝ հազար ցավի ու հոգսի տեր:

Թեեւ արդեն ծեր է Ճել Ավան բիձան, բայց դեռ ծեգի մշուշում նրա աչքը գտնում է մայթին ընկած աղջկա բարակ ծամկալ, մոտը՝ զինկոմիսարիատի Յուրիկի «Անի» ծխախոտի կոթուկները, որ միայն նա ու զինկոմն են ստանում իբրեւ «սպեց պայոկ»: Ճել Ավան բիձան սրբում է ծամկալն ու «Անին»: Լեյտենանտ Յուրիկն էլի աղջկա ռեխ է կրծել գիշերը: Փուչ արարած:

Վաղուց շարքից դուրս եկած կապա-արխալուղ ու խոնջան շալվար է հագնում Ճել Ավան բիձան: Նման մասունք միայն կտրում-կարում է տրիկոտաժի ֆաբրիկայի ավագ ձեւարար Կտրեմ-Կցեմ Համբարձումը: Միայն նա: Հին մասունք են նաեւ Ճել Ավան բիձայի փափախը՝ կտուրին դրած խոտի դեզ, արծաթապատ գոտին, մինչեւ ծնկները հասնող գուլպաները:

Բարակ չոփ երեխա էր Ճել Ավան բիձան, երբ ձեռքն առավ երկար կոթով ավելն ու նրանով սրբեց Ցարսկի աղտեղությունը:

– Ճե՛լ արա, որդի, – տնքաց փողոց մաքրող հայրը: – Լույսը բացվում է, թող մարդ արարածն իր ճանապարհը մաքուր գտնի:

Վաթսուն տարի առաջ էր դա: Այդ տարի հայրն սպանվեց: Մի լուսաբացի կոզակներն իրենց ձիերը չափ գցեցին, թռան Ցարսկի փողոցով եւ սմբակահար արին գլուխը կախ փողոց մաքրող հորը:

Քաղաքը մի կալ-կլոր հրապարակ ունի, մեջտեղը մի կլոր-գաթա ծաղկանոց: Հինգ փողոց, հինգ հունով գալիս, խառնվում են կալ-կլոր հրապարակին: Այստեղից էլ սկսվում է Ճել Ավան բիձայի աշխարհը:

Ճել Ավան բիձան նախ մաքրում է Կամրջահայաց փողոցը՝ հրապարակից մինչեւ պետբանկի կառավարիչ Ճառ Սիմոնի տան անկյունը: Դենը փողոցը դեմ է առնում մանր մժեղի ամպ վրան ճահճուտի: Ճահճուտի ջրով միայն բանեցնում են ձորի ջրաղացները, եւ Գրուզ Բարսեղն իր բեռնավտոն այդտեղ է լվանում: Ինքը պառկում է կանաչի վրա, շվշվացնում: Իր օգնական Մըզմըզ Վլադիկը լվանում է մեքենան: Ջուրը թանձրանում է մազութից, քայուղից, Մըզմըզ Վլադիկի սապոգների ցեխից:

Ճահճուտի հարեւան պետբանկի կառավարիչ Ճառ Սիմոնը գոռում է Գրուզ Բարսեղի վրա.

– Սագերիս ջուրը մուրտառում ես, է՜յ:

Տիրոջ ձայնից ոգեւորված՝ սագերը հարձակվում են իրենց ջրեղեն տիրույթը զավթած Գրուզ Բարսեղի ավտոյի վրա, ճչում անզոր: Գրուզ Բարսեղը քրքջում է Ճառ Սիմոնի երեսին.

– Գնա բանիդ, ախմախ:

Մոտիկ մի տեղից քրքջում է նաեւ ասֆալտ եփող Սեւ Թութին.

– Կերա՞ր, Ճառ ախպեր: Էդ էլ հո՛ բանկը չի, դե մարսի:

Ճառ Սիմոնի տունը նույնպես երկհարկանի է, կարմիր թիթեղյա տանիքով, առջեւը բակ ու պարտեզ եւ քուչի բալկոն եւ արտաքնոց՝ առվի վրա: Քուչի բալկոնն ապակեպատ է: Վերեւի շարքի ապակիները գունավոր են, ու երբ մայրամուտին նրանց շողքն ընկնում է դիմացի բարդիների կատարներին, Սեւ Թութիի պառավն իր աղջիկ թոռներից մեկնումեկին հրում է դենը:

– Գնա էն կանաչ-կարմրի տակով անցկաց, է՜, կարող ա տղա ես դառնում:

Պատշգամբի յուղաներկ պատին իրար ռեխ կրծող երկու առյուծ են նկարված: Դպրոցի դիրեկտոր ու կենդանաբանության դասատու Չենդ Մկրտիչը շաբաթը մեկ անգամ երեխաներին բերում, կանգնեցնում է Ճառ Սիմոնի պատշգամբի դիմացը, ցույց տալիս առյուծները ու աչքը դասագրքից չկտրելով՝ բացատրում նրանց կազմվածքը: Փոքրիկներն ահուսարսափով են նայում գազաններին ու բան չեն ըմբռնում ուսուցչի պատմածից: Միայն գիշերը երազներում տեսնում են անապատի հզոր տիրակալներին ու տակները թացցնում:

Տարիներ առաջ էր: Ճել Ավան բիձան Ճառ Սիմոնի տան մայթն էր մաքրում, երբ հենց այստեղ լսեց Գաղթական Սարգսի աղաղակը.

– Մըր անուշ աշխարհ ավրեցին: Տեղ տվեք չոջուխներուս պահեմ:

Աղաղակում էր Գաղթական Սարգիսը՝ մոտը, ցամաք գետնին վեց չոր-ցամաք երեխա: Մաքրված, լպստված էր քաղաքը՝ հացը կրակի գին: Ինքը, իր հարեւան Փոստատար Նիկոլի ու Սեւ Թութու հետ Գաղթական Սարգսի երեխաներին տարան, տեղավորեցին Փոստատար Նիկոլի հացատանը: Ինքը մի բուռ խաշած լոբի, Սեւ Թութին մի քրեղեն կարտոֆիլ, Արդար Հաբուդը ավելուկի մի չոր հյուսք առան, տարան Գաղթական Սարգսի երեխաներին: Է՛հ, ի՜նչ անեն: Եթե աստված կամենա, մի կերպ կպահեն նրանց էլ:

Պահեցին: Հիմա Գաղթական Սարգիսն է քաղաքին հաց տալիս իր սայլակով:

– Ճամփա տվեք, հե՜յ:

Կռիվ էր, սով էր. եկա՜ն, եկա՜ն ու մի օր էլ պրծան:

Ճառ Սիմոնի քուչի բալկոնից ներքեւ Մեհրաբի Վարթերի տունն է: Քիչ տղամարդիկ չեն ապրել-անցել այդ տանը, եթե հաշվենք՝ տասը սերունդ: Սակայն քաղաքն այդ տունը հարգանքով է հիշում նրանց Վարթեր հարսի շնորհիվ:

Ջահել-կրակ, այրի հարս էր Մեհրաբի Վարթերը:

Երեսուն թվականի դաչաղի տարին էր: Աշունքվա մի օր Մեհրաբի Վարթերը գնում է անտառ՝ ձիով փայտ բերելու: Անտառը մթին, ահռելի՝ դաչաղների բույն: Երկու դաչաղ բռնում են նրա գլխավերեւը:

– Կոլխոզ ես, հա՞:

– Կոլխոզ եմ, – պատասխանում է Մեհրաբի Վարթերը:

– Հի՛, հի՜, – քրքջում են դաչաղները: – Քառասուն կնիկ-մարդ մի յորղանի տակ: Շնությո՜ւն... Մեզ էլ բաժին տուր, կոլխոզի՛ կնիկ:

– Տամ, – ասում է Մեհրաբի Վարթերը: Ասում է, կացինը քաշում, կայծակում...

Դաժան էին այդ դաժան օրերին:

Փայտի տեղ, ձիու վրա, անտառից երկու դիակ է քաղաք բերում Մեհրաբի Վարթերը, երկու դաչաղ՝ իրենց զենքով:

Մի շաբաթ հետո էլ անտառից Մեհրաբի Վարթերի դիակն են բերում: Խփել էին թիկունքից, հրացանով:

Այս էլ այսպես եղավ:

Մեհրաբի Վարթերից մնաց լեգենդ դարձած իր անունը եւ տասնչորս տարեկան մի աղջիկ:

Քաղաքում առաջինը Մեհրաբի Վարթերի աղջիկը կտրեց իր ծամերը, կարճփեշ շոր հագավ, կոմսոմոլ գրվեց:

– Բարի լույս, Ավա՛ն բիձա:

Սա էլ է մոր նման ջահել-կրակ: Իրենց տան առջեւ ապտակեց Չեկայի Վրույրին: Չեկայի Վրույրը ձեռքը տարավ դեպի ատրճանակը: Վարթերի աղջիկը նրա ձեռքն այնպես ոլորեց, որ սա գունդ-կծիկ դարձավ:

– Չհամարձակվես գիշերները տանս շուրջը քարշ գալ: Կոմսոմոլների ժողովը որոշեց Չեկայի Վրույրին դատի տալ, բանտարկել: Վարթերի աղջիկն ինքն իր ձեռքով պաշար կապեց Չեկայի Վրույրի համար, ինքն իր ձեռքով ճանապարհեց նրան:

– Գնա՛, գլուխդ ազատի՛ր:

Քաղաքի ջահելներից ոչ ոք սիրտ չարեց խնդրել Վարթերի աղջկա ձեռքը: Մի անգամ Ավան բիձան նրան հարցրեց.

– Ինչի՞ չես մարդու գնում, բալա՛:

Վարթերի աղջիկը ծիծաղեց,

– Շա՜տ դոչաղն են մեր քաղաքի տղերքը: Զարմանալի է:

Բայց ավելի զարմանալին այն էր, որ Վարթերի աղջիկը մարդու գնաց: Գնաց, սակայն մի տարի հետո մարդուն վռնդեց տնից:

– Ինչի՞ մարդուդ չպահեցիր, – հարցրեց Ճել Ավան բիձան:

– Պե՜տքս է, – ծիծաղեց աղջիկը: – Առջեւս կատու էր:

Այդ ամուսնությունից Վարթերի աղջիկը մի տղա ունի:

Հիմա ինքը մանկատան վարիչն է, պատերազմի ժամանակ որբացած մանուկների մայր: Հիմա նրա մազերը ճերմակել են, բայց ձայնը էլի զրնգուն է:

– Բարի լույս, Ավա՛ն բիձա:

Եթե սա օրը տասը անգամ էլ բարի լույս ասի, Ավան բիձան չի հոգնի:

Մեհրաբի Վարթերի տնից ներքեւ, գետափի թեքության վրա, կտուր-մեջքը կոտրված մի տուն կա: Կոմունալ բաժնի վարիչ ընկեր Երանոսյանի ասելով, դա տուն չի, այլ՝ տան չարտանք:

Քաղաքի միակ ու նշանավոր լեզվաբան Անտոն ուսուցիչը չարտանքը մեկնաբանում է այսպես.

– Տեղիս բարբառ է չարտանքը եւ բնիկ հայկական, որ նշանակում է մնացորդ, թերմացք:

Այ երկա՜ր ապրի Անտոն ուսուցիչը: Բառի բժիշկ է: Մեռած, թաղած մի խոսք տուր ձեռքը, կկենդանացնի:

Քաղսովետի նորընտիր նախագահ Դիք Ալբերտը Անտոն ուսուցչին հեռախոսով կանչում, հանում է դասից ու կացնի կոթ կուլ տվածի պես իր տեղը դիք նստած՝ հարցնում,

– Ընկե՛ր Անտոն, տրըպտկել բառը հայավարի ա՞:

Նրա առանձնասենյակի դռան մոտ կանգնած Սեւ Թութին ծիծաղում է քթի տակ:

– Այո՛, Ալբերտ Ալեքովիչ, – հեզ պատասխանում է Անտոն ուսուցիչը: – Տրըպըտկել բառը մաքուր հայերեն է, մաքուր գրաբար:

Ալբերտ Ալեքովիչը դունչը տնկում է:

– Իսկ էդ գրաբար ասածդ քաղաքական որակ ունի:

– Բնա՜վ, – հնչում է պատասխանը: – Դույն այդ տրըպըտկել բառը կնշանակի որեւէ սնամիջություն, որ ուռել, փքվել է եւ ուր որ է՝ կպայթի: Նմանապես քաղաքական որեւէ որակից զուրկ է:

Ալբերտ Ալեքովիչը հառաչում է: Ափսոս, որ Սեւ Թու-


№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԿՅՈՐԵՍԱՊԱՏՈՒՄ

# Անվանի մարդկանց այցը Գորիս


**ՐԱՖՖԻ**
**1981թ.**


**ԼԵՈ (ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ), 1888թ.**


**ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ**
**1935թ.**


**ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ**
**Վերջին անգամ՝ 1947թ. օգոստոս**


**ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**1948թ. հոկտեմբերի 4**


**ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆ**
**1956թ. (կամ 1957թ.)**


**ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ**
**1978թ. սեպտեմբեր**


**ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, 1967թ. հոկտեմբերի 17**


**ՇԱՐԼ ԱԶՆԱՎՈՒՐ**
**1994թ. մայիսի 15**


**ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**
**Վերջին անգամ՝ 1999թ. հունիսի 13**


**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ**
**1964թ.**


**ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ**
**Ամեն տարի այցելում էր Տաթեւի վանք եւ Գորիս՝ մինչեւ 1988թ.**

թու տրըպտկելը քաղաքական որակ չունի: Թե չէ… Բայց եւ այնպես Անտոն ուսուցչին դասից երկար է կտրում նա:

Իսկ զինքը՞դ: Այս էլեմենտ Սեւ Թութին ինձ նման մարդուն ասում է «զինքդ քեզ հավաքիր»: Այդ էլեմենտ «զինքդ» էլ չի՞ քաղաքական որակ:

– Ո՛չ, երբեք: – Անտոն ուսուցիչը մտքում հանդիմանում է փողոց ասֆալտող վարպետ Սեւ Թութուն: – Այդ մաքուր գրաբարը ինքզինքդ կապակցության սոսկ մի անմեղ մասն է:

– Քաղսովետի նախագահին անվերապահ հավատում է Անտոն ուսուցչին: Սա թեեւ ուրախանում է, որ բավարարելով նրա հարցասիրությունը, փրկում է հանդուգն Սեւ Թութուն, բայց նաեւ դառնանում է, որ Ալբերտ Ալեքովիչը քաղսովետի նախագահ դառնալուց հետո, զինքը չհավաքելով՝ տրըպըտկել է:

Դե՛, ուրեմն, մենք էլ մեր զինքը չհավաքելով, արի չշեղվենք մեր մուտք գործած փողոցից: Ախր Մեհրաբի Վարթերի տնից ներքեւ եղած չարտանքում, ո՛չ ինքը՝ հմուտ լեզվաբան Անտոն ուսուցիչն է ապրում, ո՛չ էլ քաղսովետի տրըպտկած նախագահը, այլ՝ Կապխոսող Սուղին:

Այդ տուն-չարտանքը փողոցի վրա չէ, մայթ չունի, եւ Ճել Ավան բիձան, բնականաբար, չի սրբում նրա կենտակ պատուհանի տակը, որտեղ ամառ-ձմեռ հազար գույնի ու գարշահոտի փոշի է կուտակված: Կոմունալ բաժնի տեսուչ Հիմնարկ Ղեւոնը ամիսը հինգ «Ակտ» է կազմում Կապխոսող Սուղու վրա, ներկայացնում դատարան՝ «Քաղաքիս օդն ապականող սույն այս ապօրինի միջոցառման դեմ»:

Դատարանը ամիսը հինգ անգամ լսում է Կապխոսող Սուղու դեմ հարուցած գործը ու հինգ անգամ էլ դրամական տուգանք դնում նրա վրա: Սակայն տուգանքը չի գանձվում: Կապխոսող Սուղին որեւէ տեղ չի աշխատում, վճարունակ չէ: Նրա ապօրինի ապականությունը մնում, կուտակվում է նաեւ դատարանի թղթերում:

– Կապխոսողն ի՞նչ է նշանակում, ընկեր Անտոն, – լեզվաբան ուսուցչին հարցնում է Ալբերտ Ալեքովիչը:

– Այսինքս՝ այլաբանորեն խոսող: Մոտավոր ճշտությամբ սա է Սողոմոնի փոթի իմաստը: – Եղածի պարզությունը քաղսովետի նախագահի համար ավելի է բարդացնում Անտոն ուսուցիչը:

– Մեջը քաղաքական որակ կա՞, – զգուշանում է Ալբերտ Ալեքովիչը:

– Բնա՜վ:

Ճել Ավան բիձան մի օր Կապխոսող Սուղուն հարցրեց,

– Սուղի՛, տղիդ խելքը գլխի՞ն է:

Սուղին աչքերը կկոցեց:

– Ոնց իմ տունը, էնպես էլ տղիս գլուխը:

Այս կապը ինքը՝ Անտոն ուսուցիչն էլ չկարողացավ լուծել-մեկնաբանել: Բիձան դիմեց Կապխոսող Սուղու կնոջը՝ հացի փռում խմոր հունցող Արուսյակին:

– Չունենա՜մ նման էջմիածնական մարդը, հա՜, – ծվծվաց Արուսյակը: – Փուչն ուզում է ասել, թե մեր աղի գլուխն էլ մեր տան նման դատարկ է: Տափը մտնի:

Կապխոսող Սուղին քահանա պետք է դառնար: Տարիուկես սովորել է էջմիածնի վանքում: Բայց երբ ճեմարանը փակել են, վերադարձել է՝ էջմիածնից էլ խռով, աշխարհից էլ:

Միայն մի բան գիտե Սուղին. գայլի բերան կապելը: Սեւ Թութու պառավը երեկոյան մտնում է նրա չարտանքը:

– Սուղի, հորթս կորել է: Գելի բերանը կապի, մի բաժակ արաղ կտամ:

Սուղին մանր ժպտում է, երեսը դարձնում Անունավոր խաչի կողմը ու երգում:

Սուրբ Միքայել հրեշտակ,
Սուրբ Ռաֆայել հրեշտակ
Դուք կղպեցեք զբերանս գազանաց,
Որ ոչ մերձենան հորթուկին:

Ասա՝ Թելի-կապի:

– Թելի կապի, – երկյուղած կրկնում է Սեւ Թութու պառավն ու խոստացած մի բաժակ օղին տալիս Սուղուն:

Եթե Սուղուն բարեւ ես տվել, ապա բարեւն առ ու անցի՝ առանց հարցումի: Այլապես կկծի:

– Այ քեզ փորձա՜նք: Տո շա՛ն հայ, բարեւ ես տվել, գնա բանիդ, էլի՜: Գազան ես դառնալու ինձ խժռե՞ս:

Ամեն կեսօրի Կապխոսող Սուղին տնկվում է քաղաքային այգու մուտքի առաջ՝ յոթն ակ-աղբյուր հուշարձանի մոտ: Մի ժամանակ այդտեղ քաղաքի մայր եկեղեցին էր: Քանդեցին: Առաջինը ինքը բարձրացավ, եկեղեցու գմբեթը ու խաչը պոկեց: Ժամանակն ուրիշ էր…

Սուղին կանգնում է հին եկեղեցու տեղը, մեջքը հենում հուշարձան-աղբյուրի ռոք քարին: Ռոք քարը սեւացել է նրա մեջքի քրտինքից, պիջակի թիկունքը՝ ծոռրվել: Կինը Փալթանգ Լեւոնի միջոցով նրա համար փռից մի բոքոն տաք-տաք հաց է ուղարկում: Սուղին հացն ուտում է մի հանգով, ապա կռանում աղբյուրի ծորակի վրա… Երկար է խլանում ծորակի ձայնը: Վերջապես Կապխոսողը գլուխը ցնցելով՝ բեղերից թափ է տալիս ջրի կաթիլները:

– Այսօր եւս գոյությունս ապահովեցի:

Աղբյուր-հուշարձանի մոտ լիմոնադի կրպակն է: Լիմոնադ վաճառող Կլոր Մանիկը ծանձրույթից կանչում է Կապխոսողին:

– Տիրացու Սողոմո՛ն, ազի՜զ ջան, եկ մի կուշտ լիմոնադ խմի:

Կապխոսող Սուղին խեթ է նայում նրան: Կլոր Մանիկը կռանում է Փալթանգ Լեւոնի ականջին.

– Էջմիածնից փոր-փոշման գալուց հետո Սուղին սիրահարվեց ինձ վրա: Մտածեց, որ իր տիրացու լինելուց չխրտնեմ, իրեն առնեմ, կոմսոմոլ դարձավ՝ եկեղեցու խաչը ինքը պոկեց ժողովրդի աչքի առաջ: Ինձ սիրային նամակ ուղարկեց՝ գլխին գրած. «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք»: Հի՛, հի՜…

– Հի՛, հի՜, – քրքջում է նաեւ Փալթանգ Լեւոնը: Կապխոսող Սուղին վիրավորված հեռանում է:

Սակայն մյուս օրը նորից է գալիս, նորից հենվում աղբյուրի ռոք քարին՝ ուղիղ Կլոր Մանիկի կրպակի դեմը: Հենվում է, նայում Կլոր Մանիկի քշտած թեւերին: Քթի տակ մխում է սրտի ցավը:

Ախ արի, բաժանվեցի.
Ա՜խ, ինչի՞ բաժանվեցի:
Ես քեզնից չէի պոկվի,
Զուլումով բաժանվեցի:

Աչքերը լցվում են: Արցունքի մշուշի մեջ նախ հալվում է էջմիածնի, ապա Կլոր Մանիկի պատկերը:

Ճել Ավան բիձային առաջին բարեւ տվողներից է նաեւ Թառչի Ղազարը: Նրա տունը Կապխոսող Սուղու չարտանքի մոտ է, փողոցի վրա:

Բարձրահասակ է Թառչի Ղազարը, թիկնեղ եւ... եւ կույր: Առանց ուղեկցի է դուրս գալիս իր տնից, դանդաղ քայլում դեպի հրապարակ: Հագնում է թել առ թել մաքուր: Բուխարա կլոր փափախը խոր է դնում, որ ձորում հաճախ պոռթկացող քամին չտանի: Գավազանի մաշված ծայրը քաշում է մայթեզրյա առվի պռունկով ու անշեղ գնում իր ճանապարհը:

Հանդարտ հանդիսավորությամբ Թառչի Ղազարը գնում, նստում է շրջկոմի շենքի արեւկող պատի տակ, քարե ելուստին՝ եթե ձմեռ է, նրա պատշգամբի ստվերում՝ եթե ամառ է ու արեւ: Մեկ-մեկ նրան են մոտենում քաղաքի ծերունիները:

– Բարի օր, Ղազա՛ր:

– Հազար բարի, Մինա՛ս, – պատասխանում է Թառչին՝ միայն ձայնից որոշելով, թե ո՛վ է իրեն բարեւ տվողը:

Գիշերները հազվադեպ է լինում տանը: Գալիս, տանում են հարսանիքի, նշանդրեքի, կնունք-ծնունդի կամ թանկ հյուրի պատվին տված քեֆ-ուրախությունն իր նվագով զարդարելու:

Սովորաբար տուն է գալիս լուսաբացին, միշտ այն պահին, երբ Ավան բիձան նոր է սայլակը բերել, կանգնեցրել Կամրջահայաց փողոցում, նոր սկսել մաքրել հին մայթերը: Գալիս է՝ մի փոքր գինով, սեւ աչք-ակնոցով, թառը թեւի տակ: Եթե հրավերքը հեռու տեղ է եղել, ապա նրան մինչեւ հրապարակ ուղեկցում է քամանչա նվագող իր պատանի ընկերը: Բաժանվելուց առաջ Թառչի Ղազարը կանգ է առնում մի պահ:

– Լավ հարսանիք արինք, որդի՛: Հարսն էլ գեղեցիկ էր, նշանածի սրտովը:

– Այո՛, գեղեցիկ էր, ուստա՛, – հաստատում է օգնականը:

– Երեւաց տղատերերի ուրախությունից, առատ շաբաշից: Մեր վաստակը հալալ եղավ:

Երբ Թառչի Ղազարին հրավիրում են հարսանիք, նա խոսք չի տալիս, մինչեւ չհամոզվի, որ հարսը խոնարհ է ու պարկեշտ, փեսան էլ շառ ու շիլթաղ չի: Եթե նորապսակներն իր սրտովը չեն լինում, ապա շրջկոմի քարտուղարն էլ գա իր ետեւից, հրավերը մերժում է:

– Հիվանդ եմ:

Հենց որ փողոցի ծայրին երեւում է ուստան, Ճել Ավան բիձան ավելը պահում է, որ փոշի չանի:

– Բարի լույս, Ավա՛ն:

– Բարին հետդ, ուստա՛:

Ուստան գրպանից մի խնձոր, մի բուռ չամիչ կամ շոկոլադ է հանում, մեկնում փողոց մաքրողին:

– Բերանդ քաղցրացրո՛ւ:

Ճել Ավան բիձան երկար միտք է անում կույր վարպետի արարքի վրա: Դե՛, մարդ ասածդ լավ արարած է: Որքան էլ չարը շատանա, բարին հա՛ կա:

■

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

# Բնաշխարհ



Դրնգանի ձորը



Շորին ձորը

## «Մեր ծորումը կեծակն էլա երք պյոկում»

Չագեձորից բազում ձորեր են սկիզբ առնում, որոնցից ամեն մեկը մի նոր հեքիաթ ու հրաշք է



Ծակերի ձորը



Ղաթրինի ձորը



Ղաթրինի ձորը


№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

# ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԻՍ

# Ֆուտբոլ

**Իվան Խերունց-Իվանյան**



*Խերունց-Իվանյան Իվան: Հեղինակ է «Մարզական տարեգրություն» գրքի: ՀՀ վաստակավոր մարզիչը գրքի երկու հատորում ամփոփում է Զանգեզուրի, Արցախի եւ Վայոց ձորի մարզական պատմությունը՝ սկսած 1920-ական թվականներից:*

*Իվան Խերունց-Իվանյանը ծնվել է 1922թ. Գորիս քաղաքում: Ավարտել է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը (1960թ.): 17 տարի աշխատել է Գորիսի ֆիզկուլտուրայի շրջանային կոմիտեի նախագահ: Եղել է հիանալի մարզիկ, հանրապետական առաջնություններին մասնակցել է մի շարք մարզաձեւերից:*

*«Մարզական տարեգրություն» գրքի 1-ին հատորը լույս է տեսել 1999-ին, 2-րդ հատորը՝ 2001-ին: Ստորեւ ներկայացվող հոդվածը մի հատված է 1-ին հատորից:*

Ֆուտբոլը Զանգեզուրի գավառի կենտրոն մուտք է գործել մինչեւ հեղափոխությունը: Նույնը կարելի է ասել նաեւ Կապանի մասին, որն արդյունաբերական զարգացած շրջան էր:

Գավառի մյուս շրջկենտրոններում՝ Մեղրի, Սիսիան, Վայք, Եղեգնաձոր՝ մի քանի տարի ուշ:

Ֆուտբոլը մոլորակի վրա առաջին անգամ ձեւավորվեց Անգլիայում, այնուհետեւ բուռն թափով զարգացավ Եվրոպական եւ Հարավամերիկյան մի շարք առաջադեմ երկրներում:

Մի քանի տարի առաջ Լոնդոնում նշվեց մարզաձեւի ծննդյան 100-ամյակը, որտեղ հարյուր-հազարավոր մարզասերների առաջ հանդիպեցին ֆուտբոլի աշխարհի եւ Անգլիայի հավաքականները:

Աշխարհի հավաքականի դարպասապահը Լեւ Յաշինն էր /ԽՍՀՄ-ից/:

Աշխարհի զարգացած շատ պետությունների կառավարություններ լուրջ ուշադրություն են դարձնում եւ զգալի միջոցներ տրամադրում ֆուտբոլին: Այսպես, օրինակ, Բրազիլիայի «Մարականա» մարզադաշտում ֆուտբոլի մրցախաղ լինելու դեպքում պառլամենտի կամ կառավարության նիստը հետաձգվում է, իսկ անդամները մեկնում են խաղը դիտելու:

Մեր հայրենակից Ակսել Բակունցի եղբայր Վահան Բակունցն իր հուշերում գրում է. «Գորիսի մի քանի հարուստների տղաներ փող են հավաքել, ուղարկել Թբիլիսի, թոփ առել, բերել Գորիսի բուլվարումը քցը-քացի արել»: Դա 1910-15 թվականներին էր:

Գորիս քաղաքի այգու հարավային մասի ազատ տարածությունում որոշ աշխատանքներ կատարելով՝ պատրաստում են ֆուտբոլի, վոլեյբոլի, թեթեւատլետիկայի հրապարակներ եւ սկսում մարզումները: Ժամանակաշրջանն այնպիսին էր, որ Գորիսում չկային խոշոր ձեռնարկություններ, կազմակերպություններ ու ֆաբրիկաներ, որտեղ կազմավորվեին սպորտային ընկերություններ եւ թիմեր:

Գորիսի ֆուտբոլիստներն ինքնամարզումներ էին կատարում, ով ինչպես կարող էր: Չկային կանոններ, գրականություն՝ խաղացողների տեխնիկա-տակտիկական կարողությունները մշակելու, բարելավելու համար: Իսկ տրանսպորտի ու փոխադրամիջոցների մասին խոսք անգամ լինել չէր կարող: Տրակտորը նոր էր մուտք գործել շրջան: Գորիսի ղեկավարությունը Կապանի ընկերների հետ հեռախոսով բանակցություններ վարեց ֆուտբոլի ընկերական հանդիպում անցկացնելու համար: Համաձայնվեցին հանդիպումն անցկացնել Կապանում՝ 1930թ. սեպտեմբերին:

Գորիսի ղեկավարությունը թիմին հատկացնում է մեկ տրակտոր՝ որպես փոխադրամիջոց:

Մեր ֆուտբոլիստները տրակտորով մեկնում են Կապան, խաղում եւ հետ վերադառնում: Մասնակիցներից ողջ մնացածները պատմում են, որ Կապանի ֆուտբոլի դաշտը գտնվում էր Օխչի գետի ափին, ավելի հարմար տեղ չկար, խաղի ժամանակ գնդակը հաճախակի ընկնում էր գետը, դրա համար հատուկ նշանակված սպաները մինչեւ գնդակը ջրից հանում-բերում էին, ժամանակ էր կորչում, տաք խաղը սառչում էր:



**Գորիսի մարզադաշտը: Կառուցվել է 1979թ.՝ կոմկուսի շրջկոմի նախաձեռնությամբ: Վերակառուցվել է 1994-95թթ.՝ Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ:**

Ճիշտ է, մարզասերները գետափին շղթա էին կազմում՝ գնդակը պաշտպանելու, բայց բարձր գնդակները միշտ ջուրն էին ընկնում, եւ դրանց «մեղավորները» հիմնականում պաշտպաններն էին:

Դա առաջին ֆուտբոլային մրցույթն էր Զանգեզուրի գավառի սպորտային պատմության մեջ:

Թիմը մարզումներ էր կատարում, բարելավում իր կարողությունները եւ ցանկություն ուներ հանդիպելու ավելի ուժեղ թիմերի հետ:

Հանրապետության մայրաքաղաք Երեւանում, Գյումրիում եւ Բանֆակի Ղարաքիլիսայում կային սպորտային ընկերություններ եւ ֆուտբոլային թիմեր՝ «Կոլոս», «Սպարտակ» եւ այլն:

Շրջանի ղեկավարությունը Երեւանի ընկերների հետ պայմանավորվեց ֆուտբոլի ընկերական հանդիպում անցկացնել մայրաքաղաքում:

1939թ. օգոստոս ամսին Գորիսի ֆուտբոլիստները պետք է Երեւան մեկնեին երկու երթուղով: Առաջին երթուղով թիմի հիմնական կազմը հետիոտն պետք է մեկներ Նախիջեւան, այնտեղից գնացքով՝ Երեւան:

Երկրորդ երթուղով Գորիս քաղաքի լավագույն հեծանվորդները եւ այն ֆուտբոլիստները, որոնք ունեին հեծանիվներ, պետք է Երեւան հասնեին հեծանիվներով:

Առաջին երթուղին ղեկավարում էր Միքայել Բաղրամյանը, իսկ երկրորդը՝ ռադիոհանգույցի Համոն, նրա հետ՝ ֆուտբոլիստ հեծանվորդներ Գրիգոր Մանուչարյանը, Հակոբ Միրաքյանը, Ռաֆիկ Միրաքյանը եւ այլք:

Երրորդ օրը երկու երթուղիների մարզիկները հասնում են Երեւան, հաջորդ օրը մասնակցում մրցումներին եւ նույն կարգով վերադառնում:

Այստեղ խաղը շահելու-պարտվելու մեջ չէր, այլ խաղացողների իղձերի իրականացումը, դժվարությունները հաղթահարելու, հակառակորդից տեխնիկա, տակտիկական նոր հնարքներ սովորելու, փորձ ձեռք բերելու նպատակը:

Ցանկանում եմ նշել նրանց անունները, ովքեր մասնակցել են երեւանյան այդ խաղին՝

Հովակիմյան Արտավազդ Գեւորգի, Ասլանյան Արտավազդ Ղազարի, Մանուչարյան Գրիգոր Մանուչարի, Խուրշուդյան Վաղարշակ Առաքելի, Յոլյան Միշա Աղալոյի, Գիչունց Ցական Եգորի, Օհանյան Համո Կարապետի, Կարապետյան Գուրգեն Սարգսի, Բաղրամյան Միքայել Ավանեսի, Բաղրամյան Ներսիկ Ավանեսի, Գրիգորյան Մուշեղ Բոգիի, Շահգելդյան Արամ Ղուկասի, Խերունց Արտաշես Վաղարշակի, Միրաքյան Հակոբ Մնացականի, Ղազարյան Համո, Բժիշկ Ներսիկ, Հայրապետյան Իշխան:

Վերը նշված մարզիկներից շատերը մեկնեցին պատերազմ, քչերը վերադարձան, մյուսներն իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքին:

Մեր փողոցի պատանիներս մանկուց հետեւում էինք մեծերի օրինակին, մարզվում, որոշ դեպքերում խաղում նրանց հետ, մրցում փողոցային թիմերի հետ, հետագայում արդեն հանդես եկանք դպրոցական թիմերում:

Լավ հիշում եմ՝ երբ տարիներ առաջ Ստեփանակերտի եւ Կապանի ֆուտբոլի հավաքականները գալիս էին Գորիս ընկերական հանդիպումների, որոշ խաղացողների անունները ու մականունները մինչեւ այժմ չեն մոռացվել՝ Կապանից «շեկո» Եղիշն ու «էշի» բժիշկը, Ստեփանակերտից երկու վարորդ եղբայրները, որոնք հագնում էին միատեսակ երկարաճիտ կոշիկներ, սեւ գույնի կաշվե համազգեստ, խաղում էին հարձակման աջ եւ ձախ եզրերում:

Մինչեւ 1940-41 թվականները չկային հանրապետության օրացուցային առաջնություններ եւ գավաթային մրցումներ, եւ մեր հավաքականը տարեկան մեկ-երկու ընկերական հանդիպումներ էր անցկացնում Կապանի, Ղարաբաղի թիմերի հետ: Դա շատ քիչ էր, չէին բավարարում մարզիկների լիարժեք պահանջները, իսկ տեղում չկային այլ թիմեր հանդիպումների համար:

Գորիսում ֆուտբոլի զարգացմանը նպաստեցին երեսնական թվականների սկզբին բացված գյուղատնտեսական տեխնիկումը, քույրական, հետագայում նաեւ՝ մանկավարժական ուսումնարանները:

Տեխնիկումում եւ ուսումնարաններում սովորելու գալիս էին ոչ միայն Գորիսից, այլ նաեւ հանրապետության տարբեր շրջաններից՝ Արարատից, Արտաշատից, Եղեգնաձորից, Վայքից, Մեղրուց, Սիսիանից եւ Լեռնային Ղարաբաղի մարզից:

Այդ ուսումնական հաստատությունների սովորող երիտասարդության մեջ սեր առաջացավ դեպի ֆիզկուլտուրան եւ սպորտը, մասնավորապես ֆուտբոլը: Եվ կարճ ժամանակում արդեն երեք ուսումնական հաստատություններում՝ առաջին միջնակարգում, մանկավարժական ուսումնարանում եւ գյուղատնտեսական տեխնիկումում, ստեղծվեցին ֆուտբոլի թիմեր: Հավաքականի եւ նորաստեղծ այդ երեք թիմերի միջեւ անց էին կացվում մրցումներ եւ ընկերական հանդիպումներ: Դրանց լավագույն խաղացողները համալրեցին շրջանի հավաքականը:

Մինչ 1941 թվականը խաղացին եւ Գորիսի սպորտային պատիվը բարձր պահեցին հետեւյալ ֆուտբոլիստները՝ Մարդյան Ժորա, Հովհաննիսյան Մեսրոպ, Բալասանյան Վազգեն, Խչտոյան Վազգեն, Աբրահամյան Արամ, Տոռոզյան Արամ, նկարիչ Աշոտ, Մկրտչյան Խաչիկ, Կարապետյան Գրիգոր, Դադալյան Արշավիր, Յոլյան Գուրգեն, Միրաքյան Գուրգեն, Մինասյան Սաշիկ, Բաղրամյան Վարդան, Խանզադյան Պետրոս, Գրիգոր Մանուչարյան, Վաղարշակ Խուրշուդյան, Ցական Գիչունց, Միքայել Բաղրամյան, Գուրգեն Կարապետյան, Մուշեղ Գրիգորյան եւ ուրիշներ:

Ութից տասներորդ դասարանի աշակերտներ էինք, խաղում էինք դպրոցի հավաքականում, հաճախակի մրցում գյուղտեխնիկումի եւ մանկուսումնարանի ֆուտբոլի թիմերի հետ: Տեխնիկումում եւ միջնակարգ դպրոցում կային շնորհալի լավ պատանիներ, որոնք հետագայում կդառնային անվանի ֆուտբոլիստներ, բայց պատերազմը խանգարեց, նրանց իղձերը չիրականացան, շատերը իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքին: Նրանցից են՝ եղբայրներ Շահեն եւ Բենիկ Մինասյանները, Վազգեն Բոյանը, Երեմ Շալունցը, Գուրգեն Կարապետյանը, Ռուբիկ Դոլունցը, Ցական Գիչունցը, Գրիգոր Մանուչարյանը, Միքայել Բաղրամյանը, Արամ Տոռոզյանը, Խաչիկ Մկրտչյանը եւ շատ ուրիշներ:

Այստեղ պարտքս եմ համարում մեկ անգամ եւս հիշել այն ժամանակվա ֆիզկուլտուրայի ու սպորտի գործերի կոմիտեի նախագահին եւ միջնակարգ դպրոցի իմ ֆիզկուլտուրայի դասատու, մարզիչ Գրիգոր Մանուչարյանին, իմ երախտագիտության խոսքն ասել, ճերմակած գլուխս խոնարհել օտար հողերում մնացած նրանց անհայտ գերեզմաններին:

Հավանական է՝ իմ զոհված ուսուցիչների նվիրված աշխատանքի արդյունքն էր, որ ես ծանր վիրավոր կենդանի մնացի այդ արհավիրքից, եւ այս հուշերը նվիրում եմ նրանց:

1940 թվականի ամռանը Գորիսի ֆուտբոլի հավաքականը, համալրված շնորհալի նոր երիտասարդ խաղացողներով, մեկնեց Կիրովական՝ ընկերական հանդիպման: Մեր ֆուտբոլիստները հաղթեցին 2:1 հաշվով: Խաղին մասնակցում էին պատանի ֆուտբոլիստներ Սուրիկ Յոլյանը, Գրիշա Յոլյանը, Կոլյա Արզումանյանը:

Գրիշա Յոլյանը մեկնեց հայրենիքը պաշտպանելու, բարեհաջող վերադարձավ, ավարտեց գյուղինստիտուտի մեխբաժինը, պաշտպանեց գիտական թեզ, երկար տարիներ աշխատեց նույն ինստիտուտում:

Սուրիկ Յոլյանն իմ մանկության եւ պատանեկության տարիների ընկերներից է: Ավարտել է բժշկական ինստիտուտը, դարձել բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, սրտաբանական ինստիտուտի կարդիոլոգիայի բաժնի վարիչ: Նրա որդի Լեւոն Յոլյանը շախմատի գծով սպորտի վարպետ է, բազում հաղթանակներ է ունեցել հանրապետական, միջազգային մրցումներում:

1941թ. հունիսի 20-ին հանձնեցինք միջնակարգ դպրոցի վերջին ավարտական քննությունները, 22-ի կիրակի առավոտյան սկսվեց պատերազմը, ողջ երիտասարդությունը, մարզիկները, տասներորդ դասարանն ավարտած պատանիներս, ավարտական ատեստատներ դեռ չստացած, մեկնեցինք պատերազմ:

Պատերազմը վերջացավ:

Այժմ անհրաժեշտ էր վերականգնել կործանված քաղաքներն ու գյուղերը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, մշակույթն ու մարզական կյանքը, սովորել, մարզվել, հաղթել հակառակորդին, հաճույք եւ հանգիստ պարգեւել մարզասերներին:

Հրաշքով տուն վերադարձած ավագ սերնդի քիչ թվով մարզիկներ՝ տողերիս հեղինակը, Վաղարշակ Խուրշուդյանը, Մուշեղ Գրիգորյանը, Արտաշես Խերունցը, Իշխան Հայրապետյանը, Մեսրոպ Հովհաննիսյանը, Ժորա Մարդյանը, Վազգեն Խչտոյանը, Սաշիկ Մինասյանը, Սերյոժա Միրզաքունյանն իրենց շուրջը համախմբեցին շնորհալի, երիտասարդ նոր խաղացողների, որոնք երկար տարիներ խաղացին Գորիսի հավաքականում եւ շատ հաղթանակներ պարգեւեցին շրջանի աշխատավորությանն ու մարզասերներին:

Ահա նրանք՝ Շալունց Բաբկեն, Հայրապետյան Սաշիկ, Տատինցյան Էդիկ, Բաղդագյուլյան Միշա, Քոյյան Գառնիկ, Գալստյան Հարություն, Դարբին Վարդան, Մինասյան Գագիկ, Թրվանց Ժորա, Բեգլարյան Լեւիկ: Այս նոր, հետպատերազմյան հավաքականը շատ լուրջ հայտ ներկայացրեց հանրապետության մյուս շրջանների, հատկապես Զանգեզուրի փնջի, նաեւ Լեռնային Ղարաբաղի մարզի եւ Նախիջեւանի ինքնավար հանրապետության ֆուտբոլի հավաքականներին: Որպես Գորիսի ֆիզկուլտուրայի եւ սպորտի գործերի կոմիտեի նախագահ՝ ես իմ ուժերն ու եռանդը ներդրեցի ֆիզկուլտ աշխատանքների կազմակերպմանն ու բարելավմանը շրջանում եւ կոմերիտականների, ֆիզկուլտուրնիկների միջոցով հնարավորին վերանորոգեցինք «ֆուտբոլի դաշտն ու մյուս սպորտ հրապարակները:

■

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐ, ԼԵԳԵՆԴՆԵՐ

# Հանճարի հայտնությունը

## Հատված Վանիկ Սանթրյանի «Մաշտոցի որդիները» գրքից

....Աշխարհի վրա լույսը վարարել, եկել-լցվել է երկիրը հայոց: Արեւը կախվել է երկնքից ու անշարժ, իբրեւ տապից ջուրը մտած գոմշացուլ, աչք-ունք չի ճպում:

Սյունյաց աշխարհից Արարատյան նահանգ բերող ճանապարհը կիսել են նրանք` երեք հեծյալները, ճամփադադար արել Քաղցրագետի մոտ: Չիգ, ողորկ երեք կեռասենու վրա պտուղներ չկան, կանաչ տերեւներն են մնացել միայն, փոքր-ինչ դեղնոտած: Նրանցից առաջինի տակ, սեւահողից բարակ մի աղբյուր է ծլլում, ու այս երեքը, որ ճանապարհ են ընկել արեւագալից առաջ, ուզում են փոքր-ինչ շունչ քաշել, դադար առնել:

Այս երեքից մեկը երկար, մոխրավուն շուրջառով, ճակատից ետ տարած գանգուրներով ու ոչ երկար մորուքով տղամարդն առանձնացել է երկուսից, որոնք նրա զինակիր-ուղեկիցներն են: Ու եթե աշխարհն այսպես լուսավոր, այսպես արեւաշատ, դարձել է նրանց ուղեկիցը այս երկար, քարքարոտ ճանապարհին, ապա նրա սրտի ու մտքերի վրա մի խավարտխրություն է իջել, հարցականներով ծանրաբեռնված բարկություն, խառն մտքերից սիրտը ծովացել, փոթորկվել է: «Ինչո՞ւ»: Անպատասխան «ինչու»:

Սյունյաց աշխարհից էր գալիս նա` վարդապետ Մեսրոպը: Զախողված առաքելությունից: Սյունյաց աշխարհում բոլոր-բոլորը` սեպուհները, ախոռապետները, որսապետները, ազատները, շինականները, մշակները, պայտագործները, սայլապանները, ճորտերը, նույնիսկ ոչ ոք, ոչ ոք չէր ուզում հավատալ, որ կա մեկ աստված, ծիծաղում էին այս վարդապետի քարոզի վրա, ու ամեն մեկը տալիս էր իր բազում աստվածների անունները: Մի աստված, ընդամենը մի աստված մարդկանց այսքան շատ մեղքերի, ցավերի, ուրախությունների ու հոգնությունների համար, որն իբր պիտի հարություն առնի եւ անի վերջին դատաստանը` վարձատրի արդարներին, պատժի մեղավորներին, մխիթարի սգավորներին: Ո՛չ, սա մեկ աստծո գործ չէ:

Սյունյաց Վաղինակ իշխանը մեղմեց նրա բարկությունն ու եկած պատվավոր հյուրին Նոր քաղաքից, ուր հայոց ազգին թագավորում էր Վռամշապուհ Արշակունի արքան, մեծաշուք ընդունելության արժանացրեց: Վաղինակ իշխանը, ի պատիվ Մեսրոպ վարդապետի, որ մարդ էր մեղմախոս ու ազնվաբարո, կարգադրեց Վարար գետի ձախ ափին որսասար հիմնել: Երինջները խոնարհեցին իրենց գլուխները բոլոր աստվածների առջեւ, թթենիներ տնկվեցին ու ընկուզենիներ, եղնիկներ բերեցին ու բաց թողեցին որսասարում: Ու Մեսրոպ վարդապետին ձի նվիրեցին, կարմիր ձի` սպիտակ բաշով:

Եվ այս ամենն ավարտվեց մեծ խնջույքով: Եվ Վաղինակ իշխանը, որ մի հսկա բազմության կերուխումի արարողապետն էր, ազդարարեց ամբոխին` սեղանի շուրջը տեր ու ծառա չկա, զվարճանալ թույլատրում է բոլորին: Ասում էր, ու մի հսկա գավաթ ձեռքին ինքն էլ զվարճանում, Մեսրոպ վարդապետին գինի խմեցնում` հանուն հայոց Վռամշապուհ արքայի արեւշատության:

– Մենք կոպիտ ենք ու բիրտ, տե՛ր վարդապետ, – գավաթը ձեռքին իր կողքին նստեցրած վարդապետի ականջին կես կատակ, կես լուրջ փսփսում էր Վաղինակ իշխանը, – նայի՛ր այս ամբոխին. մի՞թե սրանք բոլորը կուզենան մի աստված ունենալ ու միաբան լինել հանուն մեկ աստծո: Սրանցից ամեն մեկն իր աստվածն ունի, ու ամեն մեկն իրեն է աստված համարում: Այստեղ թագավորի հրովարտակն ու կաթողիկոսի կոնդակը եղած կամ չեղած` նույնն է: Դու սրանց բոլորին` այս շինականներին ու ազատներին, ասա՛ վտանգի տակ է հայրենին, դու առաջնորդի՛ր նրանց թշնամյաց դեմ` հանուն սուրբ հողի, ու կտեսնես, թե ինչ կտրիճներ են, ինչ նիզակակիրներ ու աղեղնավորներ, ինչ հեծյալներ: Իսկ ինչ մնաց Հիսուս Քրիստոսին պաշտելուն` դժվար է բանը: Գինի խմի՛ր, տե՛ր վարդապետ:

– Պատվարժա՛ն տանուտեր: Մենք պիտի ունենանք մեկ հավատ, մեկ աստված: Սա է կոչվում միաբանություն, ու սրանով կլինի անսասան հայրենիքը մեր, – ոգեւորվեց Մեսրոպը:

– Եվ հոգին առաջնային է, քան մարմինը, – զվարթացավ Վաղինակ իշխանը: – Աշխարհն անցողիկ է, եւ պիտի երազել հանդերձյալ կյանքում անմահանալու մասին: Այրարատյան դաշտում գուցե եւ ճնշել եք, հավատափոխ արել: Այստեղ հեշտ չէ դա. հեթանոս աստվածները մեր լեռներում պինդ են նստած, ու մեր լեռներից նրանք պոկ չեն գա:

– Ես եկել եմ Գողթն գավառից ու քեզ, տե՛ր իմ, բերել եմ Շաբիթ իշխանի ողջույնները: Բերել եմ Վռամշապուհ արքայի ու սուրբ քահանայապետ Սահակ Պարթեւ կաթողիկոսի բարի մաղթանքները:

– Խոնարհվում եմ պատվելի անունների առջեւ, հա՛յր սուրբ, – զսպեց իր խոսքը Վաղինակ իշխանը: – Շաբիթի հեթանոսներին քշեցի՞ք:

– Քշեցինք, – հպարտ ասաց հյուրը: – Քշեցինք երկիրը Մարաց:

– Մերոնց չեք կարող:

Ամբոխը` ձնե գունդ, մեծանում էր: Վաղինակ իշխանի կատարածուները, սար-ձոր ընկած, ժողովել են բոլորին: Նոր քաղաքից եկել է Մեսրոպ անունով մի վարժապետ` Ներսես կաթողիկոսի աշակերտը, որը քաջիմաց է հունարենում, ասորերենում ու պարսկերենում, լեզվաբան է, փիլիսոփա, թարգման ու ճառասաց: Տարոնցի այս ջահել այրը եկել է քարոզելու քրիստոնեություն ու թարգման դառնալու Ավետարանի գրություններին: Եկել է կարդալու ու թարգմանելու ասորերենից:

Երգում են անուշ տավիղները, բամբիռն ու քնարն են ծլնգում, զարկում են թմբուկներն ու ծնծղաները: Նեղ երկար հովտում կանաչի վրա բացած-փռած սուփրաներին գինին դատարկվում է կժերից, ու փարչերը գլուխներ են տաքացնում:

Վաղինակ իշխանը բարձրացրեց երկու մատը: Աղմուկը, ժխորը, երգը ընդհատվեցին քար լռությամբ: Դա նշանակում է, որ համակ ուշադրություն պիտի լինի: Գավաթներն ու փարչերը վար դրվեցին, լսելի եղան կրակների ճտճտոցը, մորթվող երինջների բառաչը, գառների մայունը: Վաղինակ իշխանը ոտքի ելավ ու բոլոր աստվածների օրհնությամբ բարի գալուստ մաղթեց հայոց մայրաքաղաքից եկած մեծարգո հյուրին` Մեսրոպ վարդապետին:



Հետո՞:

… Այդ հետոն է, որ հիմա կրծում է աղբրի կողքին ճամփադադար արած մոխրավուն շուրջառով այս վարդապետի միտքն ու հոգին:

Սյունյաց հեթանոսները հաղթեցին Քրիստոսին:

Բոլորից շատ Բակուռ շինականն էր հուզել նրան:

Երկժամյա ճառախոսությունից հետո, երբ Մեսրոպը պերճախոս թարգման եղավ ասորերենին, Բակուռ շինականը մոտեցավ նրան, չոքեց, համբուրեց շուրջառի փեշը ու, թողություն աղաչելով, մի զարմանալի հարց տվեց. «Տե՛ր գիտուն եւ հրաշամիտ, ներող եղիր, որ իմ պիղծ լեզվով խախտում եմ անդորրը քո սուրբ մտքերի: Սիրտս կրծում է հարցը ցանկալի: Ինչո՞ւ ես կարդում ասորերեն: Մենք հա՞յ ենք, թե՞ ասորի»:

– Մտրակե՛լ, – բարկացած հրամայեց Վաղինակ իշխանը:

Բայց Մեսրոպի հայացքը կանխեց մտրակի հարվածը, եւ Բակուռ շինականը ելավ տեղից` հարցական հայացքը չկտրելով քարոզող վարդապետից:

«Ինչո՞ւ ես կարդում ասորերեն»:

... Արեւը` անշարժ ու ծույլ գոմշացուլ, տնկվել է հորիզոնում, սեւ հողից բարակ ծլլում է աղբյուրը, որի առջեւ զինակիր Հուսիկը մաքրել է Քաղցրագետի քարատակերից մերկ ձեռքերով հենց նոր բռնած ձկների փորը ու հիմա մարմանդ կրակի վրա խորոված է անում:

Սյունյաց աշխարհից Քրիստոսի «առաքյալին» պատվով ճանապարհեցին, հարգ ու կարգով, իշխանական առատ հյուրասիրությամբ ու ընծաներով: Բայց սյունեցիք մնացին իրենց հեթանոս աստվածների հետ` ասելով` Քրիստոսին թող այրարատցի տերերն ու ծառաները երկրպագեն: Եվ Սյունյաց աշխարհի Բակուռ անունով մի շինական տվեց հայոց աշխարհի վրա ծառացած հարցը. «Ինչո՞ւ մենք գիր չունենք, ինչպես ասորիները»:

Իրոք, ինչո՞ւ մենք գիր չունենք: Եվ եթե գիր ունենանք, հաստատապես կդադարենք եզանը պարսկավարի պաշտելուց, ու չե՞նք ասի, թե եզը բոլորից առաջ է ծնվել: Անհեթեթություն է, չէ՞: Գիր չունենք, աստվա՛ծ իմ: Ու այս շինականի միտքն ավելի սուր էր, քան իմ նման հարյուր գիտուններինը` միասին վերցված: Տառ ու գիր: «Ասորաց ավետարանը հայոց հողը չի պահի, տե՛ր իմ, մեր տառ ու գիրը կպահեն»:

– Հրամեցի՛ր հացի, հա՛յր սուրբ, – արծաթյա սինին բռնած, իր զանգակ ձայնով վարդապետի գլխավերեւում կանգնեց զինակիր Հուսիկը:

Մյուս ուղեկիցը` ասորերենում առաջադիմող Բաղենը, թասն ու գինու կուլան էր բռնել:

Վարդապետը լուռ գլխով արեց: Հուսիկն ու Բաղենը մնացին կանգնած: Նրանք գիտեին, որ վարդապետի հոգին ալիքված է, սիրտ չէին անում անզգույշ զրույց բացելու:

– Տեղավորվեցե՛ք կողքիս, – թախծոտ ասաց Մեսրոպը: – Եկե՛ք գինի խմենք ու ձուկ ուտենք, եւ պարսիկների նման ասենք` շունը տնտեսության պահապանն է, աքաղաղը սուրբ կենդանի է, որովհետեւ լուսադեմին արթնանում է, բարի են լույսը, արեգակը, կրակը, հողը, ջրերը, չար են խավարը, ցուրտը, մահը, օձը, մկները, միջատները: Ո՞վ չգիտե սա: Եվ նման ուրիշ մտքեր ասենք ու չկամենանք իմանալ, թե ինչ կա այս սուրբ գրքում, ու չճանաչենք զիմաստություն ու զխրատ:

Ուղեկցողները լուռ էին. պետք չէր խառնվել նրա մտքերին…

■

ԳՐԻՇԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ



### Մթնաձոր

*Լեռների գրկում, Գորիսից վերեւ,*
*Ուր լույսի շողը չի հասնում գետին,*
*Ընկած է մի ձոր` մութ ու անարեւ,*
*Որ նյութ է տվել իմ այս լեգենդին:*
*Մեզնից առաջ դար ու դարեր,*
*Բնակվում էր Հին Գորիսում*
*Չքնաղ աղջիկ մի թխահեր:*
*Մի մինուճար զավակ էր նա,*
*Կույր գուսանի դուստր անգին,*
*Ու սրտացավ իր հոր նման*
*Միշտ սիրով էր նայում կյանքին:*
*Գեղեցկություն բառը կարծես*
*Նրանից էր առաջացել*
*Եվ արեւի շողերի պես*
*Ամբողջ աշխարհը թեւածել:*
*Երբ ժպտում էր, ամեն անգամ*
*Վարդեր էին չորս կողմ բացվում,*
*Եվ լեռնաշխարհը հայկական*
*Նրանց անուշ բույրով լցնում:*
*Երբ փխրում էր, փխրում մեկից*
*Եվ լաց լինում նա մեղմաբար,*
*Անձրեւն խսկույն լուրթ երկնքից*
*Մարգարտաշող թափվում էր վար:*
*Նա ապրում էր մարդկանց վշտով,*
*Նրանց խինդով ուրախանում,*
*Այդ պատճառով նրան շուտով*
*Ամբողջ Սյունիքն է իմանում:*
*Պատմում է սակայն լեգենդը ցավով,*
*Թե ձորի խորքում դարանակալած,*
*Չար մարդիկ էին ապրում դարերով`*
*Դաժան դեւերի կերպարանք առած:*
*Չարության հետ են լույս աշխարհ եկել*
*Եվ պատսպարվել քարանձավներում,*
*Լույս աղջիկներին միշտ առեւանգել,*
*Սարսափ տարածել մոտիկ վայրերում...*
*Եվ ահա մի օր նրանց պան շեմին*
*Հայտնվեցին այդ նույն դեւերն ահավոր,*
*Խլեցին հորից անմեղ եղնիկին,*
*Փախցրին, տարան ձորն անդնդախոր:*
*Հայրն անհուն ցավից ավանդեց հոգին`*
*Տանելով իր հետ վիշտն իր անդարման,*
*Աշխարհում թողած մի կորած աղջիկ,*
*Ինչպես ծովն ընկած մի լույս ադամանդ...*
*Ասում են` թե այն աղջկա մրմուռից,*
*Անհուն վշտից մթնում է ձորն ահավոր,*
*Մարդիկ փեսնում ու սոսկում են այդ ձորից,*
*Եվ սարսափած այն կոչում են Մթնաձոր:*
*Իսկ մշուշը, որին այնտեղ վերջ չկա,*
*Որ հավետ է իջեւանել այդ ձորում,*
*Ասում են` թե հառաչն է այն աղջկա,*
*Որ մինչ այսօր սգում է իր անձավում:*
*Երբ կայծակն է երկրի կուրծքը ակոսում,*
*Այդ ցոլքերն են նրա պայծառ աչքերի,*
*Երբ անձրեւ է հաճախ տեղում Գորիսում,*
*Այդ էլ նրա լացն է անհուն վերքերի:*
*Մթնաձորում ամեն եկող նոր տարի,*
*Երբ արեւն է մի պահ ամպի հետ խաղում,*
*Ասում են` թե հավերժորեն կենդանի`*
*Այդ աղջիկն է իր քնի մեջ ծիծաղում:*

### Զանգ - է - զուր

**Լենգենդական պոեմա. հատված**

*... Համր Զանգը ձիւնափայլ*
*Բարձունքներից խորտակւեց*
*Անդունդները մե՛գ-մռայլ,*
*Փշո՛ր-փշո՛ր բեկբեկւեց,*
*Որպէս պնակ ապակեայ,*
*Հեկեկալով-զը՛նգը՛ զո՛ւր....*
*Աշխարհին ասեց «Զանգ - է - զուր»...*

**Եղիա Տէր-Հայրապետյան**


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru


ՀԱՅ ԿԻՆՈՆ ԳՈՐԻՍՈՒՄ

# Տոն, որ չմնաց գորիսեցիների հետ

Կինոն Գորիսում ի հայտ է եկել անցած դարի 30-ականներից: Հին գորիսեցիները հիշում են այն հրճվանքն ու խանդավառությունը, որ պարգեւել է առաջին կինոն` ցուցադրված երբեմնի թատրոնի շենքում: Դա իսկական տոն էր նրանց համար: Քաղաքակրթությունը, դարաշրջանում վերելք ապրող գիտությունն ու տեխնիկան փոքրիկ քայլերով, բայց վստահաբար ներխուժում էին նաեւ հնամենի Կյուրես: Հնաբնակ գորիսեցիները չեն կարող չհիշել առաջին համր կինոնկարները` «Շորն ու Շորշորը», «Նամուսը», «Զանգեզուրը» (նկարահանվել է Գորիսում), առաջին ձայնային ֆիլմը, որը պարունակում է երկրի ղեկավար Ստալինի ճառը, «Լենինը` հոկտեմբերին», «13-րդը» հետպատերազմական ռուսական կինոֆիլմերը, որ 1940-ականներին ձեռքով պտտվող սարքով ցուցադրել եւ կինոսարքավորումներն ու կինոժապավեններն ավանակով շրջանի գյուղերն է տարել, եղել է կինոմեխանիկ Սեդրակը, որին, բարեբախտաբար, դեռ հիշողներ կան:

Մինչեւ 1960-ականները շրջանի գյուղերում չկային ստացիոնար կինոկետեր, իսկ Գորիսում կար 2 շրջիկ կինոկետ: Շրջիկ կինոմեխանիկները գյուղեր էին գնում` կինոցուցադրման` ավանակով, ձիով տեղափոխելով նաեւ շարժական էլեկտրակայանը, որն աշխատեցնում էր կինոպրոյեկտորը:

Առաջին գյուղերը, որտեղ շրջիկ կինոմեխանիկները կինոֆիլմեր են ցուցադրել, Վերիշենն էր, Շինուհայրը, Խնձորեսկը, Տեղը, Կոռնիձորը: Այսօրվա բարեկարգ ասֆալտապատ ճանապարհները չկային. սարերով, ձորերով, նեղլիկ արահետներով էին տեղափոխում կինոֆիլմերը` անձրեւի, ձյան, արեւի վառող ճառագայթների տակ, օրեր, շաբաթներ շարունակ: Շատ գյուղեր դեռեւս այն ժամանակ գտնվում էին ձորերի մեջ, խորախոր կիրճերում, եւ այնտեղ հասնելը պարզապես հերոսություն էր:

Գորիսի կինոցանցի դիրեկտորներն էին Արմենակ Սարգսյանը, Բագրատ Ալեքսանյանը, Վոլոդյա Ղարագյոզյանը, Մանուչ Խաչատրյանը, Սարգիս Բաբաջանյանը, Հայկազ Հայրապետյանը, Սերյոժա Հովսեփյանը, Մարտին Մայսուրյանը, Շամխալ Գրիգորյանը, Վոլոդյա Մինասյանը...

1958թ. բախտորոշիչ եղավ Գորիսի կինոաշխարհում. կուլտուրայի բաժնի վարիչ Սարգիս Բաբաջանյանի օրոք շահագործման հանձնվեց եւ բացվեց քաղաքի կենտրոնում տեղակայված «Զանգեզուր» կինոթատրոնի շենքը: Այն կահավորված էր ժամանակի շնչով եւ հագեցած արդիական սարքավորումներով: Այլեւս հիշողություն դարձան հին թատրոնի շենքում ցուցադրված համր կինոյի պարզեւած հաճելի ակնթարթները, երբ դահլիճում շրջում էր Ալեքսանյան Բագրատը եւ բամբ ձայնով ֆիլմը մեկնաբանում…

Նոր կինոթատրոնի շենքն արտաքինից արդեն գորիսեցիների ակնածանքն ու հիացմունքն էր առաջացնում: 1958թ., երբ գորիսեցին առաջին անգամ մտավ կինոթատրոնի շենք, ապշանքն ու հիացմունքն անսահման էին. մարմարյա սալիկապատ սրահներ, գորգապատ աստիճաններ, 350-400 տեղանոց հարմարավետ դահլիճ, առանձին գործող բուֆետ… Դա մի մեծ ցնծություն էր գորիսեցու համար, որը շարունակվեց շուրջ երեք տասնամյակ: Գորիսի մշակութային կյանքը միանգամից աշխուժացավ, այն կատարյալ վերելք էր ապրում` ամենուր կազմակերպվող համերգներ, տոնական միջոցառումներ, գրական-երաժշտական հանդիպումներ գրողների, մշակութային գործիչների հետ: Եվ այդ ամենը կազմակերպվում էր «Զանգեզուր» կինոթատրոնում: Նախկին թատրոնի շենքը դարձել էր վքարային եւ օր օրի փլման եզրին էր: Գորիսի շրջանի մշակութային կյանքը գործում էր համախումբ. շրջանային կուլտուրայի բաժինն այդ տարիներին ներառում էր քաղաքի եւ շրջանի բոլոր մշակութային օջախները, ներառյալ երաժշտական դպրոցները: Կինոն շրջանային կուլտուրայի բաժնի ճյուղերից մեկն էր, եւ կարելի է ասել` նշանակալի: 1960-ականներին ճյուղերում ստեղծվեցին ստացիոնար կինոկետեր: Վաստակաշատ, երկարամյա կինոմեխանիկներ էին Շաքարին Սամվելը, Ասրյան Կոլյան (Քարահունջ), Շախանումյան Մեսրոպը, Կարապետյան Շամխալը, Գրիգորյան Վոլոդյան (Հարժիս), Խաչատրյան Հովսեփը, Գասպարյան Յուրան (Տեղ), Խաչատրյան Ռազմիկը, Ավետյան Սեմիկը (Տեղ), Դանիելյան Սլավիկը (Կոռնիձոր), Դադայան Գուրգենը, Միքայելյան Սերյոժան (Խնածախ), Ալավերդյան Բորիկը (Խոզնավար), Էկտիբարյան Գառնիկը, Բաբաջանյան Քաջիկը, Վարդազարյան Սերյոժան, Ղազարյան Գուրգենը (Տաթեւ), Գեւորգյան Կոլյան (Տաթեւ), Հակոբյան Բորիկը (Խոտ), Հովսեփյան Անուշավանը (Խնածախ), Փանդունց Գանոն, Հովսեփյան Գրիշան (Խնձորեսկ):

Առաջին ձայնային կինոֆիլմերից Ակսել Բակունցի «Սպիտակ ձին», վերանվանված «Արեւածագից առաջ», «Զանգեզուր» կինոթատրոնում ցուցադրվելուց հետո 1959թ. ցուցադրվել է շրջանի գյուղերում: Կինոֆիլմի գլխավոր հերոս, դերասան Հրաչյա Ներսիսյանը ֆիլմի պրեմիերային շրջանային կուլտուրայի բաժնի հրավերով մի շարք դերասանների հետ ժամանել է Գորիս, մասնակցել հանդիսատեսների հետ կազմակերպված հանդիպմանը:

«Զանգեզուր» կինոթատրոնի բացումից հետո կուլտուրայի բաժնին տրամադրվել է մեկ բեռնատար մեքենա, որն ի սպաս է դրվել կինոցանցի աշխատանքներին. կինոսարքավորումներն ու կինոժապավենները դրանից հետո գյուղեր են տարվել բեռնատարով: Նույն բեռնատարով գյուղեր շրջայցեր էին կատարում համերգային եւ թատերական խմբերը: Հին վարորդներից են Ուբան (Ռուբիկ), Հրաչիկ Հարությունյանը, Սերյոժա Վարդազարյանը, Ռուբիկ Գզոյանը (Կուդուչ), ավելի ուշ` Քաջիկ Բաբաջանյանը, որոնք սկսել էին վարել նաեւ 1960-ականներին տրամադրված սկզբում 1-ին, ապա նաեւ 2-րդ «վիլիսները»:

Կինոն Գորիսում հետագա տարիներին էլ ավելի ծաղկում ապրեց: 1968թ. շահագործման հանձնվեց երկրորդ` «Ավանգարդ» կինոթատրոնը Գորիսում: Թե ինչ տիտանական ջանքերով են կառուցվել երկու կինոթատրոնների շենքերը ծայրամասային փոքրիկ, Ռուսաստանի բյուջեից կախված քաղաքում, դժվար չէ ենթադրել. օգտագործվել են անձնական կապերը Ստեփանակերտում, Երեւանում, զոր ու գիշեր ներգրավվել, լծվել, ներդրել նյարդեր, առողջություն, ժամանակ, ամեն մարմարյա քարի համար պայքարել, հրճվել-հպարտացել` տեսնելով բարձրացող կառույցը: Այն ժամանակ դա սոսկ շինարարների գործը չէր. դրան անմիջական մասնակից էին կուլտուրայի բաժնի վարիչից մինչեւ հանրապետության ղեկավար օղակները:

Այդ ընթացքում, բնականաբար, համալրվում էր Գորիսի կինոցանցի կոլեկտիվը. 8-10 հոգանոց կոլեկտիվն արդեն 1980-ականներին դարձավ 40-45 հոգանոց կոլեկտիվ:

Հետագա տարիներին կինոն առանձնացավ շրջանային կուլտուրայի բաժնից: Մինչեւ 1980թ. դիրեկտորներ աշխատեցին Հայկազ Հայրապետյանը, Մարտին Մայսուրյանը, Վոլոդյա Մինասյանը, Շամխալ Գրիգորյանը:

1980-ականներին Գորիսի կինոցանցն սկսեց նոր վերելք ապրել: Պետական պլանները գերակատարվում էին մինչեւ 150-200 տոկոս: Բոլորս դեռ հիշում ենք այն հոծ հերթերը, որ գոյանում էին տոմսարկղերի մոտ: Կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեից անընդմեջ Գորիսի կինոցանցը արժանանում էր փոխանցիկ դրոշների, պատվոգրերի, 1-ին կարգի դրամական պարգեւների, պետական այլ խրախուսանքների: 1980թ. մինչեւ 1989թ. կինոցանցի դիրեկտոր էր աշխատում նորից Սարգիս Բաբաջանյանը: Այդ տարիներին շրջանի գրեթե բոլոր գյուղերում ստեղծվեցին ստացիոնար կինոկետեր, կոլեկտիվը ձեռք բերեց աննախադեպ հաջողություններ, համերաշխ մթնոլորտում տիրում էր աշխատանքային եռուզեռ ոչ միայն քաղաքի կինոցանցում, նաեւ շրջիկ կինոկայանքներում` Խոզնավարից` Չայզամի (փայտամշակման գործարան), Մալդաշից` Հարժիս: Չկար մի այնպիսի յայլաղ, որտեղ շրջիկ կինոկետերը չհասնեին: Յայլաղային կինոցուցադրումների ավանդույթը մեծ թափ առավ 1980-ականներին: Կինոցուցադրումներ էին կազմակերպվում Սեւ լճի, Ղազի Գյոլի շրջակայքում, Եռաբլուրում, Բազարչայի հեռագնաց անասնապահական ֆերմաներում, ամենուր, որտեղ կարող էր հայտնվել թեկուզ 1 անասնապահ:

Այդ տարիներին, ինչպես ողջ տարածքում, այնպես էլ մեր երկրում ուղղակի-անուղղակի մոլեգնում էր քաղաքական փոթորիկը: Այն չէր կարող իր պտտահողմի մեջ չներառել նաեւ խորհրդային կինոցանցը` պրոպագանդայի ամենահզոր միջոցը: Գորբաչովյան «դեմոկրատիա» բառը, որն ընդամենը թակարդ էր, գրավիչ ախտով վարակել էր ողջ երկիրը: Մարդիկ ասես մոռացել էին «Զանգեզուր» կինոթատրոնում 80-ականներին ցուցադրված «Մխիթար Սպարապետը», «Լքված հեքիաթների կիրճը» կինոֆիլմերը, դրանց անդրանիկ ցուցադրումների ժամանակ հանդիսատեսների հանդիպումները` կազմակերպված գլխավոր հերոսների` Արմեն Ջիգարխանյանի, Մհեր Մկրտչյանի «Ունայնություն ունայնությանց», Սոս Սարգսյանի, Ալլա Թումանյանի, կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ Գեւորգ Հայրյանի, գրողներ Սերո Խանզադյանի, Համո Սահյանի հետ: Ասես մոռացվել էին մեր կինոթատրոններում ցուցադրված հայ կինոյի այնպիսի փառահեղ գործեր, ինչպիսիք են «Անուշը», «Նռան գույնը»…

Այլեւս փոխվում էին ժամանակները. գորբաչովյան խորամանկ «դեմոկրատիան» իր գիրկն էր առել ԽՍՀՄ-ի ողջ տարածքը` չանտեսելով ե՛ւ կինոդիտողին, ե՛ւ կինեմատոգրաֆիայի պատասխանատու անձանց: Հանդիսատեսն ուզում էր տեսնել հանցագործ աշխարհ, այլասերում, վայրագություն քարոզող այն կինոֆիլմերը, որոնք «գաղտնի» էին պահվում իրենից, բայց որոնք սկսել էին հեղեղել սեւ շուկան: Իսկ վերեւներն էլ ակնհայտ հովանավորում էին այդ «բարի» ցանկությունը: «Փոքրիկ Վերան», «Ինտեր աղջիկը» կինոֆիլմերը, որ պարտադրվեցին միութենական կինեմատոգրաֆիայից բոլոր կինոթատրոններին, ընդամենն այդ ամենի սկիզբն էին: Արդեն հասկանալի էր, որ միտումնավոր շեղվում էր երկրի վերակառուցման գործընթացը եւ ամենեւին ճիշտ ուղիով չէր տարվում: «Դեմոկրատիային» ընդառաջ չգնալու վերջին երկու տարում հաճախակի հնդկական «հետամնաց» կինոֆիլմեր ցուցադրելու մեղադրանքով (շատ ողբալի կլիներ պատճառաբանությունը, եթե այդքան ծիծաղելի չլիներ) շրջկոմի բյուրոն, ագիտացիայի եւ պրոպագանդայի բաժնի փութաջան նախաձեռնությամբ, քաջ գիտակցելով, որ երկիրը փլուզվում է, եւ իրենց էլ փլուզող վերջին պատառ բերող մարդիկ են պետք, հապճեպ, մի գիշերում կազմակերպում է նորանշանակ դիրեկտոր Լյովա Սարգսյանի (Քարահունջ) «ընտրություն»-մուտքը Գորիսի կինոցանց եւ երկարամյա, պետական, հասարակական անբասիր գործունեություն ծավալած Սարգիս Բաբաջանյանի աննորհակալ եւ դավադիր ազատումը` «իր դիմումի համաձայն»:

Նորանշանակ դիրեկտորի գործունեությունը դրանով էլ ավարտվեց, քանի որ եկավ 1990թ., եւ Գորիսի կինոցանցի ղեկը անցավ Մարտին Մայսուրյանին:

Ցավոք, ժամանակները կինոցանցի օգտին չէին խոսում:

Կարճ ժամանակում սկսվեցին կինոցանցի հոգեվարքը, կազմալուծումը: Կինոթատրոնները` ասես անտեր, ավերվեցին, կողոպտվեցին: «Ավանգարդը» տառացիորեն քարուքանդ արվեց: Կինոն վերացավ Գորիսում: Երբեմնի կենդանության ճիչերն անլսելի էին. հանդիսատեսն ինքն էլ, հուսախաբված, կորցրած հավատը, արդեն կինո չէր հաճախում: Քաղաքի տարբեր վայրերում անարգել սկսել էին հայտնվել մասնավոր վիդեո-սրահներ, որտեղ գիշերային ժամերին ցուցադրվում էին ամերիկյան կոյուղային պոռնոֆիլմեր: «Զանգեզուր» թերթը (խմբագիր` Սամվել Ալեքսանյան) իմ հեղինակությամբ քննադատական ստուգայց-հոդվածով հանդես եկավ: Չօգնեց: Ընդամենը հնչեցին սպառնալիքներ, որոնք այդ տարիներին սովորական էին դարձել: Սառը զենքով եւ փողոցային լուտանքներով լրագրողի վրա գրոհելը, ավաղ, այդ օրերից դարձավ սովորություն:

**Հ.Գ.** *Զրուցելով երկարամյա հարգված մի կինոմեխանիկի հետ` հետաքրքիր միտք լսեցի, որ կուզեի մեջ բերել. «Մենք գնում էինք հեռագնաց ամենափոքրիկ յայլաղ եւ այնտեղ կինոֆիլմ ցուցադրում: Այս գեղեցիկ, ավանդաշատ քաղաքը մի՞թե մի յայլաղի չափ չկա, որ այդպես դաժանաբար ոչնչացրին կինոն` մինչեւ վերջին աթոռը, որ ստեղծվել էր մեզնից շատերի անսահման նվիրումի, մեծ աշխատանքի շնորհիվ»: Կարծում եմ` ավելի լավ չես ասի:*

**ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

## Գորիսում նկարահանվել են



**Հրաչյա Ներսիսյան: Դրվագ «Զանգեզուր» ֆիլմից:**

«Զանգեզուր» (ռեժ.` Համո Բեկնազարյան) ● Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի մոտիվներով` «Արեւածագից առաջ» ● «Կապիտան Առաքելը» ● «Մխիթար Սպարապետ» (ռեժ.` Էդ. Քեոսայան), ● «Լքված հեքիաթների կիրճը» (ռեժ.` Էդ. Քեոսայան), ● «Հարսնացուն հյուսիսից» (դրվագներ) (ռեժ.` Ներսես Հովհաննիսյան, սց.



**Հրաչյա Ներսիսյանը «Զանգեզուր» ֆիլմում**

հեղ.` Գեւորգ Հարությունյան), ● «Նամակ ռուսաց թագավորին» նշանավոր կինոֆիլմերը: Նկարահանվել են նաեւ` «Գուսանի սերը» (ռեժ.` Կարեն Մեսյան), «Սերո Խանզադյան», «Ակսել Բակունց», «Հին ու նոր Խնձորեսկ», «ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրը Գորիսում 1963թ.» եւ այլ կարճամետրաժ, փաստագրական, վավերագրական կինոնկարներ:



**Արմեն Ջիգարխանյան: Դրվագ «Մխիթար Սպարապետ» ֆիլմից:**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
Էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԳՈՐԻՍԻ ԱՎԱԳԱՆԻՆ 2008-2012թթ.


ԱԿԼՈՒՆՑ ՎԱՀԵ


ԱՂԱՔԱՆՅԱՆ ԷՐԻԿ


ԱՂԱՔԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ


ԱՄԻՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ


ԲԱԴԻՐՅԱՆ ԵՐԵՄ


ԲՈԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ


ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ


ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԷՐԻԿ


ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ


ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ


ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՐԱՄ


ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՇԱԿ


ՄՈՒՍԱԽԱՆՅԱՆ ԱՐԱՄ


ՈՍԿԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ


ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

# Գորիսի օդանավակայանի չորս փասնամյակը


ՍՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՎԻԱՑԻԱ

**Հայաստանում առաջին ավիագիծը՝ Երեւան-Թբիլիսի, սկսեց գործել 1933թ.: 1953-ից կանոնավոր ավիաթռիչք էր կատարվում նաեւ Երեւան-Գորիս երթուղով: Այդ ժամանակ արդեն ժողովրդական տնտեսությունն անհնար էր պատկերացնել առանց քաղաքացիական ավիացիայի: Տարբեր ուղղություններով թռչում էին մարդատար, սանիտարական, բեռնատար, փոստատար մեծ ու փոքր ինքնաթիռներ եւ ուղղաթիռներ:**

1953-ին Գորիսում՝ ներկայիս Հարթաշեն գյուղի մերձակայքում, բացվեց առաջին օդանավակայանը, որի կառուցման աշխատանքներին մասնակցեց համարյա ողջ շրջանը: Թռիչքաշերտի երկարությունը 950մ էր, եւ հնարավորություն կար ինքնաթիռներ ընդունել ու բաց թողնել ինչպես ամռանը, այնպես էլ ձմռանը: Նորաստեղծ օդանավակայանում աշխատելու հրավիրվեցին մասնագետներ ինչպես շրջանից, այնպես էլ Երեւանի ավիաջոկատից: Օդանավակայանի առաջին պետ նշանակվեց Երեւանից հրավիրված նախկին օդաչու Սերգեյ Մխիթարյանը, դիսպետչեր՝ գորիսեցի Նիկոլայ Արզումանյանը (նախկինում՝ կործանիչ ինքնաթիռի օդաչու), օդերեւութաբանական սպասարկումը ստանձնեց Արամայիս Փարսադանյանը, ռադիոհաղորդիչ-ռադիոտեխնիկ դարձավ Գեղամ Բաղալյանը: Ցավոք, մի քանի ամիս անց ողբերգական մահով կյանքից հեռացավ օդանավակայանի պետ Սերգեյ Մխիթարյանը, որից հետո այդ պաշտոնը վստահվեց օդանավակայանի դիսպետչեր Նիկոլայ Արզումանյանին:

Ինտենսիվ թռիչքները պարտադրեցին կոլեկտիվում ընդգրկել նոր մասնագետներ: Աշխատանքի ընդունվեցին նախկին ռազմական օդաչուներ՝ գորիսեցի Գուրգեն Ալեքսանյանը, տաթեւցի Սմբատ Մկրտչյանը: Նրանք զբաղեցրին թռիչքները ղեկավարող դիսպետչերների պաշտոնները: 1970-ին Սմբատ Մկրտչյանը նշանակվեց եղեգնաձորի օդանավակայանի պետ:

Հետագայում օդանավակայանում ստեղծեցին օժանդակ ենթակառուցվածքներ:

Կանոնավոր թռիչքներ էին կատարում Լի-2 քսանչորս տեղանոց եւ Ան-2 տասը-տասներկու տեղանոց ինքնաթիռները: Դրանցով կարելի էր թռչել ոչ միայն դեպի Երեւան, այլեւ Ստեփանակերտ, Կապան, Ջերմուկ, Եղեգնաձոր:

Ավելի ուշ դիսպետչերի պաշտոնը զբաղեցրին Վահրամ Մնացականյանը, տողերիս հեղինակը, Նաիրի Սարգսյանը, ուրիշներ:

Տարեկան միջին հաշվով կատարվում էր ավելի քան 1500 թռիչք եւ վայրէջք:

Օդային տրանսպորտից օգտվողների թիվը գնալով մեծանում էր, քանի որ Գորիսից Երեւան կարելի էր հասնել 45-60 րոպեի ընթացքում:

1970-ական թվականներին շրջանի ղեկավարությունը որոշում ընդունեց կառուցել նոր, ժամանակակից օդանավակայան, որն ի վիճակի կլիներ ընդունել ավելի հարմարավետ եւ ապահով ինքնաթիռներ: Ժամանակն էր, որ իր դարն ապրած Ան-2 ինքնաթիռին փոխարիներ այդ ժամանակների համար արդիական Յակ-40 ինքնաթիռը:

1979թ. երկրորդ կեսին նորակառույց օդանավակայանում, որ Խոտ գյուղի մերձակայքում է, որի թռիչքաշերտի երկարությունը 2020մ է, վայրէջք կատարեց առաջին Յակ-40 (27-32 տեղանոց) մարդատար ինքնաթիռը, որը վարում էր քաղաքացիական ավիացիայի հայկական վարչության պետ, ԽՍՀՄ վաստակավոր օդաչու Դմիտրի Աբբաշյանը: Առաջին ինքնաթիռի թռիչքը Գորիսի օդային թռիչքագոտում ղեկավարում էր տողերիս հեղինակը հանրապետության քաղաքացիական ավիացիայի ներքին ուղիների դիսպետչերական ծառայության ավագ խորհրդատու եւ ծառայության պետ Վասպուրակ Արսենյանի գլխավորությամբ: Դա մեծ իրադարձություն էր շրջանի կյանքում, եւ մարդիկ մեծ խանդավառությամբ ընդունեցին հաճելի իրողությունը:



Նոր օդանավակայանի կառուցման եւ արդիականացման գործում անգնահատելի դեր ունեցավ օդանավակայանի պետ Գուրգեն Խուրշուդյանը: Նրա անմիջական ղեկավարությամբ օդանավակայանում տեղադրվեցին ժամանակակից ռադիոլոկացիոն կայաններ, որոնց օգնությամբ ավելի բարձրացավ թռիչքների սպասարկման անվտանգությունը: Օդանավակայանը ոչ միայն սպասարկում էր սեփական երթուղիները, այլեւ Ստեփանակերտ, Բաքու, Կապան եւ հակառակ ուղղություններով թռչող ինքնաթիռների թռիչքները: Բացվեցին Գորիս-Բաքու, Գորիս-Ստեփանակերտ երթուղիները: Նախատեսվում էր Գորիս-Մինվոդի նոր երթուղու բացումը:

1988-ի ազգային զարթոնքին հետեւած ադրբեջանական ագրեսիայի ժամանակ մեծ եւ անգնահատելի աշխատանք կատարեցին նաեւ Գորիսի ավիատորները: Առանց օդանավակայանից բացակայելու՝ օրուգիշեր նրանք հարյուրավոր տոննա պարեն եւ այլ բեռներ էին առաքում Լեռնային Ղարաբաղ:

Իր գոյության ամբողջ ընթացքում Գորիսի օդանավակայանի մասին միշտ էլ դրվատանքով են խոսել քաղաքացիական ավիացիայի հայկական վարչությունում: Կոլեկտիվի անդամների մասնագիտական հմտությունների արդյունքն էր այն, որ Գորիսի օդանավակայանի սպասարկման տարածքում միշտ էլ բարձր է եղել թռիչքների անվտանգության ապահովումը: Մի շարք ավիատորներ գերազանց աշխատանքի համար արժանացել են պետական պարգեւների:

Օդանավակայանը գործեց մինչեւ 1993թ.:

Օդանավակայանի պետ են աշխատել Սերգեյ Մխիթարյանը, Նիկոլայ Արզումանյանը, Հրանտ Ղուկասյանը, Գուրգեն Խուրշուդյանը, Էդիկ Բաղալյանը, Վահրամ Մնացականյանը, Սոս Մարգարյանը, Արտուշ Մնացականյանը, Նաիրի Սարգսյանը:

Թեեւ 17 տարի է անցել օդանավակայանի փակումից, սակայն գորիսեցիները հույս են փայփայում, որ երբեւէ կվերաբացվի Գորիսի օդանավակայանը, եւ մարդիկ հնարավորություն կունենան ավիացիայի օգնությամբ ավելի կարճ ժամանակամիջոցում հասնել Երեւան ու մերձավոր արտերկրի քաղաքներ:

Միաժամանակ չեմ կարող ափսոսանքս չարտահայտել անմխիթար, ուղղակի ցավալի այն վիճակի կապակցությամբ, որ այսօր առկա է Գորիսի երբեմնի աշխույժ, մարդաշատ օդանավակայանում. շենք-շինությունների ներսում ուղղակի ամայություն է: Հիմա արդեն ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող օդանավակայանը նյութական լուրջ ներդրումների գնով հնարավոր կլինի վերականգնել, եթե, իհարկե, հանրապետության ղեկավարները նպատակահարմար համարեն վերականգնել այն: ■


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
Էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru


*Բնաշխարհ*

# Վարարակնի հովիտը եզրող լեռներն ու լեռնագագաթները


Լաստի կալից, ասես թե, մայր Աստվածն է շունչ տալիս...


Լաչին քարափ


Պորտափուր գագաթը՝ Գորիսն արեւելքից եզրող Չարքյազի սարի վրա:


Պղնձաքար (Պղնձաքերծ)


Օփավորի լեռ (քերծ)


Զագեձոր լեռը՝ Վարարակնի հովիտը հյուսիսից եզրող: Կենտրոնում՝ Գլուխ Զագեձորո գագաթն է:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔՆԵՐ

# Համագործակցության հասցեներ

**2009-ի սկզբին Գորիսի քաղաքապետարանն ապակենտրոնացված համագործակցության հուշագիր է ստորագրել Բելառուսի Հանրապետության Նեսվիժսկ քաղաքի հետ, ակնկալվում է տնտեսական, կրթամշակութային լայն համագործակցություն, երկու քաղաքների միջեւ հստակ ծրագրի իրականացում: 2009թ. ընթացքում նախնական գրավոր ու բանավոր համագործակցության պայմանավորվածություններ են ձեռք բերվել Իրանի Ուրմիա, Թունիսի Տոպազա քաղաքների համայնքային իշխանությունների հետ: Բայց ավելի սերտ է համագործակցությունը Ֆրանսիայի Ռոհն Ալպ ռեգիոնի Վիեն քաղաքի հետ, բարեկամության հիմքերը դրվել են 18 տարի առաջ՝ 1992 թվականին:**


Նեսվիժսկ, Բելառուս


Վիեն, Ֆրանսիա


Ուրմիա, Իրան

Դրա շրջանակներում առաջնային են համարվել մշակույթի եւ սպորտի, առողջապահության, բնապահպանության, փրկարար ծառայության ոլորտները: Համագործակցության արդյունքում Գորիսում բացվել է տուրիզմի տեղեկատվական գրասենյակ եւ ֆրանսախոսության կենտրոն: Գորիսի քույր քաղաքի համագործակցության շնորհիվ զգալիորեն բարելավվել է համայնքի առողջապահական համակարգը: Վերջին երեք տարում Ֆրանսիայից ստացվել են համակարգչային տոնոգրաֆ եւ մամոգրաֆ, ակնաբուժական սարքավորումներ, 70 անկողին, վիրահատական պարագաներ, ինչը ընդհանուր արժեքով գերազանցում է 300 հազար եվրոյի սահմանը: Գորիսի բժշկական կենտրոնը բարեկամացել է Վիենի կենտրոնական հիվանդանոցի հետ, եւ այդ բարեկամության գործնական արդյունքներն արդեն առկա են թե՛ բժշկատեխնիկական, թե՛ կադրերի վերապատրաստման ոլորտներում:

Գորիսի տուրիզմի գրասենյակի գործադիր տնօրեն Անուշ Հովակիմյանի հավաստմամբ՝ մինչեւ գրասենյակի հիմնադրումը իրենց աշխատակիցները վերապատրաստում են անցել Վիենի տուրիզմի գրասենյակում: Համագործակցության ոլորտներից մեկը ֆրանսախոսության զարգացումն է Գորիս քաղաքում: Այդ նպատակով ֆրանսախոսության կենտրոնը գործուն աշխատանք է տանում Ֆրանսիան ներկայացնելու Գորիսի համայնքում, նորագույն մեթոդներով ֆրանսերենն ուսուցանելու գործընթաց է իրականացվում Գորիսում. ֆիլմերի ցուցադրում, բազմաբնույթ միջոցառումներ, «Փոքրիկ դեսպաններ» ծրագրի շրջանակներում գորիսեցի դպրոցականներն այցելել են Վիեն:

Ֆրանսիայի Վիեն քաղաքի պատվիրակությունը 2010թ. մայիսի 5-ին եւ 6-ին Գորիսում էր: Պատվիրակությունը գլխավորում էր Վիենի քաղաքապետ Ժակ Ղեմիեն, նրա կազմում էին փոխքաղաքապետ Սիլվիա Նիկրա Սատլեմեշյանը եւ Վիենի քաղաքապետարանի արտաքին կապերի բաժնի խորհրդական Դոմինիկ Ղոմետը: Հյուրերը քաղաքային պատկերասրահում մասնակցեցին գեղանկարիչ Այսեր Մաթեւոսյանի աշխատանքների անհատական ցուցահանդեսի բացմանը: Վիեն-Գորիս քաղաքների միջեւ 18 տարի առաջ սկսած բարեկամությունը կրկին ամրագրվեց երեք տարվա բարեկամության հռչակագրով: Սա էր հերթական այցի գործնական արդյունքը: Ֆրանսիայից ժամանած պատվիրակությանը ընդունեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Այնուհետեւ ֆրանսիացի բարեկամները այցելեցին զբոսաշրջության տարածքային գրասենյակ, ծանոթացան կատարված աշխատանքներին: Գորիսի համալսարանում պատվիրակությանը հետաքրքրեց բուհի՝ որպես մարզի, Արցախի երիտասարդության կրթական եւ գիտական կենտրոնի առաքելությունը: Գորիսի ֆրանսախոսության գրասենյակի անդամների հետ հանդիպումը ջերմ էր, բարեկամական: Այն համեմվեց պարերի եւ ֆրանսերեն երգերի կատարումներով: Քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի ուղեկցությամբ նրանք եղան Գորիսի հիվանդանոցում, ծանոթացան շինարարության ընթացքին եւ քննարկեցին համագործակցության հետագա ծրագրերը: Այցի ավարտին պատվիրակությունը «Վիենի պուրակում» ծաղիկներ դրեց եւ հարգանքի տուրք մատուցեց Միսաք Մանուշյանի հիշատակին:

2010թ. մայիսին մեծ աջակցություն ցուցաբերվեց Գորիսի առողջապահական համակարգին եւ հրշեջ-փրկարարական ծառայությանը, համայնքի կենտրոնական հատվածի լուսավորումը բարելավվեց «Գորիսի-Վիեն» եւ «Էլեկտրիկներ առանց սահմանի» կազմակերպությունների համագործակցության շնորհիվ:

Քույր քաղաքների համագործակցության ոլորտներից մեկը պատմամշակութային ժառանգության պահպանումն է: Վիեն քաղաքում հիմնադրված «Վիեն-Գորիս» կազմակերպությունը, որ զբաղվում է Գորիս քաղաքի հիմնախնդիրներով, դիմել էր «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությանը՝ օգնելու վերականգնել Գորիս գյուղի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին: Այս տարվա հուլիսի 28-ից օգոստոսի 25-ն ընկած ժամանակահատվածում եկեղեցում իրականացվեցին պեղումներ: Գիտական արշավախմբում ընդգրկված էր 25 հոգի՝ Ֆրանսիայի Ռոն Ալպ տարածաշրջանից՝ «Վիեն-Գորիս» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ Ժոզեֆ Փափազյանի եւ Ժիրայր Պարունակյանի գլխավորությամբ: Գիտական արշավախումբը ղեկավարում էր ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի լաբորանտ-հնագետ Խաչիկ Վարդանյանը: Հյուրերը, բացի ղեկավարներից, ուսանողներ էին՝ տարբեր ուսումնական հաստատություններից, եւ այդ առաքելության մեջ ընդգրկվել էին կամավոր՝ նախաձեռնող կազմակերպությունների տարածած հայտարարության հիման վրա: Ոմանք նույնիսկ դրամական ներդրումներ են կատարել այդ ծրագրի իրականացման համար:

Ինչպես արդեն նշեցինք, քույր քաղաքների համագործակցությունը ներառում է նաեւ մշակութային ոլորտը: Վիենի հովանավորությամբ գորիսեցին հնարավորություն է ստացել պատկերասրահում տեսնել այլ տեղերից հրավիրված գեղանկարիչների աշխատանքները: Գորիսում ստեղծված «Հայ մշակույթի տուն» հասարակական կազմակերպությունը, համագործակցելով ֆրանսիական կողմի հետ, հիմնականում օժանդակում է ցուցահանդեսների կազմակերպմանը: Հոկտեմբերի 7-ին եւ 8-ին Երեւանում անցկացվեց ապակենտրոնացված համագործակցության հայ-ֆրանսիական երկրորդ համաժողովը, որին մասնակցում էին Վիենի փոխքաղաքապետ Պատրիկ Կյուղտան եւ Վիենի քաղաքապետարանի արտաքին հարաբերությունների պատասխանատու Նելի Դյուկղան, ինչպես նաեւ «Վիեն-Գորիս» հասարակական կազմակերպության նախագահ Ժակ Քեշիշյանը: Համաժողովի ավարտից հետո ֆրանսիացի բարեկամներն այցելեցին Գորիս, քաղաքապետարանում քննարկվեցին նախորդ այցից հետո կատարված աշխատանքները, նախանշվեցին անելիքները:

Գորիս համայնքում սոցիալ-տնտեսական ծրագրեր են իրականացնում նաեւ միջազգային կազմակերպությունները: Ինչպես տեղեկացրեց քաղաքապետարանի արտաքին կապերի բաժնի պետ Սվետլանա Խաչատրյանը, համայնքի տնտեսական զարգացմանը, սոցիալական վիճակի բարելավմանը, պատմամշակութային արժեքների վերականգնմանն իրենց նպաստն են բերել «Փրկենք երեխաներին», «Շվեյցարական զարգացման գրասենյակ», «ՄԱԿ-ի փախստականների գրասենյակ» եւ այլ կազմակերպությունները: Բայց, այնուամենայնիվ, ինչպես համոզվում ենք վերոշարադրյալից, քաղաքում իրականացվող ներդրումների գերակշիռ մասը Գորիս-Վիեն քույր քաղաքների համագործակցության շնորհիվ է իրականացվում, եւ այդ համագործակցությունը վերստին գալիս է հաստատելու այն ճշմարտությունը, որ բարեկամությունը սահմաններ չի ճանաչում:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ձագեձորի բերդը

Ձագեձորի բերդը եղել է Սյունիքի նշանավոր բերդերից մեկը: Ըստ Ստ.Օրբելյանի՝ «Հաբանդա բերդը, որը Սիսակի նույն տոհմի Ձագ նահապետը շինեց մի գետի վրա եւ իր անունով ձորը կոչեց Ձագեձոր, բերդն էլ Ձագեձորո բերդ» (1):

**ԺԻՐԱՅՐ ՄԻՐՈՒՄՅԱՆ**



Բերդի տեղադրության վերաբերյալ հայտնվել են տարբեր տեսակետներ: Ժամանակին տիրապետում էր նշանավոր հնագետ Ս.Բարխուդարյանի տեսակետը, ըստ որի Ձագեձորի բերդը գտնվել է Գորիսի հարավային մասում վեր խոյացող Լաստի խութ կոչվող ժայռի գագաթին (2): Սակայն մի փոքր ուսումնասիրությունն էլ բավական է համոզվելու համար, որ Լաստի փոքր գագաթը հարմար չէ Ձագեձորի նման նշանավոր բերդի տեղադրության համար:

Կարծում ենք՝ ընդունելի չէ նաեւ Ս.Բարխուդարյանի տեսակետը Ձագեձոր գյուղի տեղադրության վերաբերյալ: Ըստ նրա՝ Ձագեձոր գյուղը համապատասխանում է Գորիսի հյուսիս արեւելյան մասում գտնվող Ծակերի ձորի (Շորին ձոր) հին բնակավայրի հետ (3): Ավելի շուտ նման տեսակետ էր հայտնել նաեւ ազգագրագետ Ե.Լալայանը՝ նշելով, որ Ձագեձոր անվանումն առաջացել է Ծակերի ձորի անվան հնչյունափոխումից՝ այստեղ գտնվող բազմաթիվ փորվածքներ (քարայրեր, ծակեր) ունենալու պատճառով (4): Ձագեձորի եւ Ծակերի ձոր տեղանունների նույնացումն անհավանական է: Այստեղ ընդունելի է Ա.Ղարագյոզյանի տեսակետը, որի համաձայն այստեղ առկա է միայն երկու տարբեր անվանումների զուտ հնչյունական նմանությունը, եւ Ծակերի ձորն ավելի ճիշտ համապատասխանում է Ստ.Օրբելյանի հարկացուցակում Գորայքի հետ հիշատակված Աղոջրիկ գյուղին, որն իր անունը կարող էր ստանալ Շոռ ջուր վտակը կազմող սելտերյան աղբյուրներից (5):

Որոշ հետազոտողներ Ձագեձոր գյուղը համարել են Գորիս գյուղը: Կարծում ենք՝ անհավանական է նաեւ այս տեսակետը, քանի որ դրանք ըստ էության երկու տարբեր բնակավայրեր են, քանի որ Գորիսը Գորայք ձեւով վկայված է Տաթեւի վանքին հարկատու գյուղերի ցուցակում (6):

Մեր կարծիքով, չի կարելի ընդունել նաեւ Ա.Ղարագյոզյանի տեսակետը Ձագեձորի բերդը ներկայիս Ակներ (Բռուն) գյուղի տարածքում, իսկ Ականա գյուղը «Գյավուրի բներ» կոչվող հին բնակատեղիում տեղադրելը (7): Դա անհավանական է այն պարզ պատճառով, որ հին Բռունն ամենայն հավանականությամբ համապատասխանում է Ստ.Օրբելյանի հարկացուցակում 10 չափ հարկ վճարող Ականա բնակավայրին (8): Այս դեպքում եթե բերդը կառուցված լիներ այստեղ, ապա այն ամենայն հավանականությամբ կկոչվեր ոչ թե Ձագեձորի, այլ Ականա բերդ, մանավանդ որ բերդը սկզբնապես կրել է ոչ թե Ձագեձորի, այլ Հաբանդա բերդ անվանումը: Ճիշտ է, Ակներ գյուղի տարածքում գտնվում են Ղլքերծ կոչվող հին բնակավայրի կամ կիկլոպյան ամրոցի մնացորդներ, բայց այդ տարածքը գտնվում է ոչ թե Ակներ գյուղը զբաղեցնող հրվանդանի վրա, այլ Վարարակն գետի արեւմտյան ափին:

«Գյավուրի բներ» բնակատեղիում 1980թ. Օ.Խնկիկյանի կողմից իրականացված հնագիտական պեղումները վկայում են մ.թ.ա. II-I դդ. այստեղ եղած բնակավայրի գոյության մասին (9): Մեր կողմից այստեղ իրականացված ուսումնասիրությունները, մասնավորապես այստեղ հայտնաբերված օբսիդիանի բազմաթիվ հնագիտական իրեր, գործիքներ, վկայում են ավելի հին բնակավայրի գոյության փաստի մասին: Այդ նյութերը մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ «Գյավուրի բներ» բնակավայրը միջնադարում արդեն գոյություն չի ունեցել:

Մեր կարծիքով, առավել հավանական է Ղ.Ալիշանի տեսակետը, ըստ որի՝ Ձագեձոր գյուղը համապատասխանում է հին Գորիսին (Վերիշեն), իսկ բերդը պետք է գտնվեր նրա շրջակայքում (10): Նման կարծիք են հայտնել նաեւ Ս.Հախվերդյանը (11) եւ Թ.Հակոբյանը (12):

Նման տեսակետի համար ամենակարեւոր փաստարկը կարող է ծառայել Վերիշենի տարածքում Հայաստանի միասրահ ամենամեծ բազիլիկ եկեղեցու առկայությունը (երկարությունը՝ 27,3մ), որն ամենայն հավանականությամբ կառուցվել է 4-րդ դարում նախկին հեթանոսական մեհյանի տեղում: Նրա շրջակայքում հայտնաբերված մեծաթիվ խաչքարերը, տապանաքարերը եւ մշակութային մեծ արժեք ներկայացնող այլ նյութերը վկայում են եկեղեցու մոտակայքում մեծ բնակավայրի առկայության մասին: Նման բնակավայր կարող էր լինել միայն Ձագեձորը:

Ձագեձորի տեղադրության հարցում կարեւոր դեր ունի նաեւ Ստ.Օրբելյանի տեղեկությունը Հաբանդա բերդի կառուցման վերաբերյալ: Նա նշում է, որ Ձագ նահապետը Հաբանդա բերդը կառուցել է մի գետի մոտ՝ առանց նշելու նրա անունը: Հասկանալի է, որ խոսքն անվերապահորեն վերաբերում է Վարարակնին: Սակայն այստեղ պետք է մեկ վերապահում մտցնել: Վարարակն գետն ունի երկու բազուկ՝ արեւմտյան եւ արեւելյան: Արեւմտյան բազուկը կամ բուն Վարարակնը սկիզբ է առնում Իշխանասարի փեշերից եւ ապա Ակներ գյուղի տարածքով հոսելով Վերիշենի հարավային մասով՝ միախառնվում է արեւելյանին: Արեւելյան բազուկը, որը նույնպես կոչվում է Վարարակն, սկիզբ է առնում Վերիշենի հյուսիսում գտնվող Ավի դարա կոչվող տարածքից բխող բազմաթիվ աղբյուրներից: Մեր կարծիքով, Օրբելյանի նշած մի գետը պետք է հասկանալ հենց արեւելյան Վարարակնը:

Այսպիսով՝ մեր կարծիքով, Ձագեձորի բերդի ամենահավանական տեղադրությունը կարող է լինել Վերիշենից 200-300մ հյուսիս-արեւելք գտնվող՝ Վերիշենից դեպի Վաղատուր տանող ճանապարհի վրա իշխող Ղլքերծ կոչվող բարձունքի գագաթին: Իսկապես, այդ բարձունքին մի քիչ հեռվից նայելու դեպքում հստակորեն ուրվագծվում է պաշտպանական կառույցներին նմանվող ինչ-որ ամրությունների շղթա, իսկ գագաթին այսօր էլ նկատելի են 3-4 մետր լայնություն ունեցող պարիսպների մնացորդներ: Իսկ Ղլքերծ (Ղալքերծ, Ղալաքերծ) անունը ստուգաբանվում է որպես ամրացված (թուրքերեն ղալ, ղալա- ամրություն, բերդ) քերծ (ժայռ, լեռ): Ընդ որում՝ ռազմավարական եւ աշխարհագրական տեսակետից այդ բարձունքը բավականին հարմար է ամրոցի համար: Այն երեք կողմերից պաշտպանված է զառիթափ լանջերով, գտնվում է դեպի հյուսիս տանող ճանապարհի վրա՝ հին Վերիշենի մոտակայքում, ինչը գյուղի բնակչությանը հնարավորություն կտար վտանգի դեպքում պաշտպանվել մոտակա ամրոցում: Գյուղացիների շրջանում այժմ էլ ենթադրություններ կան, ըստ որի՝ նախկինում քարանձավներից դեպի այդ բարձունքը գոյություն է ունեցել ստորերկյա գաղտնուղի: ■



**Ըստ «Դիվան հայ վիմագրության» 2-րդ հատորի (Սեդրակ Բարխուդարյան)՝ «Ներկա Գորիսի հարավից բարձրանում է Լաստ գագաթը, որի ապառաժների վրա կառուցված է եղել Սյունիքի նշանավոր բերդերից մեկը՝ Հաբանդի բերդը, որը հետագայում կոչվել է նաեւ Ձագեձորի բերդ»: Այս վարկածը պաշտպանել է նաեւ Սերո Խանզադյանը:**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Ստ.Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 71:
2. Դիվան հայ վիմագրության, պր. II, կազմեց Ս.Բարխուդարյան, Երեւան, 1960., էջ 76:
3. Դիվան հայ վիմագրության, պր. II, էջ 76:
4. Ե.Լալայան, Զանգեզուրի գավառ, h. Բ, Թիֆլիս, 1899, էջ 8:
5. Ա.Ղարագյոզյան, Ձագեձորի տեղադրությունը, Լրաբեր, 1985, # 11, էջ 60:
6. Ստ.Օրբելյան, նույն տեղում, էջ 399-400:
7. Ա.Ղարագյոզյան, նույն տեղում, էջ 60:
8. Ստ.Օրբելյան, նույն տեղում, էջ 399-400:
9. Օ.Խնկիկյան, Նորահայտ հուշարձան Գորիսում («ՊԲՀ»), 1981 ,# 4, էջ 312-313:
10. Ղ.Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 261:
11. Ս.Հախվերդյան, Գորիսի ամփոփ պատմություն, Երեւան, 2005, էջ 29:.
12. Թ.Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երեւան, 1966, էջ 158:

**Հ.Գ.** *Խմբագրությունը վերապահումներ ունի հեղինակի դիրքորոշման վերաբերյալ:*

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## Պահպանվում է ձիթհանների մի մասը



Բդամին (Միրումյանների) ձիթհանը (սրանոցը) Գորիս գյուղում





Ձիթհանում պահպանված երկանաքարերը եւ նրանց հարմարեցված փայտյա սյունն ու գերանը՝ հարմարեցված եզ կամ գոմեշ լծելու կամ մարդկանց ուժով առաջ մղելու համար



**Գորիս քաղաքը Գորիս գյուղին կապող փողոցներից մեկի (Կարապետյան փողոց, սկսվում է «Ավանգարդ» սովխոզի գրասենյակի կողքից) վրա եղած ջրաղացներից մի քանիսի հետքերը պահպանվել են: Դրանցից մեկն այս է՝ Աղալոյի ջաղացը:**

### ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ ԵՐԳԱՇԽԱՐՀՈՒՄ

## Հռանանք վըեչ մըեր ծորան

*Այ իմ նախշուն, քըեզ խռովքը սազում չի,*
*Ախր էսօր խումար աշկը կանչում չի,*
*Քու շխկավը շողն ըրեվի պար կկյա,*
*Վըեր թխպում ես, էս դրախտն էլ նախշուն չի:*

*Աշկ ենք պացալ, շափաղ առալ էս ծորան,*
*Սեր ենք առալ, շափաղ առալ էս ծորան,*
*Սաս սասի փանք, սրտեր պանանք կուրունքվա պըես,*
*Հազար սրտի խաղ եմ կապալ էս ծօրան:*

*Հռանանք վըեչ մըեր նխաշարար էս ծորան,*
*Նուր ա թափվում էն բլբուլան, էն լորան:*
*Շոխկտ սրտիս արեվ ա,*
*Թազա-թազա խաղեր ա,*
*Տու իմ սազի լուզուն էս,*
*Կուրունքվա սեր հեղեղ ա:*

*Այ իմ նախշուն, մըրածօր եմ ասել քըեզ,*
*Ղուշը կանչող մըն պարզ օր եմ ասալ քըեզ:*
*Շալտ եփ փար, ունքամէչտ պաց ըրա,*
*Խե յես մըթնալ, մըթնածօր չեմ ասալ քըեզ:*

*Սերս ծով ա, էս ձորում փղվարիլ չի,*
*Լափու փուվավ, սասը հսավ ըրարչին,*
*Հիշքան էլ վըեր չալղուն ինի, Նարգիզս,*
*Սիմիս յիրա մանդըերս կուղվարիլ չի:*

*Այ իմ նախշուն, ճոժկը չանըես քու յարան,*
*Աշխարքի աշկ, նշխար պահող քու յարան,*
*Ասսու փուված փան դովլաթ ես, փան խախշ ես,*
*Վախտը վըեր կյա, հի՞նչ կտանես ըշխարքան:*

*Քըեզ կընչիլավ աշխար-աշխարհ ման եկա,*
*Աշոպն ասաց ծոցտ լցված նոր երք կա,*
*Խռովումիլ, խուռուխեթը լավ պան չի,*
*Մըեր էս ծորը սիրով լիքը աշխարիք ա:*
*Հռանանք վըեչ մըեր նշխարար էս ծորան,*
*Նուր ա թափվում էն բուլբուլան, էն լորան:*

## Սյունյաց աշխարհի հորովել

*Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,*
*Քո ձայնն է լսում, քո մաճկալ ափեր,*
*Հոլ արա Խումար ջան, հո արա հոտաղ ջան,*
*Ապերն ինչ ասի, հոտաղը լսի:*
*Հացի բուրմունքով ձորերը լցնի, հոլ-արա-հո՜-հո՜...*
*Ամու ջան, ուսից սարի չափ բեռ կա,*
*Քեզ ասպված ասեմ, պասը մեծ դարդ կա՝*
*Հոլ-արա, Շումալ ջան, Շումալ ջան, հո՜...*
*Հո-արա, հոտաղ ջան, հոտաղ*
*ջան հո-հոլ արա հո՜-հո՜...*
*Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,*
*Քեզնով է ուրախ քո մաճկալ ափեր,*
*Հոլ-արա, Խումար ջան, հո արա, հոտաղ ջան,*
*Էս քարոտ հողին խոփը դեմ չառնի:*
*Ասպված մեր հացը թող պակաս չանի,*
*հոլ-արա-հո-հո-*
*Ամու ջան, ուսից սարի չափ բեռ կա,*
*Քեզ ասպված ասեմ, պասը մեծ դարդ կա՝*
*Հոլ-արա, Ծաղիկ ջան, Ծաղիկ ջան, հո՜,*
*Հո՜-արա հոտաղ ջան, հոտաղ ջան, հո՜,*
*հոլ-արա-հո՜-հո՜.*
*Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,*
*Հարսանքիդ քավոր քո մաճկալ ափեր,*
*Հո՜-արա, Թումար ջան, օրը ճաշ դառավ,*
*Ամառվա վարը ոսկի հաց կտա:*
*Օջախի ժպիտ խնդություն կգա, հոլ-արա, հոլ-հո՜...*
*Ամու ջան, ուսից սարի չափ բեռ կա,*
*Քեզ ասպված ասեմ, պասը մեծ դարդ կա,*
*Հոլ-արա, Ղումաշ ջան, Ղումաշ ջան, հո՜,*
*Հո-արա, հոտաղ ջան, հոտաղ ջան,*
*հո-հոլ-արա հո՜-հո՜:*
*Սարի սիրունը ճաշը կբերի,*
*Հոտաղի սերը նորից կնորի,*
*Հոլ-արա, Խումա ջան, հո՜-արա հոտաղ ջան,*
*Սածել ու զակեփ օգնիար ձեռեր՝*
*Հե՜յ, մրտրապոն հացը խինդ ու սեր,*
*հոլ արա հո՜-հո՜,*
*Ամու ջան, ուսից սարի չափ բեռ կա,*
*Քեզ ասպված ասեմ, պասը մեծ դարդ կա,*
*Հո արա, ոտաղ ջան, հոտաղ ջան,*
*հոլ արա հո՜-հո՜:*


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru


# ԱՆՎԱՆԻ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐ

## Մեր ձորերի նահապետը

**Գորիսում եղել են մարդիկ, որոնց ճակատագիրը ժամանակի պատմությունն էր: Ու նրանք, իրենց կենսագրությամբ դառնալով ժամանակի փարեգիրը, դարձել են նաեւ դաս ու դասագիրք սերունդների համար: Այդ մարդկանցից էր Սուրեն Բակունցը:**

Մարդ, որ տարիները ուսելով հյուսեց գեղեցիկ կենսագրություն, մարդ, որ համ ուներ, հոտ ուներ, նախշ ուներ, ու նախշն այդ չի խամրել, ինչպես Մինա Բիբու գործած գորգերը: Եվ Բակունց Սուրեն մարդը սերունդներին թողեց պայծառ, անարատ անուն, անուն, որ Գորիսի պատմության մեջ ուրույն տեղ ունի, եւ այդ պատմության մի էջն էլ նա է:

Սուրեն Բակունցը ծնվել է Գորիսում 1912թ.: Հեշտ մանկություն չի ունեցել: Բարձրագույն կրթություն չուներ, մասնագիտական կրթություն չուներ: Սակայն ուներ կյանքի դպրոցի կարմիր դիպլոմը: Նա նախկին «Ավանգարդ» կոլխոզի նախագահն էր, հետո՝ դիրեկտորը, երբ տնտեսությունը սովխոզ դարձավ: Երբ սկսվեց Մեծ հայրենականը, նա կոլխոզի կնիքը հանձնեց մեկին՝ ասելով՝ մաքուր կպահես: Ասել է թե կեղծարարություն չանես: Ու գնաց ռազմի դաշտ: Վիրավորվելուց հետո Սուրեն Բակունցը զորացրվեց բանակից, եկավ տուն եւ կրկին կոլխոզի ղեկը ձեռքը վերցրեց: Նրա օրոք «Ավանգարդ» տնտեսությունն արժանացավ բազմաթիվ մրցանակների, շքանշանների: Առաջավոր, ռեկորդակիր հովիվների, կթվորների, մեխանիզատորների հասցեն «Ավանգարդ» տնտեսությունն էր:

Տնեցիները հիմա էլ խնամքով պահում են նրա ծոցատետրերը, որտեղ գրառված են բոլոր տարիների ցուցանիշները: Անընդհատ, օր առ օր, ամիս առ ամիս նա միշտ համեմատում էր ցուցանիշները: Եթե հանկարծ նույնիսկ 1կգ տարբերություն լիներ՝ բացասական տեսանկյունից, նա անմիջապես ֆուրաժիրին ասում էր՝ ժորա՛, խոտն ավելացրո՛ւ:

Գարնանացանը, աշնանացանը, բերքահավաքը սկսելու ժամանակ նա առաջնորդվում էր իր կենսափիլիսոփայությամբ:

«Հողը վերցրո՛ւ բռանդ մեջ, սեղմի՛ր ու միանգամից թափի՛ր: Եթե բրնձի նման հատիկ-հատիկ թափվեց հողը, ուրեմն ցանելու ժամանակն է», – ասում էր Ս.Բակունցը:

Ցորենի բերքահավաքի ժամանակ էլ նա իր ուրույն մտածելակերպով էր շարժվում՝ հասկը կոտրիր, խորհուրդ էր տալիս նա, եթե հասկը գլխից կոտրվեց, ուրեմն բերքահավաքի ժամանակն է: Իսկ եթե եռաբլրի ներքեւի հատվածի ծյունը հալվել է, ուրեմն չի կարելի սերմը հողին պահ տալ: Դա նշանակում է, որ գարնանացանի լավ ժամանակն արդեն անցել է, լավ բերք ակնկալելն անհնարին է:

Վլադիկ Ղազարյանը քանի-քանի տարի նրա վարորդն էր:

Հիշում է.

– Մինչեւ շուկա, խանութ չմտներ, անասնապահների, դաշտավարների, մեխանիզատորների մոտ չէր գնա:

Հարսը՝ Անահիտն էլ թե.



– Ժողովրդին օգնելը, նրա հոգսերով ապրելն ու նրան զորավիգ լինելը Ս.Բակունցի համար ապրելակերպ էր:

Սուրեն Խաչատրյանը՝ Սյունիքի մարզպետն էլ թե.

– Ժողովրդական մարդ էր Սուրեն Բակունցը: Աշխատավորի դարդը իմացող, թասիբով ղեկավար էր: Ժողովրդի ու Գորիսի հուսատեղին էր Սուրեն Բակունցը, բոլորի հուսն աստղը: Նա բոլոր ցանկացողներին հողով ապահովել է: Իսկ 50-ական թվականներին՝ սովի տարիներին, նա բազում մարդկանց ապահովել է բնամթերքով, եւ սովը շատերի կողքով հարեւանցիորեն է անցել:

Տնտեսության շահերով ապրող մարդը մի անգամ նամակ գրեց Մոսկվա՝ Համո Յոլյանին, եւ գիտե՞ք ինչ խնդրեց՝ գութանի անիվ, որ դաշտերը վարեին, ցանեին:

Զարմանալի, զարմանահրաշ մարդ էր Ս.Բակունցը: Նա մեծ համբերություն ուներ, նա ասես բարության մարմնավորումն էր, խորհրդանիշը:

Վլադիկ Ղազարյանին հիշողությունները դարձյալ տանում են տարիների խորքը, եւ հետ տանելով ժամանակի վարագույրը՝ ասում է.

– Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումը պետք է միացնեին «Ավանգարդ» տնտեսությանը: Երբ այդ մասին Ս.Բակունցին հայտնեցին, նա ասաց. «Ես կրթություն չունեցող մարդ եմ, մանկավարժներին ի՞նչ պիտի ասեմ, ավելի լավ է՝ ուրիշ տնտեսության միացնեք տեխնիկումը»: Այդպես էլ եղավ: Տեխնիկումը միացրին Վերիշենի սովխոզին, եւ այն դարձավ Վերիշենի սովխոզ տեխնիկում:

Իսկ Կենտկոմի բարձր ամբիոններից միշտ ասում էին՝ Էջմիածնում տնտեսությունը ղեկավարում է գիտական աստիճան ունեցող մարդ, իսկ Գորիսում՝ թերի միջնակարգ կրթություն ունեցող մարդ: Ի՞նչ անուն տալ երեւույթին, ի՞նչ կոչել, որ Գորիսը միշտ առաջատարների շարքում է, իսկ Էջմիածինը՝ վերջին:

Կարեն Դեմիրճյանը ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարն էր: Ս.Բակունցը, որ ճշմարտախոս մարդ էր, մի օր թե՝ մեր քարտուղարը Գորիսը մոռացել է: Երկու տարվա մեջ բա քարտուղարը մի անգամ չկարողանա Գորիս գալ: Խոսքը հասցնում են Կ.Դեմիրճյանին: Եվ Գորիս գալով՝ նա ձեռքը դնում է Ս.Բակունցի ուսին, թփթփացնում, հետո՝ տեսա՞ր, եկա:

Նրա խոսքը կշիռ ուներ: Գորիսի կուսշրջկոմի առաջին քարտուղարներից մեկին (նրա անունը չեմ նշում) Կենտկոմը պատրաստվում է աշխատանքից ազատել: Այդ մասին իմանալով՝ Ս.Բակունցը հանդիպում է Կենտկոմի աշխատակիցներին, հարցը լուծում հօգուտ քարտուղարի ու դառնալով քարտուղարին՝ ասում է.

– Գնա՛, լավ աշխատի՛ր:

Ճիշտ է կրթություն չէր ստացել Ս.Բակունցը, սակայն գրի, գրականության հարգը լավ գիտեր: Եվ Գորիսի մեծերն իրենց ստեղծագործությունները տպագրելիս առաջին գիրքը նրան էին նվիրում.

«Հոտաղ էիր լծի թեւին,
Հորովելը քո շուրթերին,
Հացի բույրը, հողի բույրը,
Արարողը քո ձեռքերին:
Սիրելի Սուրեն Բակունցին՝ բարի ցանկություններով
Գուսան Աշոտ 27.06.82թ.»:

Իսկ Սերո Խանզադյանը «Մատյան եղելությանց» գիրքը Բակունցին նվիրել է հետեւյալ մակագրությամբ. «Իմ հին բարեկամ, մեր ձորերը չեն պահող, մեր ձորերի նահապետ Սուրեն Բակունցին
10.XI.1966թ.»:

«Լենինի», «Կարմիր դրոշի», «Աշխատանքային արիության» եւ այլ մեդալների ու շքանշանների ասպետ Ս.Բակունցը եղել է Հայաստանի կոմկուսի մի քանի համագումարների պատգամավոր, Գերագույն խորհրդի պատգամավոր:

Տարիներ, տարիներ: Ժամանակները պահող, ժամանակները, անցքերը ամփոփող: Եվ երանի այն մարդուն, որի համար տարիները բեռ չեն, որն ինքը տարիների համար բեռ չէ, այլ իր հոգու լույսը տվել է անենեցուն, որ ամենուր հացի բույր լինի, եւ դաշտերի ծով ծիրանին դափնի դառնա իր օրրանի համար, իր ժողովրդի համար: Եվ Ս.Բակունցն այդ դափնին հյուսեց իր քաղաքի համար, որ լույսերի ծովը իր քաղաքից սկսվի:

**ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

## Հիսուն տարի՝ շինարարությունում



Խաչան Հարությունյան

**Ամեն բնակավայր երախտագիտությամբ է հիշում իր կառուցողներին, շինարարներին... Գորիսը եւս իր շինարարության պատմության էջերում անուններ է գրանցել՝ հնօրյա վարպետներից մինչեւ նորօրյա ճարտարապետներ, համապատասխան կրթությամբ մասնագետ-շինարարներ:**

Նրանցից մեկն էլ 70-ամյա Խասան Հարությունյանն է, կամ ինչպես գորիսեցիներն են կոչում վաստակաշատ շինարարին՝ Խասան Սուրենիչը, որը 2006թ. ՀՀ-ում առաջինն է «Քաղաքաշինության բնագավառում նշանակալի ավանդի համար» ուսկե մեդալի արժանացել: Խ.Հարությունյանը հարգված է քաղաքում ոչ միայն իբրեւ հայտնի ու քաղաքի կառուցման մեջ ավանդ ունեցած շինարար, այլեւ իբրեւ քաղաքի դիմագիծը կրող ավանդապահ գորիսեցի:

Ծնվել է Գորիսում 1940թ., սովորել քաղաքի Ա.Բակունցի անվան դպրոցում, ավարտել Երեւանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի «ՀԷԿ-երի եւ գետային կառուցվածքների հիդրոտեխնիկական շինարարություն» բաժինը: 1963թ. ուղեգրով աշխատանքի է անցել «Տաթեւ ՀԷԿ»-ի շինարարությունում՝ որպես ավագ ինժեներ, 1972-ին դարձել Տաթեւիէկի շինվարչության պետի տեղակալ: 1973-ին նշանակվել է «Գյուղշին-6» տրեստի Գորիսի թիվ 2 շինվարչության պետ, որտեղ աշխատել է մինչեւ 1989թ.: Այդ տարիներին իր ղեկավարած շինվարչությունը յոթ անգամ արժանացել է ԽՍՀՄ Գյուղշին նախարարության եւ արհմիության կենտկոմի փոխանցիկ դրոշի: ԽՍՀՄ-ի լավագույն որակով շինարարության մրցույթում շինվարչությունն արժանացել է դիպլոմի, իսկ Խասան Հարությունյանը՝ պատվոգրի: Նրա լավ աշխատանքը գնահատվել է այլ կերպ եւս, եւ բացի պատվոգրերից արժանացել է կառավարական երկու մեդալի, իսկ 1977թ. եւ 1986թ. կրկնակի արժանացել «Պատվո նշան» շքանշանի: 1989թ. Խ.Հարությունյանը նշանակվել է նորաստեղծ «Գորիսշին» շինմոնտաժային միավորման տնօրեն: Միավորման կազմում ստեղծվել են ինը պետական ձեռնարկություններ: 1992թ. միավորումը վերանվանվել է Համաշինարարական պետական ձեռնարկություն՝ գործելով ՀՀ շինարարության նախարարության կազմում, իսկ 1995թ.՝ «Գորիսշին» ՓԲԸ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կազմում, որի տնօրենն է եղել եւ աշխատել մինչեւ 2002թ.:

Խասան Հարությունյանը ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերն իրագործելու համար արժանացել է ՀՀ ՊՆ պատվոգրի, պարգեւատրվել «Ծովակալ Իսակովի» մեդալով:

Խասան Սուրենիչն ակտիվորեն մասնակցել է նաեւ Գորիսի հասարակական-քաղաքական կյանքին, եղել քաղաքային խորհրդի պատգամավոր, գործկոմի նախագահության անդամ, ՀԿԿ Գորիսի շրջկոմի անդամ, 1990-1994թթ. Գորիսի շրջանային խորհրդի պատգամավոր էր եւ գործկոմի նախագահության անդամ: Երեք զավակի հայր, ինը թոռան պապիկ է:

Երկարամյա շինարարը ոչ միայն տարիների ընթացքում զուտ իր աշխատանքն է կատարել, այլեւ սիրել է հետաքրքրվել Գորիսի, հատկապես նրա կառուցման պատմությամբ եւ մեզ էլ պատմում է քաղաքի կառուցումից, գրականության մեջ դրա մասին հիշատակումներից, հին տներից… Ափսոսանքով նշում է, որ խորհրդային իշխանությունները չեն գնահատել դրանք ու չեն պահպանել, եւ ցավոք արժեքավոր շատ շինություններ են քանդվել այդ տարիներին… Պատմում է, որ հին Գորիսում հիմնականում բազալտից էին տուն կառուցում, բայց մի քանի տներ կային, որոնք կրաքարից էին: Դրանցից մեկը Յոլյանների տունն է եղել, որի մի մասը հետո Գորիսի առաջին բաղնիքը դարձավ, մյուսը՝ դպրոց: Շենքը հետո հրդեհվել է…

Որո՞նք են եղել խորհրդային Գորիսի առաջին շինարարական կազմակերպությունները, ո՞վ սկսեց կառուցել նոր Գորիսը, որո՞նք էին առաջին շենքերը…

Պարոն Հարությունյանը պատմում է, որ խորհրդային տարիների առաջին կառույցը եղել է դպրոցի շենքը, որը ժողովուրդն այն ժամանակվա կրթության նախարարի անունով Լուկաշինի դպրոց է անվանել: Երեք հարկանի շենքի մեկ հարկում էլ գործել է թատրոնը: Շենքը քանդվել է 1978թ., նրա տեղում քաղաքի հյուրանոցն է կառուցվել: Անհատական տներ կառուցելու թույլտվություն քաղաքում միշտ եղել է: Իսկ հանրային շինարարության համար սկզբում շրջսովետում եղել է կոմունալ բաժին: Դա, ըստ էության, քաղաքի առաջին շինարարական կազմակերպությունն է եղել, նա է սկսել շենքեր կառուցել. այդ տնտեսության գլխավոր ինժեները ազգությամբ ռուս Իվան Պետրովիչն էր, որն էլ պատերազմից հետո ղեկավարել է Գորիսում ընթացող շինարարությունը: Դրանից հետո Երեւանում ստեղծվել է «Հայշրջշին տրեստը», որը զբաղվել է Հայաստանի շրջաններում ընթացող շինարարությամբ, Գորիսում ունեցել է շինարարական տեղամաս, որի տնօրենը եղել է Մարտին Գիլավյանը: Այնուհետեւ Գորիսում «Քաջարանշին տրեստի» շինտեղամասն է բացվել, պետը Կառլեն Հովակիմյանն էր:

Հայգյուղշին նախարարության ստեղծումից հետո էլ մի շրջանում Գորիսում արդեն երեք շինարարական կազմակերպություն է գործել. «Քաջարանշինը» շինարարություն էր իրականացնում քաղաքում, «Հայգյուղշինը»՝ գյուղերում, ստեղծվել էր նաեւ «Տաթեւիէկշինը»:

Իր կենսագրությունը՝ որպես շինարար, Խասան Հարությունյանն սկսել է կես դար առաջ. դեռեւս 1960թ., երբ երկրորդ կուրսի ուսանող էր, քննություն է հանձնել Գորիսում շինարարարության աշխատանքներում ընդգրկվելու համար, գերազանց ստացել եւ չասելով, որ ուսանող է՝ աշխատանքի անցել ամառային արձակուրդներին… Այդ ժամանակ կառուցում էին 1-ին գիշերօթիկ դպրոցը, որը հետո դարձավ ներկայիս ԳՊՀ վարչական գլխավոր մասնաշենքը: Սեպտեմբերին շինարարությունում զարմացել են, երբ ինքը հայտնել է, որ ուսանող է եւ վերադառնում է սովորելու…

Տարածաշրջանում, այնուամենայնիվ, ամենահզոր շինարարական նախագիծը «Տաթեւիէկ»-ի շինարարությունն էր՝ իր ենթակառուցվածքներով, եւ պատահական չէ, որ Որոտանում Տաթեւիէկի շենքի շինարարությունը Խասան Սուրենիչն իր մասնակցությամբ իրականացված ամենամեծ գործն է համարում… Իսկ այդ շինվարչությունը զբաղվել է ոչ միայն Տաթեւիէկը կառուցելով. կառուցել են Շինուհայր բանավանը, բնակելի շենքեր՝ Գորիսում:

Իր աշխատանքի գնահատվելը փաստելով՝ հպարտությամբ նշում է, որ երբ 1973-ին պետի տեղակալից դարձավ «Գյուղշին-6» տրեստի Գորիսի №2 շինվարչության պետ, երեք ամսում տրեստի դրոշ են շահել: Իր ղեկավարությամբ կառուցված շինություններից առանձնացնում է տրիկոտաժի ֆաբրիկայի 2-րդ մասնաշենքը, փոստի շենքը, տեքստիլ կոմբինատը, հյուրանոցը, հանրակացարանը, ԳՊՀ երկրորդ մասնաշենքը, դրա կողքի մանկապարտեզը: Դրանց, իհարկե, գումարվում են հազարավոր քառակուսի մետրեր բնակելի տարածքները:

Խ.Հարությունյանը չորս տարի աշխատել է նաեւ հանրապետությունից դուրս: Հիմա էլ նա չի թողել իր մասնագիտությունը. Գորիսում «Ս.Մկրտչյան» ՍՊԸ-ի տնօրենն է, որը շինարարական աշխատանքներ է կատարում: Բացի դրանից, նաեւ տեխնիկական հսկիչ է. դրա համար հատուկ թույլտվություն է ստացել, եւ հաճախ տարբեր շինկազմակերպություններ մրցույթների մասնակցելիս որպես շինարարությունը հսկողի՝ հենց նրան են ընդգրկում. Խասան Հարությունյան անունն իսկ արդեն վստահություն ու երաշխիք է նրանց համար:

**ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ**

# Զանգեզուրի Բիսմարկը

## Պատառիկներ հորս մասին՝ մորս ու հարազատներիս պատմածներից

**Ես հորս՝ Նիկոլայ Հովսեփյանին՝ Սյունյաց աշխարհի նշանավոր մարդուն, Մեծ քաղաքագետին ու հայրենասերին, չեմ հիշում: Եղել եմ ընդամենը մեկուկես տարեկան, երբ խորհրդային անսանձ բռնապետությունը ձերբակալել եւ 1931թ. էլ գնդակահարել է նրան:**

Հայրս ծնվել է 1879թ. Գորիս քաղաքում: Լինելով շատ խելացի ու զարգացած անձնավորություն՝ նա իր կյանքի լավագույն տարիները, ավելի ճիշտ ամբողջ կյանքը նվիրել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի սրբազան գործին: Ծնողներս ամուսնական երկար տարիների ընթացքում երեխա չեն ունեցել, եւ ահա 1929թ. ծնվում եմ ես՝ նրանց միակ դուստրը:

Սարսափ ապրած մայրս, որի ոչ միայն ամուսնուն են սպանել, այլ նաեւ տասը տարով Սիբիր են աքսորել եղբորը՝ բժիշկ Մինաս Մինասյանին, վախենում էր նույնիսկ շշնջալով արտասանել նրանց անունները: Ուստի շատ քիչ բան գիտեր հորս մասին: Պատմում էր միայն փոքրիկ, անմեղ պատմություններ: Օրինակ՝ ասում էր, որ երբ ես ծնվել եմ, հայրս 15 օր անասուններ էր մորթել տվել եւ, իբրեւ աջքալուսանք միս ու սկուտեղով հալվա են ուղարկել քաղաքի համարյա բոլոր աղքատ ընտանիքներին: Կամ էլ պատմում էր, որ հայրս ինձ ամեն օր կանգնեցնում էր սենյակի պատի տակ, գծում պատը, որ իմանա, թե ինչքան եմ մեծացել մեկ օրում եւ նման բաներ: Բայց պատահեց մի դեպք, որն ինձ զգոնացրեց: Սովորում էի չորրորդ կամ հինգերորդ դասարանում: Մի օր դասարանի դուռը ծեծեցին: Ուսուցչուհին դուրս եկավ միջանցք եւ վերադառնալով ձեռքիցս բռնած դուրս հանեց դասարանից՝ անընդհատ կրկնելով՝ չվախենաս բան չկա, չվախենաս: Մուտքի մոտ կանգնած էր մի միլիցիոներ: Չգիտեմ ինչու, նրան տեսնելով՝ սկսեցի լաց լինել: Նա էլ ասաց, որ չվախենամ, որ միասին մի տեղ կգնանք, եւ ինքն ինձ նորից կբերի դպրոց:

Միլիպետի սենյակում եմ: Բարի ժպիտով մարդ էր նա, երեւի նաեւ նրբանկատ: Հարցրեց, թե հորիցս նամակ ենք ստանում: Ասացի՝ հայրս մահացած է: Հարցրեց, թե ումից ենք նամակ ստանում, ինչով ենք ապրում, երբ մայրս չի աշխատում եւ նման մի քանի հարցեր: Հետո կանչեց նույն միլիցիոներին, որն էլ ինձ նորից տարավ դպրոց: Երբ այդ մասին պատմեցի մորս, աչքերում սարսափ երեւաց.

– Ո՞նց թե հորիցդ նամակ ենք ստանում, հայրդ ո՞ւր է, որ նամակ ստանանք:

Մի խոսքով մինչեւ կյանքի վերջը դա առեղծված մնաց նրա համար: Իսկ կյանքի վերջը երկար չտեւեց: Դեռ աշակերտական նստարանից վեր չէի կացել՝ մահացավ նաեւ մայրս: Քեռիս, որ ընտանիք չուներ եւ աքսորից վերադառնալուց հետո ապրում էր Մախաչկալայում եղբոր ընտանիքի հետ, ինձ մենակ չթողնելու համար եկավ Գորիս՝ մշտական բնակություն հաստատելու:

Քեռիս նույնպես ազգային-ազատագրական շարժման ակտիվ գործիչներից էր: Նա եղել է նաեւ Սյունիքի դիվանի անձնափոխանորդը եւ Լեռնահայաստանի խնամատարության նախարարը (Գորիսի հանրագիտարան, Ե., 2008, էջ 312-313): Իսկ Անդրանիկ զորավարի՝ Գորիսում եղած ժամանակ եղել է նրա խմբի բժիշկը եւ այստեղ էլ մահացել 1953թ.:

Քեռիս մորս նման շատ զգուշավոր չէր եւ ինձ որոշ բաներ էր պատմում հորս մասին՝ պատվիրելով, որ կարիք չկա այդ մասին խոսել ուրիշների հետ:

Քանի որ խորհրդային շրջանում հորս մասին ոչինչ չէին գրում, ես որոշ տեղեկություններ էի իմանում արտասահմանում լույս տեսնող այն գրքերի ու պարբերականների մասին, որտեղ խոսվում էր նաեւ հորս մասին (գոնե ինձ նման մեկի համար դրանք ձեռք բերելն անհնարին էր):

Մեծ բռնապետի մահից հետո ինչ-որ բան փոխվում է կյանքում, սակայն քաղաքական դաշտը շատ զգայված էր: Վախը, սարսափը, ավանդույթի շապիկ հագած, դեռեւս գործում էին բնազդով:

Առաջիններից մեկը, որ անդրադարձավ Զանգեզուրի ազգային-ազատագրական պայքարի թեմային եւ ընդգծեց Ն.Հովսեփյանի դերն այդ պայքարում ե՛ւ որպես ազգային քաղաքական գործչի, ե՛ւ որպես կռվող ջոկատների հրամանատարների, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Հր.Սիմոնյանն էր: Երախտագիտության մեծ զգացումով իմ շնորհակալությունն եմ հայտնում նրան:

Լինելով Զանգեզուրի ինքնապաշտպանության ջատագովներից ու կազմակերպիչներից մեկը՝ Ն.Հովսեփյանը կոչ էր անում զենքը ցած չդնել եւ չենթարկվել Զանգեզուրն Ադրբեջանի մաս դարձնելու թուրքական ու անգլիական խելացնոր պրոպագանդային: Շատ-շատերն են վկայում, որ Ն.Հովսեփյանի ամեն մի խոսքն ու առաջարկը կարծես օրենք լինեին բոլորի համար: Նրա հետ խորհրդի էին նստում ե՛ւ Անդրանիկ Զորավարը, ե՛ւ Նժդեհը, ե՛ւ Ա.Շահմազյանը, եւ շատ-շատերը: Պատմում են, որ երբ Գորիսի փողոցներում երեւում էր ինքը, մարդիկ զգաստանում էին: Եվ ոչ միայն երիտասարդները, այլ նաեւ ծերերն էին ոտքի կանգնում եւ խոնարհվում նրա առաջ: 1918թ. ստեղծվում է Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդ, որի կազմի մեջ մտնում են Նիկոլայ Հովսեփյանը եւ Տիգրան Սազանդարյանը, որին երկու ամիս անց փոխարինեց Ն.Հովսեփյան-Օսիպովը (Գ.Գրիգորյան, Ս.Հախվերդյան, Սյունիքի պատմություն, Ե., 2001թ., էջ 202):

Խորհրդի առաջին գործերից մեկն է լինում Զանգեզուր հրավիրել Անդրանիկ Օզանյանին, քանի որ ադրբեջանական մուսավաթականների զինված ջոկատներն օղակի մեջ էին առել Զանգեզուրն ու Ղարաբաղը: Անդրանիկը Զանգեզուրի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով գալիս է Զանգեզուր: Գորիս է մտնում 1918թ. օգոստոսի 13-ին եւ ութ ամիս շարունակ մարտնչում երկրամասը թուրքերից ազատագրելու համար: Ազգային խորհրդի, նաեւ անձամբ Անդրանիկ զորավարի ջանքերով Հայաստանի կառավարությունը



1919թ. հունվարի 21-ին կայացնում է Զանգեզուրը Հայաստանի կազմում ընդունելու պատմական որոշում: 1919թ. մարտին Անդրանիկը, համոզված, որ այդ կարեւոր խնդիրն արդեն լուծված է, եւ ժողովուրդն ընդունակ է ինքնապաշտպանության, որոշում է հեռանալ Զանգեզուրից: Գուցե ուրիշ ընթացք ստանար նրա միսիան, եթե Փարիզի խաղաղության կոնֆերանսում հայկական հարցը չլսելու սպառնալիքով չկասեցվեր գրոհն Արցախի սահմանների մոտ Անտանտի ռազմական միավորման ուժերի կողմից:

1919թ. մարտի 25-ին Անդրանիկը հեռանում է Զանգեզուրից՝ մի շատ ինքնատիպ նվեր թողնելով հորս: Այդ նվերի առթիվ հետագայում անվանի գրող Սերո Խանզադյանը պատմում է, ավելի ճիշտ՝ դիմում է. «Գորիսի քաղաքապետարանին եւ Զանգեզուրի ողջ բնակչությանը.

Թանկագին հայրենակիցնե՛ր:

Խնդրում եմ լսեք ձայնս:

Գորիսում Անդրանիկ Զորավարն ունեցել է Ջեյրան՝ գրեթե թեւավոր մի նժույգ: Մեծ հերոսը դրանով էր նետվել թուրք-թաթարական ոհմակների դեմ Զանգեզուրի փրկության կռիվների ժամանակ:

Անդրանիկն իր Ջեյրան ձին հանձնել է գորիսեցի նշանավոր ազգային գործիչ Նիկոլայ Հովսեփյանին (Օսիպովին), իսկ ինքը մի այլ նժույգով մեկնել դեպի Վայոց ձոր:

Ես հիշում եմ մեր հարեւան Հովսեփյան Նիկոլային, որին Չեկան գնդակահարեց մի քանի ազնիվ հայերի հետ, կարծեմ 1932թ.: Այդ մասին ստույգ տեղեկություն կտա նրա դուստրը՝ ազնիվ գիտնական Նինան:

Հիշում եմ Նիկոլայ քեռու ցավագին զրույցը հորս հետ.

– Անդրանիկի գնալուց հետո Ջեյրանը ոչ ոքի թույլ չտվեց մոտենալ իրեն, թիմարել կամ հեծնել: Ոչ ոքից կեր չէր ընդունում, միշտ լաց էր լինում Ջեյրանը: Ստիպված տարա Վանքի Տափում բաց թողի, գուցե այնտեղ ապրի: Երեկոները գնում էի Ջեյրանին բերում տուն: Համառեց: Չեկավ: Մի երեկո գնացի, որ բերեմ, տեսա Ջեյրանը պառկել է այն ճանապարհի եզրին, որտեղով գնացել է Անդրանիկը:

Ես լսել եմ նաեւ այն, որ Զանգեզուրի ինքնապաշտպանության մի այլ հերոս՝ Մալինցյան Խաչատուրը, իր ջոկատի տղաների ու Նիկոլայ քեռու հետ Ջեյրանին հանդիսավոր հանձնում են հողին, ապա, իբրեւ պատվո հրաժեշտ, հրետանային համազարկ տալիս...

Այս մասին իր «հուշերի» մեջ (անտիպ) ստույգ տեղեկություններ ունի նաեւ Նժդեհի թիկնապահ Ջոն (Նիկոլայ) Բաբայանցը:

Խնդրանքս սա է: – Գտնել (գոնե մոտավոր) Ջեյրանի թաղված տեղը եւ նրա վրա նժույգային հուշարձան կանգնեցնել: Դա միշտ քաղաքի եւ շրջանի համար մեծ պատիվ կլինի: Հիշեցնեմ՝ աշխարհում կան նժույգ-հուշարձաններ: Ես պատրաստ եմ օգտակար լինելու այդ սուրբ գործին» («Սյունիք», 1992, հունվար-փետրվար): Սերո Խանզադյան

Ի դեպ, 1919թ. մարտի 31-ին լուծարվում է Զանգեզուրի ազգային խորհուրդը, եւ դրա փոխարեն ստեղծվում է շրջանային խորհուրդ: Ն.Հովսեփյանը, որ մեծ բարեկամություն ու անձնական մտերմություն ուներ ոչ միայն Անդրանիկի, այլ նաեւ Նժդեհի հետ (որոնք բարձր էին գնահատում իր քաղաքական գործունեությունը), «1919թ. գարնանը Զանգեզուր-Ղարաբաղ շրջանի խորհրդի կողմից նշանակվում է Զանգեզուրի գավառապետ, իսկ նրա տեղակալ (օգնական), միաժամանակ միլիցիայի պետ է նշանակվում հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Համբարձում Սարգիսջանյանը» (Գորիսի հանրագիտարան, Ե., 2008, էջ 271):

Անդրանիկից հետո զորքերի հրամանատարությունն անցնում է Արսեն Շահմազյանին, որը փառավոր կերպով շարունակում է Անդրանիկի գործը, իսկ 1910թ. օգոստոսին Զանգեզուր է ժամանում Նժդեհը եւ սկսում գոյապայքարի մի նոր ու փառավոր շրջան:

Չլինելով պատմաբան՝ ուստի եւ զորու չլինելով եւ իմ հոդվածում էլ բնավ էլ նպատակ չունենալով անդրադառնալ Զանգեզուրի ազատագրական պայքարի իրադարձություններին՝ կամա թե ակամա կանգ եմ առնում այդ մեծ պայքարի այն դրվագներին միայն, որտեղ դերակատարություն է ունեցել նաեւ հայրս, թեեւ իմ իմացածը նրա հասարակական-քաղաքական մեծ գործունեության մի չնչին ու աննշան մասն է կազմում:

Այսպես, 1919թ. թուրքերը նախապատրաստվում են հարձակվելու Զանգեզուրի վրա: Նրանց աջակցում են նաեւ Զանգեզուրի մահմեդականները:

Այդ մասին Արա Թադեւոսյանը գրում է. «Նոյեմբերի մեկին բշնամու զորքերը գեներալ Ալի Աղա Շիխլինսկու հրամանատարությամբ սկսեցին հարձակումը մի քանի ուղղություններով»: Նրանց առաջնահերթ խնդիրը Գորիսի նվաճումն էր: Արսեն Շահմազյանի, Ռ.Նարինջյանի, Նիկ. Հովսեփյանի, Զաքոյի, Համբարձում Սարգիսջանյանի եւ ուրիշների հմուտ ղեկավարությամբ զանգեզուրցիների հերոսական դիմադրությունը կասեցրեց նրանց գրոհը» («Գարուն», Ե., 1989, №11, էջ14): Դա նոյեմբերի մեկն էր, իսկ նոյեմբերի երեքի մասին Հր.Սիմոնյանը գրում է. «Նիկոլայ Հովսեփյանի եւ Զաքոյի զորամասերը Ղարա գյուղի արեւմտյան կողմն ընկած բարձրությունների վրա հանդիպեցին Ղազի գյուղի շրջանից հարձակվող Արտեմ Խանզադյանի գլխավորած ջոկատին եւ միացան նրան»:

«....Մուսավաթական շփացած հրոսակները, գլուխները կորցրած, խառնիճաղանջ փախչում էին դեպի հյուսիսարեւելյան կողմերը՝ Մինքենդի ուղղությամբ: Դա նոյեմբերի երեքի վերջալույսն էր» («Երեկոյան Երեւան», 1989թ., 14 հունիսի):

Ուշագրավ է, որ նույն օրերի մասին գրում են, որ յուրայիններին թնդանոթային կրակի ուղեկցությամբ Նիկոլայի եւ Զաքոյի խմբերը գրոհում են հակառակորդի դիրքերը: Մուսավաթական զորամասերը դիմադրում էին, բայց հայ ջոկատների խիզախությունից խուճապի մատնված՝ շուտով թողնում են դիրքերը եւ սկսում անկանոն նահանջել դեպի Ղարա գյուղի շրջանը:

Հր.Սիմոնյանը գրում է, թե ինչպես Տեղ գյուղում տեղակայված զինվորական ուղեկալի գիշերային հսկիչները նկատում են, որ Ղարաբաղի ուղղությամբ՝ սարերի վրա, կրակներ են բոցկլտում, մարում ու նորից բռնկվում: Գյուղի զինվորական ուղեկալի հրամանատարն այդ լուրը հեռախոսով հայտնում է Գորիսի շտաբ. «Քաղաքից շտապ այնտեղ է մեկնում ազգային խորհրդի անդամ Նիկոլայ Հովսեփյանը՝ դիտելով դիմացի սարերում բոցավառվող կրակները՝ վերադառնում է քաղաք» («Երեկոյան Երեւան», 1989թ., 14 հունիսի): Գորիսում զինվորականները հավաքվում են խորհրդակցության եւ ենթադրում, որ դա ազդանշան է: Նշանակում է՝ Ղարաբաղում ինչ-որ բան է տեղի ունեցել, բայց ճանապարհները, թուրքերի զինված հսկողության տակ լինելով, չեն կարողանում լուր ուղարկել եւ սարերում վառում են «տագնապի կրակներ»: Մի քանի օր հետո պարզվում է, որ նրանց եզրակացությունը ճիշտ է եղել. Գորիս է գալիս մի աղքատ ու գզգզված մազերով «շրջմոլիկ» եւ ձեռնափայտի մեջ բերում տեղեկատվական մի նամակ ու գնում՝ նույն ձեռնափայտի մեջ տանելով պատասխան նամակը Գորիսից: Տեղեկությունը անարժեք չէր. հարձակում էր նախապատրաստված Գորիսի վրա:

Զարմանալի է, որ Ն.Հովսեփյանի ազգանվեր գործունեությունից դուրս է մնացել մի շատ կարեւոր փաստ, որին ոչ ոք չի անդրադարձել (գոնե իմ կարդացած նյութերում չեմ հանդիպել): Խոսքն անգլիացիների կողմից հորս պատանդ վերցվելու մասին է, որ ինձ հանգամանորեն պատմել է քեռիս, իսկ մի քանի տարի հետո էլ այդ մասին պատմել է Անդրանիկի նախկին քաջ զինվորներից մեկը՝ Վաղարշակ Հովակիմյանը:

Կարդալով այդ շրջանի պատմության վերաբերյալ նյութեր՝ իմացա, որ անգլիացիները երկու անգամ են պատվիրակություն ուղարկել Զանգեզուր: Առաջինը՝ 1918թ. դեկտեմբերի 8-ին Գիբոնի գլխավորությամբ, իսկ երկրորդը՝ 1919թ. ապրիլին՝ գնդապետ Շոտելվորտի գլխավորությամբ:

Եթե Գիբոնի պատվիրակության նպատակն էր ««խաղաղ» ճանապարհով լուծել Ադրբեջանի գերիշխանության հարցը», ապա Շոտելվորտի միսիան էր՝ ինչ գնով էլ լինի, հնազանդեցնել «ըմբոստ սյունեցիներին»:

Ենթադրում եմ, որ հորս պատանդ վերցնելը տեղի է ունեցել Շոտելվորտի պատվիրակության նախաձեռնությամբ, որովհետեւ երբ Գորիս է գալիս Բաքվի անգլիական հրամանատար գեներալ Շոտելվորտը, նրա առաջին պահանջներից մեկն այն է լինում, որ Զանգեզուրից պետք է հեռանան Արսեն Շահմազյանը, Նիկոլայ Հովսեփյանը եւ Արշակ Շիրինյանը (Գորիսի հանրագիտարան, 2008, էջ 271):

Վաղարշակ Հովակիմյանն ասում էր՝ հորդ պատանդ վերցնելը զավեշտ դարձավ անգլիացիների համար: Մինչ նրանք պատանդի հետ կապված պայմաններ էին առաջադրում, զինված մի ջոկատ Գորիսի ջահել ու թիկնեղ տղաների հետ հարձակվում եւ ազատում են Ն.Հովսեփյանին: Թե ովքեր եւ ինչպես են պատանդ վերցնում, չեմ կարող ասել, քանի որ ոչինչ չգիտեմ: Անգլիական երկու պատվիրակություններից էլ չի հաջողվում որեւէ հարց լուծել: Գորիսից նրանց քշում են:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ն.Հովսեփյանը եւ նրա զինակից ընկերներից մի քանիսը հետապնդվում են: Նրանց առջեւ կանգնում է մահվան սպառնալիքը: Այդ պատճառով էլ ընկերների ստիպմամբ Ն.Հովսեփյանը, Ա.Շահմազյանը եւ Ա.Շիրինյանը 1921թ. անցնում են սահմանը եւ գնում Իրան: Սակայն քաջ հայորդիների համար հնարավոր չէր համակերպվել օտար երկրում ապրելու մտքին եւ փորձում են վերադառնալ հայրենիք: Նրանց բոլոր փորձերը անցնում են ապարդյուն: Հայրենիք վերադառնալու խնդրանքով նրանք դիմում են Մոսկվա՝ Վ.Լենինին եւ ստանում թույլտվություն: Հայրս վերադառնում է Գորիս, մյուսների մասին տեղեկություն չունեմ:

Լենինից թույլտվություն ստանալու մասին ես իմացել եմ հորս եղբոր աղջկա՝ Աշխեն Բեգունցի՝ ինձ գրած նամակից: Նա ցանկանում էր, որ մի պատմաբան գնա իր մոտ՝ Մոսկվա, եւ ինքը հորս եւ նրա ընկերների հետ կապված դեպքերի մասին ամեն ինչ պատմի. քանի որ հորեղբորս ընտանիքը ապրել է հորս հետ, ինքը մանրամասնորեն տեղյակ է ամեն ինչից: Այդ նամակը նա գրել է 1992թ. ապրիլի 5-ին ռուսերեն եւ գտնվում է ինձ մոտ:

Հայրենիք վերադառնալուց հետո՝ 1930թ., նրան ձերբակալում են: Բանտում, երբ իմանում է իր մահվան դատավճռի մասին, բազմիցս խնդրում է, որ թույլ տան վերջին անգամ տեսնել իր երեխային: Մերժում են: Այդ երկաթե կամքի տեր մարդու աչքերում արցունքներ են երեւում:

Նրա մահվան մասին կարդում ենք.

«1930թ. նրան ձերբակալում են, իսկ 1931թ. ցուրտ ու մառախլապատ մի լուսաբացի գնդակահարում «Շորին ձոր» կոչվող անմարդաբնակ վայրում»:

Այդ ցավալի արարողության մասնակիցներից մեկը հետագայում պատմում է, որ հրաման կատարողներից ոչ ոք չէր ուզում կրակել նրա վրա, եւ առաջարկում են իրենց հետ եկած թուրք մարդասպանին, որ ինքը կրակի: Բոլորի աչքերում արցունքներ կային, եւ նրանք շրջում էին իրենց հայացքը մեծ հայրենասերից: Այդ նկատելով՝ Ն.Հովսեփյանը խնդրում է ատրճանակը վերցնել թուրքի ձեռքից, տալ հայերից մեկին, որ նա կրակի: «Չեմ ուզում թուրքի գնդակից մահանալ, սա ընդունեք որպես իմ վերջին խոսք» (Գորիսի հանրագիտարան, 2008, էջ 271):

1995թ. Ն.Հովսեփյանին լիովին արդարացնում են:

Բազմաթիվ հերոսական գործերով է հարուստ Ն.Հովսեփյանի կենսագրությունը: Նրա մասին գրել են ե՛ւ իր զինակից ընկերները, ե՛ւ հետագա ուսումնասիրողները՝ բոլորն էլ վկայելով նրա բնատուր խելքի, իրադարձությունների կանխատեսման, մեծ հայրենասիրության ու նվիրումի մասին: Գնահատվել է որպես հասարակական-քաղաքական մեծ գործիչ, մարտնչող զինվոր ու, որ գլխավորն է, իր ժողովրդի անմնացորդ նվիրյալ:

Մեծ է եղել նրա դերը Զանգեզուրի ազգային-ազատագրական պայքարի գործում: Հերոսական են հատկապես Գորիսը թուրք մուսավաթական ջարդարարներից փրկելու նրա ծրագրերն ու պայքարը: Հաշվի առնելով այս բոլորը՝ որպես նրա դուստր՝ խնդրում եմ Սյունիքի մարզպետ պարոն Ս.Խաչատրյանին, Գորիսի քաղաքապետ պարոն Ն.Ոսկանյանին, Գորիսի փողոցներից մեկը վերանվանել նրա անունով, որին իր զինակիցները «Զանգեզուրի Բիսմարկ» անունն են տվել՝ դրանով իսկ հարգելով նրա հիշատակը, որին ինքը լիովին արժանի է:

**ՆԻՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ**



# Երեւանի պետական համալսարանի ռեկտորը

**Կյանքի եւ աշխատանքային գործունեության երկար ու դժվարին ճանապարհ է անցել Գարեգին Բախշիի Պետրոսյանը: Գրեթե մի ամբողջ դար ապրել ու ստեղծագործել է: Երեւանի պետհամալսարանի ռեկտորների մեջ առանձնանում է նրա անունը: Քանզի նա միակն է, ում երկու անգամ բախտ է վիճակվել լինել մայր բուհի ռեկտոր: Դրանից զատ՝ նրա ստեղծագործական կյանքը գրեթե հինգ տասնամյակ անխզելիորեն կապված է համալսարանին:**

Անհոգ չի եղել Գ.Պետրոսյանի մանկությունն ու պատանեկությունը: Աչք է բացել 1902 թվականին Բախշի Պետրոսի Դադունցի չքավոր ընտանիքում: Հաղթահարելով նյութական եւ բարոյական զրկանքները՝ ուսումնատենչ Գարեգինը նախնական կրթությունը ստացել է Գորիս գյուղում, միջնակարգը՝ Գորիս քաղաքում: Երբ 1918 թվականին մայիսին հռչակվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը, Գարեգին Պետրոսյանը 16 տարեկան էր, զինվորական գումարտակի շտաբի հեռախոսավար, ապա՝ հաշվետար:

Բայց նրան բնավ չէր ձգում հաշվային աշխատանքը, ուստի 1922-ին մեկնում է Երեւան, ընդունվում նորաբաց համալսարանի տեխնոլոգիական ֆակուլտետը, իսկ երրորդ կուրսից փոխադրվում ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ, որն ավարտում է 1929 թվականին: Այնուհետեւ (1930-1934թթ.) ուսանում է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: Վերադառնալով Երեւան՝ 1934-ից պետական համալսարանում դասավանդել է տեսական ֆիզիկա առարկան՝ նաեւ ստանձնելով ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի եւ պետհամալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պարտականությունները: 1938 թվականին նրան շնորհվել է դոցենտի կոչում, նույն տարում էլ Գարեգին Պետրոսյանը նշանակվում է համալսարանի ռեկտոր եւ մինչեւ 1941 թվականը միաժամանակ վարում է նաեւ նոր հիմնադրված տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչի պաշտոնը: Վարչական աշխատանքը հմտորեն զուգակցելով մանկավարժականին՝ այդ տարիներին նա դասավանդում է այնպիսի բարդ առարկաներ, ինչպիսիք են՝ դաշտի տեսություն, էլեկտրոնային տեսություն, տատանումների տեսություն, հատուկ գլուխներ՝ ֆիզիկայի պատմությունից:

1941-ի սեպտեմբերին կամավոր մեկնում է ռազմաճակատ՝ միանալու իր կռվող սաներին: Նոր կազմավորված 408 հրաձգային դիվիզիայի շտաբի պետի տեղակալն էր, մասնակցել է Նովոռոսիյսկի եւ Տուապսեի ուղղությամբ մղվող թեժ մարտերին: 1942-ի հոկտեմբերին մարտերից մեկում ծանր վիրավորվում է եւ ամիսներով հոսպիտալներում բուժվելուց հետո, որպես երրորդ կարգի հաշմանդամ, զորացրվում է, վերադառնում Երեւան: 1944-1949 թվականներին, դասախոսություններ կարդալուց զատ, նա Հայաստանի գիտությունների նորաստեղծ ակադեմիայի նախագահության գիտական քարտուղարն էր: 1949 թվականի մայիսին կրկին նշանակվում է համալսարանի ռեկտոր՝ պաշտոնավարելով մինչեւ 1957 թվականը: Գ.Պետրոսյանի ռեկտորության հետպատերազմյան տարիներին (1949-1957)



ակադեմիկոս Արտաշես Շահինյանի ղեկավարությամբ համալսարանում եւ գիտությունների ակադեմիայում սկզբնավորվեց եւ ամրապնդվեց հայկական մաթեմատիկական դպրոցը, որը Մխիթար Ջրբաշյանի եւ Սերգեյ Մերգելյանի գիտական հիմնարար աշխատությունների շնորհիվ մեծ ճանաչում ստացավ նաեւ հանրապետությունից դուրս: Դրանից բացի՝ նրա ջանքերով համալսարանում հիմնադրվել է միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների պատմության ամբիոն, որը նա ղեկավարել է մինչեւ 1955 թվականը:

Շատ ավելի կարեւոր էր համալսարանի նոր տեխնիկական բազայի՝ կառույցների նախագծման աշխատանքներին ձեռնամուխ լինելը: Ռեկտորը նոր համալիրի նախագծման գլխավոր ճարտարապետ Էդմոնդ Տիգրանյանի հետ միասին մեծ դժվարությամբ կարողացավ բոլոր ատյաններում հաստատել նախագծերը եւ ստանալ համաձայնություն կառուցումը իրագործելու Այգեստանում՝ Գետառի ձախ ափին: Համալիրը կառուցվեց, իհարկե, թեեւ կառուցման ավարտման հաճույքը վիճակվեց նրա հաջորդներին:

Ըստ համալսարանի նախկին ռեկտոր, այժմ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի պատմածի՝ համալսարանի համալիրի կառուցման թույլտվությունը նա համաձայնեցրել է, հաստատել տվել, որքան էլ զարմանալի լինի եւ անհավատալի, 1953 թվականի մարտի 5-ին (Ստալինի մահվան օրը):

Ամփոփելով մաթեմատիկայի բնագավառում իր նախապատերազմյան շրջանի ուսումնասիրությունները՝ հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական թեզ, այնուհետեւ ձեռնամուխ է լինում Մատենադարանի մաթեմատիկական նյութերի մանրազնին ուսումնասիրությանը: Դա միանգամայն օրինաչափ էր, որովհետեւ դեռեւս 1944 թվականին գիտական պարբերականներում նա հանդես էր եկել հայ մաթեմատիկայի պատմությանը նվիրված ուշագրավ հոդվածներով: Նույն թվականին Անանիա Շիրակացու մասին գրած աշխատությունը բարձր գնահատականի է արժանացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիգոդսկու եւ ուրիշների կողմից: Հայ մաթեմատիկայի պատմության վերաբերյալ նյութերի արժեքավորումը, նախընտրած թեմայի գիտական մշակումը գիտնականից պահանջում էին ոչ միայն մաթեմատիկական գիտելիքների բազմակողմանի, այլեւ գրաբարի եւ օտար լեզուների բավարար իմացություն: Ուստի արտակարգ բարեխղճությամբ ուսումնասիրում եւ հմտանում է այդ բոլոր լեզուների մեջ այն չափով, որ կարողանա բառարանի օգնությամբ կարդալ ու հասկանալ սկզբնաղբյուրները: Այդ նպատակով նա սովորում է անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն (1930-1934թթ.), գրաբար (1939-1940թթ.), հունարեն (1940-1947թթ.) եւ արաբերեն (1947-1948թթ.): Այս վերջին լեզվի մեջ նա հմտացել է Հրաչյա Աճառյանի օգնությամբ:

Մատենադարանում երկար տարիների նրա պրպտումները պսակվեցին հաջողությամբ, որի արգասիքը եղավ «Մաթեմատիկան Հայաստանում հին եւ միջին դարերում» ծավալուն մենագրությունը, որը 1955 թվականին պաշտպանեց իբրեւ դոկտորական թեզ՝ արժանանալով բարձր գնահատականի: Բանն այն է, որ մեզանում առաջին անգամ նա ուսումնասիրեց Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող Անանիա Շիրակացու, Սարկավագի եւ այլ մաթեմատիկոսների ձեռագրերը, հին եւ միջնադարյան հայ մատենագրությունը, ծանոթացավ ուրարտական սեպագրերի համակարգին, հանգամանորեն ուսումնասիրեց ռուսական եւ այլ օտար աղբյուրներ եւ ստեղծեց իր տեսակի մեջ եզակի աշխատանք, որը բարձր գնահատվեց ոչ միայն հեղինակավոր մաթեմատիկոսների, այլեւ պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Աբրահամյանի կողմից: Աշխատությունը սկսելով «Թվաբանությունը Ուրարտուում ըստ սեպագիր արձանագրությունների» գլխով՝ մաթեմատիկոս պատմաբանը ցույց է տվել հայ եւ ուրարտական թվային համակարգերի նմանությունը, որը բանալի է դառնում հասկանալու նաեւ հայ-ուրարտական մշակութային կապերն ու նմանությունները ընդհանրապես: Պրոֆեսոր Աբրահամյանն այս աշխատության ամենաարժեքավոր մասն է համարել նրա երրորդ՝ «Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը եւ նրա նշանակությունը» գլուխը, որն ինքնատիպ է իր առաջադրած հարցերի ընդգրկմամբ ու խորությամբ: Ուսումնասիրողն ապացուցել է, որ Շիրակացու թվաբանության աղյուսակներն, իրոք, մեզ հասած ամենահին տեքստերն են աշխարհում: Նաեւ կատարել է Հովհաննես Իմաստասերի «Յաղագս անկիւնավոր թուոց» աշխատության առաջին մասնագիտական լուրջ ուսումնասիրությունը եւ ցույց տվել, որ նա բանաստեղծ լինելուց բացի եղել է խոշոր մաթեմատիկոս, որի տեքստը մեծ արժեք է ներկայացնում մաթեմատիկայի պատմության համար: Ուշադրության է արժանի նաեւ Պետրոսյանի կազմած ու հրատարակած Եվկլիդեսի երկրաչափության հայկական նորահայտ տեքստը (20 մասնուլ): Ահա այսպես նա բարեխղճորեն ուսումնասիրել եւ արժեքավորել է հին եւ միջին դարերի մաթեմատիկոսների ձեռագիր եւ տպագիր աշխատությունները, որի արգասիքն են «Մաթեմատիկան Հայաստանում հին եւ միջին դարերում» (1959), «Միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմությունից (հոդվածներ եւ հրապարակումներ)» (1986) հիմնարար աշխատությունները: Գ.Պետրոսյանը համահեղինակն է նաեւ «Անանիա Շիրակացու մատենագիտությունը» (1979) աշխատության, եղել է «Բնագիտության եւ տեխնիկայի պատմությունը Հայաստանում» մատենաշարի հիմնադիրն ու գլխավոր խմբագիրը (տպագրվել է ութ հատոր):

1958 թվականից Գ.Պետրոսյանը սկսում է աշխատել գիտությունների ակադեմիայում՝ որպես բնագիտության եւ տեխնիկայի պատմության խորհրդի նախագահ, ինչը հետազոտական աշխատանքի նոր հեռանկարներ է բացում նրա առջեւ, մասնակցում է գիտությունների պատմության գծով 1961 թվականին Օքսֆորդում կայացած միջազգային սիմպոզիումին, ինչպես նաեւ 1962 թվականին Ֆիլադելֆիայում հրավիրված միջազգային 10-րդ կոնգրեսին, որտեղ հանդես է գալիս զեկուցմամբ: 1964-ին նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում, իսկ մեկ տարի հետո արժանանում է գիտական բարձրագույն պատվի՝ ընտրվելով բնագիտության ու տեխնիկայի պատմության միջազգային ակադեմիայի թղթակից-անդամ: Երկու տարի անց Գ.Պետրոսյանին շնորհվել է Հայաստանի գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Հոդվածն ակնհայտորեն ծանրաբեռնվեց թվերով, ինչը, թերեւս, որոշ չորություն է հաղորդում շարադրանքին, բայց վաստակաշատ գիտնականի հարուստ կենսագրության հիմնական տարեթվերից որեւէ մեկն անտեսել չի կարելի: Իսկ ահա թե ինչպիսին է նա մնացել ժամանակակիցների հուշերում. «Բարձրահասակ, արծվադեմ, առնական մարդ էր: Լայն քայլվածք ուներ, անցնում էր համալսարանի միջանցքներով՝ ձգված կեցվածքով, արծվային հայացքը հառում չորս կողմը: Պահանջկոտ էր, կարգ ու կանոն շատ էր սիրում: Ոչ մի վատ բան չէր վրիպում նրա սրատես աչքից: Բարձրախոս էր, բառերն արտասանում էր հատիկ-հատիկ՝ զանգեզուրյան շեշտադրությամբ: Արտաքուստ կարող էր թվալ, թե կոշտ մարդ է, անտարբեր շրջապատի հանդեպ: Սակայն դա թվացյալ էր: Իրականում Գարեգին Բախշիեւիչը զգայուն սիրտ ու հոգի ուներ: Համալսարականներին, իր ընկերներին հասած դժբախտությունները ծանր էր տանում: Լսում էր, քար կտրում բազկաթոռին: Այդժամ նրա աչքերի աղբյուրակներում կարելի էր տեսնել հզոր տղամարդու արտասուքի կաթիլները: Հիշաչար չէր, փիլիսոփայորեն էր նայում իր հասցեին արված ինչպես արդարացի, այնպես էլ անարդար քննադատությանը: Արտակարգ պահանջկոտ էր, նույնիսկ անխնա՝ չարին պատժելիս, բարի էր՝ բարու հանդեպ: Շիտակ էր եւ արդարամիտ»:

Գիտամանկավարժական գործունեությունից զատ՝ Գարեգին Պետրոսյանը կատարել է նաեւ հասարակական-քաղաքական աշխատանքներ. 1950-1958թթ. եղել է ԿԿ բյուրոյի անդամ: 1938-47 եւ 1951-1955թթ. ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, իսկ 1954-58 թվականներին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: Պարգեւատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով եւ բազմաթիվ մեդալներով:

Գարեգին Պետրոսյանի աշխատանքային ութսունամյա վաստակն ու գիտական անխոնջ պրպտումները կենսական լիցք են հաղորդել նրա՝ մոտ մեկդարյա կյանքին: Ընկերական շրջապատում սիրում էր կրկնել. «Աշխատանքը կքողնեմ միայն այն դեպքում, երբ ոտքով չկարողանամ բարձրանալ ութերորդ հարկ»: Աշխատասենյակը ութերորդ հարկում էր:

Երկրային կյանքին վաստակաշատ այրը հրաժեշտ տվեց 1997 թվականի դեկտեմբերի 4-ին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

# ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

## Հին եւ Նոր Գորիսի սրբավայրերից մի քանիսը





Կիսավիմափոր մատուռ Ճգնավորաց լեռան ստորոտում: Սեդրակ Բարխուդարյանի հավաստմամբ դա Սուրբ Մարտիրոս մատուռն է:



Սրբապատկեր Գորիս գյուղի ժայռանտառում՝ Խաչին աղբյուրից 60-70 մետր ձախ: Լուսանկարն արվել է Սերգեյ Հախվերդյանի պատվերով 2009թ.:



Սուրբ Հռիփսիմե (որոշ մասնագետների կարծիքով՝ Սբ Աստվածածին) եկեղեցի, կառուցվել է 4-րդ դարում հեթանոսական մեհյանի տեղում: Ներկա տեսքը ձեռք է բերել 16-րդ դարում՝ երրորդ վերակառուցման արդյունքում:

Մելիք-Հյուսեինյանների տոհմական եկեղեցին



Խաչին աղբյուրը:





Սինդարա, Սբ Տրդատ մատուռ՝ կառուցված 2006թ.՝ նախկին սրբավայրում: Նախաձեռնող եւ հովանավոր՝ Սուրեն Խաչատրյան: Նախագծի հեղինակ եւ կառուցող՝ Սեւադա Ջաքարյան: Այս մատուռի մերձակայքում են գտնվում մեկ այլ եկեղեցու ավերակներ եւ գերեզմանատուն՝ բազմաթիվ խաչքարերով:


№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԱՐԽԻՎ

# ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ. «Գորիսը դարերով ստեղծված ավանդույթներ ունի, որոնք լրջորեն պիտի ուսումնասիրել»

Վահրամ Օրբելյանի հարցազրույցը Հայաստանի ազգային արխիվի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյանի հետ



**– Պարո՛ն Վիրաբյան, 140 տարի առաջ հիմնադրվեց Գորիս քաղաքը: Եվ մենք պատրաստվում ենք այդ հոբելյանին նվիրել «Սյունյաց երկիր» թերթի բացառիկ համար: Գորիս քաղաքը, որը 140 տարի առաջ Զանգեզուր գավառի կենտրոնն էր, մտել է Ելիզավետպոլի նահանգի մեջ, որի կենտրոնն էր համանուն քաղաքը: Ճի՞շտ է արդյոք, որ քաղաքի հիմնադրմանն առնչվող փաստաթղթերը գտնվում են Ելիզավետպոլ քաղաքի (ներկայիս Կիրովաբադ) արխիվում:**

– Իհարկե, Զանգեզուր գավառի կենտրոնը եղել է Ելիզավետպոլը, եւ բնականաբար, որոշ փաստաթղթեր պահպանվել են այնտեղ: Բայց հետագայում դրանք տեղափոխվել են Բաքու: Եվ դժվար թե Ելիզավետպոլում լինեն այնպիսի փաստաթղթեր, որոնք արժեք ներկայացնեն: Հիմնականում փաստաթղթերը պահպանվում են Բաքվի արխիվներում: Բայց պիտի ասեմ, որ խորհրդային իշխանության հաղթանակից հետո Անդրկովկասում եղած արխիվների բաժանում կատարվեց. Հայաստանին առնչվող փաստաթղթերը բերվեցին Երեւան: Օրինակ, Գորիսի մասին բավականին փաստաթղթեր են տեղափոխվել այստեղ, դրանք 19-րդ դարում տեղի ունեցած մարդահամարներին, դատական գործընթացներին, հողերի բաժանմանը վերաբերող փաստաթղթեր են: Նույն ձեւով Երեւանից որոշ փաստաթղթեր տեղափոխվեցին Նախիջեւան, քանի որ Նախիջեւանը մտնում էր Երեւանի նահանգի մեջ, ինչպես Գորիսը՝ Ելիզավետպոլի նահանգի մեջ: Բայց կային փաստաթղթեր, որոնք վերաբերում էին ոչ միայն Զանգեզուրին, այլեւ Ելիզավետպոլի այլ գավառներին: Դրանք հնարավոր չէր կիսել, մեկտեղվում էին մի թղթապանակի մեջ, այժմ պահպանվում են Բաքվի տարբեր արխիվներում:

**– Իսկ Գորիս քաղաքին առնչվող ամենահին փաստաթղթերը ո՞ր շրջանին են առնչվում, եւ ի՞նչ ունենք այդ տարիներից:**

– Գորիս քաղաքին առնչվող ամենահին փաստաթղթերը վերաբերում են 1831 թվականին տեղի ունեցած մարդահամարին: Դրանից հետո մարդահամար է անցկացվել 1842 թվականին: 1840-ական թվականների կեսերից Գորիսում եւ շրջանի գյուղերում սկսում են շրջանառության մեջ մտնել չափաբերական մատյանները, որտեղ գրանցվում են մարդկանց ծնունդի, կնունքի, մահվան վերաբերյալ տվյալներ: Պահպանվել են փաստաթղթեր, որոնք առնչվում են եկեղեցաշինությանը, դպրոցաշինությանը, քանի որ դպրոցները գործում էին եկեղեցուն կից: Պիտի ասեմ, որ բնակավայրերի պատմությամբ եւ տոհմագրությամբ զբաղվող ուսումնասիրողներն այսօր օգտվում են այդ փաստաթղթերից: Բացի դրանից, երբ 1861 թվականին ճորտատիրական կարգերը վերացան, եւ հողը սկսեցին հանձնել գյուղացուն, Անդրկովկասում մեծ աշխատանքներ իրականացվեցին համայնքներին պատկանող հողերը չափելու, դրանց սահմանները որոշելու ուղղությամբ: Այս ամենը երբեմն ուղեկցվում էր դատական գործընթացներով: Այս ամեն ինչի մասին փաստաթղթերը պահպանվել են, եւ այսօր կան Հայաստանի ազգային արխիվում: Արդեն նշեցի, որ 1920-ական թվականներին տեղի ունեցավ արխիվային փաստաթղթերի փոխանակում, նաեւ պահպանվում են Զանգեզուր գավառի դատական գործերի փաստաթղթերը, որոնք բերվել են Ելիզավետպոլից կամ Թիֆլիսից, որն այդ ժամանակ Անդրկովկասի կենտրոնն էր:

**– 1867 թվականի դեկտեմբերի 9-ին, որքան գիտենք, առաջին անգամ ձեւավորվեց Զանգեզուրի գավառը՝ Գորիս կենտրոնով: Հետաքրքիր է՝ Զանգեզուրի գավառին առնչվող ի՞նչ նյութեր են պահպանվել մեր պետական արխիվում (նկատի ունենք մինչեւ 1917 թվականի հեղափոխությունն ընկած շրջանը):**

– Ես նշեցի՝ հիմնական փաստաթղթերն առնչվում են հողօգտագործմանը, հողաբաժանմանը, բացի դրանից մեծաթիվ փաստաթղթեր կան դպրոցների հիմնադրման, կառուցման վերաբերյալ, նույնը եւ եկեղեցիների վերանորոգման, կառուցման, ծխական դպրոցների գործունեության, այդ թվում՝ Գորիսին առնչվող: Նաեւ պիտի ավելացնեմ, որ 19-րդ դարի փաստաթղթերն այնքան էլ շատ չեն, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմի եւ քաղաքացիական պատերազմի տարիներին Զանգեզուրում տեղի ունեցած ազգամիջյան բախումների պատճառով շատ փաստաթղթեր են ոչնչացել: Բացի դրանից՝ 1918-20 թվականներին Զանգեզուրը համարյա կտրված էր արտաքին աշխարհից, եւ ամեն ինչի սուր պակաս էր զգացվում, այդ թվում՝ նաեւ թղթի: Փաստաթղթերի հակառակ կեսը, որ մաքուր էր, օգտագործում էին որպես գրելու թուղթ: Ընդհանրապես փաստաթղթերն օգտագործում էին որպես ծխախոտի թուղթ, մթերքը փաթեթավորելու նպատակով՝ չգիտակցելով, որ դրանք կարող են ունենալ պատմական, գիտական նշանակություն: Եվ ոչ միայն պատերազմի միջոցով, այս ուղիով էլ են ոչնչացվել արխիվային փաստաթղթերը:

**– Զանգեզուրի պատմության ամենաքիչ ուսումնասիրված եւ վիճելի շրջաններից մեկը հետհոկտեմբերյան շրջանն է: Այդ շրջանում ստեղծվել էր Զանգեզուրի ազգային խորհուրդը, որն էլ ղեկավարում է Զանգեզուրի գավառը: Հետաքրքիր է՝ ի՞նչ ունենք Զանգեզուրի ազգային խորհրդի գործունեության վերաբերյալ:**

– Զանգեզուրի ազգային խորհրդի գործունեության վերաբերյալ բավականին փաստաթղթեր կան մեզ մոտ, որը սկզբից կոչվում էր Զանգեզուր-Ղարաբաղյան ազգային խորհուրդ: Այդ խորհրդի փաստաթղթերի մի մասը, բարեբախտաբար, պահպանվել է, եւ հատկապես վերջին տարիներին ուսումնասիրվել է: Մեր արխիվի աշխատակից Արմեն Բադալյանը թեկնածուական ատենախոսություն է գրել «Քաղաքական իրադրությունը Զանգեզուրում 1918-20 թվականներին» թեմայով: Արամ Սիմոնյանը գրեց Զանգեզուրի 1920-1921 թվականների իրավիճակի մասին, Անդրանիկի զանգեզուրյան գործունեության մասին հետաքրքրական դրվագներ կան Հրաչիկ Սիմոնյանի՝ «Անդրանիկը Զանգեզուրում» աշխատության մեջ: Մինչ այդ գրվել են Գեւորգ Ղարիբջանյանի, Ծատուր Աղայանի ստեղծագործությունները, որոնք եւս վերաբերում են Անդրանիկի գործունեությանը: Ես չեմ կարող ասել, որ ձեր նշած ժամանակաշրջանի վերաբերյալ փաստաթղթերը սակավ են: 1918-21 թվականներին այնքան իրադարձություններ տեղի ունեցան Զանգեզուրում, որովհետեւ Զանգեզուրը ոչ միայն Հայաստան-Ադրբեջան առճակատման կիզակետում էր, այլեւ նրա ներքին գործերին միջամտում էին մեծ տերությունները, օրինակ, Անգլիան, որը համառորեն ձգտում էր, որ Զանգեզուրը բռնակցվի Ադրբեջանին: Անգլիական իշխանությունները 1918-ի վերջին, երբ Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց, եւ աշնանը գրավեցին Բաքուն, սկսեցին շարժվել դեպի Հայաստան: Նրանք ամեն ինչ անում էին Զանգեզուրը Ադրբեջանին բռնակցելու: Միեւնույն ժամանակ պիտի ասեմ, որ Զանգեզուրի քաջ բնակչության շնորհիվ, որոնց թվում էին նաեւ Անդրանիկը, Արսեն Շահմազյանը, նրան փոխարինած Գարեգին Նժդեհը, կարողացան այդ երկրամասը պահպանել Հայաստանի համար: Եթե չլիներ բնակչության կամքը, կասկածում եմ, որ Զանգեզուրը ներկայումս լիներ Հայաստանի կազմում, 1920-21 թվականներին սկուտեղի վրա կտրվեր Ադրբեջանին: Բայց 1921 թվականի նոյեմբերին Գարեգին Նժդեհի գլխավորությամբ ապստամբ ուժերը կարողացան կարմիր բանակին դուրս մղել Զանգեզուրից, ստեղծեցին Լեռնահայաստանի Հանրապետություն, որի դիկտատոր եւ սպարապետ նշանակվեց Գարեգին Նժդեհը: Նոր միայն Ռուսաստանում սկսեցին գիտակցել, որ այդ երկրամասն անբաժան է Հայաստանի կողմից: Եվ, կրկնում եմ, դա հնարավոր եղավ Զանգեզուրի բնակչության անկոտրում կամքի շնորհիվ:

**– Մի քանի խոսք էլ, խնդրեմ, Լեռնահայաստանի վերաբերյալ եղած փաստաթղթերի մասին. ի՞նչ ունենք այդ շրջանի վերաբերյալ. չէ՞ որ Գորիսն այդ շրջանում էլ Լեռնահայաստանի մայրաքաղաքն էր:**

– Երբ 1921 թվականին Գարեգին Նժդեհը թողեց Զանգեզուրը, փաստաթղթերի հիմնական մասը տարան իրենց մոտ: Եվ ենթադրում եմ, որ դրանց մի մասը պահպանվում է Բոստոնի Հայ Հեղափոխական Դաշնակցության արխիվում: Բայց լինելով Զանգեզուրում ամեն շաբաթ, եթե ոչ օր՝ նա նամակ էր հղում Երեւան, Զանգեզուրի ծանր վիճակի մասին եւ օգնություն էր պահանջում: Եվ հաճախ տեսնելով, որ այդ նամակները դրական արձագանքների չէին արժանանում, դրանց այլ բովանդակություն էր տալիս՝ գրելով, որ Զանգեզուրը կորցնելով՝ Հայաստանը կկորցնի ամեն ինչ: Այդ բոլոր փաստաթղթերը պահպանվել են: Դրանք մենք հրապարակել ենք Գարեգին Նժդեհի երկհատորյակում: Այդ նամակները, գրությունները հղվել են Հայաստանի Հանրապետությանը, հանրապետության ռազմական նախարարությանը, ՀՅԴ արեւելյան բյուրոյին: Մի խոսքով, այդ փաստաթղթերը պահպանվել են: Ինչ վերաբերում է բուն Լեռնահայաստանի փաստաթղթերին, մեզ դրանք չեն հասել, ինչպես կարելի է ենթադրել, 1921 թվականին Նժդեհն իր հետ տեղափոխել է, եւ ինչպես արդեն նշեցի, պահպանվում են Բոստոնի արխիվում:

**– Ներկայիս Սյունիքի տարածքը հերթական անգամ ընդգրկվեց Զանգեզուրի գավառի մեջ 1921 թվականին: Այդ գավառը գոյատեւեց մինչեւ 1930 թվականը: Ի՞նչ կասեք խորհրդային շրջանի Զանգեզուրի, նրա կենտրոն Գորիսի մասին:**

– Իրոք, Զանգեզուրի գավառը գոյատեւեց մինչեւ 1930 թվականի մայիսը, երբ վարչատարածքային բաժանման արդյունքում այն տրոհվեց չորս վարչական շրջանի՝ Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Մեղրու: Այդ շրջանների փաստաթղթերը բավականին պահպանվել են: Երբ ուսումնասիրում ենք այդ փաստաթղթերը, համոզվում ենք, որ խորհրդային իշխանության առաջին տարիներին մեծ աշխատանք է կատարվել գյուղատնտեսությունը ոտքի կանգնեցնելու, Ղափանում պղնձահանքային արդյունաբերությունը վերականգնելու ուղղությամբ: Հնարավորինս արագ մանկավարժական կադրեր պատրաստելու նպատակով հիմնադրվեց Գորիսի մանկավարժական ուսումնարանը, երեսնական թվականներին Գորիսում գյուղատնտես է աշխատել Ակսել Բակունցը, եւ պահպանվել են նրա զեկուցագրերն ուղղված Հողժողկոմատին: Վերջերս մենք «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրում տպագրել ենք նրա զեկուցագիրը Սիսիանի շրջանի գյուղատնտեսության մասին: Երեսուն էջանոց այդ փաստաթղթում մանրամասն նկարագրվում է ոչ միայն գյուղատնտեսությունը, այլ նաեւ գյուղի կենցաղը. ինչո՞վ են զբաղվում մարդիկ, ի՞նչ են ավանդաբար ցանում, գյուղատնտեսական նոր մշակաբույսերն ինչպե՞ս պետք է ներդնել այդ տարածաշրջանում: Բարեբախտաբար, այդ փաստաթղթերը պահպանվել են: Երբ գավառը լուծարվեց, այդ չորս շրջանը ենթարկվեց Երեւանին, այդ ժամանակաշրջանի փաստաթղթերը եւս կան, այդ թվում՝ Գորիսին առնչվող: Պարզապես պիտի մտնել արխիվները եւ ուսումնասիրել՝ սկսած կրթությունից, արդյունաբերությունից, գյուղատնտեսությունից: Որպես քաղաք՝ Գորիսն առաջիններից մեկն էր հանրապետությունում, որը կառուցվեց իր գլխավոր հատակագծով, ուղիղ փողոցներով, երկհարկանի տներով, այսինքն՝ ունեցավ իր ճարտարապետական դեմքը: Բայց, ի վերջո, նա Բակունցի նկարագրած գավառական քաղաքն էր, որտեղ իշխում էր տնայնագործությունը. 1929 թվականին ստեղծվեց կոլտնտեսություն: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն էր. Գորիսն իր ենթակառուցվածքներով դեռեւս քաղաք չէր: Հետաքրքրական է, որ Գորիսն առաջիններից մեկն էր, որտեղ ստեղծվեց էլեկտրակայան, 1898-ից սկսած տներում էլեկտրական լամպեր էին վառում: Այդ մասին կարող եք կարդալ Բակունցի «Բրուտի տղան» պատմվածքում:

**– Շատ վիճելի եւ իրարամերժ հրապարակումների ենք հանդիպում Անդրանիկի եւ Նժդեհի Զանգեզուրյան շրջանի գործունեության մասին: 1918-19թթ. Անդրանիկն էր Գորիսում, 1920-21թթ.՝ Նժդեհը: Ի՞նչ կասեք այդ շրջաններում նրանց գործունեությանն առնչվող փաստաթղթերի վերաբերյալ:**

– Բարեբախտաբար, երկուսի անձնական արխիվներն էլ պահպանվել են: Անդրանիկի անձնական փաստաթղթերը բերվել են արտասահմանից: Ես երկու այդ գործիչներին չեմ կարող հակադրել իրար, որովհետեւ նրանք չեն շփվել: Երբ Անդրանիկը 1918 թվականի հուլիսի վերջից մինչեւ 1919 թվականի ապրիլ ամիսը Զանգեզուրում էր, այդ ժամանակ Նժդեհը Գառնին մաքրում էր թուրք-թաթարական հրոսակներից: Եվ միայն 1919 թվականի ամռանն ուղարկվեց Կապարգողթ, եւ նրանք միմյանց հետ առնչություն չեն ունեցել: Նրանք գործել են տարբեր հանգամանքներում: Անդրանիկի հիմնական խնդիրն էր ամրապնդել Զանգեզուրի պաշտպանությունը, երկրամասի հիմնական թշնամին 1919 թվականի ամռանը-աշնանը թուրքական զորքերն էին, հետագայում՝ ադրբեջանական: Եվ անգլիացիները ճնշում էին գործադրում՝ Զանգեզուրը ենթարկեցնելու Ադրբեջանի իշխանություններին: Անդրանիկը ոչ միայն կարողացավ դիմադրել դրան, այլեւ փորձ արեց Ղարաբաղն ազատագրել, բայց ճանապարհին, դժբախտաբար, անգլիացի մի քանի սպաներ կանգնեցրին նրան եւ հետ վերադարձրին: Հաճախակի հարց են տալիս. ինչո՞ւ կես ճանապարհից հետ եկավ: Որովհետեւ նա հավատում էր անգլիացիներին: Իսկ վերջիններս նրան հավատացնում էին, որ այս տարածքների հարցը կլուծվի Փարիզի վեհաժողովում:

Իսկ Նժդեհը գործել է այլ հանգամանքներում: 1919 թվականների վերջերից Ադրբեջանն ավելի կազմակերպված էր, Շուշին նրանց տրամադրության տակ էր, Խոսրովբեկ Սուլթանովն ամեն ինչ անում էր Զանգեզուրն իրեն ենթարկելու համար: Նրան փոխարինելու եկան բոլշեւիկները, որոնց քաղաքականությունը Զանգեզուրի նկատմամբ չփոխվեց, ընդհակառակը, Զանգեզուրը դարձավ կարմիր Ռուսաստանը, կարմիր Ադրբեջանը կարմիր Թուրքիային կապող գիծը, եւ Օրջոնիկիձեն ապրիլի վերջին հրաման տվեց շուտափույթ գրավել Շուշի-Գորիս-Նախիջեւան ճանապարհը Թուրքիայի հետ հաղորդակցություն ունենալու համար: Եվ, ինչպես երեւում է, Գորիսի միջոցով փորձեցին միջազգային քաղաքականության հարցեր լուծել: Այնպես որ Անդրանիկին եւ Նժդեհին սխալ է հակադրելը:

**– Մենք մեր զրույցն սկսեցինք 1860-ական թվականներից: Իսկ ի՞նչ ունենք քաղաքի հիմնադրմանը նախորդող շրջանի՝ Գորիսի մասին:**

– Արդեն նշեցի՝ դրանք 19-րդ դարում անցկացված մարդահամարներին վերաբերող փաստաթղթեր են. գյուղի ծխական մատյանները, եկեղեցաշինությանը եւ դպրոցաշինությանն առնչվող վավերագրերը:

Շարունակությունը՝ էջ 114

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՍԱՄՍՈՆ ՃԱՂԱՐՅԱՆ

# Մի՞թե վերջին բրուտն էր

Մահացավ 2010թ. հոկտեմբերի 17-ին

ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ





Սամսոն Ճաղարյանի բրուտանոցը Ղաթրինի ձորում՝ իրենց փան մերձակայքում

ԱՐԽԻՎ

# ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ. «Գորիսը դարերով ստեղծված ավանդույթներ ունի, որոնք լրջորեն պիտի ուսումնասիրել»

Սկիզբը՝ էջ 113

Բավականին փաստաթղթեր կան: Ուղղակի դրանք պիտի ջանասիրաբար ուսումնասիրել, եթե որեւէ մեկը ցանկանա ներկայացնել 19-րդ դարի կեսերի Գորիս քաղաքը, դժվարություն չի ունենա:

**– Մի հարց եւս. նշանավոր գորիսեցիների՝ Ակսել Բակունցի, Սերո Խանզադյանի, Գուսան Աշոտի, ՀՀ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանի, Գերագույն խորհրդի նախագահ Առուշանյանի հետ կապված առանձին թղթապանակներ ունե՞ք:**

– Իհարկե, այդ նշանավոր մարդկանց մասին առանձին գործեր կան: Արդեն նշեցի, որ պահպանվել են Զանգեզուրի գավառի գյուղատնտես Ակսել Բակունցի բոլոր զեկուցագրերը՝ իր ձեռքով գրված եւ հողժողկոմատին հասցեագրած: Պահպանվել են գրողների միության՝ 20-30-ական թվականների փաստաթղթերը, որոնք հրապարակվել են, պահպանվել են Բակունցի ձերբակալության եւ հետաքննության արձանագրությունները, բանտից գրած նամակները: Սերո Խանզադյանի անձնական արխիվը պահպանվում է մեզ մոտ, նա մահից առաջ հանձնեց արխիվին, նույնը վերաբերում է Գերագույն խորհրդի նախագահ Առուշանյանին, ով, մինչեւ օրենսդիր իշխանության ղեկավար լինելը, եղել է ավտոտրանսպորտի նախարար: Ինչ վերաբերում է 20-րդ դարն ընդգրկող փաստաթղթերին, այսօր ուսումնասիրողի, հետազոտողի համար անհրաժեշտ փաստաթղթեր կան:

**– Գորիսը կառուցվում է, ինչպես նշեցինք, 1870-ականներից: Հետագա կառուցապատումների, քաղաքաշինության մասին ինչպիսի՞ փաստաթղթեր են պահպանվում:**

– Քաղաքաշինության, կառուցապատման որոշումները, սկսած 1920 թվականից, ընդունում էին իշխանության բարձր մարմինները: Պահպանվել են նաեւ նախագծային ինստիտուտների այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են առանձին թաղամասերի, շենքերի նախագծմանը: Եթե 19-րդ դարին առնչվող փաստաթղթերի առումով որոշ վերապահությամբ ենք խոսում՝ ասելով, որ դրանք չեն պահպանվել կամ մի մասն է պահպանվել, ապա սկսած 1921 թվականից տարբեր ոլորտների հետ կապված՝ տնտեսության, մշակութային կյանքի, ժողովրդական կրթության, ինքնակառավարման մարմինների, գործադիր կոմիտեների, կուսակցական մարմինների մասին փաստաթղթերը պահպանվել են, եւ եթե Գորիսի 140-ամյակի վերաբերյալ ցուցադրություն լինի, մենք պատրաստ ենք ե՛ւ Ազգային արխիվում, ե՛ւ Ազգային արխիվի Գորիսի մասնաճյուղում պահպանվող փաստաթղթերով օգտակար լինել:

**– Դեռ խորհրդային շրջանում գործող բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների արխիվները հավանաբար Ձեզ մոտ են եւ հուսալիորեն պահպանվում են: Հետաքրքիր է՝ անկախության շրջանում ստեղծված եւ գործող կազմակերպությունների մասին եւս կա՞ն արխիվային նյութեր:**

– Բանն այն է, որ մինչեւ 1996 թվականն ընդգրկող բոլոր փաստաթղթերն ընդունել ենք: Գորիս քաղաքի նախկին քաղխորհրդի, շրջխորհրդի փաստաթղթերն Ազգային արխիվում են: Ինչ վերաբերում է Գորիսի քաղաքապետարանին, Գորիսի տարածաշրջանի համայնքների փաստաթղթերին, դրանք նոր-նոր սկսել են արխիվայնացվել, որովհետեւ ըստ կարգի՝ փաստաթղթերը տասը տարի պահպանվում են հիմնարկ-ձեռնարկություններում, կազմակերպություններում, հետո են հանձնվում արխիվ: Թեպետ ասեմ՝ այս վերջին տարիներին՝ 1990-ականների սոցիալ-տնտեսական վատթար վիճակը բացասաբար է անդրադարձել արխիվային գործին, որոշ փաստաթղթերի կորուստ եղել է: Խորհրդային տարիներին ձեռնարկությունները հիմնականում պետական էին, կանոնավոր հաշվետվություններ, տարբեր վիճակագրական տեղեկություններ էին ներկայացնում նախարարություններ: Մեր օրերում, երբ ձեռնարկությունները սեփականաշնորհվել են, միայն հարկային պարտավորությունների մասին պարտավորություններ են ներկայացնում: Պահպանվում են հիմնականում խոշոր հարկ վճարողների փաստաթղթերը, բայց Գորիսում, որքան գիտեմ, դժվար թե լինեն խոշոր հարկ վճարողներ: Արխիվային գործի հանդեպ վերաբերմունքը փոխվել է. Ազգային արխիվն ստեղծված է միայն պետական կազմակերպությունների արխիվային փաստաթղթերն ընդունելու համար, շատ հիմնարկ-ձեռնարկություններ սեփականաշնորհվել են, եւ մեր պարտականությունը չէ նրանց արխիվները կարգավորել եւ փաստաթղթերն ընդունել Ազգային արխիվ: Միայն կազմակերպությունը լուծարվելուց հետո նրա փաստաթղթերը վերցվում են պահպանության: Մեր երկրի անկախացումից հետո արխիվային գործի սկզբունքները փոքր-ինչ փոխվել են:

**– Ի՞նչ կավելացնեիք ասվածին:**

– Գորիսը մինչեւ 1917 թվականն ամառանոցային քաղաք էր, իրոք, այդպիսին էր, շատ գորիսեցիներ աշխատում էին Բաքվում՝ նավթարդյունաբերության մեջ, ամառային արձակուրդը Գորիսում էին անցկացնում: Դա, իրոք, Ակսել Բակունցի նկարագրած քաղաքն էր, բայց նրա հասարակական-քաղաքական կյանքը 1918 թվականին հայտնի իրադարձությունների պատճառով միանգամից փոխվեց, եւ գավառական կենտրոնը հայտնվեց քաղաքական իրադարձությունների թոհուբոհում: Գորիս քաղաքը, ինչպես արդեն նշեցինք, երկու մեծ անհատների հետ է կապված՝ Անդրանիկի եւ Գարեգին Նժդեհի:

Ես ուզում եմ ընդգծել, որ Հայաստանի ամեն մի նախկին վարչական շրջան իր յուրահատկություններն ուներ, որոնք ավելի ցայտուն երեւան եկան անցյալ դարի 20-30-ական թվականներին: Այդ շրջաններում կոլեկտիվացումը հետաքրքրական ընթացք ունեցավ: Զանգեզուրում այդ գործընթացը տարբերվում էր Արարատյան դաշտի շրջաններից: Կոլեկտիվացմանը Դարալագյազում եւ Գորիսում ավելի բուռն ընդդիմացան: Եվ պետության կողմից բռնաճնշումն ու պատիժը, բնականաբար, համարժեք էին լինում: Հայրենի հողին ու ջրին նվիրված Գորիսի շատ զավակներ իրենց գերեզմանը գտան սիբիրյան հեռուներում: Բայց այս ամենը ներկայացնելու համար լուրջ ուսումնասիրություն է պետք: Մենք մինչեւ հիմա մեծ ուշադրություն ենք դարձրել մեր երկրի ամբողջական պատմությունն ուսումնասիրելու, գրելու վրա: Բայց ժամանակն է եկել, որ ձեռնարկենք փոքր հայրենիք կոչվածի՝ Գորիսի, Գորիսի շրջանի գյուղերի պատմությունը շարադրելուն, ոչ միայն 1918-1920 թվականներն ընդգրկող, այլեւ կոլեկտիվացման տարիները, Մեծ հայրենականի շրջանը եւ հետպատերազմյան տարիները, եւ այդպես մինչեւ մեր օրերը: Ի վերջո, Գորիսը դարերով ստեղծված ավանդույթներ ունի, որոնք լրջորեն պիտի ուսումնասիրել: ■

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

# Հայրենասեր էին ծնվել ու երդում տվել...

Սկիզբը՝ էջ 31

Խութը Գորիս-Լաչին ճանապարհի հսկման համար կարեւոր դեր ուներ, եւ դրա գրավումը կարեւոր էր միջանցքի վրա ազդեցություն ունենալու համար: Բացի դրանից՝ այդտեղից Տեղ գյուղին շատ էին վնաս հասցնում, զոհեր կային... 1992-ի մայիսի 14–ին հետախուզությունը վերջնական ավարտելուց հետո գիշերվա ժամը 4-ին 34 հոգով երեք ուղղությամբ գրոհել են՝ թշնամու փախչելու համար միջանցք թողնելով: Մարտը տեւել է երկու ժամ, լուսաբացին արդեն դիրքը գրավված է եղել:

Սարիբեկ Սայունցը հիշում է Գորիսի երրորդ գումարտակի լուրջ դերակատարությունը մարտում, երբ ազերիներն ուզում էին վերագրավել Լաչինի միջանցքը եւ Արցախ-Հայաստան վերականգնված ցամաքային կապի լինել-չլինելու խնդիր էր դրված...

Սլավիկ Սիմոնյանի համար հիշատակության է արժանի Ղռչազի ռազմավարական լուրջ դիրքի գրավումը:

Գորիսեցիները մասնակցել են Շուշիի գրավմանը, մեծ ներդրում ունեցել Կուբաթլիի, Հորադիսի ազատագրմանը եւ այլն: Գորիսի ջոկատների հաշվեկշռում մի հերոսական էջ էլ Շուռնուխի ազատագրումն է, Գորիս-Կապան ճանապարհի բացումը, որն էական անդրադարձ է ունեցել պատերազմի հետագա ընթացքի վրա:

Նախկին զինվորները տեղեկացնում են, որ ինքնապաշտպանական ջոկատներում իրենց հետ նաեւ կանայք են մասնակցել պատերազմին՝ իբրեւ զինվոր եւ բուժքույր: Ազգանունները չհիշելով՝ նշում են Կարինեին, Անահիտին, Հեղինեին: Երրորդ գումարտակում նաեւ չորս ռուս կին է եղել, որոնցից երեքը զոհվել են. նրանք ադրբեջանական բանակից են անցել այս կողմ՝ հայկական բանակում կռվելու:

Հրադադարից հետո ազատամարտիկները, չնայած պատերազմի պատճառած առողջական խնդիրներին, շարունակել են ծառայել հայրենիքին, իրենց փորձը ներդնելով՝ նպաստել նորանկախ պետության բանակի կայացմանը. Սարիբեկ Սայունցը՝ մինչեւ 1998թ., Սուրիկ Բաղդասարյանը՝ մինչեւ 1999-ը, Սլավիկ Սիմոնյանը՝ մինչեւ 2001-ը, Մելիքսեթ Պողոսյանը այժմ էլ ծառայում է հայրենիքին:

Արձագանքելով ժամանակ առ ժամանակ Ադրբեջանից հնչող պատերազմի սպառնալիքներին՝ սահմանին արձանագրվող լարվածությանը՝ Սուրիկ Բաղդասարյանը նշում է, որ տարածաշրջանի նախկին ազատամարտիկների զգալի մասը՝ մոտ 700 հոգի, համախմբված է «Հայոց մարտիկներ» կազմակերպության մեջ, հավաքվում են ամիսը մեկ անգամ, հանձնարարություններ ստանում, ստուգում դրանց կատարումը եւ անկախ տարիքից բոլորը պատրաստ են հարկ եղած դեպքում էլի ոտքի ելնել:

**ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ**


տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru


ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Գորիսի պատմության մատենագիտական շրջանակի ձեւավորման եւ դասակարգման փորձ

**Ս.Գ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**
ԳՊՀ պատմության եւ իրավագիտության ամբիոնի վարիչ, դոցենտ



**1. Գորիս /Գուրիայա, Գորայք, Գորեს, Կյորես/ բնակավայրի հին եւ միջին դարերի պատմությանը վերաբերող մենագրություններ, գիտական հոդվածներ, հրապարակումներ:**

1.1 Խնկիկյան Օ., Նորահայտ հուշարձան Գորիսում, ՀՀ ԳԱԱ Պատմաբանասիրական հանդես / այսուհետ ՝ ՊԲՀ /, 1981թ., թիվ 4:
/2/ Խնկիկյան Օ., Պեղումներ Գորիսի շրջանում, ՊԲՀ, 1985թ., թիվ 3:
1.3 /3/ Խնկիկյան Օ., Սյունիքը բրոնզի եւ երկաթի դարաշրջանում, /պ.գ.դ. ատենախոսության սեղմագիր/, Երեւան, 1997թ.:
1.4 /4/ Ալիշան Ղ., Սիսական, Վիեննա, 1893, Երեւան, Հայագիտակ, 2009թ.:
1.5 /5/ Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս., Սյունիքի պատմություն, բուհական ուսումնական ձեռնարկ, Երեւան, 2001թ.:
1.6 /6/ Գայսերյան Վ., Արգիշտի II-ի Սիսիանի արձանագրությունը, ՀԽՍՀ Լրաբեր հասարակական գիտությունների / այսուհետ ՝ ԼՀԳ /, 1985թ., թիվ 6:
1.7 / 7/ Գրիգորյան Գ., Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դդ., Երեւան, 1973թ.:
1.8 /8/ Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երեւան, 1981թ.:
1.9 /9/ Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, պր. 2, Երեւան, 1960թ.:
1.10 /10/ Կարագյոզյան Հ., Արեւելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, ԼՀԳ, 1978թ., թիվ 10:
1.11 /11/ Կարագեոզյան Յով., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ1, գիրք 1, Երեւան, 1998թ., էջ 135:
1.12 /12/ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Գուրիայա երկիրը հիշատակող արձանագրություն, Երեւան, 1981թ., էջ 383:
1.13 /13/ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երեւան, 2007թ., էջ 183-184:
1.14 /14/ Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, թարգմանություն, ներածություն եւ ծանոթություն Ա.Աբրահամյանի, Երեւան, 1986թ.:
1.15 /15/ Հախվերդյան Ս., Գորիսի ամփոփ պատմություն, գիտ. խմբագիր պատմ.գիտ.դոկտոր-պրոֆ. Ա.Ստեփանյան, Երեւան, 2005թ.:
1.16 /16/ Հախվերդյան Ս., Պատմագիտական նոթեր. Սյունիք, Երեւան, 2007թ.:
1.17 /17/ Ումառյան Ս., Սյունիքը դիցարան, Երեւան, 1981թ.:
/18/ Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Երեւան, 1975թ.:
/19/ Հախվերդյան Ս., Մեծ Հայքի Սյունիք նահանգի Հաբանդ գավառանվան ստուգաբանության նոր փորձ: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, 2007թ., թիվ 8:
/20/ Հախվերդյան Ս., Հայոց հնագույն պետականությունների հետ Սյունիքի առնչության հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ ԼՀԳ, 2006թ., թիվ 2 /616/, մայիս-օգոստոս:
/21/ Հախվերդյան Ս., Գորիս տեղանվան ստուգաբանության հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ Լեզու եւ լեզվաբանություն հանդես, Երեւան, 2008թ., թիվ 1:
/22/ Գաբրիելյան Հ., Հայկական լեռնաշխարհ, Երեւան, 2000թ., էջ 22, 64-65, 97, 134, 138, 142, 250, 296:
/23/ Հախվերդյան Ս., Վրաց տարեգրության մեջ հիշատակված Պերոզավր Սյունեցի իշխանի ինքնության հարցի շուրջ, Հանրապետական գիտաժողովի նյութեր /Վանաձոր/, Երեւան, «Իրավունք», 2009թ., էջ 82-85:
/24/ Գանձակեցի Կիր., Հայոց պատմություն, թարգման. եւ ծանոթ. Վ.Առաքելյանի, Երեւան, 1982թ.:
/25/ Ղարագյոզյան Ա., Զագեձորի տեղադրությունը, ԼՀԳ, 1985թ., թիվ 11:
/26/ Մարգարյան Ալ., Մի քանի տեղանունների ծագման մասին, ՊԲՀ, 1988թ., թիվ 4:
/27/ Հարությունյան Բ., Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի, ՊԲՀ, 2003թ., թիվ 1:
/28/ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հԲ, մաս Բ, Երեւան, 1960թ., էջ 153:
/29/ Հախվերդյան Ս., Քումունց Ս., Ստ.Օրբելյանի հիշատակած մի քանի տեղանունների ստուգաբանության եւ տեղադրության հարցեր, ՀՀ ԳԱԱ, Լեզու եւ լեզվաբանության հանդես, 2006թ., թիվ 1-2, էջ 63-68:
/30/ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հԲ, Երեւան, 1978թ., էջ 187-188:
/31/ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հԳ, Երեւան, 1984թ., էջ 260-261, 488-489, 775:
/32/ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հԱ, Երեւան, 1964թ., էջ ԺԷ:
/33/ Բարխուդարյան Ս., «Էջմիածնի ավետարան»-ի գրչության վայրը, Բանբեր մատենադարանի, 1958թ., թիվ 4, էջ 43-44:
/34/ Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երեւան, 1968թ., էջ 16:
/35/ Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Երեւան, 1966թ.:
/36/ Աբրահամ վարդապետ Մկրտչյան, Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995թ.:
/37/ Հյուբշման Հ., Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907թ., էջ 101, 299:
/38/ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ, հ5, Երեւան, 1974թ., էջ 121, 165, 239, 647, 651:
/39/ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ, հ6, Երեւան, 1981թ., էջ 346-347:
/40/ Հախվերդյան Ս., Ուշ միջնադարի հոգեւոր մշակութային կենտրոններ, Երեւան, 2003թ.:
/41/ Սեբաստացի Դ., Դավիթ Բեկի պատմությունը, Երեւան, 1988թ.:
/42/ Այվազյան Ա., 1720-ական թվականների Սյունյաց իշխանապետության տեղադրության մասին, Էջմիածին հանդես, 2000թ., մայիս, էջ 63:
/43/ Գեւորգյան Ա., Վայոց ձորի եւ Որոտանի մանրանկարչությունը XIII-XVII դդ., Երեւան, 2003թ.:
/44/ Հակոբյան Հր., Արցախ-Ուտիք մանրանկարչությունը XIII-XIVդդ., Երեւան, 1989թ., էջ 81:
/45/ Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2008թ., էջ 283:
/46/ Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երեւան, 1969թ.:
/47/ Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երեւան, 1969թ.:
/48/ Շիրմազան Գ., Դրվագներ Հայաստանի ռոդման պատմությունից, Երեւան, 1962թ., էջ 158-159:
/49/ Պապուխյան Ն., Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երեւան, 1972թ.:
/50/ Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ, Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1870թ., էջ 73-79:
/51/ Դավրիժեցի Առ., Պատմություն, թարգմ. եւ ծանոթ. Վ. Առաքելյանի, Երեւան, 1988թ.:
/52/ Այվազյան Ա., 1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից / սկզբնաղբյուրների համադրման փորձ/, ՊԲՀ, 1990թ., թիվ 2:
1.53 /53/ Հախվերդյան Ս., Զանգեզուր տեղանվան ստուգաբանության եւ գործածման ժամանակի հարցի շուրջ, ՀՊՄՀ տարեկան գիտաժողով, Նյութերի ժողովածու, h3, 2005թ.:
54/ Ադոնց Ն., Դավիթ Բեկ եւ Տեր-Ավետիքի սերունդը, երկեր, հԱ, Երեւան, 2006թ., էջ 551, 552, 554:
1.55 /55/ Ադոնց Ն., երկեր, հԲ, Երեւան, 2006թ., էջ 507, 511:
1.56 /56/ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմ. եւ ծանոթ. Ք. Կոստիկյանի, Երեւան, 2000թ., էջ 19, 44-45, 113:
/57/ Օրմանյան Մ., Ազգապատում, հ Գ, Ս.Էջմիածին, 2001թ., էջ 4018:
1.58 /58/ Լեո, hII, ԳԱ, Երեւան, 1947թ., էջ 252:
1.59 /59/ Լեո, hIII, ԳԱ, Երեւան, 1946թ., էջ 543:
1.60 /60/ Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Բ մաս, Տփղիս, 1858թ., էջ 309:
61/ Հախվերդյան Ս., Ուրվագծեր Սյունիքի Քաշաթաղի մելիքության պատմությունից, ՀՀ ԳԱԱ, Պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երեւան, 2008թ., թիվ 9:
62/ Հասրաթյան Մ., Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրներ, Երեւան, 1973թ.:
/63/ Հասրաթյան Մ., Պատմահնագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 1985թ.:
/64/ Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992թ.:
/65/ Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր Մովսիսեան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղեմ, 1938թ.:
/66/ Ջիլֆուղարյան Մ., Բղենո Նորավանք, Երեւան, 1999թ.:

**2. ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ**

2.1 /67/ Լալայան Եր., Զանգեզուր, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1898թ., Դ գիրք, թիվ 2, էջ 26-30:
2.2 /68/ «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1905թ., թիվ 7-8, էջ 1175:
2.3 /69/ Ա-Դօ, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում: Փաստագրական, վիճակագրական, տեղագրական ուսումնասիրություններով /1905-1906թթ./, Երեւան, 1907թ., Երեւան 1996թ.:
2.4 /70/ Լեո, Հայոց պատմություն, Ուղեգրություններ, / Սյունիքից մի անկյունն/, հ 8, Երեւան, 1985թ.:
2.5 /71/ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 1993թ.:
2.6 /72/ Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Բ, Երեւան, 1996թ.:
2.7 /73/ Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Երեւան, 2000թ.:
2.8 /74/ Փիրումյան Ռ., ՀՅԴ-Բոլշեւիկ հարաբերությունների ոլորտում 1917-1921թթ., Երեւան, 1997թ., էջ 228:
2.9 /75/ Հովակիմյան Վ., Դժվարին տարիներ, Երեւան, 1988թ.:
2.10 /76/ Սարգսյան Դ., Քարանձավները սկսում են խոսել, Երեւան, 1993թ.:
2.11 /77/ Հեյդարով Ն., Զանգեզուրի լեռներում, Երեւան, 1977թ.:
2.12 /78/ Իշխանյան Եղ., Լեռնային Ղարաբաղ / 1917-1920թթ./, Երեւան, 1999թ.:
2.13 /79/ Գէորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը / 1919-1921թթ./, Երեւան, 1991թ.:
2.14 /80/ Խաչատրյան Ս., Լեռնահայաստան, Երեւան, 2003թ.:
2.15 /81/ Ջիլֆուղարյան Մ., Լեռնահայաստանի Հանրապետությունը, Սյունիքի սահմանադրությունը, Երեւան, 2008թ.:
2.16 /82/ Ջիլֆուղարյան Մ., Խաչատրյան Ս., Լեռնահայաստանի հայկական պետությունը, Երեւան, 2003թ.:
2.17 /83/ Համբարձումյան Ռ., Վարք Նժդեհի, Երեւան, 2001թ.:
2.18 /84/ Ավո, Նժդեհ, Բեյրութ, 1968թ., Լոս-Անջելես, 1989թ.:
2.19 /85/ Լալայան Ա., Զանգեզուրյան դրվագներ 1917-1921թթ., Երեւան, 1985թ.:
2.20 /86/ Խուդավերդյան Բ., Զանգեզուր / 1917-1921թթ./, Երեւան, 1988թ.:
2.21 /87/ Մելիք-Թանգեան Ն., Շուշուց դէպի Հին Նախիջեւան, կազմեց եւ հրատ. պ.գ.դ. Գ.Ստեփանյան, Երեւան, 2008թ., էջ 24, 76:
/88/ Խուդոյան Ս., Արեւելահայ դպրոցները 1830-1920թթ., Երեւան, 1987թ.:
/89/ Ղազախեցյան Վլ., ՀՅ Դաշնակցությունը եւ Խորհրդային իշխանությունը, Երեւան, 1999թ.:
/90/ Պետրոսյան Քր., Լեռնաշխարհի վերածնունդը, Երեւան, 1973թ.:
/91/ Յուշամատեան Ներսէս Մելիք Թանգեան արքեպիսկոպոսի, Թեհրան, 1968թ., էջ 117-118:
/92/ Թովմասյան Վ., Աբաջանյան Վ., Ներսիսյան Յ., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991թ., էջ 43:
/93/ Ավետիսյան Խ., Զանգեզուրի բնակչությունը եւ բնակավայրերը 40 տարում, Երեւան, 1963թ.:
/94/ Ասլանյան Ա., Ավետիսյան Խ., Զանգեզուր, Երեւան, 1975թ.:
/95/ Ազատ Սյունիք, Արնոտ գիրք, կազմող եւ խմբ. Ա. Հարությունյան, Երեւան, 2007թ.:
/96/ Ղազախեցյան Վլ., Նժդեհը Զանգեզուրում, Երեւան, 2001թ.:
/97/ Վարդանյան Ա., Նժդեհյան մասունքներ, Երեւան, 2001թ.:
/98/ Լագիշեան Պ., Կարօտի ճամբաներով, Երեւան, 2008թ., էջ 124-140:
/99/ Սմբատյան Գր., Երկաթե վարագույրից այս կողմ, Երեւան, 2009թ.:
/100/ Մանուկյան Ա., Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-19-53թթ., Երեւան, 1999թ.:
/101/ Ստեփան Կերտող, Գիրք տառապելոց / 1920-1950թթ. բռնություններին զոհ հայ հոգեւորականներ/, Երեւան, 2002թ., էջ 313-314, 322, 349:
/102/ Հախվերդյան Ս., Հախվերդյան Ն., Իրանահայ հայրենադարձները Գորիսում, Իրան –Նամե /հայկական արեւելագիտական հանդես/, 2005թ., h 40, էջ 6-10:
/103/ Հարությունյան Գ., Խորհրդային Միության հայ հերոսներ եւ Փառքի շքանշանի լրիվ ասպետների հարցը հայ պատմագրության մեջ, Երեւան, 2002թ.:
/104/ Հարությունյան Գ., Գորիսի շրջանը Հայրենական պատերազմի տարիներին, ԼՀԳ, 1973թ., թիվ 12:
/105/ Հախվերդյան Ս., Քաղաքական բռնաճնշումները Գորիսում 1930-40թթ., Նոր-դար հանդես, 2007թ., թիվ 1-2:
/106/ Գասպարյան Դ., Փակ դռների գաղտնիքը, Երեւան, 1994թ., էջ 622-625:
/107/ Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պողոսյան Ա., Սյունիքի մարզ, Երեւան, 2002թ.:
/108/ Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը 19-րդ դարի երկրորդ կեսին /պատմաժողովրդագրական ուսումնասիրություն/, Երեւան, 2010թ.:
/109/ Կարապետյան Մ., Հայաստանը 1912-20թթ., Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երեւան, 2003թ., էջ 329-342:
110/ Կարապետյան Մ., Գեւորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ., Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երեւան, 2007թ., էջ 43-88:

**3. ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐ, ԱՐԽԻՎ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ, ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ, ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐ**

3-1 /111/ Հայկական սովետական հանրագիտարան, h3, Երեւան, 1977թ.:
3-2 /112/ Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հեղ. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., h1, Երեւան, 1986թ., էջ 953:
3-3 /113/ Հայկական հարց, հանրագիտարան, Երեւան, 1996թ., էջ 37, 157, 171, 356, 367:
3-4 /114/ Քրիստոնյա Հայաստան, Երեւան, 2002թ., էջ 912-913:
3-5 /115/ Զոհրաբյան Է., Միրզոյան Հ., Գորիսի հանրագիտարան, Երեւան, 2008թ.:
3-6 /116/ Դավթյան Շ., Ջիլֆուղարյան Մ., Գորիսի ականավոր գործիչներ, նշանավոր դեմքեր, արժանավոր զավակներ, Երեւան, 2003թ.:
3-7 /117/ Հայաստանի ազգաբնակչությունը, ՀՍԽՀ, կենտրոնական վիճակագրության աշխատություններ, պրակ 2, Յերեվան, 1924թ., էջ 111-161:
/118/ Դավթյան Շ., Ականավոր սյունեցիներ, Սիսիան, Երեւան, 1988թ., էջ 36:
/119/ Ջիլֆուղարյան Մ., Զոհրաբյան Է., Գրական Սյունիք, Գորիս, Երեւան, 2006թ.:
/120/ Ջիլֆուղարյան Մ., Գորիսի պատմամշակութային հուշարձանները, Երեւան, 2001թ.:
/121/ Ջիլֆուղարյան Մ., Զոհրաբյան Է., Գուսան Աշոտ, Երեւան, 1997թ.:
/122/ Ջիլֆուղարյան Մ., Սանթրյան Վ., Զոհրաբյան Է., Սերո Խանզադյան, Երեւան, 1998թ.:
/123/ Ջիլֆուղարյան Մ., «Տաթեւ» հանրագիտարան, Գրչաձորի պատմությունը, Երեւան, 2003թ.:
/124/ Ջիլֆուղարյան Մ., Պրոֆեսոր Սուրեն Յոլյան, Երեւան, 2004թ.:

Շարունակությունը՝ էջ 116

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Գորիսի պատմության մատենագիտական շրջանակի ձեւավորման եւ դասակարգման փորձ

Սկիզբը՝ էջ 115

/125/ Ջիլֆուղարյան Մ., Մեծ գործեցին /Սերո Խանզադյանի մասին/, Երեւան, 2005թ.:
/126/ Հոգու մեղեդիներ, կերպարվեստ, Գորիս, Երեւան, 2004թ.:
/127/ ՀՀ ՊՊԿԱ ֆոնդ 56, ցուցակ 3, գործ 627, 856, ց 1, գ 205, 544, ֆ 7, ց 1, գործ 156, ֆ 199, ց 1, գ 38, ֆ 7, ց 1, գ 150, ֆ 205, ց 1, գ 99; ՀՀ ՀՔԿՖ ԿՊԱ ֆ 6, ց 3, գ 91:
/128/ Գորիսի արխիվ, ֆ 56, գ 2, ֆ 54, գ 4:
/129/ Բանբեր Հայաստանի արխիվների, Երեւան, 1989թ., թիվ 2, էջ 63, 127:
/130/ Բանբեր Հայաստանի արխիվների, 1991թ., թիվ 3, էջ 142:
/131/ Բանբեր Մատենադարանի, Երեւան, 1969թ., թիվ 9, էջ 417, 421:
/132/ Գորիսի Սբ. Գր. Լուսավորիչ եկեղեցու չափաբերական մատյան, պահվում է Գորիսի երկրագիտական թանգարանում ` 2161 թվահամարի տակ:
/133/ Հայ պարբերական մամուլը, Երեւան, 1934թ., էջ 62:
/134/ Բանբեր Հայաստանի արխիվների, Երեւան, 1991թ., թիվ 3, էջ 163:
/135/ Երեվանցյան Մ., «Դրօշակի նոր շրջանը /1925-1930թթ./», Հայրենիք հանդես, 1930թ., թիվ 1 /10/, էջ 75:
/136/ Մելիք-Յոլչեան Ս., Բաքուի հերոսամարտը, Հայրենիք հանդես, 1925թ., թիվ 12, էջ 125:
/137/ Արեւ, լրագիր, Բաքու, 1915թ. օգոստոս, թիվ 2 /128/:
/138/ Ելիզավետպոլի նահանգային վարչության կողմից հաստատված շինությունների նախագծեր Գորիսում պահվում են Թունյանների / Մաշտոցի փող., թիվ 74/, Յոլյանների /Պարոնյան/ /Օրբելյանների փող., թիվ 12/, Ասատրյանների /Սյունիքի փող., թիվ 40/ եւ այլոց մոտ:
/139/ 1912թ. Զանգեզուր գավառին վերաբերող տեղեկագրի /ռուս./ պոկված թերթ: Այդ թերթը Շամխալ բեկ Մելիք-Հյուսեինյանի անձնական թղթերի հետ պահվում է երկրագիտական թանգարանում:
/140/ Ստեփանյան Վ., Գորիս, ուղեցույց-գիրք՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, Երեւան, 2005թ.:
/141/ Զանգեզուրի տուրիստական երթուղիներով /հայ., ռուս./, Երեւան, 1985թ.:
/142/ Ակ. Բակունցի տուն-թանգարանը Գորիսում, ուղեցույց, Երեւան, 1979թ.:
/143/ Գորիսի համայնք, ուղեցույց / մշակութային եւ սպորտային կազմակերպություններ/, 2009թ.:
/144/ Համեցեք Գորիս, ուղեցույց / հայ., անգլ./, մշակութային եւ սպորտային կազմակերպություններ, Երեւան, 2006թ.:
/145/ Բաբաջանյան Ն., Կուրենկով Ս., Ցուցակ Գորիսի քաղաքային հեռախոսային ցանցի բաժանորդների / հայ., ռուս./, Երեւան, 1983թ.:
/146/ Տեղեկատու Գորիս քաղաքի հեռախոսահամարների, Երեւան, 1998թ.:
/147/ Գորիսի երկրագիտական թանգարան, ուղեցույց /հայ., անգլ./, Երեւան, 2006թ.:
/148/ Գրական թերթ, լրագիր, 1990թ., 25 մայիսի թիվ 22:
/149/ Վերածնված Հայաստան, ամսագիր, 1990թ., թիվ 3, էջ 52:
/150/ Հայրենիքի ձայն, շաբաթաթերթ, Երեւան, 1990թ., թիվ 11, էջ 3:
/151/ Կոմունիզմի ուղեգիր, լրագիր, Սիսիան, 1960թ., 9 դեկտեմբերի, թիվ 97:
/152/ Սյունյաց աշխարհ, լրագիր, Կապան, 2001թ., թիվ 2 /13/, էջ 7:
/153/ Բալասանյան Է., Սարգսյան Սվ., Լալաբեկյան Ա., Սյունիքի մարզի կրթօջախների տնօրենները, Երեւան, 2006թ.:
/154/ Ջիլֆուղարյան Մ., Սանթրյան Վ., Զոհրաբյան Է., Գորիսի Սերո Խանզադյանի անվան դպրոցը, Երեւան, 1998թ.:
/155/ Թանգյան Ն., Մի փոքրիկ ուղեւորութիւն, «Նոր-դար», Թիֆլիս, 1890թ., 12 մայիսի, թիվ 59:
/156/ Ալպօյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, /Գորիս/: Գահիրէ, 1950թ.:
/157/ Ծոցիկեան Ս., Արարատ, Կովկաս /Գորիս/, Փարիզ, 1922թ., էջ 341-342:
/158/ Ավետիսյան Մ., Տեղեկագիր Լեռնային Ղարաբաղի եւ Զանգեզուրի բնակավայրերի ու բնակչության թվակազմի մասին /1917թ./, Բանբեր Հայաստանի արխիվների, Երեւան, 1991թ., թիվ 3, էջ 160-169:
/159/ Ասլանյան Ա., Բաղդասարյան Ա., Ղուլյան Ս., Վալեսյան Լ., Հայաստան, Երեւան, 1969թ., էջ 30, 144, 218, 407, 412:

**4. ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**

4.1 /160/ Բակունց Ա., Կյորես, Երկեր h III, Երեւան, 1982թ.:
4.2 /161/ Բակունց Ա., Զանգեզուր, կինոսցենար, երկեր hIII, Երեւան, 1982թ.:
4.3 /162/ Բակունց Ա., Հյումբաթի ձորը, երկեր h I, Երեւան, 1976թ.:
4.4 /163/ Բակունց Ա., Հրապարակախոսություն, գյուղատնտեսական հոդվածներ եւ ակնարկներ, երկեր h IV, Երեւան, 1984թ.:
/164/ Խանզադյան Ս., Մատյան եղելությանց, Երեւան, 1966թ.:
/165/ Խանզադյան Ս., Հայրենապատում, ճանապարհ 18-րդ, Գորիս, գիրք Բ, Երեւան, 1981թ.:
/166/ Րաֆֆի, Երկերի ժողովածու, h 10, Երեւան, 1964թ., էջ 337:
/167/ Բարսեղյան Խ., Այսպես ապրեցինք, Երեւան, 1985թ.:
/168/ Ադունց Ա., Դրնգանի ձորը, Երեւան, 1987թ.:
/169/ Զոհրաբյան Է., Հին ջրաղացի նովելը, Երեւան, 2003թ.:
/170/ Զոհրաբյան Է., Նրանք չվերադարձան մարտից, Երեւան, 1995թ.:
/171/ Միրզոյան Հ., Հայրենի եզերք, Երեւան, 2000թ.:
/172/ Խերունց-Իվանյան Ի., Իմ կյանքի էջերից, հուշագրություն, Երեւան, 2005թ.:
/173/ Խերունց-Իվանյան Ի., Մարզական տարեգրություն, գիրք 1, Երեւան, 2005թ.:
/174/ Ծատրյան Ա., Թուրուսի խուքի գրավումը, Երեւան, 1999թ.:
/175/ Ծատրյան Ա., Մի կրակեք հայերի վրա, գիրք I., Երեւան, 2003թ.:
/176/ Ծատրյան Ա., Առանց հայրենիք չի կարելի /Ռազմաճակատային պատմվածքներ/, Երեւան, 2004թ.:
/177/ Ծատրյան Ա., Հայրենիքը սկսվում է ծննդավայրից, Երեւան, 2005թ.:
/178/ Հախվերդյան Ռ./Ս./, Բարի արեւ « Բարեւ, պատմվածքների ժողովածու, Երեւան, 2009թ., էջ 39:
/179/ Զանգեզուր, կինոնկար, ռեժ.՝ Համո Բեկնազարյան, Հայկինո, 1938թ.:
/180/ Գասպարյան Դ., Փակ դռների գաղտնիքը, Չարենցը, Բակունցը եւ մյուսները, Երեւան, 1995թ., էջ 622-624:
/181/ Մանուցյան Ժ., Շինուհայր, Երեւան, 2004թ.:
/182/ Սիմոնյան Ս., Կորնիձոր, Երեւան, 2006թ.:
/183/ Սահակյան Լ., Ակների պատմություն, Երեւան, 2000թ.:
/184/ Մանվելյան Հ., Մայրը, մանկավարժը, հասարակական գործիչը, Երեւան, 2007թ.:
/185/ Գեւունց Գ., Ալեքսանյան Մ., Հավերժի ճամփորդները, Երեւան, 1995թ.:
/186/ Մկրտչյան Ն., Աշխարհը վերջ չունի, պատմվածքների ժողովածու, Երեւան, 2001թ.:
/187/ Զոհրաբյան Է., Պատմություններ Անդրանիկի մասին, Երեւան, 2004թ.:
/188/ Հովսեփյան Ն., Հոդվածներ, հուշեր, հրապարակումներ, Երեւան, 2007թ.:
/189/ Հովսեփյան Ն., Թունյան Զ., Միքայելյան Ք., Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, Երեւան, 1999թ.:
/190/ Հովսեփյան Ն., Պ.Սեւակի ստեղծագործությունը, Երեւան, 1983թ.:
/191/ Հովսեփյան Ն., Պ.Սեւակը ժամանակակիցների հուշերում, Երեւան, 1996թ.:
/192/ Հովսեփյան Ն., Մարության Թ., Հուշ-ալբոմ, Երեւան, 2004թ.:
/193/ Թունյան Զ., Հովսեփյան Ն., Խոսք սիրո եւ երախտիքի, Երեւան, 1999թ.:
/194/ Հովսեփյան Ն., Պ.Սեւակ, Կենսամատենագիտություն, h.1, Երեւան, 1969թ., h.2, 1983թ.:
/195/ Հովսեփյան Ն., Պ.Սեւակը հուշագիրների ափի մեջ, Երեւան, 2007թ.:
/196/ Մարության Թ., Պ.Սեւակի պոեմների գրաքննադատական անդրադարձները, Երեւան, 2004թ.:
/197/ Հովսեփյան Ն., Հովսեփյան Լ., Վաստակած այցեքարտ ` պարզած գալիքին, Երեւան, 2003թ.:
/198/ Իշխանյան Ռ., Ակ.Բակունցի լեզվական արվեստը, Երեւան, 1964թ.:
/199/ Իշխանյան Ռ., Ակ.Բակունցի կյանքն ու արվեստը, Երեւան, 1974թ.:

**5. Գորիսում հրատարակված գրքեր, հանդեսներ, պարբերականներ**

5.1 /200/ Հայրապետյան Ե., Զանգեզուր, Գորիս, Սասուն տպարան, 1910թ.:
5.2 /201/ Շահնազարյան Ա., Արնոտ գիրք, Սասուն տպարան, 1921թ.:
5.3 /202/ Նաիրյան Գ., Ազատ Սյունիք, 1921թ.:
5.4 /203/ Նաիրյան Գ., Խուստուփյան կանչեր, 1921թ.:
5.5 /204/ Նոր քնար, խմբ. եւ հրատարակիչ Տ. Սազանդարյան, 1921թ.:
5.6 /205/ Բաղիրյան Ց., Թանգուն ձոր, 1996թ.:
5.7 /206/ Աղաբեկյան Տ., Բուհերի ուսանողների արհեստավարժ կիրառական ֆիզիկական պատրաստությունը /ուսումնական ձեռնարկ/, 2009թ.:
/207/ Հախվերդյան Ս., Գորիսի պատմություն /հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը/, գիտ.խմբ. պատմ. գիտ. դոկտ.-պրոֆ.՝ Գ. Գրիգորյան, 1996թ.:
/208/ Կամո Մուշեղ /Գյուլխասյան/, Ցավի ծաղիկներ, 1996թ.:
/209/ Խաչատրյան Ս., Ինքնավար Սյունիք, 2006թ.:
/210/ Ջիլֆուղարյան Մ., Լեռնահայաստանի Հանրապետությունը, Սյունիքի սահմանադրությունը, 2008թ.:
/211/ Հովսեփյան Ն., Պարույր Սեւակը իմ հուշերում, 1996թ.:
/212/ Կարապետյան Ա., Գուսան Աշոտի բանաստեղծական աշխարհը, 2000թ.:
/213/ Բաղդագյուլյան /Որոտնեցի/ Վլադիմիր, Հանդիպման կարոտ /բանաստեղծություններ/, 1996թ.:
/214/ Մեժլումյան Վ., Վերիշենի պատմություն, 1995թ.:
/215/ Միրաքյան Վ., Չորացած հույզեր ծաղկամանի մեջ /բանաստեղծություններ/, 1996թ.:
/216/ Սահակյան Լ., Կատակում է Գորիսը, 1994թ.:
/217/ Հախվերդյան Ն., Ընդհանուր հոգեբանություն առարկայի սեմինար պարապմունքների թեմատիկ պլաններ, 2008թ.:
/218/ Միքայելյան Ք., Մեծ, մշտահմա երեւույթ /նվիրված Ա. Բակունցի 110-ամյակին/, 2009թ.:
/219/ «Կայծ» խմորատիպ ամսագիր, 12 էջ, կոմունիստական-աշակերտական ընդհատակյա, 1919թ.:
/220/ Տաթեւ, ամսագիր, գլխ. խմբ.՝ Մ. Ջիլֆուղարյան, 1997թ., լույս է տեսել 7 համար:
/221/ Համայնք, հանդես, հրատարակիչ ` Գ. Հարությունյան, խմբ.՝ Լ.Հովսեփյան, 2001թ., հոկտեմբեր:
/222/ Գորիսի պետական համալսարան, հանդես, խմբ. ` Մ. Ջիլֆուղարյան, 2007թ.:
/223/ Բանբեր Գորիսի պետական համալսարանի /Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն/, գլխ.խմբ.՝ Մ. Ջիլֆուղարյան, 2009թ., թիվ 1:
/224/ Գավառ, լրագիր, խմբ. Ս.Տեր-Մինասյան, 1909թ. դեկտեմբեր-1910թ. դեկտեմբեր:
/225/ Որոտան, ՀՅԴ Զանգեզուրի կոմիտեի օրգան, 1918-1919թթ.:
/226/ Սյունիք, ՀՅԴ Զանգեզուրի կոմիտեի տնտեսական ու գրական օրգան, 1918թ.:
/227/ Զանգեզուրի կոմունիստ, խմբ.՝ Սեյրի /Ակ.Գուլոյան/, 1920թ.:
/228/ Կարմիր Զանգեզուր, եռօրյա լրագիր, խմբ.՝ Հ. Սիլանյան, Հ. Կամարի /Բեջանյան/, 1920թ., հուլիս:
/229/ Խորհրդային Զանգեզուր, լրագիր, 1921թ. հուլիսի 28, գոյատեւել է մի քանի ամիս:
/230/ Ազատ Սյունիք, լրագիր, Լեռնահայաստանի կառավարության պաշտոնաթերթ, խմբ.՝ Ա.Մեհրաբյան, 1921թ., լույս է տեսել 5 համար:
/231/ Կարմիր ռաշպար, ՀԿԿ Զանգեզուրի գավկոմի եւ գավգործկոմի օրգան, լրագիր, 1920թ. նոյեմբեր-1930թ.: Թերթը խմբագրել են Գ.Ղազարյանը, Ս.Օթյանը, Բ.Ներսիսյանը, խմբագրվել է նաեւ կոլեգիալ ձեւով:
/232/ Երիտասարդ ռաշպար, ՀԿԵՄ Զանգեզուրի գավկոմի օրգան, լույս է տեսել որպես «Կարմիր ռաշպարի» հավելված, 1922թ., հրատարակիչ ` Գումեդին, խմբ.՝ Վյուգո, Համունի:
/233/ «Գեղջկուհու էջ» ` թերթի հավելված կանանց համար, լույս է տեսել 1924թ.:
/234/ Զանգեզուրի պատկոմ, պատկոմական-պիոներական օրգան, խմբ.՝ Ե.Խալեյան, 1923թ. օգոստոսի 25-ին լույս է տեսել առաջին համարը:
/235/ Կարմիր Զանգեզուր, ՀԿ/բ/Կ Գորիսի շրջկոմի եւ շրջգործկոմի օրգան, 1934 դեկտեմբերի 5-1938թ. մայիս, շաբաթաթերթ, ապա եռօրյա, խմբ.՝ Ք.Գեւոնյան, Արմ.Մնացականյան, Թ.Փարսյան:
/236/ Ստալինյան դրոշով, 1938թ. սեպտեմբեր-1956թ., խմբ.՝ Գ.Հովհաննիսյան, Մ.Հակոբյան, Ռ.Հարությունյան, Ա.Խաչատրյան:
/237/ Որոտան, եռօրյա լրագիր, 1956-1962թ., խմբ.՝ Գ.Գասպարյան:
/238/ Զանգեզուր, ՀԿԿ Գորիսի շրջկոմի եւ շրջգործկոմի օրգան, եռօրյա լրագիր, 1962թ. հունիսի 1-ից, թերթը խմբագրել են Գ.Բախշյանը, Ք.Պետրոսյանը, Հ.Մանվելյանը, Ս.Ղազարյանը, Ս.Ալեքսանյանը, Ս.Շահնազարյանը, Գ.Գրիգորյանը: 1999թ.-ից՝ անկախ շաբաթաթերթ:
/239/ Սյունիք, գրական շաբաթաթերթ, խմբ.՝ Է. Զոհրաբյան, 1990թ. հոկտեմբեր–1993թ. սեպտեմբեր:
/240/ Բանբեր Գորիսի, քաղաքապետարանի պաշտոնաթերթ, խմբ.՝ Ք.Միքայելյան, 1992թ.:
/241/ Կյորես, լրագիր, հայրենակցական միության օրգան, խմբ.՝ Մ.Ջիլֆուղարյան, 1999թ. հուլիս:
/242/ Մշակ, լրագիր, խմբ.՝ Է.Զոհրաբյան:
/243/ Տաթեւ համալսարան, լրագիր, խմբ.՝ Ա. Կարապետյան, 2000թ., հրատարակվել է մի քանի համար:
/244/ Փերի, մանկապատանեկան թերթ, տնօրեն եւ խմբ.՝ Է. Բալասանյան, 2001թ.: Մինչեւ 2010թ. հունվարը հրատարակվել է 43 համար:
/245/ Լեռնաշխարհ, լրագիր, Է. Զոհրաբյան, 1998թ., մարտի 25, մի քանի համար:
/246/ Ուսուցիչ, լրագիր, հիմն. եւ խմբ.՝ Ա. Տոռոզյան, 2000թ., դեկտեմբեր:
/247/ Կամք, խմբ.՝ Լ. Հովսեփյան, 2006թ.:
/248/ Բան ու գործ, լրագիր, խմբ.՝ Ս.Շահնազարյան, 2000թ.: Լույս է տեսել 47 համար /2010թ. հունվար/:
/249/ Վասն հայրենյաց, հրատ. եւ խմբ.՝ Ս.Բաբաջանյան, 2008թ. մարտ:
/250/ Գորիսի համալսարան, ԳՊՀ պաշտոնաթերթ, խմբ.՝ Մ.Ջիլֆուղարյան, 2007թ.:
/251/ Վերջին շրջանում լույս են տեսել, բայց կարճ կյանք են ունեցել «Ստեղծագործող Գորիս», «Ազատության զանգակ» թերթերը:
/252/ Հախվերդյան Ս., Սյունիքի պատմության ուսումնական ծրագիր, Գորիսի պետական համալսարան, 2007թ.:

**6. Սյունիքի մարզում հրատարակված պարբերականներ**

6.1 /253/ «Սյունիք», Սյունիքի մարզպետարանի պաշտոնաթերթ, 1996թ. մայիսից մինչեւ 1999թ. դեկտեմբեր (թողարկվել է 160 համար), խմբագիր՝ Գագիկ Դավթյան:
6.2 /254/ «Սյունյաց աշխարհ», հիմնադիր՝ «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ, 2000թ. սեպտեմբերից մինչեւ 2003թ. սեպտեմբեր (թողարկվել է 85 համար), խմբագիրներ՝ Սամվել Ալեքսանյան (14 համար), Նարա Հովհաննիսյան (22 համար), Վահրամ Օրբելյան (6 համար), Արմեն Հակոբյան (1 համար), Սամվել Ալեքսանյան (42 համար):
6.3 /255/ «Սյունյաց երկիր», 2003թ. հոկտեմբերի 1-ից, հիմնադիր՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ, խմբագիր՝ Սամվել Ալեքսանյան:

**7. Օտար լեզուներով Գորիսը հիշատակող հրապարակումներ**

7-1 (256) Григорян Г., Очерки истории Сюника IX-XVвв., Ереван, 1990, стр. 157, 221, 224.
7-2 (257) Капанцян Г., Хайаса-колыбель армян, Ереван, 1947, стр. 180.
7-3 (258) Периханян А., Арамейская надпись из Зангезура, 1965, ГЗн 4.



ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7-4 (259) Карагезян А.,Сюник, Нахчаван и Гохтн, Ереван, 2002.
7-5 (260) Арутюнян В. и Сафарян С., Памятники армянского зодчества, Москва, 1951, стр. 491.
7-6 (261) Кретаци А., Повествование, Ереван, 1973, атр. 215.
7-7 (262) Армяно-русское отношения в XVIII веку (сборник документов), т.4, Ереван, 1990, стр. 222-223.
7-8 (263) Каменный летопись армянского народа, Ереван, 1985, стр. 124-125.
7-9 (264) Мирзоян Г., Весь Сюник, т.1, Москва, 2005.
7-10 (265) Мирзоян Г., Весь Сюник, т.2, Москва, 2005.
7-11 (266) Мирзоян Г., Весь Сюник, т.3, Москва, 2005.
7-12 (267) Ширакуни Н., Зангезурскій уезд Елисаветпольской губернии, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXXIV, Тифлисъ, 1904.
7-13 (268) Сегаль И., Елисаветпольская губернія, Кавказскій вестник, Тифлись, 1900, №1, стр. 62.
7-14 (269) Грачев Ю., Герусы, Краснодар, 1996.
7-15 (270) Кавказскій календарь на 1903 год, Тифлись, 1902, стр. 195.
7-16 (271) Кавказскій календарь на 1905 год, Тифлись, 1904, стр. 202-203.
7-17 (272) Кавказскій календарь на 1910 год, под ред. В. Стротонова, Тифлись, стр. 394.
7-18 (273) Малая советская энциклопедия, Москва, 1935, стр. 339.
7-19 (274) Большая советская энциклопедия, Москва, т.7, 1972, стр. 83.
7-20 (275) Парсамян В., История армянского народа, Ереван, 1972, стр.30,176, 254.
7-21 (276) Onnik S.Xnkikyan, Syunik Daring the Bronze and Iron Ages, Barrington, U.S.A., 2002.

Գորիսի մասին 20-րդ դարասկզբի անցքերը պատմող ձեռագիր հուշագրություններ են պահպանվում Ալբերտ Ադունցի, Միշա Զարայելյանի մոտ: Հարյուրավոր փաստաթղթեր, լուսանկարներ կան Գորիսի երկրագիտական թանգարանում, Ա.Բակունցի տուն-թանգարանում, Կապանի մարզային արխիվում: Արցախյան շարժման Գորիսյան իրադարձությունները արտացոլող արժեքավոր փաստաթղթեր, իրեր են պահվում մասնավոր անձանց մոտ /Ժիրայր Մարտիրոսյան, Սուսաննա Սարգսյան, Աիդա Իսախանյան եւ այլք/: Արցախյան շարժման բազում դրվագներ կինոժապավենի վրա նկարել եւ պահում են Ռուդիկ Խոջաբաղյանը, Սեյրան Պողոսյանը:

**Հ.Գ.** *Թերթը պատրաստ էր տպագրության, երբ հեղինակը ներկայացրեց Գորիսի «Սասուն» տպարանում մինչեւ 1920թ. տպագրված գրքերը:*

**3242 Սազանդարեան**

Կալանաւորը որդեսպան: (Պատմուածք): Գորիս, տպ. Սասուն, 1909: 16 էջ, շարվ. 14x9 սմ, գ. 5 կոպ.:

**3875 Տէր-Հայրապետեան Եղիա**

Զանգ - է - Զուր: Լեգենդական պօեմա: Գորիս, տպ. Սասուն, 1910: 63 չհ. էջ, շարվ. 16.5x5 սմ, գ. 30 կոպ.:

**4962 Սազանդարեան**

«Նոր-Քնար»: (Դպրոցական երգարան): Կազմեց Սազանդարեան: Նուէր հայ տպագրութեան 400-ամեակին: (Հրատ. «Սասուն» տպարանի №1): Գորիս, տպ. Սասուն, 1912: 112 էջ, շարվ. 17x7 սմ, գ. 30 կոպ.:

**6444 Խանլարեան Յ.**

Բանաստեղծութիւններ: Առաջին պրակ: Գորիս, տպ. Սասուն, 1916: 98 էջ, շարվ. 8.5x6 սմ, գ. 50 կոպ.:

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (093) 05 28 02:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 30 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 1000 դրամ: Ստորագրված է տպագրության 24.05.2011թ.:
«Սյունյաց երկիր» թերթի անձնակազմը շնորհակալություն է հայտնում Գամառնիկ Ներսիսյանին՝ լուսանկարիչներ Համլետ Գեւորգյանին, Արամ Հայրապետյանին, Կարեն Հովհաննիսյանին եւ լրագրող Արմինե Ավագյանին՝ լուսանկարչական աշխատանքներ կատարելիս ուղեկցելու համար:

ԷՋԵՐ ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

# «Զանգեզուր» թերթ. հարազատ եւ սիրելի իր ժողովրդին

## «Զանգեզուր» թերթի առաջին համարի լույսընծայման 60-ամյակի առիթով

Շրջանային թերթի հիմնադրումը ժամանակին կարեւոր իրադարձություն էր Գորիսի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքում:

Առաջին իսկ համարից թերթը դարձավ շրջանի տարեգիրը, մեր ժողովրդի արարումների, մաքառումների, գեղեցիկի, նվիրականի լուսաբանողն ու տարածողը:

«Զանգեզուրը» շարունակությունն էր այն թերթերի, ժուռնալիստական ու ստեղծագործական ավանդույթների, որոնք կային դարասկզբին երկրամասում:

Գորիսը հայ պարբերական մամուլի երկդարյա պատմության, հատկապես մեր հարյուրամյակի առաջին տասնամյակների բնօրրաններից է: Դրա համար հող էին հանդիսացել դարասկզբի եւ մինչեւ 20-ական թվականների կեսերը տեղի ունեցած հասարակական, քաղաքական իրադարձությունները Գորիսում, Սյունիքում՝ ընդհանրապես: Ոչ պակաս հանգամանք էր իրողությունը, որ այդ ժամանակաշրջանում Գորիսում կուտակվել էր ինտելեկտուալ մեծ ներուժ: Մինչեւ 1934 թվականն այստեղ ծնունդ է առել 11 անուն թերթ: Դրանք են՝ «Գավառը»՝ 1909-10թթ., քաղաքական-հասարակական, տնտեսական եւ գրական լրագիր, «Որոտանը»՝ ՀՅ Դաշնակցության Զանգեզուրի կոմիտեի օրգան, 1918-19թթ., «Սյունիքը»՝ հասարակական, քաղաքական եւ գրական թերթ, 1918-20թթ., «Զանգեզուրի կոմունիստը»՝ 1920թ., «Ազատ Սյունիքը»՝ 1921թ. եղել է Լեռնահայաստանի կառավարության պաշտոնաթերթը, «Խորհրդային Զանգեզուրը»՝ 1921թ., Զանգեզուրի հեղկոմի օրգան, «Կարմիր ռաշպարը»՝ 1921-30թթ., կոմունիստների կուսակցության գավկոմի եւ գավգործկոմի օրգանը, «Երիտասարդ ռաշպարը»՝ 1922-24թթ., երիտասարդական միության Զանգեզուրի գավկոմի պաշտոնաթերթը:

Չնայած դրանց մեծ մասը կարճ կյանք է ունեցել եւ այս կամ այն կուսակցության ու կառավարման մարմնի պաշտոնաթերթն է եղել, այնուամենայնիվ, մեծ հետք է թողել, բարի ավանդույթներ ստեղծել, համախմբել Գորիս քաղաքի ու գավառի մտավորականներին:

60-ամյա ուղի է անցել «Զանգեզուրը»՝ տարբեր ժամանակներում կրելով «Կարմիր Զանգեզուր», «Ստալինյան դրոշով», «Որոտան» անվանումները: Կարելի է ասել, որ «Զանգեզուրը» հայ պարբերական մամուլի երկարակյացներից է: Այն հարատեւել եւ պատմության քննությանը դիմացել է լրագրողական տարբեր սերունդների աշխատանքի շնորհիվ: Ճիշտ կլիներ անուն առ անուն այսօր հիշել հարյուրից ավելի այն ժուռնալիստներին, մի քանի անգամ ավելի արտահաստիքային թղթակիցներին, որոնց մտքի եւ ստեղծագործական արարումների շնորհիվ հարատեւել է «Զանգեզուրը»: Նրանցից յուրաքանչյուրը, անշուշտ, արժանի է մեծագույն հարգանքի ու երախտագիտության: Դժբախտաբար այսօր մեր ձեռքի տակ չկան բոլորի անունները, ինչը պետք է բացթողում համարել: Տրամաբանական կլիներ, որ այսօրվա «զանգեզուրցիներս» ստանձնեինք այդ բացթողումը լրացնելու բարի առաքելությունը, վերականգնեինք եւ գալիք սերունդներին թողնեինք մեր բոլոր գործընկերների անունները:

Հիշենք եւ հարգանքի տուրք մատուցենք «Զանգեզուր» թերթի բոլոր նախկին խմբագիրներին՝ Քերոբ Գեւոնյանին, Արամայիս Մնացականյանին, Թադեւոս Փարսյանին, Գուրգեն Հովհաննիսյանին, Ռուբեն Հարությունյանին, Միկիտ Հակոբյանին, Արմենակ Խաչատրյանին, Գուրգեն Բախշյանին, Քրիստափոր Պետրոսյանին, Հակոբ Մանվելյանին, Բենիկ Գասպարյանին, Սերյոժա Ղազարյանին: Նրանց մի մասն այսօր էլ ստեղծագործում է, բարի խորհուրդներով օգնում թերթին:

Միայն հիմա, երբ Հայաստանի Հանրապետությունում հաստատվել են խոսքի ազատության, բազմակարծության մթնոլորտ, կարելի է հասկանալ, թե հաճախ ինչպիսի դժվարություններ են հաղթահարել մեր գործընկերները: Թեեւ թերթը խմբագրից բացի ստորագրում էր նաեւ գլավլիտի շրջանային լիազորը (1935թ. մայիսից դա պարտադիր էր), այնուամենայնիվ դրա առանձին հրապարակումներ պատճառ էին դառնում խմբագրական անձնակազմի, խմբագրի նկատմամբ անվստահության, կասկածանքների, հալածանքների: Միայն մեկ օրինակ: 1937թ. հոկտեմբերի 10-ին Գորիսի կուսշրջկոմի պլենումում քննարկվեց խմբագիր Արամայիս Մնացականյանի հարցը եւ ժամանակին բնորոշ որակումով՝ «Թունավոր իժի գործակալ մեր շրջանում», հեռացվեց կուսակցությունից եւ զբաղեցրած պաշտոնից: Արամայիս Մնացականյանը թերթի 16-րդ համարից՝ 1935թ. ապրիլի 19-ից, «Զանգեզուրի» պատասխանատու խմբագիրն էր եւ մեծ ներդրում էր ունեցել թերթի ինքնահաստատման գործում: Ճիշտ է, հետագայում վերականգնվեց նրա բարի անունը, բայց նման ամեն մի դեպք, իսկ այդպիսի բազում օրինակներ կան, բարոյական հարված էր լրագրողական կոլեկտիվին: Մեր նախորդների ծառայությունը հենց այն է, որ այդպիսի ցնցումներից հետո ուժ էին գտնում եւ մեծագույն պատասխանատվությամբ կատարում իրենց լրագրողական պարտքը:

«Զանգեզուրի» անցած ուղին գորիսեցիների անցած վեց տասնամյակի պատմությունն է:

Իսկ այդ ընթացքում մեր ժողովուրդը տեսել է և՛ գյուղի բռնի կոլեկտիվացում, և՛ 37 թվական, և՛ 40-ականի աքսորները, եւ Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառած զրկանքներն ու մարդկային կորուստներ: Անշուշտ, քիչ չեն եղել լուսավոր, արժանահիշատակ իրադարձությունները, աշխատանքային սխրանքները: Թերթեցեք, խնդրեմ, այդ տարիների էջերը, եւ ձեր առաջ կհառնի գորիսեցու ապրած վեց տասնամյակը՝ մեզ հանրածանոթ դեմքերով, անվանումներով, իրադարձություններով:

«Զանգեզուր» թերթի պատմության մեջ կարեւոր, շրջադարձային փուլ էին 1988-90 թվականները:

Լեռնային Ղարաբաղում ծավալված ազգային-ազատագրական պատերազմը, հայ-ադրբեջանական հակամարտությունը, Արցախում եւ Զանգեզուրում տեղի ունեցող ինքնապաշտպանական մարտերն իրենց արտացոլումն էին գտնում թերթում: Դրանք, ինչպես եւ իշխող հասարակական-քաղաքական կարգերի դեմ ուղղված համաժողովրդական ընդվզումը չէին կարող որակական փոփոխություններ չբերել թերթին, չփոխել նրա կարգավիճակն ու գաղափարական ուղղվածությունը: 1990-ին թերթի համահիմնադրի իրենց դերից ինքնամեկուսացվեցին պատգամավորների շրջանային, քաղաքային խորհուրդները: Դա արտահայտվեց մասնավորապես թերթի ֆինանսական շրջափակմամբ, հաճախ՝ բարոյական ճնշմամբ: Խմբագրությունն այլընտրանքի հնարավորություն չուներ եւ իրեն հայտարարեց թերթի համահիմնադիր, հանրապետությունում գործող օրենքների համաձայն՝ ձեռք բերեց նոր կարգավիճակ, միջոցներ ձեռնարկեց տնտեսական փակուղուց դուրս գալու եւ թերթի գործունեությունը չդադարեցնելու համար: Մեզ հաջողվեց որդեգրել նոր ուղեգիծ: Նախկինում գոյություն ունեցող նեղ, դասակարգային, կուսակցական սկզբունքներն իրենց տեղը զիջեցին ազգային, համամարդկային արժեքների, ստեղծագործական ողջ համակազմը բռնեց Հայաստանի նորանկախ պետության կերտմանն աջակցելու, ժողովրդավարական փոփոխություններին եւ տնտեսական բարեփոխումներին սատար կանգնելու գիծ, որն առայսօր հիմնական գաղափարական ուղղություն է եւ կմնա իբրեւ այդպիսին:

Հետեւում է մնացել մեր նոր պետության հինգ տարին: Պատմական այդ փուլում «Զանգեզուրը» արժանապատվորեն կատարեց իր նոր առաքելությունը: Անցած հինգ տարում թերթը երբեք չի դադարել լույս տեսնել: Դա մեր մեծագույն հաջողությունն եմ համարում, որ ձեռք ենք բերել ոչ միայն խմբագրակազմի, ընթերցողների, այլեւ հիմնարկ-ձեռնարկությունների այն ղեկավարների շնորհիվ, ովքեր, հասկանալով մշակույթի, պարբերական մամուլի ունեցած դերը, մշտապես նեցուկ են եղել «Զանգեզուրին»: Նրանց համար թերթի պահպանումը նույնքան սկզբունքային է, ինչպես իրենց իսկ ղեկավարած ձեռնարկությունների անպարապուրդ վիճակի ապահովումը: Սա մի յուրահատուկ վերաբերմունք է, որ հաճախ մյուս շրջաններում չի դրսեւորվում: Դա թույլ է տալիս ասելու, որ անցած տարիներին թերթն իրոք հարազատ է եղել իր ժողովրդին ու սիրելի: Նաեւ ինքը՝ ժողովուրդն է մասնակցել 60-ամյա պատմության կերտմանը: Ուզում եմ հավատալ, որ այսուհետ եւս թերթը կարժանանա տեղական իշխանությունների, ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարների ինտելեկտուալ մասի, գիտակից մասի ուշադրությանը եւ նրանց հովանավորությամբ ու աջակցությամբ կշարունակի հարատեւել: Ինչ խոսք, նման կացություն չի կարող անվերջ շարունակվել: Տեղական ինքնակառավարման նոր մարմինների ձեւավորումից, ակնկալվող վարչական բարեփոխումներից հետո «Զանգեզուրը» կստանա իր վերջնական կարգավիճակը՝ ֆինանսավորման կայուն աղբյուրներով հանդերձ:

Մի քանի խոսք՝ այն մարդկանց մասին, ովքեր այսօր ստեղծում են «Զանգեզուրը»:

Պարզվում է, որ թերթը շատ նման է … մարդու կյանքին: Ծնվում է, ապրում, սիրվում դիմացինի կողմից եւ մնում անմահ իր գործերով: Այսօրվա «զանգեզուրցիները» ձգտում են բազմապատկել իրենց մասնակցությունը նման գործերի կերտմանը:

Թերթը խմբագրում է թեեւ փոքրաթիվ, բայց կայուն կոլեկտիվ: Հրանտ Մաթեւոսյանը ասում է. «Կռունկների երամների առանձին-առանձին վերցրած կռունկները հարավի տեղը չգիտեն, բայց բոլորը միասին գիտեն, երամը գիտի»: Համախմբվածությամբ այդպես ենք եւ մենք: Մեզ ցրել, անջատել չի լինի: Գնացողը գնացել է, մենք մնացողն ենք: Եվ հազար ու մի դժվարություններ հաղթահարելով՝ լուռ ու մունջ կրում ենք մեր խաչը: Աշխատում ենք սիմվոլիկ աշխատավարձով, աշխատում ենք ամեն մի համարի մեջ ներդնել մեր խիղճը, քաղաքացիական պարտքը, մասնագիտական կարողությունները, մեր նվիրումն ու սերը: Ապրում ենք, ստեղծում, ստեղծածով ուրախանում:

Ես շնորհավորում եմ «Զանգեզուրին», ողջունում նրա անցած ճանապարհը եւ ցանկանում նոր հոբելյաններ:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**
**«Զանգեզուր» թերթի խմբագիր**
**4 ապրիլի 1995թ.**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
Էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 215
28 ՄԱՅԻՍԻ 2010

# Մեր լինելիության բանաձեւը


Ծակերի բերդը

## «Հայը վար կանի, ծառ կտնկի, քերծ կքանդի...»

Գորիսի քարանձավները (քարայրերը, քարատակները, քրըտակները) հնագույն ժամանակներում (նաեւ հետո՝ դարեր շարունակ) մարդկանց համար կացարանի դեր են կատարել, ինչպես եւ օգտագործվել պաշտպանական նպատակներով: Իսկ Շենը՝ Կյորեսի միջնաբերդը, բաղկացած էր ժայռափոր կառույցներից:


Հին կացարան Գորիս գյուղում


Գորիս գյուղ, Բոլունց սրանոցի քերծը, որի մեջ կացարաններ են:

### Գորիս

**Խոսքը՝**
**Ալբերտ Թումանյանի**
**Երաժշտությունը՝**
**Վահան Մանուկյանի**

*Հինավուրց ոստան դու Զանգեզուրի,*
*Սրբազան օրրան քաջ սերունդների,*
*Բազում դավեր են քո շուրջը նյութվել*
*Ու բազում շանթեր ժայռերին բեկվել:*
*Ժայռերին բեկվել:*

*Կրկներգ*
*Գորի՛ս, եղել ես անառիկ ամրոց,*
*Արարել արվեստ ու հիմնել դպրոց,*
*Գանձեր են ծնվել սլացիկ մտքի*
*Պատերի ներքո Տաթեւի վանքի:*

*Դարերի միջից ժպտում ես այսօր,*
*Որոտան գետի պարզեւած լույսով,*
*Եվ շնորհիվ շքեղ քո կառույցների*
*Դարձել ես Սյունյաց զմրուխտ թագուհի:*
*Զմրուխտ թագուհի:*

*Կրկներգ*
*Գորի՛ս, եղել ես անառիկ ամրոց,*
*Արարել արվեստ ու հիմնել դպրոց,*
*Գանձեր են ծնվել սլացիկ մտքի*
*Պատերի ներքո Տաթեւի վանքի:*

### Գորիս

**Խոսքը՝**
**Ա.Սահակյանի**
**Երաժշտությունը՝**
**Կ.Օրբելյանի**

*Դու չքնաղ ես, դու սիրուն,*
*Բարձր ես սիրո պես,*
*Եվ լեռներդ այդ սիրուց*
*Քար են կտրել, տե՛ս:*

*Տղաները քո արծիվ՝*
*Լեռներից պես ձիգ,*
*Աղջիկները քո ազնիվ*
*Քեզ պես գեղեցիկ:*

*Հայոց օջախ, հայոց սեր,*
*Հայոց պուն շռայլ:*

*Ով Գորիսը չի տեսել,*
*Չի տեսել աշխարհ:*

*Զանգեզուրի թագն ես դու,*
*Սիրտն ես, իմ Գորի՛ս:*
*Լույս ես տալիս լեռներին դու*
*Եվ սրտիս:*

*Զանգեզուրի թագն ես դու,*
*Կյանքն ես, իմ Գորի՛ս:*
*Ուր էլ գնամ միշտ կանչում ես*
*Ինձ:*

# ՍԻՍԱԿՅԱՆՆԵՐ




Զագ նահապետը հիմնադրում է Զագեձորի բերդը (Ռոբերտ Կամոյան), 2010թ.: Պատվերը՝ «Սյունյաց երկիր» թերթի:

## Սյունիքի թագավորները

**Սմբատ Ա**
**Թագավորել է 987-998թթ.**

Սմբատ Ա Սահակյանը 987 թվականին Սյունիքը հռչակել է թագավորություն: Ձեւավորել է նորաստեղծ թագավորությունը, ստեղծել մարտունակ բանակ, ամրապնդել ամրոցները: Թաղվել է Տաթեւում:

**Վասակ Ա**
**Թագավորել է 998-1040թթ.**

Սյունիքի թագավոր Վասակ Առաջինը հաջորդել է հորը՝ Սմբատ Ա Սահակյանին: Հզորացրել է Տաթեւի վանքը, ծավալել կառուցողական-շինարարական աշխատանքներ: Կառուցապատել է Կապան մայրաքաղաքը: Թաղվել է Տաթեւում:

**Սմբատ Բ**
**Թագավորել է 1043-1051թթ.**

Սյունիքի թագավոր Սմբատ Բ Աշոտյանը Ծղուկքի տեր Աշոտ Աշոտյանի որդին է: Մարտնչել է Սյունիք ներխուժած մահմեդական ամիրությունների հրոսակների դեմ, վտարել նրանց Սյունիքից, ապա զբաղվել է երկրի վերաշինությամբ: Թաղվել է Վահանավանքում:

**Գրիգոր Ա**
**Թագավորել է 1051-1072թթ.**

Հաջորդել է եղբորը՝ Սմբատ Բ Աշոտյանին: Զինակցել է Լոռու թագավոր Դավիթ Անհողինին եւ պարտության մատնել Լոռի արշավող Դվինի ամիրա Աբուլսվարին: Թաղվել է Վահանավանքում:

**Սենեքերիմ**
**Թագավորել է 1084-1094թթ.**

Սյունիքի թագավոր Սենեքերիմ Սեւադյանը սերում է Խաչենի Առանշահիկների տոհմից: Հաջորդել է իր քրոջ՝ Շահանդուխտի ամուսին Գրիգոր Ա Աշոտյանին: Նրա օրոք 1086 թվականին ավարտվել է թագուհի Շահանդուխտի եւ նրա քույր Կատայի կառուցած Վահանավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին: 1094 թվականին Սյունիք է ներխուժել Գանձակի սելջուկյան կուսակալության զորքը: Չկարողանալով գրավել Կապան մայրաքաղաքը՝ թշնամին դիմել է խորամանկության. բանակցությունների է հրավիրել Սենեքերիմ Սեւադյանին եւ ուխտադրժորեն սպանել նրան: Այնուամենայնիվ, սելջուկյան զորքերը դուրս են քշվել Ողջիի ձորահովտից: Թաղվել է Վահանավանքում:

**Գրիգոր Բ**
**Թագավորել է 1103-1166թթ.**

Սյունիքի թագավոր Գրիգոր Բ-ն հաջորդել է հորը՝ Սենեքերիմին: Նրա իշխանության մեջ մտնում էր հիմնականում Բաղաց աշխարհը: Թագաժառանգ է նշանակել իր դստերը՝ Կատային (նրա իսկական անունը՝ Կատրանիդե) եւ Խաչենի տեր Վախթանգ իշխանի որդի Հասանին, որը եղել է իր գահակիցը:

**Հասան Գեռաքարեցի**
**Թագավորել է Վահանավանքում 1166-1170թթ.**

Սյունիքի թագավոր Հասան Գեռաքարեցին կամ Խաչենցին Խաչենի Վախթանգ իշխանի որդին էր: Հաջորդել է մոր՝ Կատա-Կատրանիդեի կողմով իր պապին՝ Գրիգոր Բ Սենեքերիմյանին:


Բաբիկ Սյունի, Սյունյաց նախարարության նահապետ


Վասակ Սյունի, Հայաստանի մարզպան: Թաղված է Անգեղակոթի գերեզմանատանը:


Անդովկ /Անդոկ/ Սյունի, Սյունյաց նախարարության մեծ նահապետ


4108 տարի հետո՝ 2008թ., Սիսակ նահապետի նկարը ստեղծագործել է կապանցի գեղանկարիչ Ռուբեն (Ուբակ) Կոստանդյանը «Սյունյաց երկրի» պատվերով (թուղթ, ակրիլ, տեմպերա, պաստել, բրոնզ, 45x57, գրաֆիկական աշխատանք):


Սյունիքի Գրիգոր Ա թագավոր (դեմքի վերականգնումը՝ պրոֆեսոր Ճաղարյանի): Կիսանդրին պահվում է Կապանի երկրագիտական թանգարանում:

Գորիսի մերձակա սարալանջերը

Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

# .... Սյունյաց հողը անարատ է,
# Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է



## ՍՅՈՒՆՅԱՑ ՍԱՐԵՐ

*Հազար ու մի երգում գոված սար եմ փեսել,*
*Բայց միշտ ձեր կարոտը քաշել Սյունյաց սարեր,*
*Անես մեծ վարպետ Նաղաշի ձեռքն է հասել,*
*Ծաղիկներդ գույն-գույն նախշել, Սյունյաց սարեր,*
*Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:*
*Յայլաներիդ ծուխը սահող երամ դառած,*
*Իմ նազելին երամի մեջ երազ դառած:*

*Ծաղկիդ բույրը հազար դաշտ ու ձոր կլցնի,*
*Հազար ցամաք հողի, քարի շուրթ կբացի,*
*Տուն կբերեք ձեր պանդուխտին, չեք կորցնի,*
*Հովերդ ինձ ձեռքով կանեն Սյունյաց սարեր,*
*Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:*

*Մարդուն քաջի ուժ կփան ձեր օդն ու ջուրը,*
*Սուրբ մոր նման օրոր կասի զով զեփյուռը,*
*Աշխարհով մեկ փարածվել է ձեր անունը.*
*Ձեզ հազարան խաղ եմ կանչել, Սյունյաց սարեր,*
*Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:*

*Գուսան Աշոտ, Սյունյաց հողը անարատ է,*
*Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է,*
*Մարդն արծիվ է, լեռնածին է, հրահատ է,*
*Հազար հողմեր ձեզ չեն մաշել, Սյունյաց սարեր:*
*Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:*
*Յայլաներիդ ծուխը սահող երամ դառած,*
*Իմ նազելին երամի մեջ երազ դառած:*



Ծակերի ձորում

Լուսանկարը՝ Հ.Գեւորգյանի



Լուսանկարը՝ Ռ.Համբարձումյանի

**Զագեձոր լեռան բարձրավանդակում (Գորիսից մոտ 20կմ հեռավորության վրա)՝ Մեծ Իշխանասարի արեւելյան ստորոտում, ծովի մակերեւույթից 2666մ բարձրության վրա է Իշխանա լիճը (Սեւ լիճ): Մակերեսը՝ մոտ 2 քկմ:**